ՈՒՐ ՄԻՋՆԱԴԱՐՒ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

I


ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ ПОЗДНЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ (XVI—XVII вв.)

В ДВУХ ТОМАХ

ТОМ ПЕРВЫЙ

Научно-критический текст,
предисловие и комментарий
АСМИК СААКЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1986

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՒՇ ՄԻ ՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ (XVI—XVII ԴԴ.)

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Աշխատասիրությամբ
ՀԱՍՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ

A II 74756

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 84.21
Ու 597

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Ա. Շ. Մնացականյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտութ. դոկտոր Մ. Թ. Ավդալբեգյանը և բանասիրական գիտութ. թեկնածու Պ. Մ. Խաչատրյանը

Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI—XVII դդ.): Ու 597 Ընտրանի (2 հատորով) /Աշխատասիրությամբ Հ. Սահակյանի. —Հ.1—.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986—
Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինս-ուտ.
Հ. 1 /Պատ. խմբ.՝ Ա. Շ. Մնացականյան. 1986.—755 էջ.

Ժողովածուի սույն հատորում ընդգրկված են XVI դ., մասամբ և XVII դ. սկզբի հեղինակների ստեղծագործությունները: Նյութերի մի զգալի մասը այս հրատարակությամբ գիտական և ընթերցող հասարակայնությանն է ներկայացվում առաջին անգամ, մյուս մասը կազմում են նշած հրատարակությունների ճշտված կամ քննական բնագրերը: Առանձին բաժիններում տրվում են բանասիրական դիտողություններ, հեղինակների համառոտ կենսագրականներ, ծանոթագրություններ, ցանկեր և բառարան:
Հասցեագրվում է բանասերներին և ընթերցող լայն շրջաններին:

4702030100
Ու ———————— 88—85
703(02)—86
ԳՄԴ 84.21

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԺԶ.—ԺԷ դարերի առավել աչքի ընկնող բանաստեղծների՝ Գրիգորիս Աղբամարցու, Հովասափ Սեբաստացու, Աստվածատուրի, Սարկավագ Բերդակացու, Մուրադ Խիկարի, Մարտիրոս Խարասարցու, Սիմեոն Ապարանցու, Ղազար Սեբաստացու, Ստեփանոս Վարագեցու, Հակոբ Սսեցու, Քոսա Երեցի, Մարտիրոս Ղրիմեցու, Երեմիա Քյոմուրճյանի, Դավիթ Սալաձորցու, Նաղաշ Հովնաթանի և ուրիշների գրական ժառանգությունն իր որոշակի արժեքն ու կարևոր տեղն ունի միջնադարյան հայ գրականության պատմության մեջ: Եվ պատահական չէ, որ հայ բանասերները բազմիցս անդրադարձել են հիշյալ բանաստեղծներին, հրատարակել այս ժամանակաշրջանի տաղասացների երկերի ամբողջական ժողովածուներ՝ համապատասխան բանասիրական ու մատենագիտական, ավելի ուշ նաև գրականագիտական ուսումնասիրություններով[1], կամ առանձին բանաստեղծություններ և այս կամ այն հեղինակին նվիրված կենսագրական-բանասիրական հոդվածներ: Մեկ հեղինակի ամբողջական ժողովածու հրատարակվել է դեռևս 1704 թ.: Նկատի ունենք Գալուստ Հայծակի (Ամասիացի) «Լուսաշավիղը», որը լույս է տեսել Կ. Պոլսում: Իսկ առանձին տաղերի հրատարակությունների հանդիպում ենք ԺԸ դարի առաջին կեսին, օրինակ՝ «Գիրք դպրութեան և տաղարան վայելուչ և գեղեցիկ ի խրախճանս հայոց բարէյարգից և Տշմարտասիրաց» (Կ. Պոլիս, 1714), «Գրքուկս որ կոչի տաղարան վայելուչ և գեղեցիկ» (Կ. Պոլիս, 1740) ժողովածուներում կազմողները հոգևոր տաղերի կողքին գետեղել են նաև այս ժամանակաշրջանի բանաստեղծների երգեր, հանախ, նույնիսկ, չհիշատակելով հեղինակների անուններ:

ԺԹ դարի կեսից առանձին բանաստեղծություններ են հրատարակել «Ճոաքաղ», «Լումայ», «Բազմավէպ», «Արարատ», «Հանդէս ամսօրեայ», «Արևելյան մամուլ», «Բիւրակն», մի փոքր ավելի ուշ՝ «Անահիտ», «Սիոն», «Հասկ», «Հայրենիք» և այլ հայագիտական հանդեսներն ու պարբերականները:

---

[1] *Հրատարակվող երկերի առավել ընդարձակ գրականագիտական վերլուծությունն ու գրապատմական գնահատականը տրված է տողերիս հեղինակի «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» ուսումնասիրության մեջ (Երևան, 1975):*

Մի շարք տաղեր են հրատարակել Գամառ Քաթիպան՝ «Ազգային երգարան» (Ս. Պետերբուրգ, 1856), Մ. Միանսարյանը՝ «Քնար հայկական» (Ս. Պետերբուրգ, 1868) և Ա. Տկանցը՝ «Հայերգ» (Թիֆլիս, 1882) ժողովածուներում:

Սիմեոն Ապարանցու, Հովհաննես Մակվեցու, Ներսես Մոկացու, Միքայել, Հակոբ և Ստեփանոս Թոխաթցիների, Սիմեոն Լեհացու, Հակոբ Սսեցու և մի քանի այլ հեղինակների տաղեր ու պատմական ոտանավորներ է հրատարակել Գ. Ալիշանը «Սիսուան» (Վենետիկ, 1885), «Այրարատ» (Վենետիկ, 1890), «Կամենից» (Վենետիկ, 1896) և «Հայապատում» (հտ. Բ, Վենետիկ, 1901) աշխատություններում:

Մի շարք բանաստեղծություններ կան Դ. Սրվանձտյանի «Մանանայ» (Կ. Պոլիս, 1876), «Համով-հոտով» (Կ. Պոլիս, 1884) ազգագրական ժողովածուներում և «Ազգագրական հանդեսի» հատորներում:

Բանասերներից առաջինը Կ. Կոստանյանցն էր, որ փորձ արեց հրատարակել այս ժամանակաշրջանի բանաստեղծության ճշմարտավորին չափ ամբողջական ժողովածու: Օգտագործելով մամուլում հրապարակված նյութերի մի մասը և ձեռքի տակ ունեցած մի քանի ձեռագիր տպտրաններ, նա իր «Նոր ժողովածուի» չորս պրակների մեջ (Ա պրակ, Թիֆլիս, 1892, Բ պրակ, Թիֆլիս, 1892, Գ պրակ, Թիֆլիս, 1896, Դ պրակ, Վաղարշապատ, 1903) զետեղեց 23 հեղինակների մենական կամ մի քանի տաղեր, կամ մեկ տաղի տարբեր ընդօրինակումներ՝ մեծ մասին կցելով ծանոթագրություններ, ցույց տալով նախկին հրատարակությունների և իր հրապարակած օրինակների միջև եղած տարբերություններ և ուշագրավ դիտողություններ անելով առանձին երկերի հեղինակային պատկանելության մասին: Կ. Կոստանյանցը հրատարակել է նաև «Գրիգորիս Աղթամարցին և իր տաղերը» (Թիֆլիս, 1898) ժողովածուն, որը, սակայն, առաջինը լինելով, զգալիորեն թերի է:

Ավելի ուշ զգալի թվով բանաստեղծություններ են տպագրվել Տ. Պալյանի «Հայ աշուղներ» (հտ. Ա, Զմյուռնիա, 1911, հտ. Բ, Իզմիր, 1914) և Ա. Զոպանյանի «Հայ էջեր» (Պարիս, 1912) ժողովածուներում:

1981 թ. Բեյրութում Սիմոն Սիմոնյանը հրատարակել է Ստեփանոս Դպշտեցու բանաստեղծությունները («Նորահայտ տաղասաց մը՝ Ստեփանոս Դպշտեցի, ուսումնասիրութիւն և տաղեր»):

Բայց, ինչպես բանասիրության մի շարք այլ բնագավառներում, այստեղ ևս ամենամեծ նախախիզ Ն. Ակինյանինն է: Առանձին հեղինակների երկերն ի մի բերելու և դրանց ճշնական բնագրերը ժողովածուներով հրատարակելու առաջնությունը պատկանում է նրան: Այդ տիպի ժողովածուներ են «Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իր տաղերը» (Վիեննա,

1910), «Մովսես Գ. Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը» (Վիեննա, 1938) և «Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարցի» (Վիեննա, 1958) գրքերը:

Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից որոշակի արժեք է ներկայացնում Ակինյանի «Հինգ պանդուխտ տաղասացներ» (Վիեննա, 1921) գիրքը, որի մեջ նա հրատարակել է Մինաս Թոխաթցու և Վրթանես Սոնկեցու երկերի մեծ մասը: Նույնը կարելի է ասել «Մատենագրական հետազոտություններ» (հատ. Դ, Վիեննա, 1938) և «Բաղեշի դպրոցը» (Վիեննա, 1952) աշխատությունների մասին, որոնցից առաջինում նա ներկայացրել է մեկական նմուշ Ազարիա Սասնեցու, Կարապետ Բաղիշեցու, Հակոբ Թոխաթցու, Դավիթ Սալաձորցու, Սիմեոն և Հովհաննես Կաֆացիների, իսկ երկրորդում՝ Ներսես Մոկացու և Ներսես Բաղիշեցու ստեղծագործություններից: Բացի դրանից հայագիտական պարբերականներում նա լույս է ընծայել Նիկողայոս Ստամբոլցու, Պարսամ Տրապիզոնցու, Մաղաքիա Դերջանցու, Ստեփանոս Ձիգ Ջուղայեցու, Թադեոս Կողոնեցու, Սիմեոն Լեհացու և մի քանի այլ հեղինակների ոտանավորներ:

Այս շնորհակալ գործում զգալի ավանդ ունեն նաև բանասերներ Մ. Պոտուրյանը, Վ. Թորգոմյանը, Մ. Նշանյանը, Հ. Քյուրտյանը և Ա. Ալպոյանյանը:

Պոտուրյանը «Նավասարդի» և «Բազմավէպի» էջերում հրապարակել է Զաքարիա Գնունեցու, Թաթոս Թոխաթցու, Մարտիրոս Ղրիմեցու և այլ հեղինակների մի շարք բանաստեղծություններ, ինչպես նաև «Մարտիրոս Ղրիմեցին և իր քերթուածները» փոքրիկ ժողովածուն (Բուխարեստ, 1924—30): Թորգոմյանը լույս է ընծայել Երեմիա Քյոմուրճյանի «Ստամպոլոյ պատմութիւնը» երեք հատորով (Վիեննա, հտ. Ա., 1913, հտ. Բ, 1932, հտ. Գ, 1939), իսկ Նշանյանը՝ «Օրագրութիւնը» (Երուսաղեմ, 1939), որի հավելվածում զետեղել է նաև բանաստեղծի գանձերի, ողբերի, տաղերի մեծ մասը, չափածո ուղերձներն ու թղթերը: Երեմիա Քյոմուրճյանի, ինչպես նաև Թաթոս Թոխաթցու, Եղիա Բերկրեցու, Վարդան Տաղասացի և մի քանի այլ հեղինակների զգալի թվով ոտանավորներ է հրատարակել Հ. Քյուրտյանը «Բազմավէպում» և այլ պարբերականներում: Իսկ Ա. Ալպոյանյանը «Գրիգոր Կեսարացի պատրիարք և իր ժամանակը» (Երուսաղեմ, 1936) աշխատության մեջ տեղ է տվել հիշյալ հեղինակի մի շարք տաղերին:

Հայագիտական հանդեսներում ու զանազան պարբերականներում այս ժամանակաշրջանի երգիչների ժառանգության նմուշներ են հրատարակել բանասերներ Ա. Երեմյանը, Ա. Սուրմեյանը, Ա. Զոպանյանը, Տ. Պալյանը, Բ. Կուլեսերյանը, Ն. Պողարյանը (Ծովական) և ուրիշներ: Պո-

դարյանը բազմաթիվ բնագրեր է մեզ բերել նաև Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանի իր կազմած ձեռագրացուցակում (Երուսաղեմ, հտ. Ա, 1966, հտ. Բ, 1967, հտ. Գ, 1968, հտ. Դ, 1969, հտ. Ե, 1971, հտ. Զ, 1972, հտ. Է, 1974, հտ. Ը, 1977)։ Ոչ մեծ թվով բնագրեր կան նաև այլ ձեռագրացուցակներում։

Համարյա միշտ բնագրերի հրատարակություններն ուղեկցվում են հակիրճ կամ ընդարձակ ծանոթագրություններով և կենսագրական տեղեկություններով՝ հեղինակների մասին։ Ինչ վերաբերում է Ն. Ակինյանին, ապա, պետք է ասել, որ բացի վերոհիշյալ ամբողջական ժողովածուներից, բոլոր մյուս դեպքերում նրա նպատակը ոչ այնքան բանաստեղծությունների հրապարակումն է եղել, որքան բանասիրական նյութի հիման վրա այս կամ այն հեղինակի կյանքի ու գործի համակողմանի ուսումնասիրությունն ու հնարավորին չափ լրիվ մատենագիտություն կազմելը։ Այդ է պատճառը, որ նրա, ինչպես և մեր մյուս նշանավոր բանասերների, աշխատություններր հետագայում մեծապես օգնել են այս ժամանակաշրջանի գրականության հարցերով զբաղվողներին և հենական բնագրեր հրատարակողներին։

ԺԶ—ԺԷ դարերի բանաստեղծական ժառանգությունը հրատարակելու և ուսումնասիրելու ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել նաև սովետական գիտնականները։

Առաջինը Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների հենական բնագրերի ժողովածուն էր, որ ներածական-ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով լույս ընծայեցին Ա. Մնացականյանն ու Շ. Նազարյանը (Երևան, 1951)։ Դրան հետևեց Ա. Մարտիրոսյանի «Մարտիրոս Գրիմեցի» գիրքը (ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958)։ Այնուհետև հրատարակվեցին Մ. Ավդալբեգյանի աշխատասիրությամբ՝ «Գրիգորիս Աղթամարցի» (Երևան, 1963), Վ. Գրիգորյանի աշխատասիրությամբ՝ «Հովասափ Սեբաստացի» (Երևան, 1964), Ա. Պոլոխանյանի աշխատասիրությամբ՝ «Ներսես Մոկացի» (Երևան, 1967), Կ. Սուքիասյանի աշխատասիրությամբ՝ «Սիմեոն Ապարանցի» (Երևան, 1976) հենական բնագրերի ժողովածուները՝ համապատասխան ներածական-ուսումնասիրություններով և ծանոթագրություններով։

Սիմեոն Ապարանցու, Ներսես Մոկացու, Հովհաննես Մակվեցու, Եսայի Նչեցու և Հակոբ Թոխաթցիների և երկու աննանուն հեղինակների պատմական ոդրերի հենական բնագրերը՝ ընդարձակ ծանոթագրություններով հրատարակեց Պ. Խաչատրյանը «Հայ միջնադարյան պատմական ոդրեր» գրքի (Երևան, 1969) բնագրերի բաժնում։

Ա. Մնացականյանը Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածուներում», «Բանբեր Մատենադարանի», «Պատմաբանասիրական

հանդես» և ուրիշ պարբերականներում, ծանոթագրություններով հանդերձ, հրատարակել է Հակոբ Ակնեցու, Հակոբ Սսեցու, Նազարեթի, Օմսուզ Ավետիքի, Մելքիսեդեկի, Քոսա Երեցի, Գրիգոր Վանեցու, Զաքարիայի, Նաղաշ և Հակոբ Հովնաթանյանների և մի քանի այլ հեղինակների որոշ ոտանավորներ: Նույն, ինչպես նաև «Էջմիածին», «ԳԱ. Հասարակական բաժանմունքի տեղեկագիր» և այլ պարբերականներում բնագրեր են հրատարակել Աշ. Աբրահամյանը (Ստեփանոս Դաշտեցու հանելուկները, Ստեփանոս Կեղեցու և Վարդան Կաֆացու չափածո տոմարները և այլն), Ս. Քոլանջյանը (Խաչատուր Թոխաթցի), Օ. Եզանյանը (Քուչակ Վանեցի), Հ. Աբրահամյանը (Ստեփանոս Դաշտեցի, Նաղաշ Հովնաթան), Վ. Միքայելյանը (Խասպեկ Խաչատուր, Սիմեոն, Վարդան և Հովհաննես Կաֆացիներ), տողերիս հեղինակը (Երեմիա Քյոմուրնյան, Մարտիրոս Խարասարցի) և ուրիշներ:

Մի քանի բնագրեր է մեջ բերել Հ. Անասյանը «Հայկական մատենագիտություն» աշխատության երկու հատորներում (Երևան, 1959 և 1976).

Եվ, այնուամենայնիվ, այս ժամանակաշրջանի հայ բանաստեղծության մեկ ամբողջական ժողովածուի հրատարակությունը մնում է օրակարգում հետևյալ պատճառներով.

Ա. Ժամանակի բանաստեղծների զգալի մասի երկերը ցարդ անտիպ են և, ցրված լինելով մեր գրչագիր մատյաններում, անծանոթ ընթերցող հասարակայնությանը:

Բ. Առանձին ժողովածուներով չհրատարակված հեղինակների երկերը, բացի Ն. Ակինյանի մի քանի հրապարակումներից, քաղված են մեկ, կամ, լավագույն դեպքում, երկու ձեռագիր աղբյուրներից: Այսինքն՝ այդ հրատարակությունները, չընդգրկելով բոլոր ընդօրինակումները, չեն ներկայացնում երկերի նշգրտված, այլև երբեմն լրիվ բնագրերը:

Գ. Նույնիսկ հիշատակված հրապարակումները զգալի չափով անմատչելի են շատերին, քանի որ գետեղված են զանազան հազվագյուտ պարբերականներում, ժողովածուներում և բանասիրական ուսումնասիրությունների մեջ:

Այժմ, երբ մեր բանասիրությունն ավելի շատ հնարավորություններ ունի հանգամանորեն ուսումնասիրելու անցյալի, այդ թվում՝ ԺԶ—ԺԷ դարերի գրական ժառանգությունը, կարծում ենք ժամանակ է ձեռնամուխ լինելու այդ գործին՝ ի մի բերելու մինչ այժմ հրատարակված նյութերը, գրչագիր մատյաններից հանելու դեռևս չհրապարակված երկերը, օգտագործելով ձեռքի տակ եղած տպագիր և ձեռագիր բոլոր աղբյուրները, նշգրտված քննական բնագրերով ներկայացնելու ժամանակի բանաստեղծներին, որոնց մի մասն, առհասարակ, մինչև օրս չի ներկայացվել:

Այս նպատակով է կազմված սույն ժողովածուն, որը նյութի առատության պատճառով հրատարակվում է երկու հատորով:

Առաջին հատորն ընդգրկում է այն հեղինակների ստեղծագործությունները, որոնք հիմնականում գործել են ԺՉ դարում, թեև դրանց մեջ կան նաև ԺԸ դարից եկող բանաստեղծներ, ինչպես և այնպիսի հեղինակներ, որոնք, հանդես գալով ԺՉ դարում, հասել են ԺԷ դարի առաջին տասնամյակներին: Երկրորդ հատորում զետեղված են ԺԷ դարի բանաստեղծների ստեղծագործությունները: Սակայն այստեղ ևս կան բանաստեղծներ, որոնք հանդես են եկել ԺՉ դարավերջին և այնպիսիք, որոնք ապրել են մինչև ԺԸ դարի առաջին տասնամյակները:

Հեղինակները միմյանց են հաջորդում ժամանակագրական կարգով, իսկ այն դեպքում, երբ հնարավոր չի եղել գտնել կենսագրական որոշակի տեղեկություններ, նրանց ապրած ժամանակաշրջանները որոշելիս նկատի ենք ունեցել կողմնակի կռվաններ, այդ թվում՝ թե որ ժամանակների գրչագրերում են զետեղված նրանց ոտանավորների մեզ հասած ընդօրինակությունները:

Միաժամանակ աշխատել ենք պահպանել առանձին վանական ու բանաստեղծական դպրոցների (Վարագի, Թոխաթի, Կաֆայի) ամբողջականությունը: Այդ պատճառով մասնակի շեղումներ ենք թույլ տվել ժամանակագրական կարգից:

Յուրաքանչյուր հեղինակի երկերը դասավորելիս ոչ միշտ ենք կարողացել նշանակությամբ պահպանել ժամանակագրական կարգը, քանի որ ոտանավորների հորինման ստույգ թվականները, հաճախ, հայտնի չեն:

Ժողովածուն կազմելիս օգտագործել ենք ՀՍՍՀ Մինիատյուրների խորհրդին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) գրչագրերում պահպանված նյութերը, մեր երկրի սահմաններից դուրս գտնվող ձեռագրատներից առացված սակավաթիվ մանրաժապավենները և բոլոր տպագիր աղբյուրները: Այս ամենի հիման վրա կազմել ենք բանասիրությանն արդեն հայտնի հեղինակների երկերի ճշնական ու հնարավորին չափ նշգրիտ բնագրերը, հրատարակության ենք ներկայացրել ցարդ անհայտ մի շարք հեղինակների, ինչպես նաև ծանոթ հեղինակների դեռևս անտիպ բանաստեղծություններ:

Ժողովածուի մեջ չեն մտել.

Ա. Այն հեղինակները, որոնց ստեղծագործությունների համեմատական բնագրերն արդեն հրատարակված են առանձին ժողովածուներով (Գրիգորիս Աղթամարցի, Հովսեփ Սեբաստացի, Սիմեոն Ապարանցի, Ներսես Մոկացի, Մարտիրոս Ղրիմեցի, Նաղաշ Հովնաթան, Ստեփաննոս Դաշտեցի, Գալուստ Ամասիացի):

Բ. Այն պատմական ողբերը, որոնք հրատարակել է Պ. Խաչատրյանը՝ վերը հիշատակված գրքում:

Գ. Խաչատուր Թոխաթցու «Պատմութիւն Վենետիկ բաղաքին» նորագրական բնույթի չափածո երկը, որի ճշգրիտ բնագիրը հրատարակել է արժանահիշատակ Կ. Մելիք-Օհանջանյանը (տե՛ս «Պատմութիւն Փարէզի և Վենետայի և Պատմութիւն Վենետիկ բաղաքին», Երևան, 1966):

Դ. Զաքարիա Գնունեցու ստեղծագործություններ: Սրանց մի մասը հրատարակել է Ն. Ակինյանը՝ հիշատակված «Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը» գրքում: Հինգ ուրիշ տաղ հրատարակել է Մ. Պոտուրյանը «Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր անտիպ տաղերը» հոդվածին կից (տե՛ս «Բազմավէպ», 1910, էջ 154—160), իսկ «Աղեխսանդրի պատմութեան» համար գրված կաֆաները, այլ ներհնակների կաֆաների հետ միասին, հրատարակության է պատրաստում Հ. Սիմոնյանը:

Ե. Երեմիա Քյոմուրճյանի ողբերը, չափածո ուղերձներն ու թղթերը, գանձերը (բացի մի գանձից) և տաղերի զգալի մասը, որոնք հրատարակել է Մ. Նշանյանը (տե՛ս *Երեմիա Քյոմուրճյան*, «Օրագրութիւն», հավելված):

Զ. Ժողովածուից դուրս են մնացել նաև այն ներհնակները, որոնց ոտանավորներն անցյալի բանաստեղծների ստեղծագործությունների անարվեստ կրկնություններն են: Նույն պատճառով դուրս են թողնված ժողովածուի մեջ ընդգրկված ներհնակների առանձին ոտանավորներ (սրանց մատենագիտությունը տե՛ս «Ցանկեր, բառարան» բաժնում):

Ժողովածուն կազմելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

Ա. Քննական բնագրերի համար հիմք ենք ընդունել հնագույն և առավել ամբողջական օրինակները: Այս սկզբունքից շեղումներ թույլ են տրված միայն այն դեպքերում, երբ հնագույն օրինակները թերի են, աղավաղված, կամ ունեն այնպիսի տարրերություններ, որոնք չեն համապատասխանում բանաստեղծության ոգուն, կամ տարբեր են ձևով: Նման դեպքերում հիմք են ծառայել համեմատաբար ավելի անաղարտ և հին օրինակները: Անհրաժեշտության պահանջով երբեմն բնագրերի մեջ մուծել ենք ո՛չ հիմնական օրինակների առանձին տարբերություններ:

Բ. Երբ ձեռքի տակ ունեցել ենք այս կամ այն ոտանավորի և՛ ձեռագիրը, և՛ դրա հիման վրա հրատարակված օրինակը, վերջինս հաշվի չենք առել:

Գ. Որոշ միջամտություններ ենք արել ինչպես մեկական օրինակներով հայտնի, այնպես էլ բազմաթիվ օրինակների բաղդատությամբ կազմված ճշգրիտ բնագրերում, այդ մասին հիշատակելով տողատակում:

Գ. Օգտագործված ձեռագիր աղբյուրները նշանակել ենք լատինական այբուբենի մեծատառերով, տպագիր աղբյուրներ՝ նույն այբուբենի փոքրատառերով: Երբ լատինական տառերը չեն բավականացրել, օգտագործել ենք նաև հունական այբուբենը:

Դ. Հրատարակելով Ն. Ակինյանի կազմած ճենական բնագրերը, մեր ու նրա պայմանական նշանները միմյանցից տարբերակելու համար, նրա նշանների վրա դրել ենք ապաթարց (*A' B' C'* և այլն): Յուրաքանչյուր դեպքում այդ մասին հիշատակություն ենք արել համապատասխան ծանոթագրության մեջ:

Ջ. Քննական բնագրերի տողատակերը կազմված են հետևյալ բաժիններից.

ա) «Խորագիր»: Այստեղ մեջ են բերված բոլոր խորագրային տարբերցվածները: Քննական բնագրերի համար ընտրված են այն խորագրերը, որոնք ավելի են համապատասխանում ոտանավորի բովանդակությանը, առավել ևս եթե դրանցում հիշատակվում են հերիճակների անունները:

բ) «Բնագրեր»: Այս բաժնում տողերի և բառերի հաջորդականությամբ ցույց ենք տվել յուրաքանչյուր օրինակի տարբերությունները բնական բնագրից, տողակարգի անհամապատասխանությունները, ինչպես նաև մեջ ենք բերել այս կամ այն օրինակում եղած, բայց բուն բնագրին ոչ հարազատ, օտարամույծ տողերն ու տները:

է. Տողատակերը չծանրաբեռնելու համար բանաստեղծությունների աղբյուրները ցույց ենք տվել ծանոթագրությունների մեջ: Ժամանակագրական կարգը շխաթարելու նպատակով ձեռագիր և տպագիր աղբյուրները չենք անջատել միմյանցից և չենք խմբավորել: Երբ չի նշված, թե որտեղ է պահվում ոտանավորի ձեռագիրը, նշանակում է գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում:

Ը. Ոտանավորների տողատումներն ու տնատումները կատարել ենք ըստ ժամանակի տպագրական կանոնների:

Թ. Կետադրությունն ու առոգանության նշանները դրված են համաձայն արդի հերականության պահանջների:

Ժ. Ձեռագիր աղբյուրներում հայերեն տառերով նշանակված թվական արժեքները բնական բնագրերում արտահայտված են բառերով: Տողատակում բերված են դրանց տառային համարժեքները:

ԺԱ. Գաղտնավանկ «ր» ձայնավորը պահել ենք միայն այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է եղել տաղաչափական նկատառումներով:

ԺԲ. Բաղաձայնին նախորդող «ու» երկբարբառը, բացառությամբ այն բառերի, որոնց մեջ դրան հաջորդող ձայնավորը նոյնման ժամանակ

ողվել է (տաւիղ-տաւղոյն և ոչ տօղոյն), վեր ենք ածել «օ»-ի: «Աւ»-ը պահել ենք միայն ծայրակապերում:

ԺԳ. Բառասկզբում և ձայնավորից առաջ՝ բառամիջում, ինչպես նաև բառավերջի բաց վանկում սխալ գործածված «օ»-երը դարձրել ենք «աւ» (օրինակ զիրաւունս *փխ.* զիրօունս, աւարտել *փխ.* օարտել, փախաւ *փխ.* փախօ և այլն):

ԺԴ. Ամենուրեք փոքրատառ «եւ»-երը դարձրել ենք «և»:

ԺԵ. Ենթակայական դերբայի «ող», «աւղ», «օղ» վերջավորություններից նախընտրել ենք «ող»-ը:

ԺԶ. Ուղղել ենք «յ» կիսաձայնի գրության հետ կապված սխալները, օրինակ՝ ամենուրեք «ակամա» դարձրել ենք «ակամայ», «կոչեայ» դարձրել ենք «կոչեա», «բարէխօսեայ»՝ «բարէխօսեա» և այլն:

ԺԷ. Հատուկ անուններից բացի մեծատառերով են գրված նաև ազգությունների ու ժողովուրդների անունները և տառերով արտահայտված թվական արժեքները:

ԺԸ. Ժամանակի լեզվի պատկերը ճիշտ ներկայացնելու նպատակով, պահպանել ենք գրաբարի կանոններից թույլ տրված որոշ շեղումներ, որոնք տիպական են այս ժամանակաշրջանի բանաստեղծությունների զգալի մասի համար, օրինակ՝ «ի» ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովի վերջավորությունը, որն այս ոտանավորներում գրեթե ամենուրեք ոչ թե «ւոյ» է, այլ «ոյ» (հոգոյ *փխ.* հոգւոյ, գինոյ *փխ.* գինւոյ և այլն): Չենք միջամտել նաև այն դեպքերում, երբ բառամիջի «ու»-ն փոխարինված է եղել «ըւ»-ով կամ «ըվ»-ով (լըւեալ *փխ.* լուեալ, թրվին *փխ.* թուին և այլն):

ԲՆԱԳՐԵՐ

* * *

Փառք անեղին աստուածութեան,
Որ անսկիզբն և անվախճան,
էր միշտ և է՛ առանց թուական,
Ջունի սպառումն կատարման։

Ձգեաց զերկինս որպէս վրան
Եւ հաստատեաց առանց հիման,
Եւ պլուսաւորսն բազմազան,
Առանց ուրուք միշտ լնթանան։

Ձհրեշտակս յերկինս եդ փառաբան,
Ձմարդիկ յերկիրս գործական,
Պատճառ լինին աստ շինութեան,
Մինչև մահուամբ ի հող դառնան։

Յորոց և մինն և անպիտան,
Բաղիշեցիս տեղեաւ բնական,
Եւ Կարապետ կոչն իմ անուան,
Ի սուրբ գործոց զուրկ և ունայն։

Քանզի գործովս եմ անարժան,
Եւ զձևն ունիմ աբեղութեան,
Դարձայ մեղաց շտեմարան,
Աստուծոյ ի՞նչ տամ պատասխան։

Ձերգս Դաւթի յոյժ գովական,
Որ և կոչի Սազմոսարան,
Ձհանուրց մանկան սա վարժարան,
Յաստուածային բանս գիտութեան։

Այլ և զաղօթս խորհրդեան,
Փրկչին մերոյ մարմնոյ 'ւ արեան,

16 Տպագրում՝ զիրկ

Ա II 24756

ՀԱՅԿ. ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Պատարագին մեր փրկութեան,
Որ ի խաչին դմեղս եսպան։

Ե՛ւ զաղօթիցն հանրական
Ե՛ւ զքարոզից ժամադրական,
Զոր հայրապետք մեր սրբազան
Վասն աղօթից եդին սահման։

Եղև սա գիծ իմում մատան
Եւ անարեւստ գոլ գրչութեան,
Հռչակաւոր վանս գովական,
Որ եղրդուտ կոչն իւր անուան։

Որ ի սահմանս է Տարօնեան,
Ջնփրատ ունի իւր յանդիման,
Դիմահայեաց արեւելեան
Եւ յահեկէ զՄուշն աւան։

Ի իննտասան թիւն յոբելեան
Եւ աւելորդն երկոտասան,
Յունիս ամսոյն ի յաւարտման,
Եղև ղրաւս գրչական։

Ի ժամանակս չարութեան,
Որպէս պատմէ Աւետարան,
Քանզի բազում անձն մարդկան,
Որ մեռելոցն ցանկանան։

Քանզի բաժակն բարկութեան
Բաբելացոյ ժանդին նման,
Նա՝ մին ազգին Իսրայելեան,
Սա՝ ընդհանուր սեռից մարդկան։

Շահ Իսմայիլ այժմոյս իշխան,
ՅԱրտաւելու քաղքէն ելան
Եւ տիրեցին երկրի լման,
Միջագետաց և Խորասան։

Որ և յայտնի եղ իւր նշան՝
Զխոյրն կարմիր, սուր և երկայն,
Եւ թարկս ունի երկոտասան
Եւ Ղզլպաշ կոչի ազգն այն։

Որք ընդ յառնելն ի մարտ մտան,
ԶԱլանդն արին փախստական,
Զօրքն ամենայն անդ չնչեցան,
Ալանդն յԱմիթ առ պվախճան։

Երբ յապիկին և զօրացան
Եւ բռնութեամբ պիտախթն կալան,
Եւ արձակեալ յոյժ լայնացան
Եւ բարձրացան լերանց նման։

Եւ արևելք խուժաստան
Ազգն Պարսից և Քրդաստան,
Սևոք և ծնունդքն Թորգոմեան
Միահամուռ մահմետական։

Որք որ կամայ և յակամայ,
Զօրէնան իւրեանց պինն ուրացան,
Եւ նորագոյն օրէնս ուսան,
Իսմայելին հնազանդեցան։

Եւ յամենայն կողմանսն որ կան,
Որք ի մօտ ՝ւ ի հեռաստան,
Առին զնորայն նզեալ նշան
Եւ ի յանձինս իւրեանց զգեցան։

Եւ այս են ամք երկոտասան,
Որ միջոցիս այս տիրացան,
Եւ կարգ առեալ պինտ գնան,
Զնջեն զներհակն և տիրանան։

Եւ որք ներհակ կացին ՝ւ կան,
Յիշխանական փառացն անկան։
Բազումք ի սուրս մաշեցան,
Եւ այլք անգիւտ վտարեցան։

Ո՛չ խնայեն յապգս մարդկան,
Եւ ո՛չ նեղեն և թուլանան,
Ո՛չ ողորմին տղայ մանկան
Եւ ո՛չ յալիս ծերոց գթան։

Այլ են բնութեամբ որպէս գազան
Եւ ծարաւիք գոլով արեան,

Զբոլոր աշխարհս պամենայն
Առին յաւար և ի թալան։

Եւ այժմ իջին ի Քրդաստան
Պատեալ զԲադէշ բերին յառման,
Եւ զայլ դղեակսն որ ի շուրջ կան,
Յիսմայելի զօրացն առան։

Նախ քան զգալ զօրաց շահին
Ազգն Մարաց ամբարտաւան,
Զերկիրս բոլոր հրդեհեցին,
Ո՛չ շէն թողին և ո՛չ աւան։

Եւ զկողոպուտ երկիրս առին,
Ջառ և զաւար և զթալան։
Զչորքոտանիս ժողովեցին,
Զիւղ և զմեղր և զցորեան։

Էցին զամրոցս իւրեանց ի լի
Ամբարեցին որպէս մառան,
Ի գալ զորացն Թշնամեաց
Ելեալ ի բերդքն և ամրացան։

Ոչ նայելով զկամսն աստուծոյ
Գործոց իւրեանց եղեն հաւան,
Զբանն Դաւթի մարգարէին
Առ ի յոչինչ համարեցան,

Որ նախատէ միշտ զայնպիսին
Եւ համարի որպէս զանբան,
Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք,
Մատնին պահողքն ի դատաստան։

Եւ յորժամ եկ զօրքն շահին,
Եւ ժամանակն էր ձմերան,
Կրկին պատիժ էհաս Հայոց,
Բազումք ի ձիւնն մսեցան։

Ես ոչ կարեմ գրել ի գիրս,
Զպատուհասս, որ դիպեցան,
Զի ամենայն անձն խնդրէր
Մահու տապան և գերեզման։

---

122 Տպագրում՝ ձմռան

Պիտէր այժմոյս երեմիայ,
Շատ ողբասացք և լալական,
Զի ողբային զազգս Հայոց,
Որ յայսպիսի դրունս հասան։

Զգեցին զերկիրս ի պահանջման
Եւ հարկս առնուն առանց սահմանի,
Երկիրս եղև որպէս խոպան
Եւ ամենայն անձն ի դողման։

Այսպէս և մեք եմք ի տանջման,
Ընդ ազգիս Հայոց ինշուառական,
Զի յամէն օր որ լուսանան,
Միշտ պահանջողք կան և զան։

Ոմանք առևալ չեռս ընթանան,
Ոմանք նստեալ առնուն յաման
Եւ ոմանք նոր բերեն նշան,
Ինգրեն ցրեան և զահեկան։

Աշխարհս եղև չոչ ցիր ու ցան
Ի սատցուածոց աղքատացեան,
Ինչր բազմաց գնաց ինալան
Եւ են բազումք, որ զերեցան։

Ի չայսմ ամի ինշուառութեան,
Կամք որպէս նաւ ի չերեմման,
Բնաւ չունիմք հանգստարան,
Այլ հողմահար եմք ի դողման։

Կամք իբր ալի ծովու շարժման,
Տարաբերիմք անկայական,
Իբրև զջուր գետոց հոսման,
Որ վտարևալ չեռս ոչ զառնան։

Համբաւ շահին տարածեցան,
Ի չորս անկիւնս երկրի հասան,
Ի չարևմուտս՝ ի Ֆռանգստան
Եւ չարևելս՝ ի Հնդուստան։

Եւ թագաւորք երկրի զողան,
Կան ի չերկիւղ և ի սասան,

Ընծայաբերք լինին և գան,
Զի ազատման արժանանան։

Ոմանք պատիւ առեալ դառնան,
Ի օր ըստ օրէ յոյժ մեծանան,
Ոմանք յերկաթ ՚ւ ի բանտս եղան,
Կան ի կապան և ի զնդան։

Բազմաց գլուխն յանձանց բարձան,
Տունքն ի հիմանց տապալեցան
Եւ ստացուածքն մարմնական,
Ի թշնամեաց զօրացն առան։

Աղէկսանդրու եղև նման,
Բախտի ծնունդ յաջողաբան,
Զոր իմաստունն եգիպտացի
Դիտեաց զժամն ծննդեան։

Եւ ես զսա նոյնպէս կարծեմ,
Բարի ժամու գոլ ի ծննդեան,
Որով յաղթէ միշտ թշնամեացն
Եւ զհակառակսն առնէ խափան։

Զոր տնօրինիչն ամենայնի,
Ստեղծող գոյիցս աստուածն բան,
Զինչ որ կամի այնպէս առնէ
Եւ մեք լինիմք ի հիացման։

Կամ ըստ մեղաց մերոց յարոյց,
Որով դատէ զամենեսեան,
Սերմանողին պարտ է հնձել,
Զոր սերմանեացն առնուլ զփոխան։

Որպէս ի հնումն Իսրայէլի
Դատէր զաշխարհն Հրէաստան,
Երբ յօրինաց ելանէին,
Մատնէր ի սուր ՚ւ ի գերութեան։

Նոյնպէս այս մեզ հանդիպեցաւ,
Վասն գործոց մեր չարութեան,

---

196 Տպագրում՝ և այս

Որով ունիմք և ոչ պահեմք,
Վասն այն և մեզ պատահեցան:

Զի քրիստոնեայ եմք անուանեալ,
'Ի յայլ վեհագոյն գերաստիճան,
'Ի աշխարհական գործով շրջիմք,
Որպէս զԿայէն եղպայրասպան:

Այս յիրաւի մեզ պատահի,
Արդար է Տէր ի դատաստան,
Որ մերձակայն է իմանայ,
Մտօքն իւրովք լինի հաւան:

Զի որ ի մէնջ է ի ծածուկ,
Նմա յայտնի է և այեան,
Տայ զպատիժ պատուհասին,
Առ հասարակ որդւոց մարդկան:

Ոչ որոշէ զչարսն ի բարեաց,
'Ի յանցաւորացն տայ միայն,
Ամենեցուն արբուցանէ
Մեզ զբաժակն բարկութեան:

Որպէս զանձրև և ըզարև
Առհասարակ ծագէ մարդկան,
Եւ պիտանի բոյսք և անպէտք,
Արբցեն զջուրն յոռոգման:

Կամ որպէս խանձ դիցեն մայրեաց
Հրդեհ ի շամբս եղեգան,
Չորք և դալարք ի միասին
Վառին ի հուր մինչ ի վաղճան:

Այժմիկ աւարտ առնեմ բանիս,
Զի ընթերցողքն ոչ նեղանան,
Կամ անպատեհ բանս խօսին
Խոժոռ սրտիւ և ձանձրանան:

Յինն հարիւր Հայոց թվական,
Վաթսուն երկու թիւն յաւելեան,
Աստ գրեցի սակաւ զայս բան,
Ապագայիցդ ծանուցման:

Ես կարապետ անձն անարժան,
Ոտից ձեր հող եմ և կոխան,
Որք ընթեռնուք և որք լսէք,
Զմեզ յիշման առնէք արժան.

Եւ դուք գրիք ի գիրն անջինջ,
Ի արժան լինիք արքայութեան
Եւ մեք ընդ ձեզ մասն ընկալցուք,
Յորժամ գայ Տէրն ի դատաստան։

2. ԳԱՆՁ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻՆ Ի ԳԾՈՂԷ ԱՅՍՄ ԳԱՆՁԱՐԱՆԻՍ, ՅԱՆՄԻՏ ԿԱՐԱՊԵՏԷ ԲԱՂԻՇԵՑԻՈՑ

Առաջիկայ գանձն ասէ

Կամիս ասել՝ գանձ եմ համով,
Ասա դու զիս եղանակով,
Ոտեալ բանիւ շարադրելով,
Ամուլ մտայ ծնունդ գոլով։

Պարզ ի թխթի գրնցա մրով,
Եղանակէ դու զիս ձայնով,
Տուր օրհնութիւն Փրկչին յոլով
Եւ գօրանաս դու աստուծով

Կենդանարար Որդիդ միածին
Ի արարչակից բանդ աստուածային,
Վասն Ադամայ քո նախաստեղծին,
Որ մերկացաւ զփառսն առաջին։

Ըստ յանցանաց քո պատիւրանին,
Ունկընդրութեան բանից բանսարկուին,
Կերան զպտուղն, որ ի մէջ դրախտին
Եւ մերկացան զփառս աստուածային։

Թողին ի բաց զքո տնկած այգին
Ի արտաքսեցան ըստ քո հրամանին,
Դրախտէն ելան ինքն և կին նորին
Ի աշխատանօք զերկիր կոծէին։

Եւ զաւակօք զաշխարհս լցին
Ի ինքեանք մահուամբ յերկրէս գնացին,
Եւ բանսարկուն, որ էհան զնոսին,
Գերի վարեաց զհոգիս նոցին։

Եւ վեց հազար ամ բոլոր կացին
Մէջ գժոխոցն ի խոր խաւարին։
Մինչ գթացեալ քո Հայրդ երկնային
Ի առաքեցեր զՈրդիդ միածին։

Սուրբ աւետեօք հրեշտակապետին,
Բանն աստուած եղև կուսածին։
Բարեխօսութեամբ սրբոցս բղձական.
Զնջեա զմեղս մեր մարմնական։

Արդ բարերար Որդիդ միածին,
Որ գթացար յազգս ադամային
Եւ ընտրեցեր յորդոց մարդկային
Քեզ սպասաւոր և բանից քոյին։

Նախ զմարգարէսն, որ յառաջն էին,
Որք զծնունդ քո գուշակեցին
Եւ զառաքեալսն, որ ի յետ նոցին,
Որք զչարչարանս և զմահ յանձն առին։

Զբոլոր աշխարհս ի քեզ դարձուցին,
Տիեզերեաց զքեզ տէր ծանուցին,
Եկեղեցեաց հիմն արկանէին,
Եւ քահանայս միշտ ձեռնագրէին։

Զհաւատացեալսն բազմացուցին,
Մինչ զբոլոր աշխարհս լցին.
Հայրապետաց գունդք յառաջ եկին
Եւ խնամատար հօտիդ լինէին։

Ժողովրդեան քում քարոզէին,
Զոր և արեամբ գնեցեր ի խաչին,
Յորոց մինն է Կապադովկացին
Ի է համանուն մեր Լուսաւորչին։

Աստուածարան Գրիգոր Սքանչելին,
Ընկերակից Բասիլիոսին,

Վարք հրեշտակաց ունէր ի մարմին
Եւ քարոզէր զքեզ, Տէր մարդկային։

Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական,
Ջնջեա զմեղս մեր մարմնական։

Բամիչ բոլոր աստուած բարերար,
Արարածոց սկիզբն և վճար,
Որ ընտրեցեր քեզ հաճոյ արար,
Աստուածաբանն սուրբ և արդար։

Ետուր շնորհ դու աղբիւրաբար,
Որ քարոզէր զքեզ, Տէր բարերար,
Ջհատնումն քո անշփոթաբար,
Որ միացար դու անճառաբար։

Ի յօրինակ մեզ և գաղափար,
Մերում բնութիւն և ոչ թէ օտար.
Սա քարոզէր զքեզ իշխանաբար
Եւ զհերձուածողսն առնէր սա խանգար։

Սա պաղատէր միշտ հանդարտաբար,
Խաղաղութիւն խնդրէր սա, դադար։
Սա աղօթիւք վերկինս բանար
Եւ արտասուէր միշտ անձրևաշար։

Սա սրբութեան դանձն արար տաճար,
Եւ հանապազ, Տէր, առ քեզ կարդայր,
Սա Բարսեղի էր հոգով եղբայր
Ի յանձն իւր կրեաց զնորին հանճար։

Սա արար ճառս համեղաբար
Եւ բանք սորայ է ոպէս շաքար.
Աստուածաբանդ սուրբ և արդար,
Մեզ բարեխօս լեր դու անդադար։

Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական,
Ջնջեա զմեղս մեր մարմնական։

Ամենայնի աստուած բաւական,
Որ անսկիզբն ես և անվախճան,
Որ ընտրեցեր ի յորդոց մարդկան,
Զքաջն Գրիգոր սուրբն Աստուածաբան,

Անուանակից և համանման
Լուսաւորչին մեր Պարթևական.
Գնաց յԱթէնս՝ մայրն իմաստութեան
Զգիրս արտաքին ուսաւ զամենայն։

Ինքն և Բարսեղն Կեսարական
Էին յԱթէնս ի միում սեղան,
Բայց Բարսեղ նկն յերկիրն իւրական,
Գրիգոր եկաց ի պաշտօնն ուսման։

Մինչ ելից երեսուն ամ լման,
Ի եղև հասու գործոյն քերական,
Մինչ խոստացան քաղաքն ամենայն
Կացուցանել զնա իւրեանցն իշխան։

Զոր ոչ էառ յանձն բազ վկայն,
Այլ նկն ի յերկիրն իւր սեպհական,
Ալեաց ծովուն երեսս նա հրաման,
Որ ընդ ասելն Հանդարտեցան։

Քաջդ Գրիգոր և Աստուածթարան,
Բարեխօսեա՛ առ անմահ արքայն։
Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական
Ջնջեա զմեղս մեր մարմնական։

Պետդ Հանուրց ապգիս Հայկազան,
Գլուխ եղեր պետից վերհական,
Ի Բարսեղէ առեր գաւազան,
Հովվել զհօտն հոռոմական։

Ի Կոստանդնուպօլիսն աննման,
Նստար յաթոռ ամս երկոտասան
Եւ մաքրեցեր զքաղաքն ամենայն,
Ի հերձուածոցն մարդադաւան։

Թագաւորին եղեր սիրական
Եւ իշխանացն ամուր ապաստան,
Գու ընտրեցար ի յորդոց մարդկան,
Ո՛վ Հայրապետ, սուրբ Աստուածթարան։

---

104 Ձեռագրում՝ ...ոմական

Յուլիանեայ եռուր պատասխան,
Ի յամօթ արիր դդիւաբնակ արբայն.
Քրիստոնէից նա ոչ տայր հրաման,
Ուսանելոյ զգիրս իմաստութեան:

Սա արար գիրս նոցա փոխան
Եւ զարտաքինս եցոյց զրաբան,
Մինչ զղջացաւ ուրացող արբայն,
Ի յիւր խորհրդոցն եղև փոշիման:

Բարեխօսութեամբ սրբոցս ըղձական,
Ջնջեա զմեզս մեր մարմնական:

Եւ այս Գրիգոր այրս սքանչացած
Երկոտասան ամ յաթոռն եկաց,
Զբիւզանդիայ քաղաքն մաքրեաց
Ի յամենայն չար հերձուածոցաց:

Պահս Ե ի յաղօթս էր միշտ պարապած,
Ի ողորմութիւն բաշխէր աղքատաց,
Օտարանոցս բազում շինեաց
Եւ հայր լինէր որբոց և այրեաց:

Եկին ոմանք ի յԱղեքսանդրայ
Եւ կամէին զնա ձգել ի փառաց,
Զոր թագաւորն ընդ աչն յոյժ մախաց
Եւ բարկութեամբ եհան յերեսաց:

ԶԱստուածաբանն կրկին պատուեաց
Ի արժան արար զնա բազում փառաց
Եւ յետ սակաւ ինչ ժամանակաց
Սուրբն Գրիգոր կամաւ հրաժարեաց:

Ի Կոստանդնուպօլսէն յառաջեաց
Եւ ի բնիկ գաւառն իւր գնաց,
ՅԱրազիոն գիւղն դադարեաց,
Մինչև վաղճան ևկ ժամանակաց:

Յիշեա և ողորմեացի ննջեցելոցն յուսով յարութեան,
խնդրեմք,
Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս
բարեաց պատգևել մեզ խնդրեմք:

Տէր վարդապետ, սուրբ Աստուածարան,
Քրիստոնէից դու զէն և վահան,
Բարձր պարիսպ՝ ամուր ապաստան
Ի նեղութեան մեր լեր օգնական:

Աստուածածին կոյս անապական
Որ սուրբ հոգոյն եղեր բնակարան,
Ղամբարափայլ ջահ անշիջական,
Արփի լուսոյ, աստղ արեգական:

Ի քէն խնդրէ ժողովս ամենայն
Պահել զմեզ անփորձ՝ ւ անսասան,
Շնորհեա մեզ զէն բարձր վահան,
Զչար թշնամին առնել մեզ կոխան:

Եւ հանապազ լեր մեզ օգնական
Կցորդութեամբ սրբոցն ամենայն,
Ցրուեա գխորհուրդն ներգործական,
Որք չարութեամբ զքո ծառայքս որսան:

՝Ի բարեխօս լեր մեզ անխափան
Առ արարիչ անմահից արքայն,
Առցես ընդ քեզ կցորդ՝ ւ օգնական
ԶՅովանէս և զնախնի վկայն:

Սուրբ Գրիգորն Պարթևական
Եւ զքաջ վարդապետն Աստուածարան,
Եկեղեցոյս և ժողովրդեան
Լեր օգնական յաւուր նեղութեան:

Ողորմեաց մեզ Տէր աստուած մեր, ըստ մեծի
ողորմութեան քում:

3. ՂԱԶԱՐՈՒ ԵՐԵԿՈՅԻՆ ԱՍԱ

Ի Կարապետ Բաղիշեցւոյ. Կաֆայ գանձիդ

Կամիս ասել՝ ասա դու զիս,
Արի և քաջ ձայն թէ ունիս,
Բամեալ բանիս ի յատենիս,
Առաջի մեծ սիւնհոգոսիս:

Պնդեալ զքո մէջքդ և զգօտիս
Եւ ապա տուր դուն ձեռքդ ի յիս,
Տեղս ցուրտ չէ՝ մբսիս,
Ի տեսողացդ պատկառիս։

Կենդանատու բանն ի սկզբանէ,
Այն որ Հօր զաշխարհս յօրինէ.
Ներպարունակ բանիւ զարդարէ,
Զյաւիտենից հիմունս արկանէ։

Հանճարազոյգ անդունդս կազմէ,
Իմաստութեամբ ձեղունս յօրինէ,
Քառից բնութեանց զաշխարհս պարփակէ
Եւ յարևելս զեդեմ յօրինէ։
Ի ներհակաց պատկեր նկարէ,

Անճառ բնութիւն իւր հաղորդ առնէ,
Այսօր զմեռեալ մարդն յարուցանէ
Եւ վերստին զնա զարդարէ։
Օրհնեալ աստուածդ նկեալ ի փրկութիւն աշխարհի,
Աղաչեմք։

Անտանելի բանն անհաս խորին,
Որ ի Հօրէ միշտ . . . .
Յոնարհեցուց . . . . ի ստորին,
Պարագրեցաւ յարգանդի կուսին։
Յետ կատարեալ չափու հասակին,
Կամէր լնուլ զօրէնսն ի գրին։

Առաքելոց սրբազան գնդին,
Յայտնէր զեղեալսն առ բարեկամին,
Եթէ ննջեաց Ղազար սիրելին,
Պարտ է երթալ ի Հրէաստանին։

Նոքա զքուն մարմնոյ կարծէին,
Դարձեալ զարթնու, պատասխանէին,
Իսկ նա յայտնեաց զմահն Ղազարին,

---

16 Ձեռագրում՝ տողի վերջն անընթեռնելի
17 Ձեռագրում՝ անընթեռնելի բառ

Նոքա ապշեալ ի վայր մնացին։
Օրհնեալ աստուածդ եկեալ ի փրկութիւն աշխարհի,
Աղաչեմք։

Բարեն Յիսուս, արքայն երկնային
Տէր Ղազարու՝ քում բարեկամին,
Զաեղի առեր ի Բեթաբրէին,
Մինչ ի լնուլ աւուր չորրորդին։

Մարի . . . . .
Զտկարութիւն եղբօրն յայտնէին,
Զանմահդ ի գութ սիրոյ շարժէին,
Զկատարեալ սէրն պաղատէին։
Բեթանիայ երթալ խնդրէին,

Զեռն դնելոյ կենաց կարօտին,
Զկեանքդ ընդ իւրեանս կցորդէին,
Զկենդանութիւն ի քէն խնդրէին։
Օրհնեալ աստուածդ եկեալ ի փրկութիւն աշխարհի,
Աղաչեմք։

Աղբիւր կենաց Բանդ Հայրական,
Երևեցար գառն անմեղական,
Յայտ արարեր գաստն մեռասան,
Եթէ մեռաւ Ղազար սիրական։
Պարտ է երթալ մեզ ի Հրեաստան,

Ի տեսանել զնորայն գերեզման,
Մխիթարել զՄարեմ և զՄարթայն,
Հանդերձ զարմօքն իւրեանց գամենայն։
Յորժամ լուան զանաստ քո հրաման,
Յարեալք յոգիսն զարհուրեցան,

Ասեն, թէ աշխարհն եկայք միաբան,
Զի ընդ նմա մեռցուք ի լման,
Զի լսէին զչարն ընդհանրական,
Զդպրաց խորհուրդն յանդուգն, անարժան։
Օրհնեալ աստուածդ եկեալ ի փրկութիւն աշխարհի,
Աղաչեմք։

Պետն մերժէ զխաւարն մահու,

35 Ձեռագրում՝ անընթեռնելի

Զարթուցանէ զհոգին լուսատու,
Բնթանիայ երթալ յանձն առնու,
Զբնութիւն յայտնէ մարդոյն մահացու։

Տէրն արտասուեայ վասն Ղազարու,
Ընդ Մարթայի ՝ւ ընդ Մարեամու,
Կեանքն յայտնեցաւ խափանիչ մահու
Որ բարութեամբ պաշխարհս լնու։
Գան ընդառաջ տոհմն Ղազարու,

Հանդերձ ողբով, դառնութեան սգոյ,
Լային ընդդէմ բանին աստուածոյ,
Շարժեն ի գութ զարքայն կենսատու։
Օրհնեալ աստուածդ եկեալ ի փրկութիւն աշխարհի,
Աղաչեմք։

Եւ Տէրն մեր ընդ նոսա խօսէր,
Զմարեամեանսն մխիթարէր,
Յորդ արտասուս յաչացն բղխէր,
Զամբոխն ի լայ ընդ ինքն յօրինէր։
Մարեմ, Մարթայ ի ծունկս անկանէր

Եւ զգարշապար Տեառն համբուրէր։
Տէրն նոցա զայս պատասխանէր,
Թէ՝ Յարիցէ ձեր եղբայրն, ասէր։
Ապա զտապան նորա հարցանէր,
Ժողովրդեամբն անդր հասանէր,

Զտեղի առեալ առ Հայր պաղատէր,
Զձեռն ամբարձեալ զմեզ ուսանէր։
Ժողովք բազում անդր հաւաքէր,
Բանից Փրկչին ունկընդիր լինէր։
Օրհնեալ աստուածդ եկեալ ի փրկութիւն աշխարհի
Աղաչեմք։

Տէր . . . . .
Ակնմ որ զեղեալքս պարունակեաց
Ապա ի ձայն բարձր ազաղակեաց
Եւ զՂազարոս յանուանէ կոչեաց.

---

68 Ձեռագրում՝ լնուլ

91 Ձեռագրում՝ անրնթեռնելի

Ղազա՛ր, արի՛, ե՛կ, այսրէն կոչեաց
Եւ նոյնժամայն արտաքս վազեաց,
Երիզապինդ կտաւօքն պատած,
Զոր լուծանել նոցա հրամայեաց:
Ամբոխն ամէն կային հիացած,

Յորժամ տեսին զՂազար յարուցած,
Զարմանային զժողովն ռամկաց
Ի՛ ի տես գային յամենայն դիմաց:
Մարեմ, Մարթայ կային խնդացած,
Քանզի տեսին զեղբայրն յարուցած:

Յիշեա և ևս զա . . . . . .
Էից լուսոյն մայր և բնակարան,
Անկէզ բոցոյն դու շտեմարան,
. . . . . ական,
Մայր Յիսուսի, կոյս անապական:

Մատիր յաղերս առ աստուածն բան,
Բարեխօսել վասն ազգի մարդկան,
Եւս առաւել ազգիս Հայկազեան,
Խաղաղութիւն տալ մեզ վերնական,
Առցես ընդ քեզ կցորդ հաշտութեան,

ԶՅովաննէս և զնախավկայն,
Զսուրբ Գրիգոր ազգիս Հայկազեան,
Զարմ և զաւակ յաղդէ Պարթևեայն:
ԶՂազարու քորքն սրբազան,
Որ զյարութիւն եղբորն ընկալան,

Զմեր ննջեցեալքս, որ ի հող, տապան,
Արժան առնել փառաց հանգստեան:
Եւ զստացողն տառիս մաքրական
ԶՆերսէս անուն բաբուն սրբազան:
Ողորմեա՛ . . . . .

105 Ձեռագրում՝ տողի վերջն անընթեռնելի
108 Ձեռագրում՝ տողն անընթեռնելի

3—1159

4. Ի ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ԲԱՂԻՇԵՑԻՈՑ

Թէ ձայն ունիս քաղցր ու բարակ,
Զգանձերս ասա դու Համարձակ,
Ապա թէ հաստ է և խառնակ,
Յայսկից ի զատ կացիր յերակ։

Զի այս նորա է ախորժակ,
Այնմ, որ ունի քաղցր եղանակ
Եւ ընդ ձայնին ի բանն արագ,
Որով հեգիցն առնէ ճարակ։

Թէ յընթեռնուլն չէ արագ,
Երգն լինի անցեալ ճրագ,
Յայնժամ ժողովն առհասարակ
Ծիծաղելով առնեն կատակ։

Այլ բանն և ձայնն առհասարակ,
Երգոյս պիտի խիստ օժանդակ,
Որպէս ղեզինս միմեանց Համակ,
Լծեալ վարեն երկու կնճակ։

Որով զակօս բանին շիտակ,
Ի գլուխ տանին անխոտորնակ
Եւ կամ թռչնոց դոլ նմանակ
Երկու թևօք թռչին յերակ։

Խ ո ր ա գ ի ր

BD *Անխորագիր* CFG *Խրատ դանձ ասողաց* E *Ի տէր կարապետ վարդապետէ բաղիշեցւոյ*

Բ ն ա գ ի ր

2 FG *Զգանձս*
4 C *Ասկի* G *Ազկի փխ Յայսկից*
5 aCD *նոր է փխ նորա է*
6 CE *Այն* a *չիմ որ*
7 G *ի բան*
8 aD *հիքիցն* BE *հեքիցն*
13 D *ձայն է* F *ձայնն և բանն*
14 B *օժընդակ* C *յօժանդակ* G *յօժընդակ*
16 a *յերկու· ցնջակ փխ կնճակ* F *կնջակ* G *կճնակ*
18 CFG *Հանեն փխ տանին*
20 D *Յերկու*

Այսպէս և դու, ո՛վ ժիր մշակ,
Եթէ ունիս զերկուսն յստակ,
Երգեա վստահ, անփաթեթակ
Եւ զգծողս յիշեա յերակ։

5. ԽՐԱՏ ՏԱՂ ԵՐԳԵԼՈՅ

Ո՛վ սիրելի եղբայր որ ես,
Զայս քեզ խրատ տամ, որ լսես,
Յորժամ գտադդ եղանակես,
Զքուղքն քթով չապականես։

Եւ անոդորմ յետ չի պարկես,
Հանց որ կապին վնաս գործես,
Կամ թէ յանգէտ ձեռս արկանես,
Խոզամարդոց կոխան շինես։

Զոր տաղ կամիս, որ դու ասես,
Զյանկի համարն յառաջքն տես,
Տգիտութեամբ չի չարչարես,
Այլ համարովն գտանես։

Յորժամ որ դաս գգանձն ասես,
Զգրոց լուսանցն չաղտոտես
Եւ կամ թանաս մատդ ու շրչես
Եւ գիմ գրածս ապականես։

Այլ յոյժ սիրով նախանձամես,
Սրբեալ ձեռօք, լաթով բռնես,
Ի հրոյ՝ և ի ջրոյ ի դաս պահես,
Ապա գաստուած դու տեսանես։

Երկու՝ և երեք շորով պատես,
Ո՛ի ի չորային տեղիս գնես,
Ո՛ի ի պատշաճի օրն որ գիտես,
Ապա բերեալ եղանակես։

---

22 aF *Թէ* փխ *եթե* D *յերկուսն*
23 a *երգեալ* BCEFG *անփաթերնակ*
24 D *յերեակ*

Յորժամ կարդաս զբանս և ասես,
Որ ընթեռնուս և որ լսես,
Զկարապետ գրիչս յիշես
Եւ ողորմի դու ինձ ասես:

6. ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՄԵՂԱՑ ԵՒ ՆԱԽԱՏԻՆՔ ԱՆՁԻՆ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Աստուած իմ Յիսուս Քրիստոս,
կենդանի և կենդանարար,
Զիս կենդանացո հոգով,
Մեռեալ եմ մեղօք չարաչար:

Բանամ զշրթունս ողբով
և գոչեմ ձայն բարառնաբար,
Քեզ խոստովանիմ ցյանցանս
և պատմեմ զամէնն հաւասար:

Գաղտնեաց ծածկագէտ աստուած,
դու գիտես զամէնն հաւասար,
Զինչ յաւազանէն մինչյայս
եմ գործեր, զինչ մեղք կայ ու չար:

Դարձեալ ես մարդկան յայտնեմ
զիմ ծածուկ գործքս չարաչար,
Թող զիս հայհոյեն ամէնն,
ընդհանուր յերկիր հաւասար:

Ձեռագիր

B *Ողբ ի վերայ հոգոյ և ապաշխարութեան Կարապետ վարդապետէ* F *Տաղ Կարապետ վարդապետի Բաղիշեցւոյ* CJ *Ողբ ի նախատինք անձին և ի վերայ մեղաց և պաղատանք առ աստուած (*J *չի*f *և պաղատանք առ աստուած)* K *Ողբ ի վերայ մեղաց և պաղատանք առ աստուած Կարապետ վարդապետէ*

Բնագիր

2 E *հոգւով*
3 L *ողբալով* G *բարձրառնաբար*
4 BK *զանցանս* CDEGHJLM *զամէն*
5 ABEK *զամէն*
6 BCDEHJLM *յօրս փխ յայս* G *օր փխ յայս* K *յաւուրս փխ յայս*
7 AEHK *գործս*
8 CDE *ամէն* G *ամէնքն* JM *ընթհանուր* ADFHJ *երկիր*

Ես եմ արտաքոյ ստեղծուած
և մարդկան բնութեանս եմ օտար,
Որպէս մարգարէն ասէ՝
այս ազգ է, զոր աստուած չարար։

Զի քան զամէն ազգս եմ
յոյժ առատ մեղօք չարաչար,
Զի բոլոր աշխարհս ամէն
չէ գործեր զիմ մեղքն ապիկար։

Է՛ իմ արարիչ աստուած
ընդհանուր չէիցս հաւասար,
Դարձո զիմ չարն ի բարին,
քաջ գիտեմ, որ չէ քեզ դըժար։

Ընդ իմ չարաչար գործոցս
կու քակի սուրբ ուխտ ու տաճար,
Քանզի առաջնորդ կոչիմ
և յետնոցն չեմ հաւասար։

Թէպէտ մեղաւոր եմ ես
և լցեալ մեղօք չարաչար.
Դարձո զիս ի յիմ չարեացս,
մի՛ թողուր գնալ վայրապար։

Ժամանակ է իմ հասեալ,
Տէր, արա չարեացս իմ վճար
Եւ՝ տուր ինձ բնութիւն բարի,
զի շատոց դու զայդ կամեցար։

Ի յիմ չարաչար գործոցս
մի՝ դատեր զիս, Տէր, բարերար,

---

9 BK *բնութեանս օտար (չի եմ)* DEGJ *բնութեամբս եմ* M *յօտար*
10 A *չի ազգ է, զոր աստուած չարար (ջնջված)*
11 A *չի Զի քան զամէն ազգս եմ (ջնջված)* B *յազգս* BCDEGHJKLM *առապեալ փխ առատ*
12 BCKLM *յաշխարհս* GJ *աշխարհքս* GM *զի փխ զիմ* E *մեղքս*
13 H *յընթանուր* J *բնթանուր* AF *էից* DM *էիցս*
14 AF *ի բարի* BCDEHJLM *քեզ չէ* BDHM *դիժար*
18 BCDEGHJKLM *մեղացս (*DGJ *մեղացն) փխ չարեացս*
19 BCDEGHJM *ժամանակն է*
20 CDEHJLM *չի Եւ* K *զայն փխ զայդ*
21 A *չի մի (ջնջված)* FH *դատեր*

Այլ ողորմութեամբդ քով
դու գթա ի յիս սիրաբար։

Լուսալ ի բարի գործոց,
չար գործոցն եղեալ կամարար,
Տէր իմ, արարիչ աստուած,
յիս գթա դու միշտ հայրաբար։

Խաւարն պատեալ է զիս
յամենայն կողմանց հաւասար,
Դու ես արեգակն արդար,
յիս ծագեա ջլոյսդ անդադար։

Մնունդ քո ի սուրբ կուսէն
փրկութեան մերոյ էր պատճառ,
Ադամայ որդոցս ամէն
ճշմարիտ արև ծագեցար։

Կամաւ Հօր և սուրբ Հոգւոյն
ի խաչին դու անշնչացար
Եւ ձայն աւետեաց հնչեց՝
Ադամայ պարտոցն վճար։

Հիմայ զիս կրկին խոցեաց
սատանայ կենօք անյարմար,
Կամի զիս հանել ի քէն
և դիւացն առնել հաւասար։

Զայնիւ մաղթանաց գոչեմ
առ քեզ, Տէր աստուած բարերար,
Հասի՛ր ինձ ի յօգնութիւն՝
քո ծնօղն ի քէդ զէնահար։

---

22 EK *քո* H *քու* փխ *քով* CDEGHJLM *տիրաբար* փխ *սիրաբար*

23 G *Լուր ինձ ողորմած և Տէր, մարդասէր աստուած բարերար։* J *Լուր ինձ ողորմած աստուած, մարդասէր և տէր բարերար։* BCD EFKLM *23—24 չի*

24 GJ *Ողորմեա մեղաւորիս, մի՛ թողուր գնալ վայրապար։*

26 BCDGHJKM *արեգակ*

28 E *որդւոցս*

29 EG *Հոգւոյն*

30 A *Ադամ ... (ջնջված)* AF *պարտեացն*

31 CDEGHJLM *Հիմի* BCDEGHJKLM *կենօքս*

34 CLM *Հասիր յօգնութիւն ինձ* AF *զինահար* BCEGHJKLM *զննէհար*

Ղօղեալ սասանի անձն իմ,
սարսափիմ զինչ զդիւահար,
ի դատաստանի յահէն,
որ մեղօք եմ խիստ չարաչար։

Ճանապարհ բարի Քրիստոս,
ճանապարհս է մութն ու խաւար.
Ճարակն ի քենէ լինի,
ինձ վառեա զլոյս քո զամբար։

Մի՛ ըստ իմ զործոցս առներ
և նենգեր գերոյս չարաչար,
Մի՛ չար հատուցեր չարի,
այլ բարի, զի զայն խօսեցար։

Յիսուս միածինդ Հօր,
ի կուսէն յայրին զու ծնար,
Զծնունդ սուրբ աւազանին
մի՛ առներ ի քեզնէ վտար։

Նոր նորոգոդիդ մերոյ
երկրպագութիւն հաւասար,
Նայեա յաղաչանս մեր
և զթա ի մեզ սիրաբար։

Շնորհաց օթեան սուրբ կոյս,
մեզ միջնորդ լեր զու անդադար,
Վասն մեր բարեխօսեա
զմիածին Որդիդ բարերար։

Ուրախ եմ ի չար առնելն,
բարութեանդ չեղէ կամարար,
Որս եղէ չարին խարմամբ,
մի՛ թողուր Տէր իմ բարերար։

---

35 K *սարսափեմ* J *զէտ* փխ *զինչ*
38 GJ *ի քեզնէ* M *վառեալ* BDGHJK *զամպար*
39 E *նենգել*
40 BCDEGHJLM *հատուսցես* K *հատուսցեն չարին*
43 A չիք *մերոյ երկրպագութիւն* (ջնջված) H *յերկրպագութիւն*
44 A ... *եայ* (չիք *նայ*—ջնջված) CDEGHJKLM *տիրաբար* փխ *սիրաբար*
45—72 BCDEFGHJKLM չիք

Ջարին կցորդ ես եղայ,
յորդորիչ ի չարն ապիկար,
Ջարին դու բարի առնես,
զոր բերնովդ քո խօսեցար։

Պտղոյն ձիթենոյ նման
կորուսի զպատուս անհամար,
Պտղաբերեա զիս հոգով,
զի առնել զկամքդ հաշտարար։

Ջանամ, թէ բարի առնեմ,
չարն գայ, զբարին տայ վտար,
. . . . . .
. . . զքեզ անդադար։

Ոհո, լուսեղէն կամար ես,
ի քէն հայցեմ բարերար,
Ուստ մեզ բարի առնել,
զի չարին եղէ կամարար։

Սուրբ կոյս Մարիամ պայծառ,
միածնի Որդոյ դու տաճար,
Սրտով ի քէն աղերսեմ՝
փարատեա զինչ մեղք կայ ու չար։

Վասն իմ աղաչեա զՏէր,
զի գտայ ես զքեզ ինձ ճար,
Վախեմ, թէ զչարին խաբուիմ
ու՛ երթամ ի խոր ՝ւ ի խաւար։

Տէր իմ, արարիչ աստուած,
ողորմեա Հայոցս հաւատար,
Տեսող ես չարին եղայ,
դէմ բարոյն դարձեր եմ խաւար։

Բամից մարդկան ոչ լուայ,
քարոզչաց ես ասեր եմ չար,
Բամից զիս բարի ասի
և գործովս եմ աղտեղ ու չար։

---

54 A Տողի սկիզբն անընթեռնելի

Ցուպ քո ի ձեռինս ունիմ,
քահանայ կոչեցայ յարմար,
Ցանկութեամբ մեղաց չարին
խաբուեցայ, պղտպս էրի վտար։

Իւծնալ տառապիմ ի մեղս,
չարութեամբ ես եղայ վտար,
Իւսկա չիս բարի արմատ,
դարձ արա ի մեղացս իմ չար։

Փա՞ռք քեզ անծանօթ աստուած,
անծանօթ իր, ծանուցար,
Մօր քո անդադար հայցմամբ
մեզ ուսո լինել բարեբար։

Քեզ փա՞ռք աստուծոյ բանին,
պատիւ տամ քեզ յաւիրժաբար,
Տուր մեզ բնութիւն բարի,
զի օրհնեմք քեզ մեղմաբար։

ՏԱՂ ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԱՅ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԳԼԽԱՏՄԱՆ, ՅԻՍՈՒՍ ՈՐԴՈՒ ԳՈՅՆ ԱՍԱ

Ինն հարիւր Հայոց թուական,
Յիսուն և հինգ թիւ աւելեան,
Յէջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհս Հոռոմոց տան։

Յոլով մեռոն կայ ընդ ինքեան,
Մեծ նամակով և օրհնութեամբ,
Եկեալ հասին Բիւզանդիան,
Որ է Ստամպօլ, սրբոց կայան։

Ով որ տեսաւ զնոսա լման,
Իբր զհրեշտակ ընդունեցան,
Մեծն Յովհաննէս սրբոց նման,
Եպիսկոպոս աղնուական։

Վանք 'ւ անապատք ուրախացան,
Յորժամ տեսին զերեսեան,
Զտէր Սարգիս եպիսկոպոսն
Եւ զԴաւիթ կոյս աբեղայն։

Անուանք նոցա համբաւեցան,
Սուրբ օրհնութիւնքն որ կարդացուան,
Եկեղեցիք բերկրեալ ցնծան
Եւ ժողովուրդս, որ օրհնեցան։

Խորագիր
b *Վասն ս. էջմիածնայ նուիրակներու գլխատման*
Բնագիր
1 b *թվական*
2 a *Յիսուն և եօթն փխ Յիսուն և հինգ* b *ԾԵ*
11 b *Յօհաննէս*
13 b *կարդացւան*

Նւիրկեցին զքաղաքս լման
Եւ նաւեցին քաղաք Կաֆայն,
Կաֆայեցիք խիստ ցնծացան,
Իբր զառաքեալսն տէրունական։

Ելեալ գնացին Ղարա Պօղտան,
Սէյով քաղաք քրիստոնեայք կան,
Ամէնն տեսին, ուրախացան,
Մինչ ի պարոն և ոյթերնայն։

Սէյովացիք զնոսա տեսան,
Խիստ պատուեցին և օրհնեցան,
Իլով քաղաքն յուղարկեցին,
Շատ քրիստոսեայք, որ ի հոն կան։

Իլովացիքն Հրբոր տեսան,
Հանց պատուեցին սրբոց նման,
Զինչ սուրբ Գրիգոր՝ պետ Պարթևեան
Լուսաւորչին Թոռանց նման։

Ցնծան նոքա ի ժողովն այն,
Շուրջառք և զգեստ խիստ պատուական,
Իլով քաղքէն առին, ելան,
Դարձեալ եկին ի Աղքիրման։

Երբ որ հասան ի Աղքիրման,
Խիստ խնդութեամբ բևրկրեալ ցնծան,
Անտի նաւեալ, եկան հասան,
Որ է պօլիս Կոստանդիեան։

Հիւրեր եկին մեզ աննման,
Զինչ զհրեշտակք աբրահամեան,
Ընդ ստամպօլցիք զնոսա տեսան,
Տեառն աստուծոյ շատ գոհացան։

Անդ ժողովուրդք ժողովեցան
Եւ ասացին ամենեքեան,
Թէ մի՛ երթայք դուք միտքան՝
Կաթողիկոսն հղեալ վախճան։

---

25 b Ղարապօղտան
28 ab Սինչի

Յայնժամ նստեալ և խորհեցան,
ԶԴաւիթ ղրկեն ի տեսութեան,
Ընդ որ հասեալ յԱմասիան,
Լուկ մատնեցին զինքն ի յատեան։

Անդ անօրէնք ժողովեցան,
Որդիքն Նեռ և կորստեան,
Պիղծ Յուդայի եղեն նման,
Որ մատնեցին զՏէրն ի յատեան։

Յասմամբ եկեալ զԴաւիթ տարան,
Պարոնորդւոյն դուռն ի տիվան,
Ասին՝ չաշուտ են միաբան,
Սօֆին ղրկել ի Ֆրանկիստան։

Եղին ի բանտ և ի զնտան,
Զինքն մատնեցին ի ըսկէնճան,
Զխեղճ մարմինն ի տաքացան,
Ի չարչարանքն մաշեցան։

Անտի տուեալ ի զօրական,
Վիզն ի զէնճիլ, ձեռն՝ կիլապչան,
ԶԴաւիթ բերին ի մեծ տիվան,
Տարին ձգեցին զափուճոցն օտան։

Լուք զափուճիքն ամենեքեան,
Ի ձի հեծեալ վանքն հասան,
Երբ նուիրակքն զնոսա տեսան,
Զահի հարեալ վերզ դուռ դողան։

Եկեալ տարան զնոսա լման
Ի մեծ վէզիրն Ալի փաշան,
Յայնժամ տեսեալ զերրորդեան,
Ասէ՝ Բերէք վաղն ի տիվան։

Բերին զինքեանք վաղն ի տիվան,
Հաւսար նստին երեք փաշան,
Հարցաքննեն զամենեսեան,
Սուչ մի գտնուն նոցա վերան։

---

56 b Լուք
62 b Պարոն որդոյն

Անտի ելեալ խոնտքար մտան,
Նա էր ասացեալ դիժար Հրաման,
Ասաց. Զգեցէք զափունճոցն օտան,
Մէկ քանի օր տան ըսկենճեան։

Նորա ելեալ ամենեքեան,
Ի խոնդքարէն առեալ Հրաման,
Լուք կացուցին այլ մի տիվան,
Ըմբռնեցին առեալ տարան։

Սուրբ Յովհաննու պէս բանտ տարան,
Ջինչ Քրիստոսի օրն ըմբռման,
Ի չարչարանքն զանազան,
Ասել աւուրս հնգէտասան։

Աւրն էր շաբաթ սուրբ կատարման,
Նահատակացն երրորդեան,
Գլխատեցին զամենեսեան,
Լոյս կիրակի օր յարութեան։

Յովհաննու պէս գլխատեցան,
Կամ Յակոբու առաքելեան,
Որ է մարմինն ի սպանման,
Ջաւուրս երրորդ անթաղ մնան։

Սրբոց մարմինքն որ Հոն կեցան,
Ոչ յհրեսներն թաղշամեցան,
Լոյսն էր իջեալ աստղանման,
Զայն լոյս տեսեալ շատ մսլման.

Յետոյ գնացեալ էմին խօճան
Մօտ մեծ վէզիրն Ալի փաշան,
Իբր գՅովսէփ արա, Արիմաթեան,
Խնդրել զմարմինն տէրունական։

---

90 a *ի Հուտկարէն*
91 a *վի փխ մի*
93 a *Յովաննու*
96 a *հնկէտասան*
98 a *ի երրորդեան*
101 a *Յովաննու*
103 a *ի Սպանիան փխ ի սպանման*
111 ab *Արեմաթեան*

Նա էր տուեալ աղէկ Հրաման.
Գնա՛ թաղէ զամենեսեան,
Զամէն ատէքն արէք լման,
Զինչ ձեր օրէնքն տայ Հրաման։

Իսկ վարդապետք ժողովեցան,
Եպիսկոպոսք Հաւաքեցան
Եւ կրօնաւորք շատ միաբան,
Սրբոց թաղումն գումարեցան։

Երիցանիք խիստ ղանադան,
Մեծ ու կրտսեր աշխարհական,
Ի հոն հասին ամենեքեան
Եւ սուրբ թաղմանն արժանացան։

Բամիւ կանգնեն կարգ կատարման
Եւ կատարեն զամէնն լման,
Պատնեն զմարմինքն միաբան
Եւ սահմանեն ի մի տապան։

Կանայք բազում ժողովեցան,
Լալականներ ողբերգական,
Շատ լացուցին զամենեսեան,
Մինչ սար ու ձոր ի լաց ելան։

Երեք մանկանց սրբոց նման,
Երեքն մի տապան եդան,
Արժանացան սուրբ Հանգստեան,
Դուք այլ կացէք ուրախութեամբ։

Բամիւ զամէնքդ միաբան,
Զձեզ աղաչեմ զամենեսեան,
Ես Յովհաննէս անարժան,
Եմ քահանայ, գործովս ունայն։

Նւիրկերոն օր կատարման
Սակաւ բաներս որ գրեցան,
Ով ոք ասէ ղՀայր մեղայն,
Յիշեալ լիցի յարքայութեան։

---

115 a յատէքն
122 a յաշխարհական
125 b կանգնին

145 Այս գործեցաւ ի մեծ թուական,
Ինն հարիւր թիւն էր լման,
Յիսուն և հինգ թիւ յաւելեան,
Հոկտեմբերի եօթնևտասեան։

---

145 b թվական
147 a Յիսուն և եօթն փխ Յիսուն և հինգ b Ծե
149—152 a ունի շարունակություն, որը հավանաբար զրչի հավելումն է.

Ձեզ աղաչեմ զամենեսեան,
Ո՛վ ընթերցողք, տեարք սրբազան,
Թաղսիրութիւն չանեք, արարիչն աստուած Օրհնէ ձեզ,
Անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

ԳՈՎՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄՇԵՑԻՈՑ, Ի ՄԱՂԱՔԻԱՅ ԻԻՐ ԱՇԱԿԵՐՏԷ ԱՍԱՑԵԱԼ, ՅԻՍՈՒՍ ՈՐԴՈՒ ԳՈՅՆ ԱՍԱ

Հայր՝ տնկող այգեստանեաց,
Որդին մշակ է առանց վարձ,
Հոգին ջրող՝ ւ արբուցանող,
Մինչև պտուղն գայ ի հաս։

Եւ ժողովեն չշտեմարանս,
Զորն ի հնձան, զորն ի կարաս,
Ով որ բարի պտուղ լինի,
Յարքայութիւնն է ժողոված։

Նոյնպէս և մեծ րաբունիս,
Քան զարեգակն փայլէ յերկրիս,
Վարուք բարի անուշահոտ,
Յորմէ և, Տէ՛ր, դու հոտոտիս։

Որպէս խայծեալ, հասեալ այգի,
Անուշահամ և բարելի,
Ի ձեռին Տեառն ճմլեալ գինի,
Զծարաւ հոգւոյց բառնայ յերկրի։

Սա՝ աշխարհաւ տարօնեցի,
Գեղչն Ամլորդւոյն է դրացի,
Խնդիր ելեալ կենաց հացի,
Յորմէ հոգւոյն քաղցն բարձի։

Անուն արթուն է և զուարթ,
Ջիմաստութիւնն է զգեցեալ զարդ,
Պայծառ, փայլուն է որպէս զվարդ,
Ի ինքն բերկրի յարազուարճ։

Մականունն է Մշեցի
Որպէս Դաւիթ Ներգինացի,
Մեծն Պօղոս Տարսոնացի,
Որպէս Բարսեղ Կեսարացի։

Սնեալ ի վանքն Գլակայ,
Սրբասնունդ և աբեղայ,
Մինչ սահմաննալ իւր կէտն գայ,
Ելեալ գնայ ի չերզնկայ։

Ի չեկեղեաց գաւառն եկայ
Եւ զմտաց դրունքն եբայ,
Ջիմաստութիւնն ժողովեայ,
Որպէս զմեղու զծաղիկ լերանց։

Աշակերտեալ մեծ րաբունւոյն
Եւ Յոհաննէս կոչեցելոյն,
Որ էր նման մեծ Եսայոյն,
'Ի աստուածաբան առաքելոյն

Կրթեալ չիմաստ բանից նորին,
'Ի Յրէթէոս՝ առ Պօղոսին,
Եւ կամ Գրիգոր՝ առ Յոհաննին
Եւ Աթանաս՝ Աղէկսանդրին։

Մտօքն առատ՝ և աստուածաբան,
Որպէս Գրիգոր և մեծն Յոհան,
Ճշմարտութեամբ է պարսպեալ
Եւ թշնամեացն անգծական։

Եւթնարփեան շնորհօք լցեալ,
Հոգւով սրբով առատացեալ,
Քան զառաջինս գերազանցեալ,
Յետագայիցս լոյս տուեալ։

Իմաստասէր և սա կոչի,
Ջինչ Պղատոն Աթենացի,
'Ի Արիստոտէլ Ստագիրացի
Եւ Պորփիւրոս Փիւնիկեցի։

Իմաստութեամբ է զարդարեալ,
Խորս գիտնոցն սա իջեալ,

Որպէս խորէջք յատուկ ծովուն
Եւ զմարգարիտ ժողովելոյն։

Շիննաց պարիսպ բարձր բրգօք
Եւ մեծամեծ անտաշ վիմօք
Եւ խորագոյն ամուր հիմօք,
Բաշխէ պարգևս որդւոց մարդկան։

Երկու կողմանց կառոյց խորան
Եւ հաստատեաց անդ սուրբ սեղան,
Յորում բաղմի անմահ արքայն,
Բաշխէ պարգևս որդոց մարդկան։

Շիննաց սա շատ եկեղեցի,
Ժամատներ և տեղ դասի,
Սեղան եղիր կենաց հացի,
Յագեցելոց և քաղցածի։

Սեղան դնէ կենաց հացի
Եւ ամենայն բարեօք իւի,
Զկերոզքն առնէ ուրախալի,
Ի ներկայիս ՝ւ յապագայի։

Եւ շատք կերան և յագեցան,
Օր ըստ օրէ նոր քաղցենան
Եւ այլք սուվեալ դիմեն և գան,
Առեալ պարգևք ուրախանան։

Բազումք լսեն ՝ւ ուրախանան,
Խորհուրդ առնեն, թ՝ ինքեանք այլ չան
Եւ դեգերեալ տեղն մնան,
Կենաց հացէն սուված կենան։

ԶԱստուածաշունչն ասաց յառաջ,
Զաշակերտացն զմիտքն եբաց,
Զնրբերն ապա յայտնաբանեաց,
Զմիտս մարդկան լուսաւորեաց։

Մտօքն է սուր և բանիբուն,
Որպէս անդունդք խորք ծովուն,
Միտքն ժողովէ սեռ և տեսակ,
Սեղան դնէ աշակերտնուն։

Սա նմանի արևգական,
Զխաւարն առնէ հալածական,
Զմիտս մարդկան լուսաւորէ
Կենաց բանիւն անմահական։

Նման է սա արուսեկին՝
Արեգական կարապետին,
Պայծառ փայլէ քան զլուսին,
Որպէս յաւուրս տասն ու հնկին։

Եւ քարոզէ յամէն դիմաց,
Թող զաշակերտն կալ ի բաց,
Զորդիս մարդկան կոչէ ի հաց,
Յերկնից խորանն զարդարած։

Զմեղուցեալսն զղջումն ածէ
Եւ զլուսահատսն յուսադրէ,
Յերկնից խորանն հրաւիրէ,
Ընդ հրեշտակաց դասակարգէ։

Քան զարծուի է սրընթաց,
Զմտաց դրունքն ունի ի բաց,
Զխոկումն ունի միշտ առ աստուած,
Եւ անհասիյն վիպասաց։

Անգին ակունք են բանք սորին,
Որպէս զոսկի արաբային,
Պայծառ, փայլուն առնէ զհոգին,
Զհնազանդելոցն և զլսողին։

Նման է սա բուրաստանի
Եւ զանազան պտղով իւի,
Զկերողքն առնէ ուրախալի,
Ի ներկայիս՝ և ապագայի։

Ի մտաց բխէ յոյժ քաղցր աղբեր
Եւ յորդառատ իբրև զգետ,
Բազումք ըմպեն՝ և երթան ի յետ,
Շատ ծարաւիք նոր գան ի հետ։

Նման է սա ցուրտ աղբերի,
Ջտապ ծարաւեացն բարձողի,

96 A′ Խրոհտ B քաչ E գիտունք B մինչև DF շիմ ի BCGH տվողէն DA′ աւողէն aBCDEF վազճան A′ վաճջան

97 CDEFA′ թագաւորացիք փխ Թրակացիք CFGA′ այս է փխ այժմ է D. ասէ փխ այժմ է E ասի փխ այժմ է a շիմ է

98 B ԶԳաղատիան CDEFGA′ Գաղատիայ E Կիլիկէ B զԲերիեան CDEG զԲերիայ

99 B Եւ Փունիկեցիք BCDEFGA′ շիմ և CDEFGA′ էք փխ են

100 B աստուած սուրբ հոգին փխ իմաստութիւնն CDF իմաստութիւն E Տետուն իմաստութիւն G աստուածն մեր փխ իմաստութիւնն A′ իմաստութեանն B նոցա թվական C ձեզ թվական FA′ շիմ զայս F զթվական A′ զթուականն

101 B Գարիացիք CDEFGA′ Գայիրացիք: շիմ են BDEFGA′ Եգիպտոսական C յԵգպտոսական

Գտեալ էն նոքա զարուեստն,
որ կոչի երկրաչափական։

Ի յԱբրաբիայ մտնունք,
որ հասնի մինչև ի Ճիտան,
Ունին թախտ զնգիպտոս,
զԴամասկոս և զկանտարեայն։

Ազգն Երրայեցոց անդ էն
և Իսրայէլ անուն կոչեցան,
Աբրահամ և Իսահակ,
նահապետքն երկոտասան։

Յայտնեցան ի յաղգէ նոցա,
մարգարէքն վկայական,
Ի նոցանէ աստուած ծնաւ,
ազատեաց զհոգիքն ամենայն։

Իսկ Բաբելացիք գիտունք,
արուեստիւ աստղաբաշխական,
Գտեալ էն զմոլորակքն
և զընթացս արեգական։

Դուք էք երաժշտական,
զոր յայտնեաց Թարայ և Խաոան,
Աբրահամ հայրն առաջին,
որ է սկիզբն աստուածապաշտութեանն։

---

102 B Գրեալ CDEFGA′ Գտեալ էք դուք զայն արուեստն

103 B Ի Աբարիայ F Ի յԱբապիայ FA′ մտաք G նա փխ մինչև B Ճտան FA′ Ջիտայն

104 a զթախտ B զթախտն G թաղթ A′ թախթ aB Եգիպտոս C Դամասկոս E զԴամաս B զկանտարիան CFA′ Սքանդրիայն DE Ականտարիան G զԱկանտարիայ

105 aA′ Երրայեցւոց D անտ FA′ անդէն B և փխ ՚ւ CEG չիմ ՚ւ

107 BE ազգէ C ազգին DFGA′ ազգի

108 BCDEFGA′ չիմ Ի D՚ւ ազատեաց

109 aA′ Որ փխ Իսկ CEFG Ով փխ Իսկ CH արվեստիւ DE աստխաբաշխական A′ աստղաբաշական

110 CDFGA′ էք փխ էն E չիմ էն։ զընթացսն G զընթացն

111 BFHA′ Աշխարհաւ դուք B Նոքա փխ Դուք FA′ էք դուք B երաժշտ CDEFGA′ որ F այտնեաց

112 CDFGA′ որ սկիզբն է A′ աստուածապաշտութեանն

Ի Բաբելովնի կողմանցն
Է՛ և Պարս, և Թայուխ արքայն,
Ի այլ աշխարհք և այլ գաւառք,
որ հասնի մինչև ի Քալպալան։

Ի Մծբին ՚ւ ի Միջագետս,
որ աշխարհս է Ասորեստան
Եւ այլ ի կարգի նորա,
զոր յայտնի ասեն Քրդաստան։

Մեզ յայտնի է յայն քաղաքն,
զոր շինեաց դշխոյն Հեղինան,
Անուամբ կոչի նա Պուռսայ,
որ ինքն է այնիւ շահրաստան։

Եւ անտի առաջ գոլով
Է՛Յունաց աշխարհն ամենայն,
Զոր այժմ Հոռոմք կոչեն
և սինօռն է Սեբաստիան։

Յորդախաղաց աշխարքն,
որ ասի Շիրվան և Գիլան,
Խառումատան կղզի միջին,
աշխարհքն է չանկալաստան։

---

113 aE *Բաբելոնի* FA′ *Բաբելի* CDEFGA′ *Թայխուն այն մեծ արքայն (*FG *Թայուխ* F շիմ *այն մեծ* G *որ և փխ այն) փխ Պարս և Թայուխ արքայն*

114 CDEG *Բաղում փխ ՚Ի այլ* FA′ *Եւ* շիմ *այլ* DFA′ շիմ *ի* E *Քալպէլան* A′ *Քալբալան*

115 B շիմ *Ի* CD *և փխ ՚ւ* EG շիմ *՚ւ* CDEFA′ *Միջագետն։* շիմ *որ* CDEA′ *աշխարհն* G *աշխարհէ*

116 BF *այլն* B *ի կարբի* CDEG *յայտնի է նա (*C *չեւ է նա) փխ յայտնի ասեն* F *այտնի* aBDH *Քրիստան* C *Քրրտիստան* F *Քուրդաստան* A′ *Քուրդիստան*

117 F *այտնի է* CDEFG *որ* CEF *Հեղինայն* DG *Հեղինեայ* A′ շիմ *117—118*

118 B *Պուրսայ* F *Բուրսայ* E *և փխ որ* F շիմ *է* BCDEG *շահրիստան* F *շահրբաստան*

119 F *է փխ Եւ* a *անդի* C *յանտի* CDGA′ *յառաջ* A′ *և փխ է*

120 E *Հոռոմայց առն փխ Հոռոմք* CD *կոչին* A′ *ասեն փխ կոչեն* a *սինուռն* CDEG *սրնօռն* CDFG *Սեբաստիայն*

121 BCDEFGA′ *Ի Յորդանխաղաց (*B *Որդայխաղաց)* CDEG *աշխարհն* FA′ *աշխարհք* CDEG *Շըրվան* aCDEH *Թիլան* B *Ի կիլան* G *Բիլան*

122 C *Ղառումատան* G *Եւ Խրտումատան կղզին* FA′ *միջինս* B *որ աշխարհն է* CDEG *աշխարհն է* aCDE *չարրն գալատեան փխ չանկալաստան* F *չանկալըստան* G *չանկալիստան* A′ *չանգալիստան*

Անդ լինի պարգևք մարդկան,
պատուական ՝ւ անգին մանանայն,
Ջանուն ապրիշում ասեն,
որ գործեն մախմուր և չաթման։

Ջազգն Պարսից յայտնեմք,
իմաստուն և քաջ գիտնական,
Ճարտար և հնարագետ,
աշխարհաւ են Հատրպէճան,

Ի միջի նոցա շինեալ է
գաւառք ՝ւ աշխարհք զանազան,
Անդ լինի պողպատ սուսերք,
որ ասի Շիրազ և Քիրման։

Արուեստիւ շինեալ քաղաք
որ մտնուն ի ձեզ բազրկան.
Յանուանէ կոչեալ լինիք
զոր յայտնի էք Ղում և Քաշան,

Պայծառ և ընտիր քաղքունայք,
որ կոչիք Եաղդ ու Ասպահան,
Պարարտ և խիստ վայելուչ,
աշխարհաւ եք երաժշտական։

---

123 F *Անտ* CDH *պատվական* B *ասգինման փխ ՝ւ անգին մանանայն* CEG *չիմ ՝ւ* CG *մանանան*

124 DEF *Ջանունն* CDEFGA′ *ապրշում* aBH *դմախմուտն* F *մահմուն* A′ *մահմուտ* aB *դղազման* F *չաբմայն* A′ *չաթմայն*

125 CDG *Ջյազգն* F *քաչ* DGA′ *գիտնականք*

126 CDEFGA′ *հնարագետք* CEG *չիմ են* F *աշխարհ ասեն փխ աշխարհաւ են* a *Հատրպքճան* C *Հաւրեջան* DGA′ *Հատրբէչական* E *Հատրփչական* F *Հատրբէջան*

127 G *գաւառ* BCEFG *չիմ ՝ւ*

128 E *Անտ* G *չիմ Անդ* CDFGA′ *պօղպատ* DE *Շըրազ* C *ի Քիրման* A′ *Քըրման*

129 BA′ *լցնալ փխ շինեալ* B *քաղքունք* C *քաղաքն* FA′ *քաղքունեայք* G *քաղքունաք* aBHA′ *մտնան* A′ *ի քեզ* a *պաղրկանք* DE *պաղիրկեան*

130 B *Անուանէ* aBE *է փխ էք* G *և Ղամ* E *Քէշան*

131 C *չիմ և* DE *՝ւ փխ և* FA′ *քաղքունեայք* B *Ազդ փխ Եաղդ* F *Յէղդ* A′ *էզտ* a *Ասպահանք* E *Ըսպահան*

132 CDEFG *վայելուչք* CDG *աշխարհօք փխ աշխարհաւ էք* a *չիմ էք, երաշտական*

Ախնիւ և անգին դումաշքն,
որ լինի ի ձեզ գովական,
Զարդարանք և պաճուճանք,
զոր հագնին իշխանք ամենայն.

Արշակունիք գովելիք
և ընտիր ի յԱրեւելեայն,
Պահաւ, Հնդիկ կոչեցեալ,
աշխարհաւ էր դուք Խորասան:

Տիրեալ ես բազում քաղաք,
զԹիլան, մինչ ի Լարլստան,
Երկրորդ ես 'ւ ընկերակից
Թորգոմայ ազգին Հայկազան:

Ունիս դու բազում հնծկ,
կոուարար և յոյժ փառելւան,
Սմբղանդն է քո սինօռն,
որ է գլուխ քաղաք պատուական:

Արշակն է շինեալ զքեզ,
Թագաւոր, հրապաշտ արքայն
Եւ է՛ նա Քետուրացի,
զոր յայտնի է մեզ յանդիման:

---

133 CDFGA′ *զումաշ* E *դումաշխ: ի քեզ*

134 C *Զարտարանք* CDEFGA′ *աշխարհիս մարդկան մեծութեան փխ զոր հագնին իշխանք ամենայն*

135 B *ընտիրք և Արեւելեան* CDEG *մաքուր, պայծառ և ընտիրք (*EG *դուք մաքուր) փխ և ընտիր ի յԱրեւելեայն* FA′ *և Արեւելեան ընտիրք*

136 D *Պահլաւն* E *Պահան* F *Պահլաւ* B *Հրեկ փխ Հնդիկ* CDEG *Հնդիկք* FA′ *Հնդիկք էք* D *կոչեցեալն* EFGA′ *կոչեցեալք* aB *աշխարհաւ ես դու* C *չիմ էք* D *դուք եք*

137 EA′ *Տիրել ես* F *Տիրեալ էք* C *քաղր փխ քաղաք* CFA′ *Թիլան* G *ի Թլան* C *որ երթայ մինչ* DEG *մինչև* CDEG *չիմ ի: Լարիստան*

138 aBCG *չիմ 'ւ* C *Թորբոմայ* F *Թորգով* A′ *Թորգով* CDEFA′ *ազգին*

139 E *չիմ դու* B *հնծկք* BCDFGH *կովարար* E *կովական* CDEFGA′ *բաց փխ յոյժ* aB *փառհաւան* E *փէհլաւան* F *փայլաւան*

140 CDEF *Սմբղանտն է* A′ *Սմբղանտ է* D *բեզ փխ քո* aB *սինուան* EG *սրնօռն* F *սինաոն* BDH *պատվական*

141 CDEFGA′ *Արշակ* FA′ *չիմ է* CDEFGA′ *Թագաւորն*

142 aBFH *Քետրացի* C *որ* F *այտնի* a *չիմ է* CDEFGA′ *ձեզ փխ մեզ* aB *անդիման*

Քննեսցուք զՀայկայ որդիքն,
մէջ յամէն ազգաց ցիր ու ցան,
Որ ազգաւ Արմէն կոչեն,
վիճակաւ են Թորգոմական։

Քաջն Արշակ և Վաղարշակ,
հարազատ եղբարք միական,
են Աբրահամու որդիք,
ի ծննդոցն Քետուրական։

Եւ էին դայակորդիք
արքային այն Մակեդոնեան,
Դեղաւ զնա մահացուցին
և առին զտունն Արևելեան։

Վաղարշակ շիննաց զգաւառն,
որ ասի նա Արարատեան,
Բազում աշխարհք և գաւառք
և զԹաւրէզ՝ մեծն շահաստան։

Փովելիք և անուանիք
ի սկզբանէ մինչ ի յաւիտեան,
Ո՛չ ոք ձեզ նման չեղաւ,
ո՛չ յառաջն և ո՛չ յապագայն։

---

143 CDEFG *զՀայկազան* փխ *զՀայկայ* A′ *զՀայկական* փխ *զՀայկայ* CDEG չիմ *որդիքն* F *որդիքս* aF *որ* փխ *մէջ* CDEFGA′ *ամէն* a *ազգէն* BFA′ *ազգի* CDEFGA′ *ցիր և ցան*

144 CDEFGA′ *Ազգաւ մեք Արամ կոչիմք (*FA′ չիմ *մեք· Արմէն)* փխ *Որ ազգաւ Արմէն կոչեն* CDEFGA′ *եմք* փխ *են*

145 a *Քաջ* A′ *Հարազատ* E *միարան*

146 CDEFG *տողը* չիմ a *Քետորական* A′ *Երկոքեան սիրուն եղբարք, կռուարար և քաջ փառաւան։*

147 A′ *Դայակ որդիք* B *Մակեդոնայն*

148 CDE *Դեղով* D ունի և.

Բազմացան անթիւ զօրօք և սիրեցան աշխարհք ամենայն։

149 a *գաւառն* CDEFGA′ *գաւառ* aDA′ *Այրարատեան*

150 B *Թաւրէզ* CDEG *Թաւրէզն* F *Թաւրիզն* CDE *ձեզ (*D *ձեր)* փխ *մեծն* FGA′ *մեծ*

151 BDE *ի սկիզբն է* CA′ *սկիզբն է (*չիմ *ի)* F *սկիզբանէ (*չիմ *ի)* CDEG *մինչև* փխ *մինչ ի* a 51 և 52-րդ տողերը 54-ից հետո

152 BCDFGA′ *Ով* փխ *Ոչ* a *եղաւ* F *չեղև* B *առաջն* CDEG *յառաջ* F *յառաջնէ* aB *ապագայն* F *ապակայն*

Սուտ և անցաւոր աշխարհ,
ո՞ւր են մեր իշխանքն ամենայն,
Տրդատն՝ հզօր արքայն,
պարոնայքն հետ իւր գովական։

Զարթիք և տեսէք գձեզ,
խեղճն և ողորմն կսկծական
Ամէն ազգ՝ իւրեանց վիճակն,
և եղեալ եմք մեք ցիր ու ցան։

Գերի եմք և ողորմելի
և ամէն ազգաց եմք կոխան,
Ո՛չ ունիմք մենք թագաւորք,
ո՛չ հզօր պինվորք, զօրական։

Ո՞ւր են առաջին իշխանքն՝
քաջ Մուշեղ և Գայլն Վահան,
Պատերազմին մեզ համար
՝ւ ազատեն զգերեալքս ամենայն։

Վկայեալ են հայրապետքն
և ուխտիւք մխիթարական,
Թէ լինի ձեզ ազատութիւն
ի յայգէն այն արիական։

Փառք քեզ թագաւոր փառաց,
որ քննող ես գաղտնեաց մարդկան,

---

153 C *իշխանք* G *նախնիքն փխ իշխանքն* G *ունի ևս.*
Ամէնն են ի հող մտեր, սպասեն մեծի Գալստեան
154 CDEF *Հզոր մեծն Տրդատ արքայն* DA′ *բնդ փխ հետ* BDFA′ *բեզ փխ իւր* E *իր* G *154—162 չիմ*
155 a *գմեր փխ զձեզ* DA′ *ձեզ* CE *զմեզ* F *մեզ* BCDEF *խեղճ* aF *ողորմ և* A′ *կսկծայրին*
156 BF *ազգն* a *իւր փխ իւրեանց* A′ *յիւրեանց* aCDEFA′ *ցիր և ցան*
157 aF *՝ւ փխ և* BCDEA′ *չիմ և* aCF *ողորմելիք* aB *էնք* C *եղեր եմք կոխան*
158 B *ունինք* DEA′ *թագաւոր* aBD *պինվոր* CEA′ *պինուոր* F *զինոր*
159 E *Մուշխն* F *Մուշեղն*
160 F *չիմ՝ւ* a *զգերեալս* C *գերեալքն* DEA′ *զգերեալքն*
161 EA′ *Վկայեալք են* a *սուրբ հայրապետքն* CA′ *հայրապետք* aB *մխիթարութեան*
162 BCDEFA′ *չիմ Թէ* A′ *ազատութիւնն* B *ազգին* C *յայն*
163 F *քննես փխ քննող ես*

Տուեալ ես իմաստութիւն,
որ քննեն զէակս ամենայն։

Ի թվին Հայոց ազգին
Տէր քննէ մինչ ի յաւիտեան,
Իննհարիւր և ութսուն
Ինն թիւ այլ ի հետ նորայն։

Ողորմելի Կարապետ,
վարդապետ և խիստ անպիտան,
Հպարտ ես և անամօթ,
բանիս ո՞վ ետ քեզ հրաման։

Աղաչեմ զձեզ, եղբարք,
որ երգէք կարգաւ պայս բան,
Յիշեցէք զանարժանս,
ողորմի ձեզ Տէրն յաւիտեան։

Եղանակեցէք պայս բան,
կարգաւ է սա և յոյժ պատուական,
Տունս համարով նրսուն է
և է սա բան իմաստութեան։

---

164 B *Տվեալ ես* BCDGHA′ *Տրեալ* G և փխ որ C քննէ BFG քննես A′ և զատես զազգս որպոց մարդկան փխ որ քննես զէակս ամենայն

165 F չիմ *ի* A′ *թըւին* a *ազգիս* BFA′ *ազգիս* A′ չիմ *ի* G *165—172* չիմ

166 a *Հազար և ԺԴ* B *Հազար և քսան (ԺԴ) ի ապրիլի Իե լման։* A′ չիմ և C *նսուն* փխ *ութսուն* F *ՊՃՁ (=իննհարիւր ութսուն)*

167 FA′ *Ով ողորմելի*

169 aFA′ *Աղաչեմք* B *որք* FA′ *եղբայրք* aB *որք զուք պայս*

170 F *դիս անարժանս* B *վերջի գրիչս Ագուլեցի Մկրտումս* փխ *ողորմի ձեզ Տէրն յաւիտեան* A′ *170—172* չիմ (*թերթ է բնկած*)

171 F *բանս։* չիմ է DH *պատվական* aB *171—172* չիմ

172 F *Ղ* փխ *նրսուն* D չիմ է C *այս բանս մատց և իմաստութեան*

ՏԱՂ Ի ՅԱՐԳԵԼԱՆՍ ՈՒ ՎԱՍՆ ԱՆՋԻՆ

Ես մեղաւոր և անարժանս,
Զհայր աստուածն հաւատամ,
Յիսուս որդի նորա յուսամ
եւ ի սուրբ կոյսն Մարիամ։

Ղալատեցայ և աշխարհս անկայ,
Ի սահմանաց նորա ելայ,
Զմեղս և ղյանցանս արի թօբայ,
Լինի՝ աստուած ինձ ողորմեայ։

Ի դժոխոցն վախեցայ,
Սադայելէն ես սարսեցայ,
Զմեղս յիշեցի և արտմեցայ,
Լինի, թէ Տէրն ինձ ողորմեայ։

Այսօր Յիսուս ինձ դատ արա,
Ի դժոխոցն ազատ արա,
Երկրպագող եմք մեք նորա,
Քրիստոս աստուած, մեզ ողորմեա։

Յէջմիածինն ես գնացի,
Զվաղարշապատ քաղաք տեսի,
Ի Գրիգորէ զկարգս առի՝
Հայոց մեծաց հայրապետի։

Ես անարժան զկարգս առի,
Հայրապետաց պարն մտի,
Զօրն ողբամ ողորմելի,
Լինի՝ աստուած ինձ ողորմի։

Պատկառեցայ ու ասի մեզայ,
Զաղիր բանէրս որ ես ասեայ,

Եօթն ամիս ի բանդ կեցայ,
Յանօրինաց մէջ բնակեցայ։

Ի յարգելան բնակեցայ,
Զհեռն և դնախանձն ստացայ,
Ի յարուեստից մերկացայ,
Ի յուսմանէս ես զրկեցայ։

Սաղմոսին ոչ լսեցի,
Մարգարէին մեծի Դաւթի,
Եթէ խոնարհն բարձրասցի,
Ի անբարտաւանն խոնարհի։

Կամաւ չհղայ, Տէրն է գիտակ,
Որ բանս եղէ այս ինձ վտակ,
Մէջ յաշխարհիս եմ խայտառակ,
Բազմաց եղէ ես օրինակ։

Ով ոք լսէ, զիս բամախէ,
Սրտիւն իւրով զիս բամբասէ,
Ես այս չարեացս արժան եղէ,
Յանօրինաց կատակ եղէ։

Պակասամիտ անիմաստիկս,
Հոգիս այրի ի մէջ աղտիս,
Վախեմ առնու ցաւ մահու զիս,
Անապաշխար մնայ հոգիս։

Որով տրտմեալ եմ, դեգերեալ,
Սուլգան ՝ւ իշխան ինձ չողորմեալ.
Հարիւր թումանն տայ պահեալ,
Ժանեօք զմարմինս իմ կոտոհալ։

Սարսեցաւ սիրտս ի փորիս,
Լեզուս կապաւ ի բերանիս,
Աղաչեցի զշահալիս՝
Զգլուխս կտրեա, ելնէ հոգիս։

Մարմնով իմով ես կապեալ եմ,
Սրտիւ մտօք խաւարեալ եմ,
Ի չար գործոցս փոշիման եմ,
Վախեմ մեռնիմ, չապաշխարեմ։

Երկրպագեմ երկնաւորին
Եւ ինն դաս սուրբ հրեշտակին,
Եկեղեցեաց տանն նորին
Եւ Գրիգորին Լուսաւորչին:

Ղօղանջելով զնա աղաչեմ,
Ծունտր դնելով երկրպագեմ,
Տէր, թող զմեղս, անարժան իմ,
Արքայութեանդ քու փափագեմ:

Աղաղակեմ ի մէջ բանդիս,
Հալս է խարապ մէջ յերկաթիս,
Տէր առաքեաց ինձ աւետիս,
Թէ ուրախ լեր և օրհնեա զիս:

Ի աղաղակեմ ի մէջ բանդիս,
Չար քաշեցի ես եօթն ամիս,
Տկարացաւ իմ գեղ մարմնիս,
Տէր, ազատեա զքո գերիս:

Ողորմեցէք, զիս ողբացէք,
Յանօրինաց զիս փրկեցէք,
Սոքա կասեն զիս՝ էն թողէք,
Ի Մահմետայ տինն դարձէք:

Բամք զօրացն որ աստի կան,
Գան և կանգնին մեզ յանդիման,
Մեծէ ի փոքր մեզ խրատ տան,
Թէ եկայք եղէք մահմետական:

Սուտանուն Արգիլանցի,
Խև Եղիա Բերկրցի,
Աւուրքդ քո նւազ լիցի,
Վա՜յ թէ զհոգիս իմ կորուսցի:

ԶԱտոմ երէցն ասեմ զգերին
Եւ զԹաթուլ, եղբայր նորին,
Ես մեղաւորս ընկեր սոցին,
Կամք դեգերեալ ի մէջ բանդին:

---

79 Տպագրում՝ են

Ջամիկն օրհնեմք և վիւր որդին,
Որ եօթն ամիս մեզ հաց բերին,
Նոքա վվարձքն յաստուծոյ առին
Եւ անթառամ լուսոյ հասցին։

Բերքն ի համէ աւեր կենայ,
Քան զնինուէ նա երերայ,
Հուրն աստուծոյ իջնու ի նմայ,
Որպէս Սոդոմ հրակէզ դառնայ։

ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՀԱՃՏՈՒԹԵԱՆ, ՈՐ ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿՍ ԽՌՈՎ ԿԱՑԵԱԼ Է ՀԵՏ ԴԱՍԱԿՑԻՆ ԻՒՐՈՑ՝ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԷՐ ԼՈՎԱՑ ՔԱՂԱՔԻՆ, ԵՒ Ի ՅԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՃՏԵՑԱՒ ԵՒ ԳՐԵԱՑ ԱՅՍՊԷՍ

Այբէն մինչև ի քէն, Քրիստոս, մեղայ քեզ,
Բազում խռովութեանց հետևեցայ ես,
Գրիգոր քաջ հռետոր, դու իմ եղբայրն ես,
Դու ես սուրբ հայրապետ և առաջնորդ ես։

Եւ շատ անկարգ թղթեր քեզ գրեցի ես,
Զարմանամ, հիանամ, թէ ո՞նց համբերես,
Եթէ լինի այսպէս, որ հանդիպիմ քեզ,
Ընդ քո սուրբ երեսիդ յոյժ կարօտեմ ես։

Թուի թէ թշնամին յիրար ձգեց դմեզ,
Ժամանակս է խաբող, որպէս քաջ գիտես,
Իմ համշիրակ եղբայր, աստուած օգնէ քեզ,
Լինի թէ տեսանեմ զքո սուրբ երես։

Խնդիրք ունիմ ի քէն, եթէ կու լսես,
Շնորհաւք մեք այսօր, որպէս քաջ գիտես,
Կամաւ թուղթս գրեմ առաքեմ առ քեզ,
Համօրէն աշխարհի պարծանքն դու ես։

Զեռվդ ես գեղեցիկ և վայելուչ ես,
Ղամպար ես դու վառեալ, անշիջելի ես,
Շշմարտութեանց սիրող, ուղղադատան ես,
Մաքուր ես և պայծառ, որպէս ջլոյս ես։

Յիսուս Քրիստոս վկայ, որ կու սիրեմ զքեզ,
Նման ես արծուի, բարձրաթռիչ ես,
Շնորհօք ես դու լցեալ, քան զտէր Ներսէս,
Ո՛վ տէրդ իմ Գրիգոր, յայտնի գովեմ զքեզ։

Ջունիմք շատ սիրելիք, զայլն այլ քաչ գիտես,
Պարտ է մեզ սէր առնել, աղաչեմ զքեզ,
Զբէն անմահութեան դու արբուցանես,
Ռաբբի բարձրադիտակ Հայոց ազանց ես։

Սրբոց հայրապետաց դու նմանեալ ես,
Վրդանէս մեղաւորն կը գովէ զքեզ.
Տանս Հայաստանեաց բարեւնապետ ես,
Բամեալ ազանց միջի յոյժ գովելի ես։

Յանկալի հրեշտակաց այլ և մարդկան ես,
Իւսիսայիին երկրին ուրախութիւն ես,
Փարթամ ես դու հոգւով, զուտ և մաքուր ես,
Քրիստոս քեզ օգնական, պի արժանի ես։

2. ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ Է

Այբէն մինչև ի քէն գովեցի զքեզ,
Այբէն մինչև ի քէն, եղբայր մեղայ քեզ,
Արդ զայս սակաւ բանիկս գրեցի ես,
Զիարդ կաս կենցաղոյս, հարցանեմ զքեզ։

Եթէ դու պիս հարցման արժանի առնես,
Ներողութեամբ փրկչին առողջ եմ և ես,
Երանի այս թղթիս, որ տեսանէ զքեզ,
Յորժամ որ ընթեռնուս, մէկ բերան յիշես։

Ահա հետ իմ եղբօրն հաշտեցայ ես,
Բազում խոովելով ոխ պահեցի ես,
Գրիգոր վարագեցի, դու պարծալի ես,
Դու իմ աչացս լոյս և սիրելի ես։

Ես շատ եմ մեղուցեալ, թողութիւն առնես,
Զայսքան աւուրք խռով հետ ինձ կու պահես,

Է՛, իմ եղբայր սիրուն, զամէնն ասեմ քեզ,
Ընդ մեզ ով որ արար, զայն այլ ասեմ քեզ։

Մէկ ցեղ հետ ինձ ասաց, մէկ այլ ցեղ՝ հետ քեզ,
Ժամ է մեզ հաշտելոյ, ի քէն խնդրեմ ես,
Իմ բնական սիրած եղբայրն դու ես,
Լինիմ հոգւովս ուրախ աստնվորի ես։

Խնդիրդ կատարէ, յերր յաստուած դիմես,
Ծանիր, իմ տէր եղբայր, հաշտեցայ հետ քեզ,
Կամաւ ես հաշտեցայ, զայն դու գիտես,
Հայաստանեայց իրատիչ և վարդապետ ես։

Զայնիւդ հեզաբան քաղցրաղրոյց ես,
Ղեկաւար ես ճարտար, թեթև անցանես,
Ճշմարիտ հայոց աստուածաբան ես,
Մարգարէից նման աստուածասէր ես։

Յիմ համշիրակ եղբայր և սիրելի ես,
Նման ես աղաւնոյ, յոյժ միամիտ ես,
Շնորհքն աստուածային իջանէ ի քեզ,
Որ և երկնաւորացն յոյժ ցանկալի ես։

Չկայ մեզ օգնական, որպէս որ գիտես,
Պանդխտի եմք և զարիպ, ինչ ասեմ ես քեզ
Չրոց նման մաքրիչ և այլ սրբիչ ես,
Ուստին ես քաղցրահամ, զմեզ կերակրես։

Սրբոց վարդապետաց դու հետևող ես,
Վասն անցեալ մեղացն մեղայ ասեմ քեզ,
Տեսուչ և առաջնորդ հովիւ կարգեալ ես,
Բաբունի նաղելի և երջանիկ ես։

Ցնծութիւն և պարծանք ժողովրդեան ես,
Ի խլովի քաղաքին քաջ գիտապետ ես,
Փառօք և ճոխութեամբ պայծառացեալ ես,
Քրիստոսի ողջունիւն ողջունեմ զքեզ*։

Այբէն մինչև ի քէն աստուած օրհնէ քեզ,
Այբէն մինչ ի քէն իմ սիրելին ես,

Եւ ի քո սրբութիւնդ առաքեցի հս,
Ինդրեմ ի յաստուածոյ որ ողջ պահէ զքեզ։

Առաջի բնական սէրն դու յիշես,
Զայց հոգւով եմ արտում, զի կարօտ եմ քեզ,
Որ և դէմ յանդիման խօսակցի ընդ քեզ
Ի մէջ այլսեռից բնակեալ եմ հս։

3. ՈՏԱՆԱՒՈՐՍ ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ Է

Այբէն մինչև ի գիրն վերջին
Մեղայ ասեմ հս Քրիստոսին,
Բազում բանիւ խառվութեանց
Հետևեցաք ի հետ չարին։

Գրիգոր եղբայրն իմ սիրելին,
Որ է տեսուչ Իլով քաղքին,
Դու հայրապետ և վարդապետ,
Նման սրբոցն հարցն առաջին։

Երանելի Տէր Գրիգորին
Եւ երջանիկ դիտապետին,
Ջիմ համշիրակ սիրականին,
Մեղայ ասեմ դարձեալ կրկին։

Եթէ կռուանք ըստ մարդկային,
Մի՛ խռով կացցուք նման չարին,
Ընդ մեր հաշտիլ բոլորովին,
Յամօթ լինի մեր թշնամին։

Թողուլ պարտիմք ըստ հրամանին,
Ըստ կանխասաց մերոյ փրկչին,
Ժտել ապա զանճառ բարին,
Որ ի Տեառնէ պարգևեսցին։

Ի մարդկանէ ոչ ոք գտանին,
Որ ի մեղաց ոչ յաղթեցին,

---

* 44–րդ տողից հետո ձեռագրում կա հետևյալ հանձնարարականը. «Զայս երկոս առնես այլ տաղիս հետ ասա»։

Լալ մեզ պարտ է յոյժ տրտմագին,
Զի մի՛ լացցուք ի գեհենին։

Խռովեցաք հետ մէկ մէկի
Խաւարեցաք մէջօրէի,
Ծառայեցաք չարասիրին,
Ծանակ եղաք բոլորովին։

Զի կուրուսցի մեր թշնամին,
Որ զմեզ արար հաւան կամքին,
Հաստատեսցուք սէրն առաջին,
Հաւատացաք պատուիրանին։

Զայն խռովութեանց մեր լսեցին,
Բաղում տեղիք բամբասեցին,
Ղարիպ և չար անուանեցին,
Ղարիպութիւնս մեր լացուցին։

Ճշմարտութեան ճանապարհին
Ճգնիլ պիտէր հարցն առաջին,
Մաքրել այնու միտք և զհոգին,
Մաքուր պահել յաղտոյ զմարմին։

Յանկարծակի չարիք եկին,
Յանկարծ զմեզ խռովեցուցին,
Նախատանօք կծեցուցին,
Նոր սրերով զմեզ ֆոցեցին։

Շատ բան և խօսք ի քէն ասին
Եւ շատ զրուց յինէն ասին,
Որով և զմեզ բարկացուցին,
Որ և յայտնի կռուեցուցին։

Չէր պարտ լսել մեր չարկամին,
Չէր մեզ պատեհ լսել նոցին,
Պարտ էր լսել բարեկամին,
Պահել զհրաման Տեառն Յիսուսին։

Ջանիւ զմեզ գլորեցին,
Ջրի նման պղտորեցին,
Ռամիկ ոմանք զմեզ յաղթեցին,
Ռակա և կեղտ անուն դրին։

Սրտերս մեր ոչ խորհեցին,
Սէրն կենաց պատուիրանին,
Վասն այնորիկ մեզ յաղթեցին,
Վա՛յ և եղուկ զմեզ պատեցին։

Տեսողքն զմեզ լոյս գիտէին,
Տիրանման զմեզ պատուէին,
Բարունապետք անուանէին,
Բամից սրբոց զմեզ հարկէին։

Յանկանալով առ մեզ գայիւ,
Յան և ցիր զմեզ գտին,
Իւանդ հոգւով զմեզ տեսին
Իւսիսային կողմ աշխարհին։

Փութով հաշտինք մեք վերըստին,
Փառս տացուք արարողին,
Քրիստոսի անմահ գառին,
Շնմարտութեան ճանապարհին։

* * *

Վրդանէս անպէտ հոգի,
Որ և յազգէ Սանկեցի,
Ի գաւառէն Այրարատի
Եւ ի գեղջէն Գիլանեցի։

Բարուն քաջիդ տէր Գրիգորի,
Նոմոսս գայս քեզ գրեցի,
Որ եմ կարօտ քո երեսի,
Քո տեսութեանդ հրաշալի։

Դու ես նման Արուսեակի,
Եւ ես նման մթին տեղի,
Կարօտացայ քո սուրբ տեսի,
Զի տրտմութիւն մեր փարատի։

---

66 Ձեռագրում՝ ցնիր

Արդ, ո՛վ հղբայր, իմ պարծալի,
Քաջ հռետոր և հրաշալի,
Յիմարեցաք մեք յաշխարհի,
Վասն անիրաւ Մամոնայի։

Նստեալ ես դու ի լռվ քաղքի,
Ես, անարժանս՝ ի Սեչովի,
Սոքա գէմ չեն մեզ հայրենի,
Այլի մեր սէրն է պիտանի։

Է՛ իմ հղբայր՝ և իմ սիրելի,
Ահա ասեմ ես քեզ յայտնի,
Որ բանսարկուն չար թշնամի,
Ջմեզ յիրար ձգեց յայտնի։

Սէրն պատուէրն է Քրիստոսին,
Լրումն օրինաց պատուիրանին,
Բայց մեք ատոդք հղաք կրկին,
Եղբայր, մեղաք մեր Արարչին։

Ինձ հատատա, հղբայր բարի,
Որ ես լալով պայս գրեցի,
Քո սրբութեանդ առաքեցի,
Առ և կարդա, ո՛վ հրաշալի։

Բայց հարցանեմ, ո՛վ սիրելի,
Թէ պիա՞րդ կաս կամ որպիսի՞,
Զի այս կենցաղս է նեղհակի
Եւ հանապազ է թշնամի։

Արդ զօրութիւնն Քրիստոսի
Միշտ հանապազ քեզ հովանի
Եւ թշնամին քո կրկնակի,
Վազվազակի կործանեսցի։

Նայն թէ դու հնպահոգի,
Յիշման առնես զիս արժանի,
Նայ գոհութիւն Արարողի,
Առողջ մարմնով եմք յաշխարհի։

Քան զբռ եմ աւերակի,
Քան զհաւտպսան յանապատի,
Որպէս ճնճղուկ եմ ի տանի,
Կամ բնկնալ նաւ ի մէջ ծովի։

Արդ աղաչեմ, ո՛վ սիրելի,
Յիշման արա դիս արժանի,
Յիշեա յաղօթքդ քո բարի,
Արտասուելոյն ժամանակի։

Թէպէտ որ կայր բան մի քանի,
Որ գրեցի մէջ այս թղթի,
Յորժամ տեսնում դքեղ յայտնի,
Յայնժամ ասեմ դինչ կու պիտի։

Հետ այս թղթիս բարև հասնի
Քո սիրելեացն ամենայնի,
Քահանայից, ժողովրդի,
Միահամուռ մեծ և փոքրի։

Անփորձ կենայք մէջ աշխարհի,
Քրիստոս լիցի ձեզ հովանի,
Ո՛վ քահանայքդ հրաշալի
Եւ ժողովուրդք իւով քաղքի։

Զեր թշնամին ամօթ լինի,
Որ մեր շատ սէրն արար լեղի,
Սեր բարեկամքն ուրախասցի
Այժմ և աւուրն ապագայի։

Ի թվին Հայոց հազար վեցհն
Օգոստոսի քսան ու եւթնեին
Սակաւ բանիկս գայս գրեցի,
Իւով քաղաքն առաքեցի։

---

69 Ձեռագրում՝ Ռ փխ հազար

70 Ձեռագրում՝ Ի փխ քսան

4. ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԻՆԻ ԱՅՍ ՍՈՒՏ ԿԵՆՑԱՂՈՅՍ ՎԵՐԱՅ

Այս սուտ կենցաղոյս վերայ
Է՛ս միայն շուտով խաբեցայ,
Թողի զկամքն աստուածային,
բանսարկուին ես հետևեցայ։

Բայց զայս գիտացիք, եղբարք,
որ աշխարհս է փոփոխական,
Նոյնպէս բնութիւն մարմնոյս
հանապազ է մեղանչական։

Գրեմ քեզ նամակ, եղբայր,
տէր Գրիգոր, արհի պանծալի,
Վարդապետ աստուածաբան
և տեսուչ Իլով քաղաքի։

Դու ես հոգով պայծառ
արեգակն ի մէջորէի,
Ջահ ես մէջ եկեղեցւոյ
և լուսին ի տասնուհնգի։

Ես ի քոյ սիրուդ, եղբայր,
յաշխարհէ յաշխարհ[3] ընթացի,
Ով զմեզ յիրար ձգեց,
կորստեան որդի նա լինի։

Զարմանամ ես ի յայս բանին,
Թէ գիա՞րդ զիրար առեցաք,
Քանի որ տղայ էաք.
հանապազ զիրար սիրէաք։

Է՛, իմ սիրելի եղբայր,
Մամոնէն քաւէլ խաբուեցաք,
Թողաք զաստուծոյ պատուէրն,
անկասկած չարի դիպեցաք։

---

3 Ձեռագրում՝ յաշխարհս

Ընդէ՞ր մեք յիմարեցաք,
բնական սէրն մոռացաք,
Այս սուտ աշխարհիս համար
միմեանց յէ՞ր բաժանեցաք։

Թէ այս անցաւոր երկրիս
մեծութիւնն ամէնն ինձ տային,
Ոչինչ էր ամէնն; եղբայր,
երբ զմեզ ի բաց բաժնեցին։

Ժամ է մեզ դառնալ, եղբայր,
հերիք էր զիրար ատեցաք,
Աշխարհի զրուց եղաք,
զթշնամին մեր խնդացուցաք։

Իմ աչացս լոյս, եղբայր,
մեզ պարտ չէր խռով կենայաք,
Թէպէտ որ գլորեցաք,
պարտ էր մեզ շուտով կանգէաք։

Լոյս հոգւոց մեր պակասեցաւ,
քանի մեք խռով պահեցաք,
Դուն իմ սիրելի եղբայր,
անգուման չարի դիպեցաք։

Խօսիմ և ասեմ յիստակ,
Տէր Գրիգոր, եղբայր պատուական,
Հետ քեզ այնպէս սէր ունիմ,
որ գիտակ Տէրն վերնական։

Ծառայս գիտէիր վաղուց,
ինչ ասեմ, եղբայր սիրական,
Ծռի այն մարդուն լեզուն,
որ մէջ մեզ ձգեց չար նշան։

Կամիմ հետ քեզի հաշտիլ,
ո՛վ եղբայր, արհի պատուական,
Դու ինձ թողութիւն արա,
ես միայն եմ մեղանչական։

---

18 Ձեռագրում՝ բաժնեցաք

Հազար որ խաւար լինի,
ի լուսոյն շուտով հալածի,
Այնպէս երբ որ մեք հաշտիմք,
Քշնամին փուքով կործանի։

Ձիւնն արևուն հալի,
և պայծառ գարուն կու լինի,
Յորժամ մեք սիրով կենամք,
մեր հոգին պայծառ կու լինի։

Ղամբար մեր հոգւոց վառի,
յորժամ սէրն առ մեզ հանդիպի,
Բարին դրացի լինի,
չարն ի մէնջ շուտով բաժանի։

Ճար չունիմ, եղբայր բարի,
քան զհաշտիլն այլ իրք չի պիտի,
Իմ սիրոս ի քո շատ սիրուն,
քան զմոմ փուքով կու հալի։

Մեղաք աստուծոյ, եղբայրք,
ի միմեանց շատ վատ ասացաք,
Թէ չէր աստուծոյ խնամքն,
մեք վաղուց կորուսեալ էաք։

Յիսուս Միածին Որդին
հովանի քո սուրբ աթոռին,
Օրհնութիւն աստուածային
իջանէ քո ընտրեալ հօտին։

Նաև հաստատուն կենաս,
լի աւուրբք բազմօք ծերանաս,
Այս անցաւորիս վերայ
հանապազ դու ուրախ կենաս։

Շուշանի նման փայլիս
և հոտով անուշ դու մնաս,
Յաշխարհի մեղաց ծովէս
սրբութեամբ պայծառ վերանաս։

Ո՛վ քաջ, սիրելի եղբայր,
քեզ կարօտ եմ հանց իմանաս,
Երբ որ քո թուղթն տեսայ,
շատ լացի, հանցեղ իմանաս։

Ցունիմք շատ աւուրք, եղբայր,
կամ հարիւր կամ հազար տարի,
Այնպէս գնալու եմք մեք,
մինչ ծաղիկ խոտէն թօթափի։

Պայծառ ես, մաքուր, եղբայր,
անուանի մէջ ամէն ազգի,
Լեզուովդ ճարտար, հմուտ,
հասակաւդ զարմանալի։

Ջանամք յաշխարհիս վերայ
առաջի սիրուն հանդիպիլ,
Սէրն հոգևոր առնուլ,
Քրիստոսի այնով հետևիլ։

Հազար երանի թղթիս,
որ զքեզ շուտով տեսանէ,
Վա՛յ իմ մոլորեալ անձինս,
որ նստեալ լալով կու գրէ։

Սրտովս եմ յօժար, եղբայր,
զքեզ գովել ի մէջ ատենի,
Թէպէտ թշնամին խաբեաց,
միմեանց արար ատելի։

Վասն քո սիրուդ, եղբայր,
այս յաշխարհս շատ յամեցի,
Դիտէ ծածկագէտն աստուած,
հաշտելոյ կարօտ ես էի։

Տե՛ս, որ ողորմած Հոգին
ի վաշքօն* շուտով ծանուցից,

---

49 Ձեռագրում՝ D փխ հարիւր։ Ռ փխ հազար

55 Ձեռագրում՝ Ռ փխ հազար

* Ըստ Ն. Ակինյանի ծանոթագրության, Վաշքոն (Վասքո) այդ ժամանակ Լեմբերգի ավադերեցն է եղել և հաճախ հիշատակվել է նույն տարիներին գրված № 441 ձեռագրում։

Բաբուն ես դու հրաշալի,
ո՛վ եղբայրդ, պետդ պանծալի,
Ո՛վ քաջ քարտուղար ճարտար,
զօհալ աստղ ի առաւօտի:

Ցանկալի ամէն ազգի,
անուանի ի մեջ աշխարհի,
Ո՛վ պևետիկոսդ քաջ,
հովուապետ ի մէջ Իլովի:

Իիւանդ, ցաւագար էաք,
քանի որ քէնով կենայար,
Այսօր բարով հաշտեցաք
և չարին նալաթ ասացաք:

Փառք և գոհութիւն Փրկչին,
որ զմեզ շուտով հաշտեցոյց,
Զմեզ ի չարէն փրկեաց,
բարութեանցն իւրոյ մերձեցոյց:

Քեզ է խիստ կարօտ, եղբայր,
Վրդանէս եղն եղկելի,
Խոցած է բազում նետից,
գոհութիւն փրկչին Քրիստոսի:

* * *

Այս թուղթս, որ Սեչով գրուի,
Տի երթայ ի Լովն հասնի,
Ի վանքն Հաճկատարի,
Զեռն եղբօրն իմ հարազատի:

Բայց երթայ գիրս խնդալի,
Վազելով նման փայիկի,

Ապա չէր ատենն եկեալ,
թշնամին այլուի խափանեց:

Տանողն օրհնեալ լինի,
Աստծոյ բարուն հասանի։

Բայց չէ պարտ այս թուղթս բացուի,
Մինչև որ իւր տէրն հասնի,
Ի ձեռն վարդապետի,
Բանիբուն քաջ հռետորի։

Հետ այս նամակիս, եղբայր,
Աստուծոյ բարին առ քեզ հասնի,
Հազար երանի թղթիս,
Որ հետ քեզ մօտիկ կու խօսի։

Հասնի յարագ թուղթս բարով,
Ի քաղաքն շէն, որ է Լով,
Ի ձեռն եղբօրս առնելով,
Իւր անունն արհի գոլով։

Թուղթս որ կարդաս ձայնով,
Սիրտդ թող ցնծայ խնդալով,
Թէպէտ մեղաւոր եմ ես,
Թողութիւն արար դու սրտով։

5. ԱՅԼ ՏԱՂ ՅՈՒՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ, ԱՍԱՑԵԱԼ Ի ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Դարձեալ ասաց մարգարէին,
Երթալ ի Նինւէ քաղաքին,
Եւ նա երթեալ փութանակի
Եւ գուժ առեալ մահու նոցին։

---

87 Ձեռագրում՝ Ռ փխ հազար
Խորագիր
A Այլ տաղ Յունանու մարգարէի, ասացեալ Վրթանէսի
Բնագիր
3 A երթալ

Զայնեաց ի լուր նա ամէնին,
Յականջ ծերոյն և տղային,
Թէ այլ հրեք աւուրք յետին,
Ջնջի քաղաքս ամենևին։

Լուան զբարբառ մարգարէին
Եւ ծանուցին թագաւորին,
Իսկ ի լսել զայն արքային,
Ասաց, թէ ստոյգ են բանք նոցին։

Եհան զբեհեզն և զծիրանիճ,
Ընկեց զթագն իւր ի գետին,
Հրաման արար ի քաղաքին,
Անսուաղ երեք օր պահեցին։

Մոխրաթաւալ ողորմագին,
Ծերք և տղայք դառն ողբային,
Հարք ի վերայ որդոց լային,
Մարք զէստերս գորովէին։

Տղայքն զհայրս հարցանէին,
Յողբս և ի կոծս շարժէին,
Թէ երբ գայցէ օրն այն յետին,
Ջնջի քաղաքս ամենևին։

Պատասխանեալ հայրքն ասէին,
Տղոցն զայս յոյս դնէին՝
Աստուած գթած է, մարդկային,
Անտես չառնէ զգործս ձեռին։

Բոլոր քաղաքն շարժեցին,
Մեգն և խաւարն պատեցին,
Ճայթմամբ ուժգին որոտացին
Եւ կործանման կարծիս տային։

5—8 B չիմ
12 B *ստոյգ՝ նորին*
13 A *բեհեզն*
15 B *և փխ ի*
19 B *Հայրք*
20 B *Մայրք*
21 A *զհայր*
31 B *յոյժգին*

Յայնժամ գթած Տէրն երկնային,
Լուաւ ձայնի ողբոց նոցին,
Ի լուսանալ առաւօտին
Ծագեաց զլոյսն իւր զերկնային։

Իսկ Յունանու մարգարէին
Նստեալ յեզեր այն քաղաքին,
Զի տեսանէ զվախճան նորին,
Զկործանումն Նինուէին։

Յոյժ տառապեալ ի խորշակին
Եւ քաղէին ոգիք նորին,
Յայնժամ հրամանն աստուածային,
Փութով բուսոյց զդդմենին։

Որ եւ, արար հով Յունանին
Եւ զօրացաւ նա ի տակին,
Եւ ի վաղուեան առաւօտին,
Որդն այն եհար զդդմենին։

Ընդ որ տխրեալ մարգարէին
Եւ քաղէին ոգիք նորին,
Դարձեալ խօսի Տէրն ընդ նմին
Եւ կշտամբէ զբարս նորին.

Դու խնայեցեր ի դդմենին,
Զոր և ձեռք քո ոչ արարին,
Ես ո՞չ գթամ ի բիւր մանկտին,
Որ չգիտեն զաջ կամ զահեկին։

Իսկ բնակիչքն Նինուէին,
Որ զպատուհասն դարձուցին,
Երկրպագեալ մարգարէին,
Մեծաւ սիրով զնա պատուէին։

---

34 A լաւ
40 B Նինւէին
44 B զդդմէնին
48 B զդդմէնին
53 B դդմէնին
56 B գիտեն փխ չգիտեն
57 B Նինւէին
60 B պատուէին

Փառք աստուծոյ Հօրն անեղին,
Որդոյ անճառ ծննդեան բանին,
Հոգոյն սրբոյ շնորհաբաշխին,
Յանցեալն յայժմոյս յապագային։

6. Ի ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍՑԵԱԼ ԶՏԱՂՍ Ի ՎԵՐԱՅ ԿԱՖԱՅՈՒ ՍՂՈՒԹԵԱՆ

Օրհնութիւն և փառք փրկչին,
երկնի և երկրի ստեղծողին,
Տեառն Յիսուսի Քրիստոսին,
Անմահից կենաց տուօղին։

Հազար հինգ հարիւր վաթսուն
Մեծ թվական մեր կենարարին
Եղև սղութիւն սաստիկ
Կաֆայէն՝ Հոնաց աշխարհին։

Այնպէս սաստիկ սով եղաւ,
Որ սովուն բազումք սատկէին,
Թաթարքն գազանաբար
Ջմեռնալս հանեալ ուտէին։

Ո՛չ շուն, ո՛չ կատու թողին,
Անխտիր զամէնն ուտէին,
Ամէնն աւազակ եղան,
Ջմիմեանս կողոպտէին։

Բազումք ի յերկրէն ելան,
Ի յօտար երկիր գնացին,
Շատոք անճարակ եղան,
Ջտունն ու տեղն զամէն ծախեցին։

Ո՛չ ոսկի՝ և արծաթ թողին,
Մարգարիտ և պղումաշնին
Կիսագին վաճառէին
Եւ փորով կուշտ Հայ չուտէին։

---

62 B *ծննդեամբ*
64 B *յայժմուս*
3 Զեռագրում՝ *Քրիստոսի*

Շատ մարդ վիւր որդին ծախեց,
Թէ՛ Թուրքին և թէ՛ Թաթարին,
Բազումք զծնօղքն առեցին
Եւ տանէն ի դուրս վարեցին։

Ո՛չ վանք, ս՛չ ջաղացք Թողին,
Ջմեծատանց տունն թալնեցին,
Որպէս չար գազան եղան,
Փիշերով ի շուրջ կու գային։

Յերկնից անձրև ոչ իջին
Եւ երկիրս պտուղ չի տային,
Աղբիւրքն ամէն չորացան,
Եւ բազումք ծարաւոյն մեռին։

Եթէ նաւեր ոչ գային,
Նայ մարդիքն ամէն ջնջվէին,
Աստուած մեծ խնամք արար,
Որ նաւով ցորեն բերէին։

Եղբայրք, ձեզ յայտնի լինի,
Որ աստուած մեզ չար չի կամի,
Ինչ որ պատուհաս լինի,
Մեր մեղաց չարէն կու լինի։

Թէպէտ պատուհաս թվի,
Բայց խրատ է մեզ պիտանի,
Այն է պատուհաս, եղբայրք,
Որ ի հուրն անշէջ կու մատնի։

Եթէ մահ կամ սով լինի,
Կամ հազար փորձանք աշխարհի,
Եթէ մեք մեղաց դառնամք,
Նայ ամէնն շուտով հալածի։

Եթէ մեղաւոր լինին,
Տանջանացն թեթևասցին,
Ապա թէ արդարք լինին,
Պսակաց արժանասցին։

---

36 Ձեռագրում՝ *մեռան*

56 Ձեռագրում՝ *արժանաւորին*

Որչափ պատուհաս լինի;
Մեր մեղացն է խիստ արժանի,
Յորժամ աղօթիւք խնդրեմք,
Ամենայն ի բաց հալածի։

Աստուած մեզ խրատ կու տայ,
Թէպէտ մեզ պատիժ կերևի,
Պարտ է համբերել, եղբարք,
Փառս տալ մեր ստեղծողի։

Զայս բանս ի Կաֆան ասաց
Վրթանէս անպիտան ոգին,
Ով ոք հանդիպի սորին
Թող զմեզ յիշէ ի բարին։

7. ՈՏԱՆԱԻՈՐ Ի ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ Է ՎԱՍՆ ՈՒՄԵՄՆ ՄԵԾԱՏԱՆ, ՈՐ ՈՒՆԷՐ ՔԱՐՈԶԳԻՐՔ՝ ՄԵԿՆԻՉ ՄԻ ԱՐԱՐԱԾՈՑ, ՈՍԿԻԱՊԱՏ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ, Ո՛Չ ԳԻՏԷՐ ԳԻՐ ԵՒ Ո՛Չ ԿԱՐԴԱԼ, ԵՒ Ո՛Չ ՏԱՅՐ ԱՅԼՈՑ ԿԱՐԴԱԼՈՒ

Մէկ մարդ մի ճրագ վառեր
՝Ի ի բարձր տեղի էր դրեր,
Մէկ մի խիստ յիմար եղեր,
Զճրագն ի վայր էր առեր,

Տարեր սնտուկն էր դրեր,
Զնորին լոյսն էր արգիլեր.
Վա՛յ է այն մարդուն հոգուն,
Որ զլոյսն առեալ թագուցեր։

---

66 Զեռագրում՝ ֆրթանէս

Խորագիր

B Ոտանաւոր Վրթանէս վարդապետի ասացեալ վասն ումեմն մեծատան, որ ունէր Քարոզգիրք, Մեկնիչ մի Արարածոց, ոչ գիտէր գիր և ոչ այլոց տայր, որ կարդային d Ի Վրթանէս վարդապետէ ասացեալ բանքս այս, ոմն մեծատուն ունէր Քարոզգիրք, Մեկնիչ Արարածոց, ոսկիապատ և գեղեցիկ, ոչ գիտէր գիր և ոչ կարդալ և ոչ տայր մարդոյ կարդալ, որ ուսանէին

Բնագիր

2 d չիք ՝Ի, ի տեղ դրեր

4 d է փխ էր

5 C՝ւ սնտուկն d սունտուկն է

7 d չիք է B մարդոյն d հոգւոյն

Մէկ մի ծովուն տակն իջէր
Ի ի ծովեն ճարգարիտ հաճէր,
Կուրացն լոյս էր տեր
Բազում ցաւք նովաւ փարատեր։

Մարդ՛մ այլ հակառակ եղեր,
Զմարգարիտն առեալ թագուցեր.
Վա՛յ է այն մարդոյն հոգոյն,
Որ զմարգարիտն է թագուցեր։

Մէկ մի աստուծոյ համար
Ի լեռնէն աղբիւր էր բերեր,
Մէկ մի չարութիւն արեր,
Գնացեր զաղբիւրն արգիլեր,

Շատ ոք ծարաւած թողեր,
Ծարաւուն բազումք են մեռեր.
Վա՛յ է այն մարդոյն գլխոյն,
Որ արեան պարտաւոր ելեր։

Մէկ մի քաղաքի մի մէջ
Գեղեցիկ ջրհո՛մ էր շիներ
Եւ այն պաղ ու անուշ ջրէն
Զմարդիկ էր զովացուցեր։

---

9 B *Մարդ* փխ *Մէկ* C *ծովոյն*
10 d չիմ՛ի BC *ծովուն*
11 Cd *Կուրաց* C *նա լոյս* d է
12 C *ցաւքն էր* փխ *ցաւք նովաւ*
15 Cd *մարդոյն*
16 ABC *Զմարգարիտն առեալ թագուցեր։*
18 d չիմ *ի* B *ի լեառնէն*
20 Cd *աղբիւրն*
21 d *Շատոնք* փխ *Շատ ոք*
23 d չիմ *է։ մարդոյն* C *հոգոյն* փխ *գլխոյն* d *հոգւոյն և գլխոյն*
24 A *պարտաւոր է*
25 BCd *միջի* փխ *մի մէջ*
26 Bd *ջրհոր մի*
27 B *ան* CD չիմ *այն* ABC *ցուրտ* փխ *պաղ* BC՝ւ d չիմ *ու*
28 B *Մարդիկ էր*

Մարդ մի հակառակ եղեր,
Ջըրհորին բերանն էր խփեր,
Ջմարդիկ ծարաւած թողեր,
Քաղքին աւեր կամեցեր։

Ջինչ մարդ որ ծարաւ մեռեր,
Արեան տէրն իւր փակողն եղեր.
Հազար վա՛յ այնոր հոգոյն,
Որ զջուրն տարեալ թաքուցեր։

Մէկ մի իւր հոգուն համար
Գեղեցիկ դրախտ՝մ էր տնկեր
Եւ այն դրախտին բոլորն
Աննման պարիսպ հաստատեր։

Եւ դդուռն ամուր փակեր,
Ջբանալիքն ի դուռն էր կախեր
Եւ այն բանալուն վերայ
Ջբանալուն ճարակն ուսուցեր։

Ով որ այն դռնովն անցեր,
Ջբանալոյ գիրն կարդացեր,
Ջդուռն շուտով բացեր,
Ի դրախտին միջին շուրջ եկեր,

Աւեր ի պտղոյն կերեր,
Այն պտղովն էր անմահացեր,
Տարեալ նա բազմաց բաշխեր,
Ով կերեր, նա անմահացեր,

---

29 C Մէկ փխ Մարդ
30 BC Ջրհորին
33 A Ջինչ մեռել
35 B հոգուն d հոգոյն
37 C հոգոյն d հոգոյն
38 d դրախտ էր
41 C ի դուռն է
43 Cd բանալոյն
44 C Ջբանալոյն
45 C դռնով B անցներ
48 AC'Ի ի դրախտին
52 AC կերել d կերեր է ընա

Ելեր ողորմիս ասեր,
Զայն դրախտին տնկողն էր օրհներ.
Օրհնեալ եղիցի այն մարդն,
Որ զբանալիքն չէր թաքուցեր։

Մէկ մի հակառակ ելեր,
Զայն մարդուն վարձքն խափաներ,
Զբանալիքն առեալ պահեր,
Մ՛չ ինքն՝ւ ո՛չ այլ ոք շահեր։

Ով ոք այն դռնովն անցեր,
Զբանալեաց պահողն անիծեր.
Աստուած անիծեր զայն մարդն,
Որ զբանլիքն ի տանն է պահեր։

Մէկ մարդ մի պաղչայ շիներ,
Զանազան ծաղկամբք զարդարեր,
Ով ոք որ պաղչայն մտեր,
Նայ ծաղկանց հոտոյն էր արբեր։

Մէկ մի հակառակ եղեր,
Զպաղչին դուռն ամրացուցեր.
Զինքն յանոյշ հոտոն զրկեր
Եւ զայլ ոք ևս էր նա զրկեր։

Մէկ մարդ մի լեռներն ելեր,
Լեռներուն ծաղիկ ժողովեր,
Առեալ ի մէկտեղ բերեր,
Զանազան ցաւոց դեղ շինէր,

---

56 AB չէ
57 A եղեր փխ ելեր
58 d մարդոյն
59 d Զբալիքն
60 BCd չիմ՝ւ C ալ
63 C անիծէ
64 B բանալիքն C զբանալիքն d զբալիքն A պահել
66 Bd ծաղկամբ
68 B չիմ էր
70 d Զպաղչային
71 Cd անուշ
73 B լեառն էր d լեռն էր
74 Cd Լեռներէն
75 B բերել

Տարեալ խանութ մի դրեր,
Հաքիմի է ապսպրեր,
Թէ ով ոք որ գայ դեղ ուղէ,
Մի՛ խնայեր և մի՛ արգիլեր։

Մարդ մի վատութիւն արեր,
Ջդեղրանքն ամնովն էր առեր,
Տարեալ ի տունն իւր պահեր,
Ջհիւանդացյ մահն էր կամեցեր։

Մէկ ճարտար բժիշկ՝մ եկեր,
Ջդեղերուն առնողն իմացեր,
Ջդեղրանքն ի նմանէ առեր,
Աստուծոյ համար էր բաշխէր։

Աստուած հանց շնորհք տւեր,
Որ զդեղրանքն չէր պակասէր,
Ով որ այն դեղէն առեր,
Նա շուտով էր առողջացեր։

Մէկ մեծ թագաւոր՝մ եղեր,
Որ նման նմա չէր եղեր,
Քաղաք մի արձակ շիներ,
Զայն քաղաքն մարդով էր լցեր։

Մէկ մեծ չար վիշապ՝մ եղեր
Անդնդոց ի վեր է ելեր,
Քաղաքն ամէն ի շուրջ եկեր
Եւ զմարդիկն վիրաւորեր,

---

80 C խնաեր d տուր փխ և մի՛ արգիլեր
82 C Ջդեղրանք Bd ամանովն B չիմ էր
84 d մահն է
89 d շնորհք է C տվեր
90 A դեղրանքն
91 C ոք փխ որ
92 C չիմ նա շուտով d է փխ էր
96 BCd չիմ էր
97 A ելեր փխ եղեր
99 A ամէնն

Ջոմանս ի հիւանդ ձգեր,
եւ զոմանս մահուամբ սատակեր,
Քաղաքն յիրար դիպեր,
Այն բանին ճարակ չէր գտեր։

Մէկ մի քաղաքէն ելեր,
Զհայրենիքն ամէն բաց թողեր,
Մերկիկ և բոկիկ եղեր,
Գնացեր ի լեառն էր ելեր,

Մէկ բարձր լեառ մի գտեր,
Որ երկնից էր հաւասարեր,
Այնչափ աշխատանք տարեր,
Որ լեռան գլուխն էր ելեր,

Ի հոն շատ տարիք կացեր,
Արտասուօք զաստուած աղաչեր,
Այնչափ աղաչանք արեր,
Որ գաստուած ի մօտն էր բերեր։
Աստուած ի նմա հարցեր,
Թ'ինչ բանի խնդիրք ես եկեր,
Նա էր պատասխան տուեր,
Թէ քաղաքին համար եմ եկեր։

Վիշապ՝մ անդնդոց ելեր
Քաղաքին վնաս շատ արեր,
Ջոմանս է վիրաւորեր,
Եւ զոմանս մահուամբ սատակեր։

---

102 d չիմ եւ
103 C իրար։ ցքեր փխ դիպեր
104 ABC չեն փխ չէր
108 d չիմ ի։ չիմ էր
115 C Անչափ
116 d է փխ էր
118 B արեր փխ եկեր C ելեր փխ եկեր
119 C այլ փխ էր d պատասխանի։ տուեր
122 d շատ վնաս
123 d վերաւորեր
124 d չիմ եւ

Քաղաքն է տարակուսեր,
Անճարակ ի վայր մնացեր,
Ելեր եմ ի քեզ եկեր,
Անճարկին ճար դու եղեր։

Աստուած նորա ողորմեր
Եւ պինդիրքն շուտով տեր.
Վա՛յ այն մարդուն հոգուն,
Որ գդեղն առնալ թաքուցեր։

Եկեր ՚ւ ի քաղաքն իջեր
Եւ մարդոցն ամէն քարոզեր,
Ով որ քարոզին լսեր,
Ի ցաւէն շուտով ապատեր։
Ոմանք ոչ չէին լսեր,
Քարոզին մտիկ չեն արեր,
Նոքա են հիւանդ անկեր,
Զարաչար մահուամբ սատակեր։

Աստէնս ով արիացեր,
Վիշապին գլուխն է կոխեր,
Անդէն պարզևեաս եղեր
Եւ երկնից կամարն է ելեր։

Այն մարդն որ քարոզ տեր,
Յեղուցեղ դեղրանք էր գտեր,
Գրեր մէկ մեծ գիրք կապեր
՚Ի ի հոգոյն յիշատակ Թողեր

---

126 d *ի վայր*
127 d *ելեր ի քեզ եմ եկեր։*
129 C *ողորմել*
130 d *տուեր*
131 BC *հոգոյն* d *հոգւոյն*
133 d *չիմ ՚ւ*
138 d *չէր փի՜ չեն*
139 BCd *քնկեր փխ անկեր*
144 d *չիմ եւ*
146 C *յեղուացեղ* d *յեղ ու յեղ*
148 BCd *չիմ ՚ի* BC *իւր փխ ի* d *հոգւոյն* Ad *գրեր փխ Թողեր*

Ինչ մարդ աշակերտ եղեր,
Այն գրոց բանէն սովորեր,
Մէկ աստուածասէր հոգի
Այն գրէն մէկ գիրք մի գրեր,

Առեալ իմաստնոց տուեր,
Գիտունաց ձեռօք է ապրեր.
Վա՛յ է այն մարդուն հոգուն,
Որ գայն գիրքն առեալ թաքուցեր:

Փոքր ինչ ժամանակ անցեր,
Մէկ անգէտ մարդոյ ձեռք անկեր,
Տարեալ ի պահեստ դրեր,
Զաշխարհի լոյսն թաքուցեր:

Յետոյ մէկ գիտուն՝մ եկեր,
Զայն գրքին համբաւն էր առեր,
Առեալ և քարոզ տուեր,
Շատ մարդոց օգուտ էր եղեր:

Այն մարդն էր անգիտացեր,
Գնացեր շատ մարդ ժողովեր,
Ծկեր և տաւի արեր,
Թէ՝ Մեր գիրքն ընդէ՞ր ես առեր:

Նոցա շատ խրատ տուեր,
Թէ պարտ չէ զայդ գիրքը պահել.
Վա՛յ է այն մարդուն հոգուն,
Որ գայն գիրքն առեալ թաքուցեր:

---

151 d Հոգի աստուածասէր
153 Ad տուեր
155 d չիf է B մարդոյն d հոգւոյն
160 C լուսն
161 d Ետոյ
162 A գրին d համբաւն գրքին է
163 C տվեր d տուեր
165 d չիf էր
169 Ad տուեր C տվեր
170 BCd գիրքդ
171 d չիf է B մարդոյն: հոգոյն d հոգւոյն
172 BC չիf զայն d Որ զգիրքն առեալ է պահեր:

Ով որ գիրք փակած պահէ,
Իր հոգուն կորուստ կամեցեր,
Նոքա են հակառակեր,
Թէ զայդ գիրքդ քեզ չենք թողեր։

Պիտի որ մեր ձեռքն տաս,
Մեզ վաղուց հետէ մնացեր,
Դեռ չեմք մարդոյ ցըցուցեր,
Ոչ այլոց ի ձեռք եմք տուեր։

Դարձնալ պատասխան տուեր,
Թէ՝ Զգիրքս ձեզնէ չեմ խլեր,
Քիչ մի թող ինձ մօտ կենայ,

Շատ բաններ է ինձ պետք եղեր։
Որչափ ի մօտս կենայ,
Ձեր հոգուն շատ շահ լիննայ,
Ապա թէ առնուք պահէք,

Ձեր հոգին խաւար տի մնայ։
Ասեն. Թող մօտ մեզ կենայ,
Այլվի տանք, բանի պիտենայ,
Ով չի կարդայ գիրք, պահէ,

Իր հոգին կապած լիննայ։
Զայդ բաններդ, որ դու ասիր,

---

174 BC հոգոյն d հոգւոյն
179 C ցոյց տուեր փխ ցըցուցեր
180 d չիմ ի BC տվեր d մտեր փխ տուեր
181 BC տվեր d տուեր
182 C Գիրքս
185 Bd իմ փխ ի
186 BC հոգոյն d հոգւոյն
189 BCd մեզ մօտ
191 d գիր
192 d լինայ
193 A բաներն

Ժիր կացիր, որ քեզ չլինայ,
Ժողվեցիր գիրք բազում.

Գործք անցու զբաներն, որ ի նմա։
Գինու, քնու մի՛ տար զքեզ,
Աշխարհիս սիրուն պահէ զքեզ,
Խոնարհ, հնազանդ և հեզ,
Որ անդէն լինիս պարզերես։

---

194 BCd չի լինայ
195 B ժողովեցեր d ժօղովեցիր
196 BC գործ քանի փխ գործք անցու C զբաներս։ չիմ որ
197 C քնոյ

ՂՈՒԿԱՍ ԿԵՂԵՑԻ

1. ԿԵՂԵՑԻ ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԱՍՍԱՑԵԱԼ ՈՂԲ ՏՂԱՅՈՑ

Աստուած քարոզնաց և խրատ նառուր,
Երբ որ չկսեցաք, նայ ապտակ նառուր,
Ապտակ զայն նառուր, գայ աստուծոյ սուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ Հուր։

Մեղայ չի դարձայ, երկու աչօքս կուր,
Հանց բան չեմ արեր գայ աստուծոյ դուր,
Վասն այն բարկացաւ և առաքնաց սուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ Հուր։

Ծառայս անհնազանդ, որդնակ իմ մաքուր,
Ես մեղայ անդարձ և մեղայ չնաուր,

Տարբերակներ

A *Ողբ նորահաս և դեռաբոյս մանկանց և տղայոց մանկան* B *Ողբ ի խարիսպ... սիրելեաց և բարեկամ ունեցողաց* CGKM *Անխորագիր* e *Ողբս ի վերայ տղայոց է* F *Ողբ ի վերայ նորահաս և դեռաբոյս մանկանց մեռելոց* H *Ողբ ի վերայ տղայոց ասա* J *Ողբ ի վերայ դեռահաս մանկանց տղայոց* l *Ողբ տղայոց*

Բնագիր

2 GH *չիf որ* J *՚ւ փխ որ* B *չի լսեց* DeM *չի լսեցին* GH *ոչ լսեցին* J *ոչ լսեցաք*
3 DeGHKM *զիմանալի փխ գայ աստուծոյ*
4 M *Սուր, երկսայրի սուր, զիմանալի սուր* (կրկնակը միշտ այսպես)
5 ABCDFJIM *տողը չիf* (այսուհետև այսպես)
6 DM *Ի մեղացս եմ անդարձ* Kl *չդարձայ* KIM *աչօք* ACJIM *կոյր*
7 D *Ցուր փխ դուր*
8 D *Այն իւր փխ Վասն այն* M *Այնիւ փխ Վասն այն*
11 DeGHKM *Ծառայն։ որդնակս* DeGM *անմաքուր փխ իմ մաքուր* K *չիf իմ*
12 AFl *մեղայ* DeGHM *Ի մեղաց եմ (*M *իմ մեղացեմ)* *փխ Ես մեղայ* e *ազատ փխ անդարձ* G *անազատ փխ անդարձ*

Աստուած բարկացաւ և առաքեաց սուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր։

Տղայն թաւալէր ՚ւ առնէր շուռ ու մուռ,
Հեծայր ցաւագին և լեզուն ի լուռ,
Որդեա՛կ, քո ծնօղացն երկու աչքն կուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր։

Մայրն մորմոքէր, գայր ի սրտէն հուր,
Երթայր ի վերայն նա միջակոտոր,
Հօրն և մօրն աղիքն գալար առնոյր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր։

Որդեա՛կ, զաչքդ բաց և զձեռքդ ի յիս տուր,
Այդ անոյշ լեզուդ քաղցրիկ զրոյց տուր,
Մի՛ զսիրտս խոցեր, պօղպատ, հրեղէն սուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր։

Մա՛յր, հերիք արա և կացիր ի լուր,
Ջաստուած աղաչեա, դու քեզ համբեր տուր,

---

13 DeGHM *Հայր (eGHM Հայրն) մեղ* փխ *Աստուած*

16 DeGH *կու թաւալէր* BCDeFGHJIM *չի՛ւ* FJK *առնոյր* eGH *շուր ու մուր* I *շռռումռռ*

17 DeGHM *Հեծէր։ իւր* փխ և B *լեզուն* C *շուռ* փխ *լուռ* DeGHM *լուր*

18 C *ծնողացս* J *ծնօղին* K *ծնօղացդ* IM *ծնողաց* DeGH *Հորն ու մօր աղիքն գալար առնոյր։* F *կոյր*

22 DeGHM *ի վերայ* I *ի վրայ* K *միջնոյկոտոր* M *միջացն կոտոր*

23 DeGH *Որդեա՛կ, քո ծնօղացն երկու աչքն կուր։*

26 DeGH *զձեռքդ* փխ *զաչքդ։ քո մայրն* փխ *զձեռքդ ի յիս* M և *ի քո մայրն եւտուր*

27 BJKM *անուշ* eGH *շիրին* փխ *անոյշ* DeFGHIM *լեզուէդ* B *յիս տուր* CDeGHJKM *զրուց*

28 DeGHM *Ջիմ սիրտս է* փխ *Մի՛ զսիրտս* BCK *սիրտս* I *Սիրտս մի՛ խոցեր* M *խոցէ*

31 DeGH *լացիր* փխ *արա։ դու* փխ և M *Հայր* փխ *Մայր*

32 DeGHM *աղաչէ։ և* փխ *դու*

Այս իմ խնդրականս ունին հրեղէն սուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր:

Այսօր զիս կու մոռնան հայր և մայր և քոյր,
Գերեզման մտնեմ չեմ գտնուր զդուռ,
Կարօտ մնամ ձեզնէ, սրտէս թափեմ հուր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր:

Ո՞վ կարէ պատմել զկսկիծն, որ ետուր,
Շատ ոք բաժանեաց զհարսն և զսկեսուր,
Չեմք իշխեր ասեր. Մեր տղայքն ի յո՞ւր.
Սուր, երկսայրի սուր,
Եկաւ աստուծոյ հուր:

*

2. * *

Պատճէն թւոյ նոր տումարի
է ծննդեանն Քրիստոսի,
Քանզի ծնունդն Քրիստոսի
Քրիստոնէից է նոր տարի:

Զի նոր արարչութիւն լինի
Եւ ամենայն ինչ նորոգի,
Նորոյ երկնի, նորոյ երկրի,
Նաև մասանցն ամենայնի:

---

33 B խնդրակս DeGHKM խնդրականքս ABCFJl ունի

36—40 BCeFGHJKl չիմ M 36—45 չիմ

42 A Շատոց փխ Շատ ոք

43 BCDl Չեմ eGH Ոչ կարեմ փխ Չեմք իշխեր DK կարել փխ իշխեր BCeGHJK ասել CDeHK տղայքն են l տղայն F են փխ ի K մեզ տուր փխ ի յո՞ւր l չիմ ի

44 J Մեր գառներն ի յո՞ւր փխ կրկնակի

45-ից հետո l ունի ևս՝

Սուրբ կոյս անարատ, անբիծ և մաքուր,
Դու լե՛ր բարեխօս քո Միածնին ի լուր,
Բառնա յաշխարհէս զմեղացն սուր,
Սուր, սուր, սուր, երկսայրի սուր:

Քանզի աստուած մարդ լինի,
Նոր արեգակ մեզ երևի,
Վասն այն կոչի մեզ նոր տարի,
Որ և զմեզ ընդ իւր տանի։

Այլև անուանք ամսոցն յայտնի
Առաքելոցն Քրիստոսի,
Յոյժ գեղեցիկ և պիտանի,
Խորհրդաւոր և սքանչելի։

Երկոտասան թիւ համարի
Կենդանակերպքն, որ ի յերկնի,
Նոյնքան թուով մասն աշխարհի,
Որ ի յանդամս մեր առակի։

Քայց ես տրուպ եմ ի կարգի,
Վարժապետաց աստիճանի,
Որ և յիշման չեմ արժանի,
Դուկաս, անունս է Կեղեցի

Որ եմ տգետ ամենայնի,
Մարմնով տկար, յոյժ ազտեղի,
Հոգով մեռեալ, միտք յիմարի,
Որ զտումարս յարմարեցի։

Ո՛չ իմաստնոց վերծաննելի,
Այլ տղայոց մանկագունի,
Մի՛ կարծեսցի բանս հպարտի,
Զի ես նման եմ ոչնչի։

Զի այս գործ չէր ինձ առնելի,
Այլ իմաստնոց ձեռնարկելի,
Սակայն յիշմանն պատճառի,
Որք ընթեռնուն, տան ողորմի։

Այլ առ փափագ սրտիս ՚ւ ըղձի,
Զի չունէի մասն բարի,
Զայս սակաւ բանս ի յոտք հանի,
Որ յորժամ յիշատակի։

Եւ որ յիշէ, յիշեալ լիցի,
Աստ և յաւուրն աներեկի,
Յորժամ գայցէ Տէրն ամենի,
Հատուցանել վարձ վաստակի։

Ի թւականիս մեծ Հայկազնի
Աբեթական տումարի,
Հազար անցեալ ընդ քառասնի
Եւ երկու թիւ այլ աւելի։

Ի դուռն սուրբ Կարապետի,
Որ մականուն Ղզլպաշ կոչի,
Ի յանբարի ժամանակի,
Որ եմք կոխան պեղծ չար ազգի,

Որ մականունն է Օսմանցի,
Դաւանութեամբն Մահմեդի։
Ժանիք ունին չար գազանի,
Նման կարճի և քարբ օձի,

Արեան արբու քրիստոնէի
Եւ մանաւանդ ուղղափառի,
Յորոց փրկէ Տէրն ամէնի
Յաղագս ամենայն խաչապաշտի։

ՏԱՂ ՏԷՐ ԱՒԵՏԻՔ ԿՐՕՆԱՒՈՐԻՆ, ՈՐ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒ Ի ՋԵՌԱՑ ԹԱԹԱՐԱՑ ԱՂԵԼՆԱՒՈՐԱՑ, Ի ՆԱՀԱՆԳԻՆ ՂՐԻՄԻ, Ի ՎԵՐԱՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ ՎԱՆԻՑՆ ԵՒ ՋՈՐ ՇԻՆԵԱՑ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԲԱՍՏԱՑԻՆ, ՋՈՐ ԿԱՑ ՄԻՆՉԵՒ ՅԱՅՍՕՐ ՄԵՋ ՕԳՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ

Հիսխական կողմն աշխարհէ
Միհն ընտրեալ Հայոց ազգէ,
Ինքն ի բարի շառաւիղէ,
Սուրբ և մաքուր յորովայնէ։

Բնութեամբն քաղցր էր և բարի,
Կերպարանօք զարմանալի,
Դէզ երեսացն հրաշալի,
Լուսոյ նման զերդ հրեշտակի։

Անձամբն ճոխ, գեղեցկալի,
Ստեղծեալ ձեռօքն Քրիստոսի,
Երրորդութեանն ֆիրելի,
Յամէն ազգաց էր գովելի։

Խորագիր

B տէր Աւետիք։ ի նահանգիս։ Յոհաննէս։ չիմ մեզ օգնական և պահապան C տէր Աւետիք կրօնաւորի։ չիմ ի ձեռաց։ ի Դաթարաց։ չիմ աղեղնաւորաց։ չիմ վանիցն և։ շինեալ է։ Յոհաննէս։ չիմ զոր կայ մինչև յայսօր մեզ օգնական և պահապան D Պատմութիւն տէր Աւետիք։ Թաթարի։ ի նահանգիս։ Սուրբ խաչ վանքին որ շինեաց։ Յոհաննէս։ չիմ մեզ օգնական և պահապան

Բնագիր

1 D *Ի իւսիսական* A *կողմ*
2 CD *ընտրեաց*
5 D *Բնութեամբ*
8 B *զերդ*
12 C *Ամէն*

Աբեղութեան կարգն ընկալեալ,
Չկուսութիւնն ամբողջ պահեալ,
Քահանայ աստուածարեալ,
Աստուած անմահ պատարագեալ։

Անմարմնոց վարըս ստացեալ,
Սիրով հրեշտակքն ցանկացեալ,
Խորհրդական անուն առեալ,
Տէր Աւետիք էր անուանեալ։

Յևկեղեցին երբ մտանէր,
Իբրև ղոյս ղամպար վառէր,
Երբ պատարագ մատուցանէր,
Իւր սուրբ մատանցն շող կաթէր։

Հոգոյն սրբոյ էր բնակարան,
Շնորհօք լցեալ էր Աբինաբինան,
Փիլիսոփայ էր աննման,
Չուսումն ունէր աստուածական։

Չայնն քաղցր, աղնուական,
Դաբրիելեան փողոյն նման,
Չեռայ շնորհն դանազան,
Գրագիր, ծաղկող աստղանման։

Չարմանալի պատկերահան,
Գրոշմէր զտիպ տէրունական,
ՉՏիրամօրն սուրբ կուսական,
Բոլոր, զամէնն տնօրինական,

---

15 D *Քահաննայ*
17 B *Անմարմնոցն* A *վար*
18 BD *Որով* փխ *Սիրով*
21 D *Եկեղեցին*
22 D *ղոյս*
24 C *լոյս* փխ *շող*
26 B *Աբինարինան*
29 AC *աղնւական*
30 D *փողոյ*
31 BD *շնորհքն* B *բնական* փխ *զանազան*
35 C *ՉՏիրամօր*
36 ABC *զամէն*

Որք ուղղափառ դաւանեցան,
Զամէն սրբոց համանման,
Առաքելոցն միաբան,
Մարտիրոսացն, որք ճգնեցան:

Հայոց մեծաց ի թուականին,
Ինն հարիւր չիսնէութին,
Ի տասնումէկ դեկտեմբերին
Եւ ի չաւուր չորէքշաբթին:

Արեանարբուքն Ուլան խանին,
Չար դինուորքն ի դէմ ելին,
Զսուրն իւրեանց մերկացուցին,
Զտէր Աւետիքն խոցեցին:

Եւ վարդագոյն արիւն հեղին,
Իբրև զՏէրն խոցեցին,
Սուրբ մարմինն յերկիր անկեալ,
Ի մէջ արեան թաւալեցին:

Լոյսն ի յերկնից ճառագայթեալ,
Զսուրբ նշխարսն պարփակեալ,
Զբոլոր զամէն լուսով լցեալ,
Իբրև զճրագ լուսոյ փայլեալ:

Յայնժամ հրաշ մի երևեալ,
Զսուրբ մարմինսն շարժեալ,

---

40 BD Մարտիրոսաց
42 C իսնէ ութին D չիսնութին
43 C տասնամէկ
44 CD ի աւուր C երեքշաբթին
45 C Արեան արբունք AD Ուլլան
46 B զինաւորքն
49 ABD չի՛ Եւ C վարդագոյ
51 C Եւ սուրբ
52 B արեանն ABD թաւալեցաւ
53 C Լոյս
54 B նշարսն
55 D զամէնն
56 C լոյսոյ
57 C Այնժամ
58 BD մատուցս խաչակնքեալ փխ մարմինս շարժեալ C զմարմինս իւր

Զինքն բոլոր ձևացուցեալ,
Դէմ երեսին խաչակնքեալ։

Զաստուածութիւնն դաւանեալ,
Իւր սուրբ արեամբն մկրտեալ,
Սուրբ նահատակ վերագրեալ,
Ի դպրութիւն կենաց կարգեալ։

Զսուրբ Հոգին իւր աւանդեալ,
Զհրանութեան պսակն առեալ
Եւ հիշատակ նորին օրհնեալ,
Ի Քրիստոսէ փառաւորեալ։

Վարդապետ երգող բանիս,
Ո՛վ նահատակ, տէր Աւետիս,
Անճառ լուսով լուսաւորիս,
Պայծառ փառօք դու պսակիս։

Առաքելին գեղն երանեալ,
Զքո սուրբ նշխարսդ հանգուցեալ,
Դու հիւանդաց բժիշկ եղեալ,
Քրիստոս աստուած փառաւորեալ։

Հօրն փառք, Որդոյն պատիւ
Եւ սուրբ Հոգւոյն այժմ ՚ւ յաւիտեանս,
Յաւիտեանս յաւիտենից,
Ժողովս օրհնեալ ի Քրիստոսէ։

---

59 B Դէմ երեսին փխ Զինքն բոլոր 59—60 C-ում են ու առաջ
60 B Զինքն բոլոր փխ Դէմ երեսին
61 ABC Զաստուածութիւն
65—68 C չիմ
67 B չիմ եւ
75 ABD չիմ Դու
78 ABC չիմ ՚ւ
79 C Աւիտեանս

2. ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Սուրբ Աստուածածնին տօնին,
Որ իջեալ արծիւն ի քարին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Շատ մոմ, շատ ճրագ վառին,
Ի յանուն սուրբ Աստուածածնին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Գաբրիէլն աւետումն ելիտ
Մարիամայ, ի օրն կիրակին.
Այլ և այլ
Որ իջեալ արծիւն ի քարին։

Խորագիր

B *Տաղ սուրբ Աստուածածնին է, վարպետ* Ch *Այլ տաղ գեղեցիկ և լաւ* D *Տաղ Թումայի սիրելոյ ասացեալ է* E *Տաղ վերափոխման սուրբ Աստուածածնին* F *Տաղ վերափոխման Աստուածածնի* q *Անխորագիր*

Բնագիր

1 E *Այսօր սուրբ։ Աստուածածնայ* F *1—8* չիմ

2 CDEqh *Գայ (*DEq *Գայր) փխ Որ* B *իջաւ* Ch *իջնու* D *իջնուր* Eq *իջնոյր*

3 CEh *տողը* չիմ (կրկնակում միշտ այսպես)

4 BDq չիմ *Որ իջեալ* CEh *տողը* չիմ (կրկնակում միշտ այսպես)

5 A *վառի* Bh *վառեն* q *վառեմ*

6 AB *Իր (*B *Իր) փխ Ի* q չիմ *Ի* AB *անուն*

8 D *Ի յանուն սուրբ Աստուածածնին փխ Որ իջեալ արծիւն ի քարին (միշտ այսպես)* q *Սուրբ Աստուածածնին փխ Որ իջեալ արծիւն ի քարին* Ch *տողից ետոյ ունեն հա՝*

Կերէք, խմեցէք մանկտիք, քարշեցէք գնաւերդ ի ծովին,
Մեր Տէրն նաւավար եղեր, նաւապետ սուրբ Աստուածածնին,
Երթանք աղաչենք զմեր Տէրն, որ հանէ տանէ յայն տեղին,
*Ուր չրմորն չիրմէն կու բանի սուրբ Աստուածածնին (*h չիմ *սուրբ Աստուածածնին)։*

9 ACDh *Գաբրիէլ* B *աւետում* CDEqh *աւետիս* F *աւետիք* D *հաւուր* F *երեր փխ ելիտ*

10 CDEh *Մարիամու* ABDq չիմ *ի* CEh *ի յօր* A *ի կիրակին* q *կիրակի*

12 F *տողը* չիմ (միշտ այսպես) q *Օրն կիրակի փխ Որ իջեալ արծիւն ի քարին*

Մարիամ, հրամէ զՀոգիդ,
Զինչ օրէնքն է Հողածնին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի բարին։

Դարձաւ պատգամեան երիտ
Մարիամն Գաբրիէլին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Ինչման չեմ ի տալ հոգիս,
Մինչ որ գա իմ Աստուածորդին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի բարին։

Մեր Տէրն իւր ամէն օրօրն
Երևեցաւ իւր սուրբ ծնօղին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Էյայ և ի ծունկն անկաւ,
Ազաչեաց զիւր Աստուածորդին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

---

13 CEh *հրամայէ* D *հրամանէ* Bq *Հոգիդ*

14 Bq *Ինչ* DE *օրէնն* A *չիմ է* B *ես փխ է* DE *էր փխ է* B *Հողածնիին* E *Հոգեգինի* q *ի Հողածնին* F *Քո միակ որդոյդ՝ Միածնի։*

16 q *Ի Հողածնին փխ Որ իջեալ արծիւն ի բարին*

17 q *Դարձեալ* CDEh *եառաւ* E *17—20 չիմ*

18 CFh *Այն սուրբ կուսն (*Fh *չիմ Այն) փխ Մարիամն* DFq *այն Գաբրիէլին*

20 q *Այն Գաբրէլին փխ Որ իջեալ արծիւն ի բարին*

21 A *Ինչուան* Ch *չիմ Ինչվան* Dq *Այնչափ* F *Գաբրիէլ փխ Ինչվան* Ch *չիմ ի։ Ես զիմ Հոգիս* DF *ի տար* Dq *զՀոգիս* E *Ես չեմ Հրամայէր փխ Ինչվան չեմ ի տալ զՀոգիս*

22 A *Զինչ* B *Ինչ* q *չիմ Մինչ* A *օր փխ որ* Bq *Աստուածորդիս*

24 q *Իմ Աստուածորդիս փխ Որ իջեալ արծիւն ի քարին*

25 E *չիմ Մեր։ Տէրն եկեալ* B *իր* F *զօրօք*

26 AB *երևեաց* CF *Ի խնդիր ել (*F *ելաւ) փխ երևեցաւ* E *Ի փոխումն փխ երևեցաւ* q *երևեալ* h *Իջաւ փխ երևեցաւ։ Ի խնդրել իւր* BF *իր* Ch *չիմ սուրբ* Eq *սուրբ Աստուածածնին փխ իւր սուրբ ծնօղին* D *25—32 չիմ*

27—28 q *չիմ (կրկնակում միշտ աչպես)*

29 ABD *Ի լաց* ABE *չիմ ի* CFh *տողի փխ 13-րդ տողի կրկնությունը*

30 Eq *Ազաչէր* q *զԱստուածորդին* CFh *տողի փխ 14-րդ տողի կրկնությունը*

Իմ Տէր, ես կու տամ զհոգիս,
Բայց կարօտ եմ սուրբ Թումային.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Հասին թևաւոր հրեշտակք
Հնդուստան խնդիր Թումային.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Թէ՝ ել ու արևկ, Թումայ,
Ի կոչումն սուրբ Աստուածածնին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Աւրին ու բերին զԹումայ,
Ի երկնից դուռն հասուցին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Էլաց և ի ծունկն անկաւ,
Աղաչեաց սուրբ Աստուածածնին.

---

33 C *Ի մատրամ փխ Իմ Տէր, ես* F *Քրիստոս Տէր* B *ամ փխ ես* q *զէմ փխ ես* h *և որդիս փխ ես*

34 A *երբ փխ Բայց* B *ես փխ Բայց։ Թովմային* D *Աստուածածնին փխ Թումային* Eq *Թումայիս* F *առաքեալ Թումայի* h *Բարդուղիմէոսին փխ Թումային*

37 AE *Հանին* BD *Տանին փխ Հասին* Ch *Հան փխ Հասին։ ինձ թևաւոր* A *Հրեշտակն* BCEh *Հրեշտակ*

38 C *Ընդուստան* DF *Հնտըստան* E *Տընտըստան* q *Հինտուստան* h *Հայաստան* D *ի զէր փխ խնդիր* A *խրկեցին Թումային* B *Թովմային* DF *Թումայի* h *Բարդուղիմէին փխ Թումային*

41 D *չիք ու* ABCFh *41—44 չիք*

45 h *Հրեշտակք առին* D *Առնուն* B *և* D *տարան փխ բերին* F *Առ ահու փխ Աւրին ու բերին* A *Թուման* B *զԹովմայի* D *Թումայի* F *Թումայ* h *զԲարդուղիմէն փխ զԹումայ* E *45—52 չիք*

46 B *ի յերկնոց* CFh *Սուրբ կուսին փխ ի երկնից* D *ի երկնուց* q *չիք ի։ Յերկնուց*

49 AB *ի լաց* h *ելաց* C *՝։ ի ծնկանն* h *ողորմապէս փխ ի ծունկն* B *ընկաւ* F *անկաւ ոտը փխ ի ծունկն* q *Արի դու ու գնա Թումայ* D *49—52 չիք*

50 F *Եւ ասաց փխ Աղաչեաց* B *Աստուածորդին* C *Աստուածածինն*

Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Արի ու գնա, սուրբ կոյս,
Ես քեզնէ նշան մը չունիմ.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Դաստառակն երեսօքն էած,
Զայն երետ նշան Թումայիին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Արի ու գնա, Թումայ,
Ի քաղաքն Երուսաղէմին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Առաքեալքն իրար ևկին,
Թովմայիին ի տես գնացին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Ամենքն ընդ հարցումն եղան
Միաբան և զայս ասացին.

---

53 Ch *Այդ է կու գնաս* D *Այդ դուն կու գաս* E *Այդ ևկի՛, գնա՛* q *Ա՛յ ես ևկի ու կու գնամ* D *Թումայ փխ սուրբ կոյս* h *կուսանաց* BF *53—56 չիf*

54 C *Նայ փխ Ես* h *չիf Ես* CEh *քեզնէ* D *ի քէն* CDEh *մի փխ մը*

57 A *Դաստրառակն* C *Դաստիարակն* q *Տաստառակն* h *Զդաստառակն* Eq *Երեսովն* Ch *ձգնաց փխ էած*

58 h *Զայն նշան* CEq *Նշան երետ* h *Եւ* D *Նշան եւուր* ADq *Թումայի* h *Բարդուղիմէին փխ Թումայիին*

61 CDh *Առաւ ու* (D *ի յառնու* q *էառ*) *գնաց փխ Արի՛ ու գնա՛* B *Թովմա* C *Թովմաս* h *Բարդուղիմէն փխ Թումայ* EF *61—64 չիf*

62 AB *Երուսաղէմի* D *Երուսաղէմայ*

65 AD *Առաքեալք* B *իրուր ընկան* CDh *յիրար ևկան* E *ի մէկ տեղ ևկին* q *յիրար քնկան*

66 A *Ու Թումայի* B *Թումայի* q *Թումայիին* D *Ի Թումաս* E *Ի Թումայ* F *ու մէկ մէկի փխ Թովմայիին* h *Բարդուղիմէին փխ Թովմայիին* q *գնայիին*

69—72 ABDEFq *չիf*

Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Թումա՛յ, դու ուստի՞ կու գաս,
Համբարձաւ սուրբ Աստուածածին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Ասաց, թէ՝ Անկից կու գամ.
Առաքեալքն չի հաւատացին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Զդաստառակն ի դուրս եհան,
Զայն տեսին և հաւատացին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Բաներս Վարդապետն ասաց
Ի վերայ սուրբ Աստուածածնին.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

Ով որ զայս սորվի ՚ւ ասէ,
Իւր մեղացն թողութիւն լինի.
Այլ և այլ,
Որ իջեալ արծիւն ի քարին։

---

73 BF *Թումայ* C *Թումաս* h չիf *Թումայ* F *Ասին թէ* փխ *Թումայ* BF *դուն* BEF *ուսկի՞* q *ուստի՞ց* D *73—78* չիf

74 A *Համբարձումն* F *Կոչումն* փխ *Համբարձաւ* A *Աստուածածնին* CDFq *Աստուածածինն*

67 Ձեռագրում՝ դամէն։
70 Ձեռագրում՝ Ա (մէկ)
74 Ձեռագրում՝ կախնեցուցին։

Երիցաներ Հաբեղանին՝
Հայ ու Հոռոմ ու Ֆռանկեր,
Վա՛յ կարդային հաղար բերան.
Վասն մեղաց, որ գործէին։

Տալվաթորներն ու պազրկանք,
Հիթոլոմներ և խառճայներ,
Եղուկ ու վայ կու կանչէին.
Վասն մեղաց, որ գործէին։

Առնաւուտներ և Սութաբներ,
Թուր և զալխան կայր ի ձեռին,
Կռիւ արին ի հետ Թրքին.
Վասն մեղաց, որ գործէին։

Տաճիկն շատ էր և անթիւ,
Քրիստոնէից ալգն քիչ էր,
Աստուած նոցա բարկացեալ էր.
Վասն մեղաց, որ գործէին։

Թրատեցին և ջարդեցին,
Արիւն կրթար ի վրայ գետին,
Գոչումն լինէր ի մէջ քաղքին.
Վասն մեղաց, որ գործէին։

Յեկեղեցիքն դիմեցին,
Նաչխով դռներն կոտորեցին,
Բիւրք բիւրոց ի ներքս մտան.
Վասն մեղաց, որ գործէին։

Քահանայքն սպանեցին,
Հաբեղանին գլխատեցին,
Ջմիակեցներն Թրատեցին.
Վասն մեղաց, որ գործէին։

Զայն գեղեցիկ սարկաւագներ,
Որ շարական կու պաշտէին,
Կուլակներուն ի քաշ տարան.
Վասն մեղաց, որ գործէին։

---

85 Ձեռագրում՝ և ի պազրկանք
111-ից սկսած ձեռագրում՝ կրկնակը չի գրված։

Մանտր ու մեծ կարիճ տղայք,
Հենք ու սաղմոս կու կարդային,
Ժողովեցին առին գնացին.
Վասն մեղաց, որ գործէին։

Գեղեցկաշէն խաչ և ըսկիք,
Արծաթապատաք Աւետարանքն
Նաղմայ արին և թալնեցին.
Վասն մեղաց, որ գործէին։

Բաժկամաններն և բուրվառներն,
Խնկատփերն և շուրջառներն
Նագմայ արին և թալնեցին.
Վասն մեղաց, որ գործէին։

Ոսկով կաղմած սուրբ պատկերքեր
Յեկեղեցիաց ի դուրս հանին,
Կրակ ղրին և այրեցին.
Վասն մեղաց, որ գործէին։

Կուսանաց վանքն գնացին,
Ջգուռն և ղերդիքն քակեցին,
Ի ներս մտան ու թալնեցին.
Վասն մեղաց, որ գործէին։

Գեղեցկապէս կոյս աղջիկներ,
Մայրապետ, որ ի Հոն կային,
Գերի տարան ի Ստամպօլ.
Վասն մեղաց, որ գործէին։

Քրիստոնէից դովին գնացին,
Տանուտէրերքն ի դէմ ելան,
Թրատելով սպաննեցին.
Վասն մեղաց, որ գործէին։

Խաթուն կանայքն, որ զայն տեսան,
Թալցան և ի գետին անկան,

---

121 Ձեռագրում՝ *բաշկամաններն*
134 Ձեռագրում՝ *չիմ ի*
138 Ձեռագրում՝ *տանուտէրքն*
141 Ձեռագրում՝ *որ ոպ զայն*

Մաղերուն քաշ կու տանէին.
Վասն մեղաց, որ գործէին։

Մատղաշ տղայքն կուլային,
Ձիւրեանց ծնօղքն կուզէին,
Դառներ պէսպէս առին գնացին.
Վասն մեղաց, որ գործէին։

Մայրն կանչէր՝ Դատրիկս ո՞ւր է,
Որդին կանչէր՝ Մայրիկս ո՞ւր է,
Քուրն կանչէր՝ Եղբայրս ո՞ւր է։
Վասն մեղաց, որ գործէին։

Տղայ մարդեր և նոր հարսեր,
Նշան տուած կոյս աղջկունի
Ի մէկ մէկի կու քաշէին.
Վասն մեղաց, որ գործէին։

Տղայկաններ և հիւանդեր,
Որ ի տօշակ պառկած էին,
Վրայ երեսին քաշ կու տային.
Վասն մեղաց, որ գործէին։

Ձիւրեանց տներն թալնեցին,
Սնդուխջաներ կոտորեցին,
Ոսկի՝ և արծաթ հաղմայ արին.
Վասն մեղաց, որ գործէին։

Զայսքան բաներս կսկծալի,
Ի մեր մեղացն կու լինի,
Անօրինաց գերի եղան.
Վասն մեղաց, որ գործէին։

Մենք այլ մեղաց ի պատ կենանք
Եւ մեր հոգւոյն խնամք առնունք,
ՋՔրիստոս Փրկիչն աղաչեմք.
Ջմեզ ազատէ յանօրինացն։

---

149 Ձեռագրում՝ Դսրիկ
159 Ձեռագրում՝ տանէին
163 Ձեռագրում՝ ու

Ես Նիկողոս մեղօք ի լիք
Եմ ձեր ծառայ և ամենին,
Ի կպրայ կղզոյն ողբս ասացի,

Դուք ասացէք սրտով ի լի,
Ծնողացս տէր ողորմեա.
Վասն մեղաց, որ գործէին։

2. ՏԱՂ ԽԻՍՏ ԳԵՂԵՑԻԿ Ի ՎԵՐԱՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ԱՍԱՑԵԱԼ Է ԸՍՏԱՄՊՕԼՅԻ ՄՂՏԵՍԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԷ ԶՈՐ ԵԻ ՂՊՈՒԶՈՒ ԱՅԼ ԱՍԱՑԵԱԼ Է

Օրհնեսցուք մեք միաբան,
ԶՀայր և զՈրդին և զսուրբ Հոգին,
Որ տայ մեզ միտք բանաւոր.
Գովել զքաղաքն Իսրաէլի։

Երուսաղէմ քաղաք գոված,
Ի աստուծոյ ինքն յօրինած,
Դաւիթ մարգարէին շինած.
Երուսաղէմ քաղաք գոված

Դաւիթ մարգարէն հիմնարկեաց,
Զսուրբ Սիոն ինքն շինեաց,
Յեսու տաճարին ձեռնարկեաց.
Երուսաղէմ քաղաք գոված։

Տասնաղեաւ սաղմոսն երգեաց,
Զքրիստոսի գալուստն ասաց,
Հոգւոյն սրբոյ ինքն խօսեաց.
Երուսաղէմ քաղաք գոված։

Դաւիթ մարգարէն աւանդեաց,
Ի աստուծոյ ինքն օրհնած,

---

174 Ձեռագրում՝ *Եմ դեր ծառայ եմ ամենին։*
Խ ո ր ա գ ի ր Ձեռագրում՝ *ասեալ*
6 Ձեռագրում՝ *օրինած*
8 Ձեռագրում՝ *Յերուսաղէմ*

Սուրբ Սիոնի մէջն է թագած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Սողոմոն մեծ իմաստուն
Թագաւորեաց հրէից ազգուն.
Շինեաց տաճար գեղեցկագոյն.
Երուսաղէմ քաղաք գոված։

Սուրբ ծննդեան պարիսպն է բարձր,
եկեղեցի ձախայ շինած,
Յիսուս ու մէկ սուն է շարած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Ի մէջ այրին Քրիստոս ծնած,
Ի խանձարուրն մսուր նգած,
Զփաթաթ ի բարձունս հովիւքն ասաց.
Երուսաղէմ քաղաք գոված։

Քառասնօրեայ տաճարն նկած,
Սիմէոնի գիրկն գգուած,
Արդ արձակեա պիս, Տէր՝ ասաց.
Երուսաղէմ քաղաք գոված։

Սուրբ գերեզմանն ի մէջ առած,
Ի վերան փոքրիկ մատուռ շինած,
Բոլոր կումպէթ բարձրէն կանգնած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Լոյսն բոխէ ամէն ազգաց,
Հայի, Հոռմի և Հապաշաց,
Ազգակեն առ Տէր աստուած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Ջանկակատուն բարձր է շինած,
Զօրսդին ամէնն կամար կապած,
Թագ պարծանաց վերան կանգնած,
Երուսաղէմ քաղաք գոված։

Երեք վանք կայ Հայոց ազգաց,
Ութատանդի ամէն ազգաց,

---

31 Ձեռագրում՝ *բարձումն*

Սուրբ Յակոբ է խիստ զարդարած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Շատ վանորայք կայ քրիստոնեաց,
Որն Հոռոմոց, որն Ֆռանկաց,
Որն Ասորոց, որն Խբթաց.
Երուսաղէմ քաղաք գոված։

Գեթսեմանի ձորին միջոյն,
Աստուածածինն ի հոն թաղած,
Զարմանալի շէնք է շինած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Համբարձման լեառն խիստ բարձր է,
Գնդեցկաշէն կումպէթ շինած,
Կինն պոռնիկ մօտն է թաղած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Զիթենեաց լեառն է զարդարած
Եւ պտղենիքն ամէն դիհաց,
Գալիլեայ բարձ է շինած.
Երուսաղէմ քաղաք գոված։

Բէթանիա՝ տեղ պարծանաց,
Այն տեղն որ Ղազարն է թաղած,
Այսօր ի ձեռն Արապաց.
Երուսաղէմ քաղաք գոված։

Փառք քեզ, Հայր մեր տէր աստուած,
Յիսուս Քրիստոս և ողորմած,
Արժան առնես դու քրիստոնեաց
Երկրպագել տեղ տնօրինաց։

Նիկողայոս Ըստամպօլցի,
Սրտի մտօք գնկանջդ բաց,
Շինէ՛ քեզ տուն և օթևան,
Որ սևերես դու չի մնաս։

---

59 Ձեռագրում՝ ալ շէնք
73 Ձեռագրում՝ Փառ է փխ Փառք

*
* *

Փառք անեղին աստուածութեան,
Որ անսկիզբն և անվախճան,
էր միշտ և է առանց թուական,
Ջոնի սպառումն կատարման։

Ջգնաց դերկինս որպէս վրան
եւ հաստատեաց առանց հիման,
եւ ղլուսաւորսն դանազան,
Առանց ուրուք միշտ ընթանան։

Ջհրեշտակս յերկինս եղ փառաբան,
Ջմարդիկ յերկիրս գործական,
Պատճառ լինին աստ շինութեան,
Մինչև մահուամբ ի հող դառնան։

Աւաղ է մեզ հազար բերան,
Որ այլազգեաց դարձաք կոխան,
Ջի հարքն մեր ազոխ կերան,
եւ դաւակացս ատամք առան։

Ջար գործեցին շատ ՝ւ անհամար
եւ մեզ ածին մութն ու խաւար,
Մեզս արարին անասնարար,
Կործանեցան յանդուրն ի վայր։

Ջի վասն իւրեանց հպարտ մտաց,
Ծուռ և մոլար ճանապարհաց,
Նզովս առին առաջնորդաց,
Լուսաւորչին շառաւիղաց։

Ջի զհայրապետն Աբիստակէս,
Ջմարմնաւոր հրեշտակն յերկրէս,

Սպան թագաւորն Արքեղայէս,
Ի ինքն նզովս էառ պէսպէս:

Յուսիկ գովեալ հօրն նման,
Եւ Դանիէլն պատուական,
Զոր սպան յայտնի արքայն Տիրան,
Էառ նզովս զանազան:

ԶԳրիգորիսն հրաշազան,
Որ հայրապետս եկաց յԱղւան,
Պիղծն ու զազիրն Սանեսան,
Սպան ի դաշտին Վատնիարան:

Խաղ Արշակայ եղև քարշեալ,
Ստեփաննոսի պէս քարկոծեալ,
Արշակ փութով պատիժն առեալ,
Զի երկու աչքն եղև փորեալ:

Ներսէս ընտրեալն և գովելին,
Ում վկայեալ էր սուրբ Հոգին,
Դեղեաց պեղծ Պապն ի յըմպելին,
Եւ ընկալաւ զանէծս նորին:

Եւ այլ բազումք ըստ սոյն կարգին,
Ընդդիմացեալք սուրբ օրինին,
Ի սուրբ հարանցն անէծքն առին,
Ջնջեալ յերկրէ գաւակ նոցին:

Իշխանքն էին ամբարտաւան
Եւ հայրապետքն հրաշազան,
Որ անիծելն իսկ առ ժամայն,
Զերդ զփոշի անյայտ կորեան:

Աթոռք նոցա կործանեցան,
Բարձր աշտարակք նոցա բլան
Եւ գաւաղանքն փշրեցան,
Թունք ի մոխիրն թաւալան:

Եւ մեք անկաք ի գերութիւն,
Ի յայլազգեաց ծառայութիւն,
Մեզ չեն իտար անդորրութիւն,
Այլ կու նեղեն յոյժ դառնագոյն:

Զսուրբ հայրապետն աստուածազգեաց,
Շառաւիղեալս ի Պարթեաց,
Տէրն փութով ի մէնջ եբարձ,
Զի չիքարժան ազգ տիրատեացք։

Եւ զմեզ երեւտ ձեռս այլազգաց,
Հագարացի ազգին Տաճկաց,
Որ կու նեղեն ամէն դիմաց
Եւ միշտ պահեն զմեզ ի լաց։

Զքահանայս մեր անարգեն,
Զքրիստոնեայսն հալածեն,
Զեկեղեցիսն հայհոյեն,
Խաչի յերեսն թքանեն։

Մէջ այս ամէնս փորձանաց,
Չեմք դադարեր մեք ի մեղաց,
Այլ ընթանանք զհետ չարեաց,
Չերկնչելով Տեառնէն բարձանց։

Վասն այսորիկ Տէր բարկանայ,
Կորուսանել զմեզ կամենայ,
Զազիր ազգաւն Հագարայ
Դառնացուցէ զազգն Արամայ։

Յայս դառն և նեղ ժամանակի,
Որ յոյժ նեղիմք յամենայնի,
Ի ձեռս ազգաց անօրինի,
Արանց պղծոց խստասրտի։

Պաղտասարս Համթեցի,
Ունայնացեալ ի գործ բարի,
Զգանձարանս գրեցի,
Մատամբ իմով մեղսամածի։

Մայրաքաղաք Ամիթ ասի,
Տիգրանակերտ սա անուանի,
Ընդ հովանեաւ սուրբ Կիրակոսի,
Եւ մօր նորա Յուղիտայի։

Ի թուականիս հազար ամի,
Եռասուն երեք թիւ աւելի

Աւարտ եղև այսմ գրի
Աստուածապարգև բուրաստանի։

Այլ և տեղաց առաջնորդի,
Ղուկասու քաջ վարդապետի
Ի բարունապետին հրաշալի,
Գործովն սուրբ և առաքինի։

Որ միշտ փայլէր ի աշխարհի,
Որպէս ճրագ աշտանակի,
Կամ ոլուսին ի գիշերի
Եւ զարեգակն միջօրէի։

Որ զսառեալ սիրտս ամենի,
Կակղացնէր բանիւք բարի,
Վաղճան առնալ յայսմ ամի,
Մահուամբ ի յաշխարհէս փոխի։

Այս լուսազարդ սուրբ մատենի,
Գանձարանիս այս հրաշալի,
Ցանկացաւ քահանայն բարի
Տէր Ստեփանոս երանելի։

Եւ ետ գրել պտուղ բարի
Եւ զարդարել ետ հրաշալի,
Որպէս զրախտ վայելչալի
Զանազանեալ ամենայնի։

Զոր յիշատակ միշտ եղիցի
Տէր Ստեփանոս քահանայի
Եւ ծնողաց նորին բարի,
Ազգականացն ամենայնի։

Որք ընթեռնուք ի յատենի,
Ի նզանակէք ի հանդիսի,
Յիշման արէք զուք արժանի,
Միշտ ասեցէք աստուած ողորմի։

ՈՏԱՆԱՒՈՐ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ ԽԱՀԷՈՒԹԵԱՆ, ԱՄԵՆԱՅՆ ՄԱՐԴՈՅ ՕԳՈՒՏ

Փա՛ռք քեզ Թագաւոր փառաց,
մի՛ Թողուր զառեղծուածդ ի ձեռաց,
Մի՛ տար չարկամիս կռիւան,
մի՛ մատներ ձեռն անօրինաց։

Դաւիթ մարգարէն երգեաց,
Թ՝ ապրեցոյ ի մարդոյ չարեաց,
Որպէն Սողոմոն էլաց՝
Տէր կեցցո կանանց փորձանաց։

Զով մարդ որ կինն խարեաց,
կենդանի չատամ Թէ մնաց,
Պակասեցոյց զխելքն և զմիտքն,
կուրացոյց զլոյսն երկու աչաց,

Եղէ, ողորմելի դիմօք
գայ կանգնի ի մէջ տանուտերաց,

Խորագիր

B *Այլ տաղ ի վերայ կանանց ասացեալ* CE *Ոտանաւոր ի վերայ անզգամ կանանց* D *Տաղ աղնիւ և գեղեցիկ ի վերայ կանանց ասացեալ* F *Տաղ ոտանաւոր է* G *Անխորագիր*

Բնագիր

1 F շիմ *փառաց* C *Թողնուր* D *զառեղծուածս* E *առեղծուածդ*

2 BG *չար կամաց* CE *չարկամի* F *չարկամին* D *փոխան* F *կռխած* G *կռնել* E *ձեր* F *չանօրինաց*

3 F *ասաց փխ երգեաց* AB *Թէ փխ Թ'* FG շիմ *Թ'* G *զիս տէր ի փխ ի մարդոյ*

4 G *ասաց փխ էլաց* ACDE *կեցո* FG *փրկէ (*G *փրկեա) փխ կեցցո*

5 D *Զոր* C *Զինչ* G *չեմ աւտար Թէ կենդանի մնաց փխ կենդանի չատամ, Թէ մնաց* F *5—8* շիմ

6 C *պակասեցոյ* G *խելքն ու միտքն* C *կուրացոյ* AD *լոյսն* E *զլուսն*

7 BE'ւ *ողորմելի* B *տանուտերանց* D *տանտիրանց* G *7—16* շիմ։

Յորժամ որ խօսի, սաստեն.
Սո՛ւս կացիր հարբած, բոզարած։

Յորժամ հանդիպիս կանանց
և տեսնուս զաչերն ծարուրած,
Դու հանց իմացիր, եղբայր,
թէ կատաղած շունն զքեզ ի խած։

Որպէս մարգարէն ասաց,
Զուրիայ սպանումն առաքեաց,
Յետոյ զղջացաւ մեղաց,
ողորմուկ նայ նստաւ իլաց։

Յորժամ տեսանես զկինն
ցեղուցեղ գեղով զարդարած,
Հաշուեա, թ՚ան օձն է, եղբայր,
որ զԵւայ ՚ւ Ադամ նա խաբեաց։

Ասաց, թէ՝ Ուտէք զպտուղն
և լինիք որպէս զաստուած։
Կերան, խայտառակ եղան
այր ու կին, երկուսն ի հիտրաց։

Փորձեալ եմ բնութիւն կանանց,
կու կանգնին դռանն ի դիմաց,
Յորժամ որ տեսնուն զմանուկն,
նայ կանեն զդուռն կիսաբաց։

---

8 D խօսիս։ աստէն փխ սաստեն B կաց

9 F տեսանես փխ հանդիպիս։ զկինն փխ կանանց CE ու F զերկու աչքն փխ տեսնուս զաչերն

10 F Այնպէս իմացիր, եղբայր, այն օձն է, որ զԵւայ խաբեաց։

11 CE Զո խայ (E Զո իա) փխ Զուրիայ D սպաննումն

12 C ի մեղաց

13 E Յորժամ որ CE տեսնուս D տեսնես CDE գունով փխ գեղով F գեղօք C զարդարեաց

14 A Հաշւեց B Հաշուեց D Հաշվես E Հաշուէ B թէ ան CE թ՚այն CE Եւայ E չիf՝ ՚ւ C զԱդամ F Այնպէս իմացիր, ով մարդ, որ կատղած շուն քեզ է խած։

15—20 F չիf

16 D երկուքն

17 G է փխ եմ AC կանկնին G չիf կու կանգնին BE դռան

18 C Որժամ B զմանուկ G չիf Յորժամ որ տեսնուն զմանուկն։ որ փխ նայ։ դուռն

Մանուկն որ ի նա հայի,
կու լինայ քան զխելագարած,
Աչօք և ունօք կանեն,
կու հանեն զմանկտիքն ի խելաց։

Եղբայր, վախեցիր կանանց,
զի բազում չարիք գործեցին,
ԶՅովսէփ գեղեցիկ մանուկն,
որ անմեղ ի գուբն ընկեցին,

Զյաղթող քաջ Սամսոն մանուկն,
որ երկու աչքն փորեցին,
Զհզոր Սողոմոն արքայն,
որ զթագն ի գլխոյն առին։

Զարդարն զՂովտն պատմեմ,
որ հրեշտակքն զնա պահպանեցին,
Յորժամ որ ի լեառն ելան,
իւր դստերքն յիմարեցուցին։

ԶՅովաննէս սուրբ Մկրտիչն
ի բանտին, զնա գլխատեցին,
Սկուտեղն ի ափսին դրին,
ի վերայ ծովուն գնացին։

Խեղճ, ողորմելի, յիմար
Ստեփաննոս, սուտդ Կեղեցի,

---

19 C երբ փխ որ ի CE լինի C չիք քան D նա փխ քան G տողը չիք

20 ABDF Աչօքն C'ւ AD ունօքն B օնօքն G յօնօք։ և փխ կու C զմանկիքն G մանուկն

21 F որ փխ զի։ գործած G 21—32 չիք

22 E ԶՈվսէփ F ի խորն իջուցած փխ ի գուբն ընկեցին

23 B աչք C զաչքն F Նայ զարդար զՂովտն ասեմ փխ Զյաղթող քաջ Սամսոն մանուկն։ գերկու D բորեցին EF փորձեցին (F պորեցին) փխ փորեցին։

24 B ի գլխուն CE ընկեցին փխ ասին F ԶՍողոմոն արքայն ասեմ, որ զթագ գլխուց վերուցին։

25 AE զՂովտոնց B զՂովտոց C զՂովոյն D զՂովոցն BCE պահեցին F 25—32 չիք

26 CE ելին B յիւր CE յիմարեցին

27 CE ԶՈվանէս CD ի բանդին

28 CE Սկուտեղպն AD թափսի CE թապսին E դնին A ծովու

29 B դիմօք փխ յիմար A Ստեփանոս D Գեղեցի փխ Կեղեցի E Կեղեցիկ փխ Կեղեցի

30 Զխելքդ ժողով պահէ
և աղէկ՝մ զքեզ գիտացի։

Զլեզուդ ես ի սուր բերեր,
թիւնաւոր քանց քարբի օձի,
Միշտ ես յամառեր ի մեղքն,
մնացեր քան զէշն ի ցեխի։

---

30 CE աղէկ (չիմ՝մ) AD գիտացիր C իմացիր E յիմացիր
31 D Զլեզու տեսայ սուր փխ Զլեզուդ ես ի սուր B զթիւնաւոր C զքարբի E քարի
32 CD ամառէր CE մեղք A ցեխին E ցեղի

*

* *

Մեր մեղքն է առեր դխօրոդն զօրաւոր.
Ինքն հպարտ է զէտ զմեղաւոր,
Ո՛չ օրէնք ունի, ո՛չ բան հոգևոր,
Ո՛չ նիքեահ ունի, ո՛չ պսակաւոր։

Ելևալ մէջ գիշերի զաստուած կու օրհնէ
Եւ ցորեկն ի բուն անահ կու քայլէ,
Ո՛չ ի մարդկանէ յամօթ կու քաշէ,
Եւ ո՛չ կանօնաց նա հնազանդէ։

Լսեցէք, եղբայրք, զգանկատ ազուհսին,
Որ կաղաղակէ ի ձեռաց սորին,
Թէ՝ Թագաւոր տաք ի մէջ աշխարհին,
Մէկ կին մի կառնեն՝ ւ ընկեր մի նորին։

Քան զսա մեղաւոր այլ ըսկի՝ չի կայ,
Որ քսան՝ ւ երսուն կին առեր կերդայ,
Ո՛չ ի մարդկանէ յամօթ ունի նա,
Եւ ո՛չ աստուծոյ նա կու վախենայ։

Ելեր է, կերթայ ի փողոցն ի նա,
Ջորն որ կամենայ, կու հնծնէ զնա,
Քչիկ մի կտիկ որ թէ գտնենայ,
Դուռգո՛ւռի-գուռգո՛ւռ կու ձայնէ զնոսայ։

Սուք չունի ըսկի և ոչ տրամի նա,
Թէ մի կնոջնուս կապայ պիտինայ,
Ո՛չ զձագերուն կերակուրն կու հոգայ,
Ի՛ ո՛չ զմորթելուն օրն կ՝իշէ նա։

---

9 Ձեռագրում՝ *եղբայր*

Եղկելի խօրոզ, շատ մի՛ հպարտանար,
Ըսկի ղէտ ղբեզ պոռնիկ չի տեսար,
Որ թէ հիւանդանար, նա էրէց չերթար,
Ձէտ ղբեզ մեռնի, կու մնայ անճար։

Դուք գատաստանաւ եկայք խօսեցէք
ՁՄելքիսեդեկիս ղգանկատն լսեցէք,
Խօրոզին ձեռնէն դիս խալսեցէք,
Ձի թողուր քննեմ, ղբանս լսեցէք։

Երբ կու զարդենամ, գիտեմ թէ լուս է,
Ի մէջ գիշերի նա խօրոզ խօսէ՞,
Ձի հանգչեցներ, թէ սաղմոս ասէ,
Գլուխը ծանր է, որ թաս պակասէ։

Ա՛յ իմ սիրելիքս ղգանկատս լսեցէք,
Բռնեցէք զնա, վիզն կտրեցէք,
Ո՛վ դուք, տանտիկնայք, շուտով բետտեցէք,
Ու չոր-չոր փատով զինքն խորովեցէք։

Սոխով, տագդեղով զփորն լցէք,
Շատ մեղք ունի դա, զկրակն խիստ արէք,
Նման պոռնիկի գժոխքն ձգեցէք,
Թէ շուտ մեղա գայ, ի մէճլիս բերէք։

Ելէք, գնացէք, աշխարհս շուրջ եկէք,
Ձկարմիր գինուն տեղն իմացէք,
Ձկաիուղ լօշերն հազըր արէք
Ու կարմիր գինով զնա լուացէք։

Բաբունիք, եղբարք, բոլորն շարուեցէք,
Յառաջ գասող բանիս յիշեցէք
Ու մէկ-մէկ գաւաթ դուք անուշ արէք,
Աստուած ողորմի Հոգոյն, ասեցէք։

1. ՈՏԱՆԱՒՈՐ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ Է

Մեծ մեղապարտ գրչէս խնդիր,
Զձեղ աղաչեմ այրդ ընտիր,
Թէ՛ կարգաւոր և թէ՛ դպիր,
Որք ընթեռնուք արագ և ժիր։

Ի ահեղ հրապարակին,
Ուռնայի կալն Ժողովին,
Մեղաւորաց գործքն յայտնին,
Սմէն արդարքն ի հօն մտին։

Քահանայ եմ յանպիտան,
Զձեղ աղաչեմ, եղբայրք արժան,
Երբ որ կանդնիք գումարական,
Զիս յիշեցէք դուք ի յաւետեան։

Ապէնիազն յուսացայ,
Քաղցր ու բարի աստուած է նա,
Տկար մարմնոյս առողջութիւն ինքն կու տայ,
Հասուցանեմ աւարտ զդայ։

Յիշեցէք զԱստուածորդին,
Պնդծ ճհտանին գնա խաչեցին,
*Եւ նա կարդաց զլամաբսաբաքտանին**,
Եւ աւանդեաց առ Հայր դհոգին։

Էր չես ասել, թէ Տէր մեղայ,
Ո՛վ Միքայէլ, անհոգ նստել ես դու հիմայ,

---

11 Տպագրում՝ *եփոր*

* «*Էլի, էլի լամա սաբաքթանի*» (երր.)՝ «*Աստուած իմ, Աստուած, ընդէ՞ր թողիր զիս*» (*Ավտ. Մատթ. ԻՀ. 46*)

Գողն յերակ քևզի կու գայ,
Արթուն կացիր, թթպիր արա։

Լոյս Տիրամայր, զքեզ աղաչեմ ես ի յատեան,
Երբ որ լինի խիստ մեծ տիւան,
Ամէն քանգարն ի հօն տի տան,
Ջիս մեղաւորս դասն խառնէ յաջակողմեան։

Գիշեր ցորեկ ես քուն եղայ,
Սուրբ սաղմոսին խիստ ծուլացայ,
Ժամ երթալոյ առեն հիմայ,
Ահեղ կոչողն ինձի կու գայ։

Բարունաբար պիս խրատէ՝
Աւետարաննուն կայ, ասէ,
Եսայիաս յայտնի կոչէ,
Աստուածահայրն կու պատմէ։

Ջքնաղ ու սուրբ կոյս Տիրուհի,
Ամբիծ տաւտրակ, սուրբ աղանի,
Ջքեզ աղաչեմ ի ատենի,
Բարեխօսեա քո Միածնի։

Էրիցս և մինն աղաչեցէք,
Նոր օրհնութեամբ զնա պատուեցէք,
Հուր գնհնէն ահէն վախէք,
Ղևկաւորին ձայնն լըսէք։

Սուրբ Տիրամայր զքեզ գովեմ,
ԶԱստուածորդիդ փառաւորեմ,
Անառակին խօսքն ասեմ,
Մաքսաւորին պէս հառաչեմ։

Էրուսաղէմն ես օրհնեմ,
Եւ էնն աստուած փառաւորեմ,
Էակ աստուածն ես գովեմ,
Թագաւորին երկրպագեմ։

Բարի աստուած դու բարերար,
Յերկնից յերկիր խոնարհեցար,

---

26 Տպագրում՝ *երթօր*

Ի սուրբ Կուսէն մարմին սգեցար,
Տղայաբար մանուկ ծնար։

Այդ քառասունքն դու հասար,
Եւ ի տաճարն ինքնին եկար.
Փտած և հին ծերն գտար,
Սիմէոնէ դու գգուեցար։

Նահապետքն որ եկին,
Սուրբ մարգարէք քարոզեցին,
Բնաւ դժոխքն վերան չարին,
Ամէն հոգիք մէջն մնացին։

Քարոզողաց չի լսեցի,
Զքանքարն առի, ոչ շահ արի,
Քրիստոս աստուած բարկացուցի,
Հուր գհհննին ինձ վառեցի։

Սուրբ առաքեալք որ կու դասիք,
Երկոտասան աթոռ բազմիք,
Առ Միածինն պաղատիք,
Միքայէլիս յիշել տացիք։

Այսօր գոչեմ ողբերգական
Եւ բաղձալի սրտիւ ղղչման,
Մեղայ ասեմ և զօրանամ,
Եւ Քրիստոսի յոյժ փառս տամ։

Յայտքան բաններդ որ դու արեր,
Դժոխոց հիմն քակեցեր,
Հոգիքն ամէն ազատեցեր
Եւ սատանայ կործաննեցեր։

Սուրբ Տիրամայր Աստուածածին,
Բարեխօսեա առ Միածնին,
Այց արասցէ իւր ծառային,
Լսել տացէ ղևկայքն առին։

Ո՛վ Միքայէլ քո հանդերձդ ախտոտ լինայ,
Ճարակմ՝ արա օր սպկնայ,

---

72 Տպագրում՝ Միքայէլիս

Ողորմութիւն դու ալ արա,
Մեղաց ազտն Հաւսար հրեայ։

Սրտաբեկեաց միջակուտոր կու՛ լամ հիմի,
Դուն փակած դիմաց ինձի,
Տաղանտ բանքարն ես ալ առի,
Ըսկի տեղն չի պահեցի։

Երկու անգամ ես օծվեցայ,
Խիստ անջատած ու թարմատար էրէց եղայ,
Լուծն գրին վզիս վրայ.
Արթուն կացիր, սաղմոսդ ասա։

Ո՛վ Միքայէլ, թէ գլորիս և դու կանգնիս
Երբ մեզանչես՝ ապաշխարիս,
Քահանային խոստովանիս,
Ամէն մեղաց դու աղաւթիս։

Կարգն ունիմ ես քահանայ,
Գործով նման չեղայ հիմայ,
Ամէնն տէր կասեն նորա,
Ես ալ տէրանց չի նմանեցայ։

Ո՛վ Միքայէլ, արի կանգնէ աղօթք արա,
Դիշեր ցորեկ ժամդ գնա,
Լալով ասա, թէ՝ Տէր մեղայ,
Քրիստոս աստուած ձեզ ողորմեայ,
Դուք որ չիշվիք ի յարակայ։

2. ԱՅԼ ԲԱՆՔ ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Քրիստոս աստուած երկնից իջաւ,
Էշ ու աւանակ ինքն հեծաւ,
Յաց աստիճանն բազմեցաւ,
Մարդիկքն ամէն ի վեր տարաւ։

Ով որ որ խիստ հպարտացաւ,
Անթիւ փառաց զրկըւեցաւ,
Երկնուց յերկիր ի վայր անկաւ,
Դեւ սատանայ ինքն եղաւ։

Դոռոյ և գէշ Դևրգևսայի,
Դու նման ևս փարիսևցի,
Որ պինքն արդար կարծէր մտի,
Հպարտացաւ ինքն իր սրտի։

Ով որ հպարտ լինի հիմի,
Ինքն նման Սադայէլի,
Փարաւոնի ընկեր լինի,
Ծովուն յատակն երթայ հիմի։

Ո՛վ Միքայէլ, հպարտութիւն բեղ չի պիտի,
Խոնարհութիւն անել պիտի,
Հող և փոշի եղիր հիմի,
Որ փառք առնուս դու յամենի։

Ի դանդաղս, որ ես գործեալ եմ,
Զաչերս արեամբ լցեալ եմ,
Զհոգիս սևացուցեալ եմ.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ։

Ա՜յ, վա՜յ, որ խաբեցայ ես,
Զօրէնքն մոռացայ ես,
Զաստուած բարկացուցի ես,
Զպատուիրանն անցայ ես.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ։

Զարին դարան դարձայ ես,
Զարօք դիս կորուսի ես,
Կապիչ չարին դարձայ ես,
Անբաւ բեռինս բարձի ես.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ։

Այս կեանքս ինձի մահ բերէ,
Զբաղումս ինձ թշնամանէ,
Սուտ սէրն դիս խոցեալ է,
Զհոգիս մեղօք լցեալ է.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ։

Տեսէք, դի չիմարեալ կամ,
Մեղօք հիւանդացեալ կամ,
Լեղոյ պէս դառնացեալ կամ,

Ջերդ քար, անբանացեալ կամ.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Դթա և ողորմեա ինձ։

Իւսեմ զողբումն լալոյ,
Վայ և եղուկ ինձ տալու,
Հառաչ և ձայն բառնալու,
Հարակերպ վտակ հոսելու.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Դթա և ողորմեա ինձ։

Բոտիւ ցաւն նեղէ զիս
Եւ մեղքն պաշարեալ զիս,
Ամօթն դեգերեաց զիս,
Անցանքն յոյժ նեղեաց զիս.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Դթա և ողորմեա ինձ։

Վա՛յ զիս յաստէնս ի վերջինս,
Ի կեանքս, ի գերեզմանիս,
Չի փտիր մարմինս ի հողիս,
Տապանս իմ յերերմնիս.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Դթա և ողորմեա ինձ։

Այս կեանքս է նման ձիւնի
Ու ծանր ու մեծ հեղհղի,
Կարկուտն, եղևմն, որ հոսի,
Ապականէ ու տանի.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Դթա և ողորմեա ինձ։

Բամեալ մայր աստուծոյ, կոյս,
Սուրբ Մարիամ ինձ մեծ յոյս,
Բարեխօսեա գլորելոյս
Եւ տուր ձեռն ողորմելոյս.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Դթա և ողորմեա ինձ։

Դեռ չի բուսել, չորացայ,
Ծաղկի նման խամրեցայ,

Կենօքս որ զբաղեցայ,
Ի մեծ ամօթիս հասայ,
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ:

Այն օրն, որ աներեկ է,
Ատեանն ահեղակերպ է,
Դատաւորն անաչառ է,
Իւր դատաստանն արդար է.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ:

Պիտէր ինձ լալական շատ,
Որ վայ տային ինձ առատ,
Ափսոսային զիս անհատ,
Թէ յէ՞ր կորեայր անխրատ.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ:

Երբ Գաբրիէլ սէրովբէն
Գոչէ զբարբառն փողոյն,
Առնեն մեռեալքն ի հողոյն,
Ի յԱդամայ մինչյօր Նոյն.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ:

Տիպ տէրունոյն նշանի,
Յարևելից մեղ ծագի,
ՅԵրուսաղէմ հասանի,
ՅՈւռնայու կալն իջանի.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ:

Է՛, սուրբ կոյս, տիրուհի,
Խնդրեմք ի քէն բաղձալի,
Որ զմեղ չտաս սատանի,
Ի ձեռն անշէջ գեհենի.
Ստեղծող Տէր, ես մեղայ քեզ,
Գթա և ողորմեա ինձ:

---

85 Ձեռագրում՝ Ի յարևելից: 'ւ ծագի
87 Ձեռագրում՝ Ուռնաու

. . . . . .

Թէ ինչ անօրէն կու լինի, եղևն անհաւատ,
Ջալում մարդիքն ոչ խիղճ ունին, ոչ մուրմաթ,
Թող աստուծոյ ծառայ չի լինի ախբատ,
Ոչ ի ձևոք զալումի ընկնի զարիպ մարդ։

Արի պախչան մտնունք, հաւասար գարուն է,
Ջգինին, որ կու տեսնունք, գիտենք թ'արուն է,
Հոգի՛կ, կարմիր խնծոր աղէկն քուկն է,
Ջգինին այլ որ կասես, աշըխանէրուն է։

Կու զարթ իմ նայիմ, գիտեմ թէ ի քաղաքս եմ,
Գիտեմ թէ պաղչան եմ, թէ ի խայտալս եմ,
Հարբեր եմ քու սիրուն ու նորահաւաս եմ,
Ջգիտեմ, թէ զո՛ր խաղ, կամ զո՛ր տաղ ասեմ։

1. ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՎԱՆԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ ԽՐԱՏ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՌԱԿԱԻՈՐ ՎԱՄՆ ՍԱՅԼԻ

Յոյժ տարակուսեալ էի,
դեգերեալ ի յիմում սրտի,
Զի միշտ ի ներքուստ հոգիս
բողոքէր ի գրունս մտի։

Որպէս որ Փրկիչն ասաց
զառակս ի պէտս խրատի,
Զայրի կինն քաղաքին,
զի ընդ ոսոխն ի դատ մտանի։

Այրին յոսոխէն զրկեալ
կողկողէ նայ յոյժ լալագին.
Դատաւորն այն անիրաւ
դատ արդար չառնէ ընդ ոսոխին։

Նոյնպէս յիմում քաղաքիս
դեգերեալ իմ այրի հոգիս,
Յոսոխէ մարմնոյ զրկեալ,
կենդանոյն մեռեալ գոյ ի յիս։

Հոգիս իմ առ իս ասէր,
Թ՝այլ չկայ քան զիս գերի,
Ի բարձր փառաց զրկած,
կորուսած զինչ որ ունէի։

Կարծեմ, Թ՝ան Թռչնոյն նմանիմ,
որ նստի ի չիզեր ջրի,

---

4 Ձեռագրում՝ *մտանէ։*
10 Ձեռագրում՝ *կորոսած*

Տրտում կայ, չիշխէ ըմպել,
կու վախի, թէ ջուրն պակասի։

Կամ թէ մեծամեծ ձկանց,
որ լինի մէջ անբաւ ջրի,
ի ձեռն որսորդի գործեն,
ի ջրէն արտաքս ընկեսցի։

Ի յայտ խորհրդեանդ յերակ
միշտ վիճէր հոգիս ընդ մարմնի։
Յաւուր միում շրջէի,
լսեցի ղձայն մի սայլի։

Անիւն ճռռող ճչէր,
ողբերգեր ջամբն ընդ առեղին.
երկինք էինք մեք յերկրի,
աւանիկ անկեալ ի գետնի։

Յերեկն ի միմեանց տանջեալ,
մաշելով փայտերն մի զմի,
Փիշերն անպիտան անկած
ի յեզեր մի ճանապարհի։

Ասեմ ես առ իմ հոգին,
թէ՝ Գտար ղբո նմանին,
Մերձ կացիր, հարցիր զնայ,
օգտեսցես դու զկղ քո վիրին։

Ասեմ. Ա՛յ սայլ, է՞ր գոչես
ողբաձայն ընդ մարգարէին
Երեմիայի մեծին՝
ողբերգող ի տան Իսրայելին։

Գարձաւ, պատասխան եառուր,
թէ՝ Կացիր, Ագամայ որդի,
Ջառաջին փառս իմ պատմեմ,
տե՛ս Թ՝որպէս եմ ողորմելի։

Ես ծառ զեղեցիկ էի,
զիս տնկած յեզերն ի ջրի,

---

14 Ձեռագրում՝ արտահս

Բազում ժամանակ գոլով,
Հաստատեալ զարմատս ի գետնի։

Ջուրք մանուածաւալ ալեօք
ընդ աչմէ իմ անցանէին,
Նոճոփար բուսեալ ի նմա,
և ելեալ յերեսս ջրին։

Ճղերս խուռն տերևով
հով առեալ իմոյս այտակի,
Տերևս ի հողմոյ շարժեալ
դեղեցիկ ձայնս արձակէին։

Թռչունք գեղեցիկ փետրով
եկեալ ի յոստս հանդչէին,
ի յառաւօտու պահուն
գեղեցիկ ձայնս արձակէին։

Մանկունք գեղեցիկ եկեալ,
ընդ հովով իմով նստէին,
Ուտէին և ըմպէին,
օրհնէին զարքայն երկնային։

Թմբուկ և քնար առեալ
երգէին ընդ երգեհոնին,
Վաղորդնէ մինչ յերեկոյ
յայնպիսի փառս ցնծացին։

Յաչմէ՝ւ ահեկէ անկած
բուրաստան, և վարդն ի միջին,
Համասփիւռ և բրաբիոն
՝ւ այլ ծաղկունք ընդ մանուշակին։

ի յառաւօտու պահուն
յօդն իջեալ ի բուրաստանին,
Ծաղկանցն ամէն զարդ առեալ
և զանուշ հոտն բուրէին։

Ախմաւենի, խնձորենի
՝ւ այլ ծառերն պաղով ի լի

---

38 Ձեռագրում՝ վաղորնէ

Շուրջանակի պար առեալ,
 ՝ւ ես թագաւոր ի մէջ ամենի։

Զայլ ծառսն հատեալ տեսի
 և նոքա ինձ ծաղր թէին,
Մի ոմն ի հատեալ ծառոցն
 մատուցեալ ինձ բան մի գուժի։

Թէ՝ Հազար տարի կենաս,
 չես հասնէր ի յօդսն վերին,
Աւուրքս մի տի բարձրանաս,
 յերբ որ է տ՝ընգնիս ի գետնի։

Ի յիմ փառս հպարտացեայ,
 զի շնչեաց յիս հողմն չարին,
Ասեմ ես յիմում մտին,
 թէ պարծանք եմ ես ամենի։

Խրատ մի քեզ տալ կամիմ,
 թէ լսես, ո՛վ դու հողածին.
Մի՛ սիրեր զհպարտութիւն,
 զի նայ թիւնք է մահաբերին։

Հպարտութիւն օրինակ,
 նմանակ է այն չար օձին,
Զինչ կենդանի խայծանէ,
 նայ թմբրեալ անուշ կու քնի։

Զպահիկ մի ի քուն լինել
 յայն ժամուն փութով մեռանին։
Մի՛ սիրեր զհպարտութիւն,
 թէ կամիս զկեանքդ քո անձին։

Տե՛ս, թ՝ինչ արար հպարտութիւն,
 որ զիս ծաղր արար ամենին,
Զցեցն ի յանձնէս եհան,
 զիս առակ արար հազարին։

---

46 Ձեռագրում՝ բան մի, բան մի
48 Ձեռագրում՝ Աւորքս
49 Ձեռագրում՝ հողըն

ի գարնանային ժամին,
որ ամէն ծառեր ծաղկէին,
Կանաչին վայելուչ գունով,
ես ծաղկեալ ի մէջ ամենի։

Յարմատոյս ինձ որդ ծնաւ,
ցեց եղև նայ իմոյս անձին.
Ծաղիկն ի թափել էառ,
և տերևս թառամէին։

Յաւուր մի վեր արք եկին
՝ւ ի ճղերս ի վեր նայէին,
Ասեն, թէ՝ Պտուղ չունի,
կտրելոյ է անհնարին։

Իսկ մի ոմն ի նոցանէ,
որ ունէր տապար ի ձեռին,
Հատեալ չի ստեղնէ իմմէ
և արար բազուկ տապարին։

Եհար բարկութեամբ յարմատս
և ճղերս ամէն դողային,
Տերևս իմ ի լաց եղեալ,
հաւասար աղաղակէին։

Ասեն, թէ՝ Մի՛ հատաներ,
այլւի տամք պտուղ ի ժամին,
Կրկնաշահ և բազմաբեր,
գերագոյն քան զյառաջին։

Ետես պատասխան չետուր,
զի հրաման էր յոյժ սաստկագին,
Լացին շատ դիւրանց արեն,
վայ տուին հաւասար ամէնին։

Մինչ հիմայ թագաւոր էաք
և բազմեալ ի բարձրագահին,
Ահա հրաման եհաս՝
յաթոռոյս իջնուլ ի գետին։

---

60 Ձեռագրում՝ վայելչ։ ի մէջ
73 Ձեռագրում՝ յիմայ։ բարձրագահի

Եհատ և ընկէց յերկիր
    ըստ հրամանի Փրկչին Յիսուսի
Թ՚որ պտուղ բարի չառնէ
    զնայ հատեալ ի հուրն ընկենցի։

Ջճղերս իմ մի-մի հատեալ
    բազմահայտ իբրև զԱկովին,
Հատեալ զգլխոյ ճիւղն յինէն,
    նմանեալ մեծի Մկրտչին։

Գնացեալ և վարպետ բերին,
    խիզրեցին որպէս գեսային,
Հանեալ զմորթին յինէն
    նմանեալ Բարդուղիմէին։

Ի յերկուս բաժանեցին,
    զիս կոպտեալ անիւ ձևեցին,
Եւ զայն, որ յինէն հատին,
    ողնափայտ ասեն զնայ նաւին։

Եկեալ զնա ի քարշ տարան
    նմանեալ ի դէսն ապանին,
Տարեալ նա ուղղեցին,
    ընկեցին ի մէջն ի ծովին։

Իսկ նա, ի ծովու յալեացն,
    երերայ միշտ անդիւրելին,
Յաւուր մի վիմի հարեալ
    և տախտակն մէկմէկասցին։

Ես աստ ցամաքով տանջեալ,
    հոլովմամբ միշտ անդիւրելի,
Օր մի ընկղմի ի գուբն
    ընդ բանին իմաստասերի։

Եւ յետ խորտակման մերոյ
    զմեզ ճարակ առնեն կրակին,

---

83 Ձեռագրում՝ հավանաբար վերջին երկու բառերն աղավաղված են։ Կարելի է կարդալ նաև «ի դեսն Աղուանից»։

84 Ձեռագրում՝ *Նաւ ուղուղեցին*

86 Ձեռագրում՝ *մէկմէկասցի*

Այրեն և փոշի առնեն,
յետոյ տան զփոշին ի քամին։

Ալ մտօք քննեա զիս
և արա թադբիր քեզ, գերի։
Կենցաղուս մի՛ հաւատար՝
շատ խաբեր, կրկին տի խաբի։

Ասեմ, թէ՝ Հերիք արա,
բաւական է այս լսողին,
Դու նման նախաստեղծին,
որ կորոյս զփառս առաջին։

Հատեալ խաբանօք օձին
և անկան իւր ճիւղքն ի գետին,
ի ծննդենէ հոլովեալ,
մինչև ևհաս գուբ գերեզմանին։

Այլ ես եմ ի նաւ նման,
ծփալով ի մեղաց ծովին,
Վազորդնէ մինչև յերիկուն
հետևեալ եմ կամաց չարին։

Հոգմով կենցաղոյս վարեալ,
մօտեցեր եմ ես եղերին,
Ի վեմն մահու հարեալ
և զօդուածս իմ մէկմէկասցին։

Ամէն արարածք, լայեք
զեղկելի ծառայս Աբարչին,
Զիս արեամբ գնեաց Փրկիչն,
իմ կամաւ գերեցայ չարին։

Զիս այգի ցանկով պատեաց
ձորաբարձ և պտղով իւի,
Զցանկն քակեաց թշնամին,
և եղէ կոխան ամենի։

Զիս քաղաք ամուր շինեաց,
պարսպեալ վիմօք հրաշալին,

---

92 Ձեռագրում՝ չի փխ տի

102 Ձեռագրում՝ գերցայ

Թշնամին քակեաց զորմն
և գերեաց զիմ այրի հոգին։

Գերի Գրիգոր Վանեցի,
դու գետին կացիր ամենի,
Ձերեսդ ճանապարհ արա,
որ ամէն մարդ ըզնայ կոխի։

Գոյացեալն ի չորս տարրէ
ի հողոյ՝ և ի ջրոյ կու յագէ,
Իսկ հողն ընդ խոնարհ գոլով
և եղեալ կոխան ամենի։

Եթէ ղջուրն ի վեր ուղղես,
նաչ չերթայ իակի բնաւին,
Ի վերուստ ի վայր հոսեալ
և խոնարհ տեղիս դադարին։

Այդ քեզ օրինակ առեալ
և կողկող խրատն սայլին,
Ամենեցուն հող կացիր
փառս երգեաց միշտ երկնաւորին։

Փա՜ռք քեզ, արարիչ աստուած,
որ ստեղծիչ ես ամէն գոյի,
Յերակ խրատիս զմեզ
և գթաս որպէս հայր՝ որդի։

2. ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ԻՄԱՍՏՈՒՆ ՔՒՀԱՆԱՅԻ ԱՍԱՑԵԱԼ

Է՛, իմ արարիչ աստուած,
զմարդ պահէ, որ չի զալատի,
Լուսով զնայ պարածածկեա,
որ խաւար տեղ չի մոլորի։

Մարմնով զնա անաղտ պահեա,
որ մեղօք չի ապականի,
Ձերկուղդ քո ի միտն ձգեա,
որ չետնումն չի շիւարի։

---

106 Ձեռագրում՝ զոր ըզորմ
116 Ձեռագրում՝ որդի

Խրատ սա քրիստոնէից,
որ ծնունդ է աւազանի,
Ի ջրոյ ՝ւ ի հոգոյ ծնեալ
և որդի լուսոյ անուանի։

Ջփրկական խորհուրդն առեալ
և եղեալ տաճար տէրունի,
Մարմնաւոր հրեշտակ է նա
և տեղի բանին կենդանի։

Ջիւր մարմին յըստակ պահէ
ի յաղտոյ յայսմ կենցաղի,
Հոգովն մաքուր կենայ,
Քրիստոսի հոտոյն հետևի։

Խորհրդեամբ յերակ մաշէ
և յիշէ ղօր հոգեվարի,
Թէ որպէս յէրէկ էանց
մինչ ի մահ այնպէս անցանի։

Որպէս հրամայէ Փրկիչն,
մարդ յերակ պատրաստ կու պիտի,
Ժամանակն անցանի գնայ,
մարդ մեղօք անհոգ կու քնի։

Թէ դինչ մարդ որ միտք ունի
երկիւղ նա միշտ ղարհուրի,
Քննեա և դու միտ արա,
թէ քո կեանքդ յինչ կու նմանի։

Քո հոգիդ ի քո մարմինդ
տուրուառ շնչով կայկայի,
Մտնու և չելանէ,
զով բերես, որ գնա հանէ։

Թէ եղեալ ոչ մտանէ,
հեռացեալ ի յօդն ցնդի։
Բայց յաստուծոյ ո՞վ կարէ,
թէ ի տեղն իւր անդրադարձէ։

Կրկին հրամայէ Փրկիչն,
Թ՚օր մահուն ի գող նմանի։

Մէջ գիշերի կենցաղոյս
նայ յանկարծ ի ման երևի։

Տէ՛ս, դի անցաւոր ես դու,
մուհադրով քո կեանքդ ի յերերէ,
Ջունիս կենալոյ ճարակ,
կամ մնալ ի յայսմ աշխարհի։

Մահն զօրաւոր կու գայ,
դրո ամէն թագբիր կու բակի,
Թէ ծեր ես կամ թէ տղայ,
թէ իշխան բնաւ աշխարհի։

Ջաշխարհս ամէն մուլք ունիս,
և թագաւոր լինիս ամենի,
Յիշևա՝ դատաստան կայ քեզ
և կոչել զքեզ յատենի։

Ահեղ և սաստիկ հրաման
և տագնապ յոյժ սարսափելի,
Դատաւորն արդարադատ
անաչառ ընդդէմ ամենի։

Ի միտ ած ՝ւ յիշէ զփառս
արդարոցն յայնմ յաւիտենի,
Եւ տանջանս մեղաւորացն,
որ տանջեն ՛ի տարտարոսի։

Այլ ամէն առաջի կայ,
արտասուբդ ոնց կու ցամաքի,
Ջարթիր դու ի քնոյ մեղաց
և արա թագբիր քեզ, զերի։

Ջաչերդ արտասուօք դու լից,
կաթեցո դէմ Երկնաւորի,
Միթէ ողորմած լինի,
զքո մեղաց մուրհակն ջնջի։

---

34 Ձեռագրում՝ Եղի
35 Ձեռագրում՝ Երկնաւորին
36 Ձեռագրում՝ ջնջէ

Գերի Գրիգոր Վանեցի,
վա՛յ ասա միշտ անգրդուելի,
Տե՛ս, թէ քանի վէրք ունիս
ի հոգիդ քո անթուելի։

Այլոց դու խրատ կու տաս,
քեզ անչափ խրատ կու պիտի,
Այլոց կասես զշիւղտ հան,
քո աչերդ գևրան ունի։

ՏԱՂ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ

Ականջ դրէք և լսեցէք,
Այս բաններուս մտիկ արէք,
Դովանքն ասեմ զաղէկ կնոջ,
Թագ ու պարծանք է նա այրոջ։

Յառաջ գովեմ կինն բարի,
Այն Աստանէթ խելօք իւի,
Հրեշտակ գնաց խնամախօս,
Այն Յովսեփայ սուրբ գեղեցկի։

Ուրախ պահեց զայրն ի յերկրի,
Քան զարեգակ մէջ աշխարհի,
Յովսէփ Հայէր ուրախանայր
Եւ իւր տարիքն կրկին լինար։

Ով անզգամ կնոջ դիպէր
Ի մէջ ծովուն ալեկոծեր,
Հաշվեց թէ նա աշխարհ չէ ընկեր,
Ուրախութեան օր չէ տեսեր։

Գովեմ զկինն զայն Սառայ,
Էր հնազանդ Աբրահամայ,
Աստուած տեսաւ սէրն ի նորա,
Եկ հիւր ի տունն աստուած նոցայ։

Ով անզգամ կնոջ դիպէր,
Քան զԵւայ Ադամ խաբեր,
Շատ փոշմաներ ու այլ չէ հասեր,
Ի մէջ երկրի յերեր կացեր։

---

3 Տպագրում՝ *կնոչ* (միշտ այսպես)
13 Տպագրում՝ *անսգամ* (միշտ այսպես)

Գովեմ զկինն զայն Սառայ,
Հրեշտակ խնդրեց առ Տուբիայ,
Կորուց զգնն յերկիր Մսրայ,
Ամուսնացաւ առ Տուբիայ։

Կինն անիծած Փիլիպոսի,
Պատճառ եղև սուրբ Յովանու,
Ի Հերովդիայ գլխատեցաւ,
Երկնից քարով նա պատժեցաւ։

Կին հաշարի չար կու լինայ,
Բանք խիկարայ յայտնէ նմա,
Կինն գազան նման, ասաց,
Որ մարդ նմա չէ դիմացած։

Բանք Սիրաքայ իմաստնասիրի,
Դեղեցկութեան կնոջ ասի,
Քան գոսկի խարիսխ լինի,
Սիւն ի վերայ կանկնեալ լինի։

Կին լեզուանի նման գազանի,
Ով հանդիպի կու պատառի,
Վայ էր երկան նմա դիպի,
Քան զոչխար գազանն ընկնի։

Սիրաք խելօք կինն գովէ,
Քան դարեգակ նման ասէ,
Երնեկ երկան նմա դիպէ,
Ջօրն ցօրեկ լուսով պարէ։

Կին հաշարի չար կու լինի,
Բնակութիւն դիւաց լինի,
Դնն ի կնոջէն կու երկնչի
Եւ ի հորուն ելեալ փախչի։

Կինն յորժամ իմաստուն լինայ
Եւ հարկևոր խելօք լինայ,
Տարիք երկան կրկին լինայ,
Որ ծերանալն չիմանայ։

---

49 Տպագրում՝ լինայ

Կնկան ֆէլերն է բեռներով,
Մարդիք խաբէ հնար գոլով,
Ձայրն կապկր առանց չվնով,
Ջնտան դրեր առանց ավնով։

Երննկ հազար նորա նկեր,
Թէ գեղեցիկ կնոջ պիպեր,
Ոչ արտմութիւն նմա հասեր,
Ջօրն հարանիք ի ներս կացեր։

Բանը խիկարայ գայս կու ասէ,
Մարդ հարամուն թող չի վախէ,
Թէ հաշարի կնոջ դիպէ,
Քան զդիւէ թող նա փախչէ։

Տունն որ ասեն՝ մարդուն կինն է,
Թէ շէն պահէ, նա կու պահէ,
Երննկ երկան նմա դիպէ,
Հոգս ու գայդու նա չի քաշէ։

Երիկն գայ բարիք բերէ,
Կինն զամէնն ի դուրս վաթէ,
Յորժամ երիկն հարցանէ,
Երկու ձեռօք վրան մրէ։

Կին գեղեցիկ բարի լինի,
Իմաստութիւն ի հետ ունի,
Իմաստութեամբ ուրախ լինի,
Ջամէն երկան գայդուն տանի։

Կին հաշարի նման թաթվի,
Կամ տունն կաթէ, մարդ չի հանգչի,
Թէ կենու ի դուրս, ցրտուն մեռնի,
Թէ գայ ի տուն, լեզուէն խոցի։

Մարդոյ որ կինն աղէկ լինայ,
Այրն նորա ուրախանայ,
. . . . . .
. . . . . .

86-ից հետո Տպագրում երկու տող պակաս

Կին հաշարի հանց կիմանայ,
Թէ իւր վրայ աստուած չկայ,
Մարդ հաշարուն թող վախենայ,
Որ ի չարեացն ի զատ մնայ։

Աղէկ կնկան էրիկն գայ,
Բարին բերէ ուրախանայ,
Կինն զամէն ի շահ ածէ,
Տունն բարեօք նայ զարդարէ։

Կինն նման առեց մրի,
Գլուխ հասնի նայ մրոտի,
Մարդ հաշարի կնոջ դիպի,
Հանց թէ ջհոի ձեռն կինկնի։

Մարդ թէ հազար զայդու ունի,
Ինքն խելօք կնկան դիպի,
Թապաիր առնէ, զայդուն տանի,
Ընդ որ երթայ պարծանք լինի։

Ջինչ որ աշխարհս էրիկ որ կան,
Թէ հաշարի կնոջ դիպան,
Համան շնալու պատճառ եղան,
Ուրախութեան օր չի տեսան։

Կինն լինու բազ լեզուանի,
Երթայ շնայ հետ լվնտի,
Գայ գիշերի երկան ննջէ,
Երիկն խնդճ խապար չունի։

Կինն զամէն չարիք առնէ,
Երբ հարցանեն, ինքար անէ,
Ամէն չարեաց պատճառ նա է,
Աստուած փրկէ կնկան շառէ։

Կինն բոզկաց այն կու լինայ,
Դռանն չետև կանկնի մնայ,
Մարդն տեսնու խնճեր անէ,
Ջաչն ու զուներն ծռմռկէ։

Մարդք խաբէ ի ներս ձգէ,
Ջերկան բարիքն կերցնէ,

Զկարծով գինին ի հետ խմէ,
Վերայ երկան դէմն մրէ։

Մանկտիք, ասեմ, դուք լսեցէք
Եւ ի բոզէն ի զատ կացէք,
Թող մարդ բոզին ձեռն չինկնի,
Քան զգերի երկիր վարի։

Կինն հալալ այն կու լինայ,
Աչքն ի յօտար իսկի չի լինայ,
Սիրէ զերիկ, սիրուն լինայ,
Զինչ որ օրէնք դասուր կու տայ։

Կինն հաշարի վատ կու լինայ,
Որ թագաւորք յիրար կու տայ,
Առանց կնոջ չար ոչ լինայ,
Թէ որ լինայ, գլուխ չներթայ։

Կինն գլուխն եղիւզ չունի,
Փորրոգի պակաս լինի,
Զինչ որ խօսի ինք հավանի,
Սրտիւք այլոց հետ կու այրի։

Երեք բան չաղթող ասեն,
Ի մաստաւէրքն, որ կու չիշեն,
Երրորդ գինին, ըբռա ասեն,
Կինն չաղթող քան զերկոսին։

Մարդ որ չանա քունն կաղթէ
Մինչ քառասունն հանբերէ,
Կինն շուտով զնա չաղթէ,
Ի ժամս իրից ոչ անցանէ։

Շատ խելօքնին խմեն գինին,
Խոնարհութեամբ չաղթեն նմին,
Կինն չաղթող քան զգինին,
Չաղթէ զմարդիկ ի մի ժամին։

Կինն չաղթող քան զերկոսին,
Շատ օրինակ կայ ի գրին,

---

145 Տպագրում՝ քուն

Մարդ չի դիմներ կնկան ֆելին,
Ոչ ի գլուխ ելեր նորին։

Կինն քաղէ դունքն գալմով
Եւ ծարուրէ գաչքն գեղով,
Զերեսն օծէ ճերմակ գեղով,
Մարդիկ խաբէ նա հայելով։

Յորժամ որ կինն ծուռ լինայ,
Մի ոք մարդկան յաղթել նմա,
Ո՛չ վարդապետ, և ո՛չ քահանայ,
Ո՛չ ճգնաւորք դիմեն նմա։

Զամէն յաղթէ, չարիք ձգէ,
Սէրն գանճիր վիզն կապէ,
Ինքն դիւրնաւ ոչ ազատէ,
Աստուած փրկէ կնկան շառէ։

Գո՛ւ՝ Յովասափ Երզնկացի,
Զաղէկ կնիկն գովեցիր,
Կին հաշարի դու վատնեցիր,
Ով ձեռն անկեր, դու գնայ լացիր։

Աղէկ կանայք առնեն գանկատ,
Քեզ հարցանեն, դու տուր ճուապ,
Եւ թէ լինայ կին գեղեցիկ,
Որ գէշ երկան գլուխն ելած։

Ես ոչ կարեմ ճուապն տալ,
Հանց թէ շաքար շունն է անկեալ,
Կամ մարգարիտ առջև խոզին,
Ի մէջ տղմին է թաւալեալ։

Ազնուկ բաններ շատ է ներ,
Ի յաշխարհիս որ հանդիպեր,
Ով տոլվաթ ունի զաղէկն առեր,
Ով որ չունի՝ գիշի դիպեր։

Այր և կանայք, դուք լսեցէք
Եւ օրինաց հլու կացէք,

155 Տպագրում՝ դիմեր
159 Տպագրում՝ գեղով

Այն նասիպի վերայ լինի։
Ով որ թողու գկինն ի յերկրի,
Գէշ թէ աղէկ ում հանդիպի,

Նա կու շնայ ըստ օրինի,
Թողեալն առցէ ով որ յերկրի,
Նման նորա շուն կու լինի։

Թէ որ լինայ կին ի յերկրի,
Զայրն թողու այլոք շնայ,
Այրն թողու, այլ կին առնու,
Այնոր Քրիստոս տաստուր կու տայ։

Կինն ունի իշխանութիւն,
Դատաստանի վերայ երկան,
Այրն շնայ, այլ կին երթայ,
Կին արձակի, այլ այր գնայ։

Թէ որ լինայ մարդ ի յերկրի,
Գէշն աղէկին ում հանդիպի,
Հանբերելով սիրով շահի,
Նահատակաց դասն կարգի։

Դու Յովասափ Երպնկացի,
Զայսքան բաներս կնկան ասիր,
Ով որ լսէ Թող միտ առնէ,
Շահ և զօգուտն գիտասցէ։

Թէ որ լինայ մարդ ողորմած,
Որ իւր սրտէն ինձ ողորմի
Ես մեղաւոր մեղօք իլի,
Մէկ Հայր մեղայ ինձի պիտի։

Ով որ բերնով զաստուած յիշէ,
Աստուածածին բարեխօսէ
Եւ Թողութիւն մեղաց խնդրէ,
Արքայութեան ինք հասանէ։

---

216 Այս տողից հետո բանաստեղծի որդին ավելացրել է.

Ես Յովանէս, որդի նորա
Եւ կրկնակի օրինակեցի,
Որք ընթեռնուք, յիշումն ածէք,
Արքայութեան որդի լինիք։

1. ՏԱՂ ՎԱՍՆ ՎԱՐԴԻ Ի ԿԱՐԱՊԵՏ ԴՊՐԻՑ ԱՍԱՑԵԱՆ

Պիլպիլն է հագեր ի յոտն կօշիկ,
Ջվարդն կու փնտրէ սիրով անուշիկ,
Ջայն է արձակեր, կու կանչէ՝ վա՛րդ, վա՛րդ,
վա՛րդ, վա՛րդ, դու դուարթ,
ես պիլպիլ, դու վարդ։

Յայնժամ իննդութեամբ յայգին մտանէ
եւ վվարդն ի թփին ծաղկեալ գտանէ,
Ջայն է արձակեր, կու կանչէ՝ վա՛րդ, վա՛րդ,
վա՛րդ, վա՛րդ, դու դուարթ,
ես Պիլպիլ, դու վարդ։

Տարբերակներ

BdeJKn *Տաղ վարդի և պիլպիլի* C *Տաղ պուլպուլին առ վարդ* FδIm *Անխոտագիր* G *Տաղ վարդի և պուլպուլի* H *Տաղ ի վերայ պիլպիլի ապացեալ* I *Տաղ պլպուլի*

Բնագիր

1 δ *Պուլպուլն էր* m *պուլպուլն* d *եկեր փխ հագեր* I *հագիր* BCeFGmn *ի յոտքն* d *իմ սիրուն հաւիկ փխ ի յոտն կօշիկ* δH *ի ոտին* J *ի հոտն* K *ի յոտգն*

2 m *Ջվարդ* AFI *կու փնդռէ* B *կու փնտռէ* H *կու փնտրեր* n *բնտրէ*

3 H *Ի ձայնէ* CH *կու կանչէ փխ արձակեր* K *Ջուարթ փխ վա՛րդ, վա՛րդ* (միշտ այսպես) dIm *վա՛րդ, վա՛րդ, վա՛րդ* (միշտ այսպես)

4 K *առղը չիմ* (կրկնակում միշտ այսպես) Aδ *Վա՛րդ, վա՛րդ, վա՛րդ* AdFGKn *դուարթ* C *դուվարդ* δ *դվարդ* J *Ձի ես յոյժ դուարթ* Im *4—5 տողերը միասին* (կրկնակները միշտ այսպես)

5 Gδ *պուլպուլ* BeGHK *դուն* δ *դոյն* d *ալ վարդ*

6 δ *Այնժամ* C *իննդութեան* K *ուրախութեամբ* CHδKm *այգին*

7 FHJm *չիմ եւ* δ *վարդն* BCEFGHJKImn *պայծառ փխ ի թփին* d *կարմիր փխ ի թփին*

8 A *Ձայնիկն փխ Ջայն է* An *արձակէ* C *արձակեր է* G *արձակել* An *ու փխ կու* I *սիրով կու կանչէ*

Պիլպիլն է բազմեր ի վարդին քովուն,
Գանկատ կու անէ ի ձեռաց հովուն,
Զայն է արձակեր, կու կանչէ՝ Վա՛րդ, վա՛րդ,
Վա՛րդ, վա՛րդ, դու զւարթ,
Ես պիլպիլ, դու վարդ:

Յայնժամ վարդն նմա զայս պատասխան տայ,
Թէ՝ Սարսեալ դողամ, երբ հովն կու գայ,
Զայն է արձակեր, կու կանչէ՝ Վա՛րդ, վա՛րդ,
Վա՛րդ, վա՛րդ, դու զւարթ,
Ես պիլպիլ, դու վարդ:

Կարապետ Դպիր, բնակարան մեղաց,
Զպիլպիլն ընդ վարդին սակաւ մի գովեաց,
Զայն է արձակէր, կու կանչէ՝ Վա՛րդ, վա՛րդ,
Վա՛րդ, վա՛րդ, դու զւարթ,
Ես պիլպիլ, դու վարդ:

---

11 δ Պոյլպոյլն էր lm Պուլպուլն A քովն δ քովոյն K գովուն

12 BFδJKl Գանգատ C Գէանկատ B կառնէ CdeGHJKlmn կու առնէ F կու առնէր C հովին δ հօվոյն

13 C Զայնէր H Զայն արձակեր G արձակել

16 m նմա վարդն F չիf զայս K *16—20* չիf δ 16—20-ի փոխարեն հետևյալ 4 թուրքերեն տողերը.

Կուլէ սօրար պուլպուլ, կուլմ
հայթալար
Պիրի (Պարէքի քէլամ) փայտէ
Պրաքմիշ չաղրար
Կոյլ, կոյլ, հե՛յ, ճա՛ն կոյլ,
պէն պուլպուլ, սէն կոյլ
Պէն պիլպիլ, սէն գուլ:

Վարդն է փնտռում սոխակը, կանչում
է վարդ,
Քնքուշ ձայնն արձակ թողած կանչում է.
Վա՛րդ, վա՛րդ, է՛յ ջան, վա՛րդ, ես
բլբուլ, դու վարդ,
Ես բլբուլ, դու վարդ:

17 C Սարսամ տղամ d Սրտիկս փխ Սարսեալ: կու դողա n դողան A յերբ C հանքն փխ հովն G գու գայ

18 C Զայնէր H Զայն արձակեր G արձակեալ

21 A ծառայ փխ Դպիր C Միրղահան չնչին փխ Կարապետ Դպիր l Աւետիս տայիր փխ Կարապետ Դպիր H Դէթոս փխ Կարապետ BCdeFHδJKm որ ծառայն փխ բնակարան l ծառայն ի մեղաց GJ *21—25* չիf

22 C Զպուլպուլ δ Զպոյլպոյլն lm Զպուլպուլն C չիf ընդ: գովաց δ կու կանչէ փխ գովեաց

23 H չիf է C արձակէ δ տողը և կրկնակը չիf n Զվա՛րդ, զվա՛րդ

2. ՏԱՂ ՂԱՐԻՊԻ Ի ԿԱՐԱՊԵՏԻ: ԱՍԱՑԵԱԼ

Ի յերկիր օտար հեռացայ,
Զսիրելիսն իմ մոռացայ,
Ի մէջ կայծականց վառեցայ.
Եղէ ցաւալից, ցաւալից:

Այնչափ սաստիկ է և դժուար
Ղարիպութիւնն, որ չկայ ճար,
Վկայ է Տէր և սուրբ տաճար.
Եղէ ցաւալից, ցաւալից:

Տիւ և գիշեր ողբայ և լայ,
Թէ՝ Տէր աստուած, դու ողորմեա,
Ղարիպութեանս իմ ճար արա.
Եղէ ցաւալից, ցաւալից:

Եկ պիւպիւլ, նիստ վերայ սրտիս,
Կանչէ, պիւլպիւլ, կանչէ, հոգիս,
Տես, թէ ղարիպ կա՞յ, քան դիս.
Եղէ ցաւալից, ցաւալից:

Սրտիկս ի փորիկս եփեցաւ,
Լալով աչերս լափեցաւ,

Խորագիր

AK *Տաղ ղարիպի ասացեալ է* B *Տաղ վասն ղարիպի* CDEGH *Տաղ ղարիպի* J *Անխորագիր*

Բնագիր

1 G չիf *Ի* ACDEH *յօտար* G *ես հեռացայ* F *1—4* չիf

2 BDEHJK *Զսիրելիս* G *Զսիրելիքն* J *ես մոռացայ*

3 BDEJK *ծաղկանցն ես* (BEK չիf *ես*) փխ *կայծականց* C *Ի քերց՝ւ եղբարց ո՛չ մերժեցայ:*

5 CD *Անչափ* G չիf *է* GJ *դժվար* K *5—8* չիf

6 BCDFG *Ղարիպութիւն* J *Պանդխտութիւն* A *չի կայ*

9 J *ու լայ* K *լամ և ողբամ* F *9—12* չիf

10 BCDEK չիf *Թէ* J *Տէրն* BCDEK *Տէր իմ: ինձ* փխ *դու*

11 J *Պանդխտութեանս*

13 J *սոխակ* փխ *պիւլպիւլ: Այս և հաջորդ տողը ետ և առաջ* ABCDEHK *13—24* չիf

14 J *սոխակ* փխ *պիւլպիւլ*

15 F *Տեսնում* J *պանդուխտ: և դիս*

17 J *Սիրտիկս* d *էփեցաւ* F *17—20* չիf

Երևիս գունն թափեցաւ.
Եղէ ցաւալից, ցաւալից։

Աստուածածին մաքուր տաճար,
Աստուածորդոյն եղեր դու մայր,
Ղարիպ սրտիս լեր մխիթար.
Եղէ ցաւալից, ցաւալից։

Մինչև ե՞րբ լաս, ապաղակես,
Ջանձդ կոծես և հառաչես,
Ո՛վ Կարապետ, գեմ ծառայ չես.
Եղէ ցաւալից, ցաւալից։

---

19 J գոյնն G քաղեցաւ փխ թափեցաւ
23 J Պանդուխտ
25 BK յե՞րբ ACH՝ ապագակես G 25—28 չիմ Γ տողը չիմ
26 B կոչես փխ կոծես
27 D չիմ Ո՛վ J Զó փխ Ով BCDE եղեկլի փխ Կարապետ E Հապեդայ փխ Կարապետ

Ի ՄԻՆԱՍԷ ԱՍԱՑԵԱԼ ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Գեղեցիկ պատկեր,
Կարմիր ես հագեր,
Նուռ ու խնձոր բերեմ դու կեր.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Ուներդ է կամար,
Ես խև ու խումար,
Քու ծօվ ծօվ աչերուդ համար.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Իմ մահն մի՛ առնուր,
Ջքեզ չի թողուր,
Արևուդ համար ինձ պաքիկ մի տուր.

խորագիր
A *Տաղ սիրոյ ազնիւ* C *Տաղ սիրոյ*
Բնագիր
2 B *տողը* չիf C չիf *ես*
3 C *քեզ* փխ *դու*
4 B *Ալ* C *ես* փխ *Այլ* (միշտ այսպես)
5 C *Քոյ սիրոյդ* (միշտ այսպես)
6 BC *տողը* չիf
7 B *Օգվի* փխ *Ուներդ*
8 B *Աչվիդ* փխ *ես խև ու*
9 B *Խև եղայ ես քեզի համար։* C *քոյ*
12 B *տողը* չիf
13 C *ահն* փխ *մահն* B *առներ*
14 B չիf *չի թողուր*
15 A պագ մը B պաք

Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Դէմ անօրէն չես,
Ջաստուած կու պաշտես,
Մէկ ողորմութիւն՝մ արա մեզ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Դինով եմ հարբած,
Սիրով դիս խոցած,
Դու ուրախ և դիս լացուցած.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Դիշերն ոչ ի քուն,
Ցորեկն երերուն,
Հա՛յ արիւնահեղ դալըմ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Մինաս խօսեցաւ,
Դէմ հանդիպեցաւ,
Իւր հարին ասաց, կանդնեցաւ.

---

16 B *Այ*
20 BC *Աստուած*
21 C չիմ *Մեկ* B *ողորմութիւն*
22 A *ես* փխ *Այլ* B *Այ*
25—26 B չիմ (ջնջված է. երևում է միայն «Դ» գլխատառը)
27 BC չիմ *և*
28 B *Այ* C *ես* փխ *Այլ*
31—32 B չիմ
32 C *Յերեկն*
33 B *Հա՛յ արարման աշխ դալում։*
37—38 B չիմ (ջնջված է. երևում են միայն «Մի» տառերը)
37—48 C չիմ
39 B *Եւ երանի ասաց ու կանչեցաւ։*

Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Միջկունքդ է բարակ,
Ադեղ նմանակ,
Քանի քաշեմ կեռ ու շիտակ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Ծծերդ է բամբակ,
Լուսին, արեգակ,
Գիշեր-ցորեկ լոյս տուր աշացս.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Երևսդ որ նայիմ,
Ես իսկ կու լինիմ,
Այս քու դարդէդ ի՞նչ ու լինիմ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Պնչիկդ է փոքրիկ,
Հոտովդ անուշիկ,
Կարմիր գունով դեղձան մազիկ.

---

43 B Մէջկունք է
44 B նման
45 B ծուռ փխ կեռ
49 A բանպակ B պանպակ C բանրակ
51 B ցօրէք C ցերեկ A աչաց
52 B Ալ
54—56 B չիմ
57 BC Այդ փխ Այս A տէրտէր B տարտրա C զարգէն B պիտի ենեմ C պիտ որ լինիմ
58 C ես փխ Այլ
61 B Պնդիքդ է C Պնչիկդ է
62 B Հօտօվ
63 B կունով դերձան մազերդ

Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար:

Խատուած կաքաւ ես,
Պօյովդ երկան ես,
Զէտ սալվի ծառի նման ես.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար:

Մանր կու քայլես,
Զհոգիս կու հանես,
Սիրամարգի նման ճեմես.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար:

Երեսդ է պայծառ,
Պօյդ է ֆիդան,
Ծառ ծօցիդ միջի անճաղ թակնար.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար:

Սիահ ուներ ես,
Զմարդիկ կու ճեմես,
Բոլոր անձամբդ գեղեցիկ ես.

---

67 C Խատված B 67—68 չիք (ջնջված է, երևում է միայն «Խ» տառը)
68 C Բօյովդ
69 AC սէլվի
70 B Ալ
73 B Մանտր C Մանրը
74 B Սիրտս կու հալես:
75 B Հոգիս կորցնես, հանես:
76 B Ալ
79—84 AC չիք
82 B Ալ
84—108 B չիք
85 C Սիեահ
87 C անձամբ

Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Աչօքդ նայէ,
Դու մեզ ողորմէ,
Այդ լոյս երեսդ կու փայլէ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Ակռադ մարգարիտ,
Շերմակ գեղեցիկ,
Պակունքդ անուշիկ, ղէտ զքեզ շաքրիկ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

Լեզուդ է արագ,
Պակունքդ է բարակ,
Հոտով անուշ ես, մանուշակ.
Այլ չեմ դիմանար,
Քու սիրուդ համար,
Բարակ նայելուդ համար։

---

92 A Դուն մէկ
96—102 C չիf

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ՅՈՅԺ, ՋԱՔԱՐԻԱՅԻ ԱՍԱՑԵԱԼ

Զարտասուեմ մեղօք հղկելի,
Թշւառացեալ մարմնով գերի,
Մի՛ լինիր անյոյս և թերի.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:

Աստուածածինն սուրբ կոյս է,
Մեղաւորաց գարձ և յոյս է,
Ապագայի կեանք և լոյս է,
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:

Քաջալերեա, սիրտ, և խնդա,
Ուրախ լեր, անձն իմ, և ցնծա՛,

Խորագիր

a *Անխորագիր՝* B *Տաղ Զաբէոսի ասացեալ* C *Տաղ Զաքարիայի* D *Տաղ ուրախութեան* E *Երգ հոգեվոր Զաքքարիեայի ասացեալ, անուշ* F *Տաղ բարառնաբար* qHA′I *Տաղ ողորմուկ* J *Տաղ անուշ և գեղեցիկ* K *Տաղ զղջման ասացեալ, տաղ անուշ*

Բնագիր

1 BCDEFqHJA′I *Զառածեալ փխ Զարտասուեմ* K *Զասացեալ փխ Զարտասուեմ* B′ *Զայրացեալ փխ Զարտասուեմ*

2 HJK *Թշուառական* B *Թշվառական* CE *մարմնոյ* J *մարմնովս եմ* qA′I *մարմնով եմ* F *և գերի* C *գերի, Տա՛ր*

3 F *անուս անյոյժ թերի,* (յուրաքանչյուր տան երրորդ տողի վերջում միշտ «ես՛»):

4 DE *Տա՛ր, սիրտ իմ* BCDEFqJB′I *վասն ընդէ՞ր* K *վասն է՞ր փխ ընդէ՞ր* BCDEFqHJKA′B′I *տրտում փխ տխուր* E *տրտում ես, Տա՛ր* (միշտ այսպես)

5 D *Տա՛ր, ուրախ* (միշտ այսպես) F *5—15 չիմ*

6 a *Աստուածածին* D *կոյսն* BCHJKB′ *6—10-րդ տողերը 16—20-րդն են* D *6—10-րդ տողերը 26—30-րդն են:*

7 K *զատ փխ զարձ* D *յոյսն*

8 BHB′ *Ապագային և այժմուս է:* CD *Յապագային և այժմուս է:* E *Ապաքէն է յոյժ և յոյսն է:* qJKA′I *Ապագային և այժմոյս է:*

11 qHA′I *Քաջալերեաց* D *11—15 չիմ*

12 C *Զուարճացեալ անձն և բերկրեա:* E *Զուարճացիր անձն և բերկրեա:* A′ *չիմ իմ*

Ջուարճացիր դու և բերկրեա.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:

Աշխարհս ամենայն ունայն է,
Թափուր և դատարկ միայն է,
Ջարուիթիւն ի քենէ հանէ.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:

Բուլ և նուաղ արարած,
Որ կողոպտէ զմարդն ի կենաց,
Պարտիս ապաւինել յաստուած.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:

Ի քեզ յուսանամ Տիրածին
Մարիամ սուրբ Աստուածածին,
Երկրպագեմ քո Միածնին.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:
Աւ յինէն ի քեզ զայս խրատ,
Մի՛ լինիր բնաւ յուսահատ,
Ջաքարիաէ երգս այս դրուատ.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես:

---

13 B *Ջարճացիր* C *Ուրախ լեր դու և ցնծա:* E *Յուրախ լեր դու և ցնծա:* K շիf *դու*

16 BC *Աշխարհ* B′ *Աշարս* D *յամենայն* EH *ամէն* D *յունայն* J *16—20* շիf

17 D *Թարուր* qKB′ *Թափօր* l *Փաթար* փխ *Թափուր*

18 C *Ջարուիթիւնդ* H *Ջչարուիթիւն* l շիf *ի* H *ի քեղնէ* B′ *ի բէն*

21 BC *Բախ* փխ *Բուլ* D *Յրազ* փխ *Բուլ* EqHJA′B′ *Բազ* փխ *Բուլ* aC *նեազ* F *21—30* շիf l *21—25* շիf

22 D *Զոր կողոպտես* BDE *մարդ* C *մարդն* H *զմարդ* C շիf *ի*

23 CH *Պարտէ* BDEqHJA′B′ *ապաւինիլ* BCDEKB′ *աստուած*

26 a JK *յուսամ* B *յուսանամք* C *յուսամք* D *26—35* շիf

28 B *Բարեխօսեա* փխ *Երկրպագեմ* CE *երկիրպագանեմք* B′ *երկիր պագանեմ* BCEB′ շիf *քո* E *կուսածին* J *Սրբոյ խաչին* փխ *Միածնին* l *Միածին*

31 BCE *զայս քեզի* փխ *ի քեզ զայս* B′ շիf *ի քեզ* qA′Bl *դրուատ* փխ *խրատ*

32 J *հուսահատ*

33 BCE *Զաքէոս* B′ *Զաքարեայ* qJKA′l *Զաքարիաս* BCEqKA′B′l *երգէ* J *զայս երգէ* BCEqKA′B′l *զայս* K *գանգատ* փխ *դրուատ* B′ *խրատ* փխ *դրուատ*

1. ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Աշուն էր ՝ւ եղաւ գարուն
ու ցամքաւ ձունն սարևրուն,
Ծառերն ամէն փթթան
ու տերև հագան գունդգունս։

Բլբուլն ի վարդի սիրուն
գիլ կերթայ պինչ մարդն ի գինուն,
Դիշերն ի լուս կու ձայնէ,
վաղունէքն մինչ ՝ւ իրիկուն։

Աշուն էր, եղաւ գարուն,
ձայն անուշ երևտ հաւերուն,
Մանկտիքն ի սարևրն ելան
ու նստան վևր ծաղկևրուն։

Սիրամարգ հաւի նման
հագեր են հալաւ գունդգուն,
Հետ զարնևն ու հետ խաղան,
ու խմեն ի յանուշ գինուն։

Խորագիր

A *Տաղ անուշ և լաւ* C *Նորին Ստեփանի ասացեալ* d *Ստեփաննոսն ասաց* e *Անխորագիր*

Բնագիր

1 BCde չիf՝ւ Bd *եղև* Bde չիf ու Be *ցամաբեցաւ։ ձիւն*

2 e չիf *ու* Bde *գոյնզգոյն*

3 B *Բլպուլն* Bde *ի վարդին* Bd *սիրոյն* A *կերթէր* de *կերթայր* A *մի փխ ի* Bde *գինոյն*

4 Bde *լոյս* A *կու ձայնէր։ վաղունէք։* C չիf՝ւ B *երևկոյն* C *երեկուն* e *Բլպուլն վևլ կերթայ պինչ մարդն այգուոյն։*

5 Bd *եղև* e *և եղաւ։ անոյշ* BCd *երեկ փխ երեւտ*

6 Cd *Մանկտքն* Ce *վէր*

7 C *Հաւուն* d *Հաւու* B *գունդգոյն* de *գոյնզգոյն*

8 e *Հետ* Cde *զարնուն* Ce՝ւ *ի հետ* A *Հագան* B *խաղագան* e *յանոյշ* Bde *գինոյն*

Աշուն էր, եղաւ գարուն,
կանաչաւ երես դաշտերուն,
Հաւքերն ամէն պար առին
ու վայրի էրէք ՝ւ անասուն։

Օրհնեմք զարարիչն աստուած,
բան մտան ծիծառն ու մեղուն,
Թռչին ի բարձր սարերն
ու բաղեն զնիւթն ծագկներուն։

Գարուն էր ՝ւ եղաւ աշուն
ու թափաւ թուփն ծառերուն,
Ուռաւ ամրն ի յարևելք
ձիւն եբեր ի վեր սարերուն։

Բարով գայ այլ մի գարուն,
աւետիք տանեն բլբուլուն,
Գայ, նստի ծառի ճղին,
արտասւի դէմ քաֆուր վարդուն։

Գարուն էր ՝ւ եղաւ աշուն,
վերացաւ վէլքն ադամորդուն,
Հոգիս սևացեալ մեղօք,
կարօտ եմ հարաւ բամուն։

Ողորմելի Ստեփանոս,
վա՜յ է քեզ ու վա՜յ քո հոգոյն,

---

9 de եղև e կանչցաւ C դաշտերոյն
10 e չիք ու Bd էրէքն e չիմ էրէք
11 Bd բուն փխ բան
12 e սարերդ AB չիմ ու Bd զնիւթ C զնութն AC ի ծագկնուն
13 BCde չիմ՝ւ e թիթնին
14 Ce Գնաց փխ Ուռաւ Bd ամպն e իբր խխ եբեր
15 A Բարով Ce այլուի գարուն d այլ՝ւ ի գարուն Be աւետիս տանին C տանուն d տանինք Be Բլպուլուն
16 e Գայի նստէր ճղերուն (չիմ ծառի) Bd արտասուէ C արտասուէր e արտասուէր C վարդի d վարդին
17 Cde չիմ՝ւ Be վէրքն Bd ադամորդոյն
18 BCde սևացեր A կարօտեր e կարօտ է C հարաֆ
19 Ade Ստեփաննոսս Cd չիմ ու Cd վա՜յ է քո ABC մահուն փխ հոգոյն d հոգույն

20 Յաստուած բարեխօս անկիր,
տէր առնէ զքեզ անճառ լուսոյն։

Կարան էր ՝ւ եղաւ աշուն,
յիմար, չէ՞ր կաս անհոգ ի քուն,
Քո կեանքդ ի պակսիլ առաւ
ու հասաւ քո օրն մահուն։

Հերիք արա, Ստեփանոս,
վայ ՝ւ եղուկ կարդա զօրն ի բուն,
Միթէ ողորմի աստուած
ու չառնէ զքեզ կեր գեհենոյն։

*

* *

2.

Եղբարք, շատ բարև լալով,
թէ յաշխարհիս ո՞նց կայք դուք բարով,
Ժամանակս երկիւղ անցաւ,
ի միմեանց համ մեր կարօտով։

Մարմինս շաղախեալ տրտմով,
սևացեր հոգիս չար մեղով,
Ձարական յաստուծոյ լինի,
բժշկի հոգիս սուրբ դեղով։

---

20 d *Աստուած* e *Աստուածածնէն* C *անգիր* d *բրոնէ* փխ *անկիր։ արժան* փխ *տէր* BCd *լուսոյն*

21 BCde *չի՛ւ* Bd *չի յիմար* Ce *է՞ր* Bd *դու անհոգ*

22 AC *չի ի։ առնու* d *Քո ջանդր պակաս մի առնէր* փխ *Քո կեանքդ ի պակսիլ առաւ։ ահա* փխ *ու* Be *մահուան* d *մահունն*

23 Ce *Երիք* d *Ողորմելի* փխ *Հերիք արա՛* Ade *Ստեփաննոս* Cd *վայ է քեզ՝ւ վայ քո մահունն* (d *ու* փխ՝ւ։ *մահունն*) փխ *Վայ՝ւ եղուկ կարդա զօրն ի բուն*

24 d *Ողորմեացին Թ՝աստուած չառնուս* փխ *Միթէ ողորմի աստուած* d *զքեզ կեր առնէ* փխ *ու չառնէ զքեզ կեր* Bde *գեհենոյն*

Խորագիր

A *Անխորագիր* b *Ստեփաննոս* c *Ծանրութիւն կենցաղոյս*

Բնագիր

1 b *Եղբայր* c *ձեզ շատ*

2 c *երկանցաւ* b *ենք*

3 c *մեղօք* փխ *տրտմով։ սևացեալ* Ab *մեղօք* c *իմ տրտմովք* փխ *չար մեղով*

4 b *և բժշկի* c *բժշկէ*

Գերիս արբևցեր մեղով,
զօրն ի բուն շուռ կու գամ քան զգինով,
Մատաթ դեղ արէք փութով,
թէ չէ կորաւ մարմինս հոգով։

Ջինչ նաւն ի ծովին միջին,
զարդ եղնի անկարծ նայ քամով,
Այսպէս իմացիր դու զիս,
յեղբօրէ եմ խիստ կարօտով։

Գինին ի գլխէս թափաւ,
սևերես եղէ ՝ւ ամօթով,
Այլ ճար չիմացաւ գերիս,
զօրն ի բուն ի շուռ գամ լալով։

Յիմարս յաղթեցայ մեղով
ու հոգիս հարաւ սլաքով,
Հարամկին ընկեր եղայ,
նայ տ՝այրիմ անանց կրակով։

Այս սուտ ՝ւ անցաւոր աշխարհս,
շաղախեց զիս չար տղմով,
Ջինչ հիմն ի վերայ հողուն,
ողողեց գարնան հեղեղով։

Տաւաւ ի յանդունդն իջուց
ու փակեց անտաշ քարերով,
Ես յոյս յԱրարիչն ունիմ,
խլսէ զիս անտի փութով։

---

5 bc մեղօք Ac չիf կու c շուրջ։ զգինով
6 b տեղ փխ դեղ Ab չիf թէ Ac կորեաւ
7 b ի ծովու c ի ծովուն b էլնի c լինի b յանկարծ c քամով
8 c զգերիս փխ դու զիս
9 b եղայ
10 c ի շուրջ
11 b յաղթեցաւ։ Հարայ
12 c ես եղայ։ չիf նայ bc կայրիմ
13 c չի՛ւ b չիf չար c ադամով փխ տղմով
14 c իմ էր փխ ի վերայ A Հողոյն c ի հողին
15 A ի յանդքն փխ ի յանդունդն Ac իջոյց
16 c խալըսէ b նա զիս։ չիf անտի c եղկելիս փխ անտի

Սպիտակն ի յալիքս անկաւ,
կտրեցաւ սիրտս մէկ հետով,
Զինչ ճիւղն ի ծառին շարժի
ու թափէ զազալն փութով։

Չորացեալ խռիւ դառնայ
որ ժողովի նայ աշնան քամով,
Այս կեանքս է նանիր, ունայն,
ցնորեր եմ ես երազով։

Քարամն յաստուծոյ լինի,
ինձ դարձ տայ իր սրտի կամով,
Դարձեր եմ լեղի կարաս,
խոցոտեր մարմինս շարաւով։

Այլ բան չի գիտեմ գերիս,
քան զԴաւթեան առածն ասելով՝
Զքո արեամբ գնեալ ծառայս,
յատենին չառնես ամօթով։

---

17 A ի մէկ c նետով փխ հետով
18 bc իւր կամով փխ փութով
19 AB դարձայ A չիմ նայ
20 c ցնդել եմ փխ ցնորեր եմ
21 b իւր c չիմ իր։ կամաւ
22 c խոցոտեալ
23 c ճար բան չգիտեմ։ Դաւթեան մեղայն
24 bc Զիւր փխ Զքո։ յատենէն չառնէ

*
* *

1.

Կաշառ երէտ ինձ սեր,
Թէ՝ Մեղրով խառնեա ու կեր,
Ապա զիմ բաժինն բեր,
Դու առողջ լեր։

Ես գրագիր ու մեղրակեր,
Յաչաց լուսոյ եմ պակասեր,
Ապսպրանք ինչ եմ ասեր,
Թէ՝ Հետ լուսոյն բեր։

Դու գրգըմած փուտ ալևոր,
Որ ի ժուժէ ես պակասեր
Եւ յաչաց լուսոյ չի մնացեր,
Եկեղեցպան ես դու կացեր։

59 c տէր Հան վխ տէրհայրն
60 B չիf Աստուած։ Քու

Տէր Նաչատուր դու նորընծայ,
Որդիդ լինի քո քահանայ,
Սուրբ Սարգիսին դու ես ծառայ,
Տաճարն և զգեստն մաքուր պահեաւ

Փոքր տէր Աբրահամ, իմ սիրելի,
Նման ես դու սուրբ տատրակի,
Սազմոսաց, սերտում արի,
Պատարագող սուրբ խորհրդի:

Քոնազգի տէր Մաղաքիայ,
Մատղաշ մանուկ դու քահանայ,
Տէտ, ալէլուք ամէն բեզ կայ,
Սան Բէթրօին դու ծառայեա:

Տէր Օհաննէս, ծեր պատուական,
Անձամբդ մեծ Թօքրախալան,
Սպիտակ ալեօք որպէս Օհան,
Որ գրեաց Աւետարան:

Որվ տէր Թումայ, հեզ և բարի,
Ակար շինող և դուլումճի,
Պօյուվդ երկան աննմանի,
Աստուած ի քո հոգիդ հանգչի:

Որվ տէր Սարգիս դու գրագիր,
Կարճ և բոլոր, լաւ և ընտիր,
Բախին, գինին ի կուլ տայիր,
Հանգչի հոգիդ, փառաւորիր:

---

64 c Ջառաճարն
69 B Ֆռնախցի
71 c անձն փխ ամէն
72 Bc Սանբէթրօին
74 c Թօրախալան
78 B դուումճի
79 A Պոյվա B երկար անմանի
80 A Հանքչի
83 ABc Ռախին
84 B փառաւորի

Ո՛վ իմ եղբայր, տէր Աւետիք,
Փափկամարմին և կակըղկիկ,
Կաշուն առնելն ես գեղեցիկ,
Տկճիկ, փոքրիկ և սպրկիկ։

Ո՛վ տէր Ներսէս, չուստ և արի,
Որդի դու ծեր քահանայի,
Տղայ գոլով եղեր այրի,
Մի համբեր տայ Տէրն քեզի։

Ո՛վ տէր Գրիգոր, սուրբ ծերունի,
Քաղցրաբարբառ, ըմպող, գօթի,
Անուանակցի քո նմանի,
Հրեշտակապետն է քո տեղի։

Գրիգոր դպիր, հմուտ գրի
Հնոց Նորոց Կտակարանի,
Ատենախօս մէջ ամէնի,
Որ մականուամբ Մախմուր կոչի։

Քաջ Բարխուդար Սեբաստացի,
Ճոխ է, պայծառ մէջ ամէնի,
Դու ժամասէր հեզահոգի,
Մեղք ու յանցանք քո ջնջի։

Զձեր Այսմաւուրքն ետուք ընձի,
Որ զօրինակն գրեցի,
Լոյս ծագեցսցի մեր տաճարի,
Լուսով մտնունք յառագաստի։

Տէր Ստեփանոսս Թոխաթցի,
Եկի հանգեայ ձեր քաղաքի,

85 A եխպայր
86 c կակղիկ
90 c Որդու
91 c գալով եղիր
92 c աստուած փխ Տէրն
101 Bc Պարխուդար
104 c և Ac անցանք
105 c ետաք
106 c զօրինակսն
107 A Լույս
108 B մտնուք առագաստի
109 A Ստեբանոսս B Ստեփաննոսս Bc Թօխատցի

Ահ ոտն սուրբ Լուսաւորչի,
Ծովահայեաց սուրբ տաճարի։

Տունն ձեր նման Աբրահամի,
Սուրբ Սահակայ և Յակոբի,
Պանդխտասէր հանգիստ հիւրի,
Նժգեհ, զարիպ և օտարի։

Ես մեղաւորս և եղկելի,
Լոկ Ստեփանոս Թոխաթեցի,
Հպարտ և լիրբ և փառասէր,
Այլ ամենայն այպով իւի։

4. ՈՏԱՆԱՒՈՐՍ ԵՒ ԳԱՆԿԱՏՍ ԼՎԱՆՆՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԵՐՈՒՆՆ, Ի ԹՈԽԱԹՑԻ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԻՐԻՑՈՒԷ ԱՍԱՑԵԱԼ

Երբ օգոստոս ամիս մտաք,
Ի լվանուն յոյժ նեղացաք,
Խաշկացաք և խորովկացաք,
Փիշերն ի բուն հէչ բուն չդաք։

Երբ պառկեցայ ես յանկողնիս,
Լվերն ամէն ևկան առ իս,
Խածատէին պիս պզերիս,
Քան զշուն կատղած՝ ւ այլ աւելիս։

Ջինչ որ լու կայր ի յաշխարհիս,
Փիշերս ամէն ևկան առ իս,
Օձ ու կարիճ նդան ընդ իս,
Զարչարեցին պեղկելիս։

Խիստ խոցեցայ ես լվանուն,
Ելա գնացի ի ժամատուն,
Հոն այլ պէտք բան գմեր տունն,
Ձվերս ի վեր կերթան ի բուն։

---

114 Ac *Ակորի*
116 AB *Նշտեհ*
118 A *Ստեբանոս* B *Ստեփաննոս* c *Թոխաթեցի*
120 A *յամենայն* c *եւի վիս իւի*

Ո՛չ կու թողուն սաղմոս ասել,
Ո՛չ ծունտր ածել, ո՛չ աղօթել,
Հանց կու խայթեն որպէս ասեղ,
Խուտուկցնեն որպէս զդև։

Մեք չենք կարեր մտնուլ ի տուն,
Նա ո՛չ ի բակ, ո՛չ ժամատուն,
Ո՛չ յանկողնի լինամք ի քուն
Թապլտեցայք գիշերն ի բուն։

Սեպտեմբերի ամիսն եկաւ,
Լվերն ամէն նոր ցնկնեցաւ,
Տներ, խցերն լվով լցաւ,
Եկեղեցիքն ճապղեցաւ։

Լուն է մտեր ներքև գօտոյս,
Կայ և կուտէ զմիս մարմնոյս,
Ես աճիզեր եմ լվաննուս,
Ճանճն այլ եղաւ ինձ տարեկոյս։

Գիշերն լուն կու չարչարէ,
Ցորէկն ճանճն յաճիզցնէ,
Փուշ և տատասկ Տէրն որ կասէ,
Լուն և օջիլն, ճանճն որ հարամ է։

Լվերն ամէն ինձ բարկացան,
Քան սև հնդիկ այլ շատացան,
Զէտ չար գազան վրաս թափեցան,
Չեն ի թողուր որ քուն լինամ։

Ճանճերն շատ են և անհուն,
Որ կու շրջին ցորեկն ի բուն,
Չեն ի թողուր լինամ ի քուն,
Կասեն գրեա մինչ՝ ւ իրկուն։

Փայտի օջիլն ու ազնու լուն,
Զեռուին ունին մէկ-մէկ հերուն,
Հանց կու խօթեն, կելնէ արիւն,
Ոնց չի սարսեմ այտոնց ահուն։

---

36 Զեռագրում՝ հմամ։

Յորեկն ճանճն կու լափէ,
Գիշերն լուն նեղացնէ,
Կուք մի յաչերս անկեալ չէ,
Իմ տէր աստուած, դու պիս փրկէ։

Ճանճերն ղկաթն աւերեցին,
Ջմեղրն և զպէքմէզն դեղեցին,
Յորժամ զամանն ի բաց գտին,
Անկան ի մէջն և մնացին։

Ճանճերն եկին տզվզալով,
Ի վերայ ձևռացս նստան սիրով,
Կասեն գրևա կարմիր յոլով,
Որ կշտանամք մեք զինճիֆրով։

Լվերն եկին մեծ երամով,
Մանտր և խոշոր իր ձագերով,
Ի յանկողինս մտան սիրով,
Ջմիսս կուտեն խիստ խնդալով։

Ճանճերն բազում է յայս տեղս,
Որ կու կենան ի մեր պատերս,
Կանհանգստեն զգրագրերս,
Եւ կու նեղեն զաշակերտներս։

Լվեր, ճանճերն մէկ եղան,
Ղալամթրաշիս խելքն մոռան,
Ջմատս էխած քան զչար գաղան,
Բազում արիւն յերկիր հեղան։

Ղալամթրաշ իմ նենգաւոր,
Յէ՞ր կու կենաս հետս ժխոր,
Ճանճին եղեր խորհրդաւոր
Ջմատս խածիր զինչ թիւնաւոր։

Ա՛յ, վա՛յ, թէ քանի զրուցեմ
Լվէն, ճանճէն գանկատ առնեմ,
Մի՛ մեղադրէք, գէմ ես խեղճ չեմ,
Կէճիզցնեն, ես ինչ այնեմ։

---

49 Ձեռագրում՝ լաբեն
51 Ձեռագրում՝ յաչերս

Լոկ Ստեփանոս դու եղկելի,
Հազար ու վայ, եղուկ քեզի,
Զի ամէնայն դատարկ բանի
Տացես համար յօրն ահեղի։

Թվին հազար և վաթսնի
Եւ երէք թիւ այլ աւելի
Եկի սուրբ խաչս Ղրիմի
Եւ պառասպել բաներս ասի։

Դուք կարդացողք, լսողք բանի,
Ուրախ կենայք ի սեղանի
Տէր Ստեփանոս ձեր ծառայի
Հայր մեր յերկինս սուրբ եղիցի։

5. ՏԱՂ ԵԻ ՈՏԱՆԱՒՈՐ Ի ԹՈՒԽԱԹՑԻ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԻՐԻՑՈՒԻՆ ԱՍԱՑԵԱԼ, Ի ՎԵՐԱՅ ՏԵՎԷԻՆ ԹՈՒԻՆՆ՝ ԿԱՐԱՊԵՏԻՆ

Թվին հազար վաթսուն ամի
Եւ չորեք թիւ յաւելորդի,
Քսան և հինգն մայիսի,
Օրն էր ուրբաթ մեծի շարժին։

Կայր քահանա մի կաֆացի,
Աստուածատուր տէր մղտեսի,
Որդիք ունէր խիստ գովելի,
Սօյով, սոփով, հասկը ցօղնի։

Մինն ի յորդոց սորպ յընդրի,
Որ կարապետ անուն ասի,
Եղև դպիր և սարկաւագ,
Թև և թիկունք հօրն իւր լինի։

Թէ՛ ժամ ասել, թէ՛ պատարագ,
Թէ՛ մահ, թէ՛ կեանք՝ և ամէն բանի,
Էր հօրն ընկեր և օգնական,
Ամէն բանի շուտով հասնի։

---

3 Ձեռագրում՝ *Իե փխ Քսան և հինգն*

6 Ձեռագրում՝ *մղտեսցի*

Ելաւ գնաց Ազախ քաղաք,
Վասն ապրանաց, նաև շահի,
Ի շահուն տեղն զննեցաւ,
Հիւանդ եկաւ ի Կաֆայի։

Եօթն-ութ ամիս հիւանդ կեցաւ
Եւ անկողնի ծառայ եղաւ,
Հանց հալեցաւ և մաշեցաւ,
Որ ի մարդոյ կերպէ ելաւ։

Յետոյ մահուամբ վախճանեցաւ,
Փառօք, պատւօք նայ թաղեցաւ,
Ծեր հայր և մայր՝ և այլ սիրելիքն
Կսկծալով նստաղեցան։

Ազախ քաղաք շատ մարդ կերար
Եւ ուտելով չի կշտացար,
Ջոմանք ծովու տակն տարար
Ի ոմանց հաւան արար դարար։

Ջոմանք ուռուսն առնալ տարաւ,
Ոմանք սրով սպանեցաւ,
Ոմանց շատ մալ թալանեցաւ
Եւ շատ գերի ծառայ եղաւ։

Ո՛վ Կարապետ, դու գրակարդաց,
Անուանի մէջ կարճատրաց,
Արդ կապեցաւ ճարտար լեզուդ,
Դրքերդ ամէն անտէր մնաց։

Ո՛վ Կարապետ, քաղցրիկ զաւակ,
Պարծանք ամէն հասարակաց,
Դու զատեցար ի նոցանէ,
Թողեր զամէն ընկերդ ի լաց։

Ո՛վ Կարապետ, դու գեղեցիկ,
Անուշ զաւակ քո ծնօղաց,
Ջմեր Հիկարն խորովեցիր,
Ջծնօղդ արիր միջակուտրած։

---

20 Ձեռագրում՝ Հիւանտ
34 Ձեռագրում՝ սպաննեաւ
36 Ձեռագրում՝ եղան
40 Ձեռագրում՝ Դրգերս։ անդէր

Ո՛վ Կարապետ, անունդ օրհնած,
Դու սիրեցար ամէն ազգաց,
Երբ փոխեցար ի յաշխարհէս,
Երկիրս ամէն զքեզ ափսոսաց։

Ո՛վ Կարապետ վաճառական,
Գովեալ ի մէջ կարճտրաց,
Արգիլեցաւ առ և տուր քո,
Ապրանքդ ամէն անտէր մնաց։

Ո՛վ Կարապետ, դու փառաւոր,
Ուժ և կարող իմոյն միջաց,
Դու կոտրեցիր զմէջքս և զբազուկս,
Արեր զմեզ կիսամեռած։

Ո՛վ Կարապետ, սէնիաթքար
Ի մէջ ամէն փիշաքարաց,
Յէ՞ր արգելաւ ձեռքդ և մատունքդ,
Գնաց շնորհքն քո բազկաց,

Ո՛վ Կարապետ, երևելի
Եւ սիրելի ամէն մարդկաց,
Պակասեցար չկեղեցուն,
Որ քո տեղիկն պարապ մնաց։

Ո՛վ Կարապետ, դու ժամասէր,
Աստուածասէր և մարդասէր,
Ծնօղասէր, աղքատասէր,
Քահանասէ և գրասէր։

Ո՛վ Կարապետ, պիս խնդճ արեր,
Զծներ ծնօղդ ի լաց թողեր,
Զնշանածդ և զհագուստդ՝
Զդպրի շապիկդ անտէր թողեր։

Տէ՛ր մդտեսի, հին սիրելի,
Լուսոյ Եղբայր, հոգոյս հոգի,
Զոր խնդրեցեր, կատարեցի,
Անմեղադիր լե՛ր դու ընձի։

Տէր Ստեփանոս դու Թոխաթցի,
Հազար ու վայ, եղուկ քեզի,

Զհայրդ և զմայրդ, զերէց եղբայրդ
Մէկ ամսուն մէջն թաղեցիր։

ԶԿարապետին մահն տեսի,
Զսակաւ բանս ի յոտք հանի,
Զերում և մեր ննջեցելոցն,
Հայր մեր յերկինս սուրբ եղիցի։

*

* *

Ե.

Ի թուականիս հազար վաթսունի,
Ութ թիւ այլ կայր աւելի,
Ի քսան և հինգն յունիս ամսի,
Որ այս եղև ի մէջ ծովի։

Կայր տօլվաթւոր մի յԵրզնկան,
Խիստ փառաւոր և պատուական,
Որդիք ունէր ինքն աննման,
Քան զլուսին 'ւ արեգական։

Տրապիզոն ելնուն և գան
Եւ ժամանակ մի անդ կենան,
Խօճայ Պալին առնու զվախճան,
Թող իւր որդիքն ողջ կենան։

Մինն ի յորդոցն, որ պատուական,
Որոյ անունն էր Ախիճան,
Խիստ իմաստուն վաճառական,
Քան զԿոսպար և զՄարխան։

Գնաց Լայտիկ և Մարզուան,
Ժողովեց կտաւ պաւզազեստան,
Եդիր ի նաւն, թէ՝ Երթամ Կաֆան,
Նայ շահուն տեղն զէնեցան։

Զի ուռուսի հանդիպեցան,
Զնաւն առին, մէջն մտան,
Սպաննեցին զով որ գտան,
Թէ քրիստոնեայ, թէ մուսուրման։

---

3 Տպագրում՝ հինկն

Օրն էր ուրբաթ, տաս ժամուան,
Շատ աղաչեր էն գուռուանին.
Ջմեզ գին կարէ, որ բերեն տան։
Ջնն ի լսեր նոցա խղճուն,

Քան գշներ և գայլ գազան,
Այլ սպաններ են անողորմ,
Ջմարմինքն ի ծովն են ընկեցեր,
Խեղճ Ախիճան և Պաղտասար,

Առաքելն և այդ ինն իւր ընկեր,
Շատ մարտիրոսք այսպէս եղեր,
Ջոր և պատմէ յԱյսմաւուրքեր,
Թէ ի ճուալ կամ ի ըրձեր,
Դրեր են և ի ծով են ըկեցեր։

Նոյնպէս և դուք գլխատուեցայք,
Քան զՅովհաննէս և զԱկովբոս,
Քան զԿղեմէս և զՊաւղոս,
Այսպէս եղեր շատք մարտիրոսք։

Ո՛վ Ախիճան, դու գովելի,
Զի խիստ հմուտ էիր գրի,
Հնոց Նորոց Կտակարանի,
Լուծիչ դժուար, ծածուկ բանի։

Արիստոտէլ սա նմանի՝
Մեծ ուսուցիչն Աղէկսանդրի,
Կամ Պղատոն, Պորփիւրոսի
Ի այլ իմաստնոցն Եպիպտոսի։

Պատմագրացն էր նմանի,
Ափրիկանոս և Յովսէպոսի,
Մեծ Եւսեբի, Մխայելի,
Եւ Սամուէլ քահանայի,

Պաղոմէոս գրասիրի,
Եօթանասուն իւր թարգմանչի,
Որ բնակէին Փարան կղզի
Եւ գրէին գիրս աշխարհի։

---

37 Տպագրում՝ ծովէն

52 Տպագրում՝ Եւ մեծն Սեպի

Որբոց ՝ւ այրևաց լինի սա տէր,
Մերկ աղքատաց հագուստ առնէր,
Զղարիպ, պանդուխտն ընդունէր
Զամենեսեան սիրով շահէր։

Զայնիւն անուշ և համեղ էր,
Զինչ որ ասէր, շնորհք ունէր,
Շաքար և մեղր բերնէն բղխէր
Եւ ղլսողքն ուրախ առնէր։

Անձամբն քաջ և արի էր,
Հայոց ազգիս նա պարծանք էր,
Խիստ գեղեցիկ հասակ ունէր,
Ճարտարաքայլ և ուժեղ էր։

Կամար ուներ ՝ւ աչուին՝ ծովեր
Քաղցրատեսիլ նա դիմօք էր,
Մօրւօքն թուխ պատկերօք էր,
Ոսկիբերան ինք նմանէր։

Եկեղեցոյ նա պարծանք էր,
Ջահ և լապտեր, կանթեղ, մոմ էր,
Լուսով ճրագ, աշտանակ էր,
Զամենեսեան լուսաւորէր։

Ո՛վ Ախիճան, հեզ և բարի,
Խոնարհ հոգով ժիր և արի,
Սրտիւ սիրող դու բնկերի,
Եղբարց ՝ւ ամէնն ժողովրդի։

Ո՛վ Ախիճան, վարդ անթառամ,
Անուշահոտ ծաղիկ գարնան,
Շուշան գունով և ոչխան,
Զքիմս արբուցեր զամենեսեան։

Խօճ՝ Ախիճան անուշահամ,
Մեղր և շաքար բերանդ քո կան,
Արբուցաննես զամենեսեան,
Թէ՛ ընտանի, թէ՛ օտարական։

Ով՛ իմ եղբայր դու Ախիճան,
Աչացս լուս և սիրական,

---

69 Տպագրած՝ ծավ էր

Ստեփանոսիս և անարժան,
Բարեխօսեա առ անմահ արքայն։

Խոճայ Ախիճան, արմատ բարի,
Բարձրաուղէշ ծառ ցանկալի,
Ով որ նստի քո հովանի
Ինքն բերկրի, ուրախասցի։

Ով իմ Եղբայր ազբիւր բարի,
Ցուրտ և քաղցրիկ ջուր հանգստի,
Այրեալ սրտի և ծարաւի,
Զովացնող պասքեալ լեզուի։

Խոճայ Ախիճան, դու ապաւեն,
Ղումրի անբիծ, տատրակ բարի,
Եւ կարկաչող ձայն կաքաւի,
Պուլպուլ քաղցրիկ մէջ գիշերի։

Խոճայ Ախիճան, դու սիրելի՝
Հայրապետաց, վարդապետի,
Եպիսկոպոս, հաբեղայի,
Քահանայի, սարկաւագի,

Աշխարհական, ժողովրդի,
Աբանց, կանանց, ծերի, տղայի,
Առհասարակ ամենայնի,
Դու սիրեցեալ յաչս ամենի։

Ով Ախիճան, դու ցանկալի՝
Հայու, Հոռմի և Ֆրանկի,
Թէ՛ Ասորի և թէ՛ Կուռճի,
Տաճկի, Հրէի, ամէն ազգի։

Ով Ախիճան դրոց հմուտ
Անունանի մէջ կոթճուրաց,
Արդ լռեցաւ ճարտար լեզուդ,
Մաքուր մարմինդ ծովն գնաց։

Խոճայ Ախիճան, քաղցրիկ պաւակ,
Պարծանք ամէն հողևղինաց,
Դու պատեցար ի քո եղբարց,
Թողեր դորբդ և գմայրդ ի լաց։

Խօճայ Ախիճ, տեղ պարծանաց,
Անուշ զաւակքս ծնօղաց,
Ձմեր ճիկեարն այրեցեր
Եւ զմեզ արիր միջակոտրած։

Խօճայ Ախիճան, դու ես գոված
Եւ սիրեցած ամէն ազգաց,
Երբ լսեցին թէ ծովն գնաց,
Երկինք ՝ւ երկիր զքեզ ափոսաց։

Խօճ՝ Ախիճան, վաճառական,
Գովեալ ի մէջ կորճուորաց,
Արգիլեցաւ առևտուրդդ,
Եղբարքդ ամէն ի լաց մնաց։

Խօճայ Ախիճան, դու փառաւոր,
Ուժ և կարող քոյոյ եղբարցդ,
Դու կտրեցեր մէջքս և զբազուկս,
Արիր զմեզ կիսամեռած։

Ո՛վ իմ եղբայր սանիաթքար,
Ի մէջ ամէն փէշաքարաց,
Յէ՞ր արգելաւ ձեռքդ և մատունքդ,
Գնաց շնորհքդ քո բաղկաց։

Խօճայ Ախիճան, երևելի
Ի մէջ ամմէն տօլաթուորաց,՝
Պակասեցար յեկեղեցուն,
Որ քո տեղն իւր պարապ մնաց։

Ո՛վ իմ եղբայր աստուածասէր,
Դու ժամասէր և տօնասէր,
Քահանասէր, ծնօղասէր,
Դու մարդասէր, աղքատասէր։

Խօճայ Ախիճան, զմեզ խեղճ արիր,
Ձծեր ծնօղքդ ի լաց թողիր,
Զկինդ և զտղայքդ որբ թողիր,
Դու ի յերկինս ժամանեցիր։

Ո՛վ Ախիճան, հոգոյս հոգի,
Ամիրաս է քո ծառայի,

---

135 Տպագրում՝ *առևտուրքս*

Թողեր դկինդ քո այրի,
Ջաղայքդ որբուկ խեղճ և լալի։

Վիրավորնալ կան ի մարմնի,
Բժիշկ և դեղ ոչ գտանին,
Քո կարօտուդ հալնալ մաշին
Սիրով քոյին յոյժ նուագին։

Ո՛վ դու Հայր մեր, խօճայ Պալի,
Ջարթիր և տես Թ'ինչ կանք հալի,
Ո՞ւր է Հղբայր մեր ցանկալի,
Վաղճանեցաւ ի յայս տարի։

Ձևղբարքս ամէն արար լալի,
Խեղճ 'ւ անճարակ ողորմելի,
Ինք վերացաւ առ Տէր երկնի
Եւ զմեզ յերեր էթող յերկրի։

Աչաց մեր լոյս, Հղբայր բարի,
Սիւն մեր սրտիս, Հոգոյս Հոգի,
Մեր կեանքս դու և ուժ բազկի,
Թագ և պարծանք մերում գլխի։

Բերդ և պարիսպ էիր մեզի
Եւ պարծանաց յուսոյ տեղի,
Մեզ թևաթափ արիր յերկրի,
Միջակոտոր, ոտուիս՝ քարի։

Ամիրասի հին սիրելի,
Դու մեր Հղբայր և անուանի,
Ջոր խնդրեցեր, կատարեցի,
Անմեղադիր դու լե՛ր ինձի։

Լոկ Ստեփանոս դու Թոխաթցի,
Հազար և վայ, Հղուկ քեզի,
Ջհայրդ և զմայրդ մէկ ամսոն
Մէջն թաղեցիր . . . . . .

---

163 Տպագրում՝ *մաշի*

164 Տպագրում՝ *նուագի*

177 Տպագրում՝ *Բերթ*

188 Հրատարակչի ծանոթագրությունը. «*կը պակասի այսպէս*» այսինքն՝ տողը ձեռագրում բերի է եղել։

Ախիճանին մահն լուայ,
Զոր ուռուսնին հարին ղնա,
Հոռոմ կտրիճ՝մ եկաւ կաֆայ,
Նա զրուցեց, թէ ես տեսայ։

Աստուած և Տէրն ողորմի,
Խօճայ Պալէ՝ւ Ախիճանին,
Ստեփանոս սոսկ իրիցին,
Հայր մեր յերկինս սուրբ եղիցի։

7. ՏԱՂ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈՑ, Ի ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈՒՍԱԹՑԻ ԻՐԻՑՎԷ ՈԳԵԱԼ

Հոգիդ սուրբ աստուած, որ շրջէիր ի ջուրն,
Լվայ զմարմնոյս և զհոգւոյս մրուրն։
Որ զմարգարէսն գիտութեամբ լցեր
Եւ զյապաղայս և ոչ եղեալսն յուցեր։

Եւ զժողովուրդսն չՆգիպատոսէ հաներ,
Ի յամպն և ի ծով զնոցա մկրտեցեր։
Զբեսելիէլ շնորհիվ զարդարեցեր
Եւ ձեռամբ նորի զխորանն կանգնեցեր։

Զօրութեամբ Քրիստոսին զմարիամ լցեր,
Բարձրելոյն շնորհիւ նմա հավանեցեր։
Եւ ի Յորդանան աղաւնակերպ իջեր,
Զէակիցն Քրիստոսի աշխարհի յայտնեցեր։

Ի լեառն Թաբօր ամպհովանի եղեր,
Զթմրեալ աշակերտսն յօդով զարթուցեր։
Ի սուրբ վերնատունն այսօր հնչմամբ իջեր
Եւ սուրբ զառաքեալսն շնորհիւդ քո լցեր։

Եւ զաշխարհս ամէն նոցա վիճակեցեր,
Փառակիցդ քարոզ զնոսա արարեր։
Զամէն ազգ, լեզու եաուր նոցա գիտել
Եւ նոցին բանիւ զազգս առ քեզ դարձուցեր։

Օրհնեալ սուրբ Հոգին ընդ Հօր և Որդոյ յաւէտ,
Սուրբ երրորդութեան փառք յաւիտեանս, ամէն։

8. ՏԱՂ Ի ԹՈՒԽԱԹՑԻ ՍՏԵՓԱՆՈՍԷ

Վա՛յ մեզ, մեղօք չարեօք լցաք,
Զպատուիրանն Տեառնն մոռացաք,
Զաստուած առ մեզ բարկացուցաք
Եւ ի ցասումն ընդա շարժեցաք։

Վասն այն զմեզ պատուհասեաց,
Զդուստր և զորդիսն մեր խոցեաց,
Զանմեղ տղայքն մեր ջնջեաց,
Շատ ծնօղաց սիրտ կսկծեաց։

Անոյշ տղայք և քաղցրածայն
Ասեն սաղմոս և շարական,
Աղբեւրք նոցա ըսպառեցան,
Զայնքն յականջաց մեր հատան։

Լուսին ՝ւ արև էին նման,
Վարդ, մանուշակ, ծաղիկ նուան,
Առջև ծնօղաց Թաւալեցան,
Աղիք նոցա գալարեցան։

Շատք հոգեվար յերկար կացին,
Զսիրտ ծնօղացն խորովեցին,
Բաղումք զերկուան մէկ նաշ դրին,
Անդուստր ՝ւ անորդի մնացին։

Փափուկ մարմինքն ի հող դարձան,
Ծովային աչքն խաւարեցան,
Սպիտակ, կարմիր աղուոր պատկերն,
Ներքև հողին զնտանեցան։

Ո՛վ, այս աճուն, իմ լոյս աչաց,
Զփառս աշխարհիս Թողեր ի բաց,
Հետեցար անանց կենաց,
Եղեր ընկեր մարտիրոսաց։

Ո՛վ դու որդեակ, սիւն իմ սրտաց,
Գրկով գգուած և համբուրած,
Իմ դեռաբոյս ծաղիկ փառաց,
Գնացիր յերկիրն կենդանեաց։

Ո՛վ, այս աճուն, դու իմ որդեակ,
Բարձրաուղէշ և գերունակ,
Ուրախարար սիրոյ բաժակ,
Քո ծնօղաց սիրուն զաւակ։

Ո՛վ իմ որդեակ կարմրագեղնակ,
Ջուտ և մաքուր ոսկեհեսակ,
Միրանափայլ ակն սուտակ,
Խաչի ծաղիկ և մանուշակ։

Ո՛վ, այս աճուն, ծառ բարունակ,
Համեղ ողկոյզ քաղցրաճաշակ,
Անուշահամ ախորժ բաժակ,
Ակ մարգարիտ և ոսկեհատ։

Ո՛վ իմ որդեակ, մանուկ ազատ,
Սուրբ և մաքուր և անարատ,
Յախտից մեղաց հասակդ ի զատ,
Անփորձ չարեաց գոլ և անախտ։

Ո՛վ, այս ճաուն, սաքուր տատրակ,
Ոսկեփետուր հաւ սիրամարգ,
Բարձրաթռիչ աղաւնոյ ձագ,
Խառնեալ ի յանմահից բանակ։

Որոց գլուխ հանդիսապետ
Է՛ թագաւորն արարածոց,
Յիսուս Քրիստոս ա տուածն մեր,
Ինքն օրհնեալ յամէն բերանոց։

1. ՅԱԿՈԲԱՅ ԹՈԽԱԹԵՑԻՈՅ ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻՆ

Լալով ասեմ ողբերգական,
Արտասուելով հառաչական,
Այս անողորմ բանքս որ եղան,
Ի մեր մեղացն գործեցան:

Ի թվին Հայոց հազար ամին,
Քառասուն 'ւ երեք աւելորդին,
Չար վոյվոտայ մի յայտնեցաւ,
Այս Օլախաց փոքրիկ երկրին:

Խորհուրդ արաւ ի իւր մտին,
Ասաց. Ջարդեմ զազգն տաճկին:
Հրեշտակ առաքեաց Լոպոտին՝
Ղազախներուն գլխաւորին:

Ասաց. Եկէք ի յիմ երկրին,
Հետ ձեզ երթամք ի վրայ Թուրքին,
Որ պաշարեմք զքաղաքնին
Եւ տէր լինինք նոցա երկրին:

Ղազախներուն շուն պարոնին,
Որ Լոպոտա անուանէին,
Հաճոյ թուեցաւ յաչս նորին,
Շատ հեծելով ելան եկին:

Խորագիր
B *Ողբ ի վերայ Օլախաց երկրին*
Բնագիր
1 B *ողբերական*
6 aB *ԽԳ փխ: Քառասուն 'ւ երեք*
7 a *վայվոտայ*
13 aB *չիf ի*
14 a *չիf ի: վերայ*
19 B *թվեցաւ*

Երբ յերկիրն Օլախին մտին,
ի Յոցոռան եկան հասին,
Բանակեցան ամենևին,
Յոցոռային ջրեղերին։

Քաղաք մի կայր, որ խիստ շէն էր,
Անուն նորա Եաշ-Պազար էր,
Պէղծ վոյվոտան հոն բնակէր,
Յոցոռային նա ի մօտ էր։

Զար վոյվոտան Օլախ ազգին
Ասաց. Ձեմ կռուիր ես հետ թուրքին,
Ես կու կռուիմ ի հետ Ղազախնին
Եւ կոտորեմ զամենեսին։

Զքաղաքին հեծելն ժողովեցին,
Ղազախներուն դէմ գնացին,
Դէմ յանդիման բանակեցին,
Վէճն և զկռիվն բորբոքեցին։

Զայն անօրէն շուն Ղազախնին,
ի պատերազմն շարժեցին,
Հետ մէկ-մէկի մարտնչէին,
Զորէքշաբթի մինչ կէս օրին։

Թօփ ու պիֆանկն երբ քարշեցին,
Փախուստ առաւ ազգն Օլախին,
Ոմանք փախան, մորին մտին.
Եւ այլք գնացին ի բարձր լերին։

Երբ Եաշ-Պազարն լսեցին,
Զձիանն ի կառս լծեցին,
Ամենեքեան փախան գնացին
ի յերեսաց չար Ղազախին։

Պազրկաններ այլ շատ կային,
Որ փախչելու ճար չունէին,

---

24 a ի Յոցոռայ
31 a չիմ ի
36 B վիճն
39 a Դէմ յանդիման փխ Հետ մէկ մէկի
45 a լցեցին
50 B փախչու

Ստացուած շատ ունէին,
Տարան յեկեղեցին դրին։

Եկեղեցուն ամուր դուին,
Ներսի դիհաց ամրացուցին,
Դուրսեէ մեծ կպղաք դրին,
Թէ բանալու ճար չի լինին։

Եպիսկոպոս Հայոց ապգին,
Տէր Յովաննէս անուն բարին,
Նա էր յերկրէն ի Կաֆային,
Եկեալ քաղաք Եաշ-Պազարին։

Աղէկ գրեանք կայր ի հետին
Եւ սուրբ մեռոնն էջմիածնին,
Յեկեղեցուն մէջն դրին,
Աստիճանին տակն էր տեղին։

Ջար Ղազախներն երբ որ եկին,
Մտին քաղաք Եաշ-Պազարին,
Հոկտեմբերի քսանևվեցին,
Ի յուրբաթու մէջօրէին։

Ջեկեղեցինն դիմեցին,
Ջերկաթէ դուռն կոտրեցին,
Բիւրք ի բիւրոց ի ներս մտին,
Քան զչար գազան անապատին։

Ստացուածն խիստ շատ էին,
Մինչ յառաստաղն հասեալ էին,
Ջամենայն ինչ առին, գնացին,
Ոչինչ մնաց յեկեղեցին։

Բայց սուրբ մեռոնն էջմիածնին
Անարժան ձեռք հասեալ չէին,

---

51 aB *Ստացած*
62 B *մեռոն*
67 B *իջ փխ քսան և վեցին*
69 a *Յեկեղեցինն*
70 a *կոտորեցին*
73 a *Ըստացուած*
77 a *չի սուրբ*

Եպիսկոպոսն առեալ ձեռին,
Եդ ի վերայ աստիճանին։

Ընկերք նոցա յետոյ եկին,
Նման իժի և քարբ օձին,
Յեկեղեցին ոչինչ գտին,
Զսուրբ մեռոնն և զգրեանքն առին։

Զեպիսկոպոսն կանգնած տեսին,
Խոնարհամիտ մաքուր հոգին,
Երկու չար մարդ ըմբռնեցին,
Մերկիկ արին, չուլ հագուցին։

Սա միայն սուրբ էր ի յերկրին,
Որպէս զՅովբն այն առաջին,
Սա փորձեցաւ չար իշխանին,
Կայր մէջ գայլոց նման գառին։

Զժողովուրդն և զիրիցնին,
Նման սմին մերկացուցին,
Յետոյ այլ չար խորհուրդ արին,
Պիտի սրով կոտորէին։

Խնամքն էհաս Աստուածածնին,
Որ բարեխօս է Միածնին
Եւ խափանեաց զխորհուրդ նոցին,
Որ ոչ եղաք սրոյ բաժին։

Անթիւ, բազում չար գործեցին,
Որ բերանով ասել չինին,
Յետոյ զքաղաքն այրեցին,
Այնպէս չարեօք ելան, գնացին։

Շաբաթ մի այլ վերայ անցին,
Պարոնն եկաւ Եաշ-Պազարին,
Անուամբն էր ինքն Ահարոնին,
Գործով նման Սադայէլին։

---

80 a *Եդիր փխ Եդ ի*
82 a *Թիւնալից չար փխ իժի և քարբ*
84 B *մեռոն*
88 a *առին*
97 a *Հասաւ*

Ի միտ էած զբանքն առաջին,
Ասաց. Կռուինք ի հետ Թուրքին:
Դարձեալ եբեր զՂազախնին,
Գնաց կռուիլ ի հետ Տաճկին:

Ի Պէնտէրին բերդին վերան
Երկու ամիս ճակատեցան,
Ամենևին ոչինչ կալան,
Ապա դարձեալ ի Եաշն եկան:

Վազիր մ՝ ունէր չար վոյվոտան,
Անուն նորա էր Ըրզվան,
Սիրելի էր քան գամենայն,
Գլուխ էր հեծելին վերան:

Խրատ ետուր նա հեծելին,
Որ զպարոնն բռնեցին,
Զձեռն և զոտն երկաթեցին,
Այնպէս Մաճառք ուղարկեցին:

Պեղծն Ըրզվան՝ խմոր չարին,
Նստաւ ի յաթոռ պարոնին,
Թագաւորեաց ի վերայ երկրին,
Յամսեանն տասն ի յունվարին:

Զատկեն մինչ ի յԱստուածածին
Իշխան եղեալ Օլախ ազգին,
Շատ աւերում արար երկրին,
Որ ոչ է լեալ և ոչ լինին:

Երկիրն ամէնն սարսէին
Ի յահէ անհաւատ Թաթրին,
Որպէս զնաւ ի մէջ ծովին,
Որ ի յալեացն տատանին:

---

110 B Ասի
112 a կռուի
113 a Պանտարին B բերթին
117 a վայվոտան
123 B երկրթեցին
125 a Պեղծ aB Ըրզվանն
128 a Ապրիլ ամսոյ քսան և չորսին:
129 B Ծննդենեն փխ Զատկեն մինչ

Այսքան բաներս ամենևին
Լսեց գոալն Լեհաց երկրին,
Հրաման ետ քանցէլարին,
Թէ՝ Գնա տես որպէս լինին։

Քանցելարն քաջ և արին,
Մտօք ճարտար, գիտող բանին,
Բիւր հեծելաւ ելան եկին,
Օլախ երկրին ի մօտ հասին։

Պեղծ Ըրզվան՝ իշխան չարին,
Թուղթ ուղարկեց քանցէլարին,
Ասաց. Ծառայ եմ գոռելին,
Ես առաւել քոյոյ անձին։

Այս քանցէլարն՝ իշխան բարին,
Պատասխանի ոչ ետ նմին,
Լռելեան կայր չեզր երկրին,
Չյայտնէր զխորհուրդն ազգ մարդկային։

Ըրզվանին եկան ասին.
Քանցէլարն է չարկամ քոյին,
Պատասխանի ոչ ետ թղթին,
Դու ճար արա վասն քո անձին։

Այս Ըրզվան չար կենդանին,
Զկինն ուղարկեց չերկիր Մաճառին,
Ես չետ նորա փախաւ ինքնին,
Ի չերեսաց քանցէլարին։

Քանցէլարն և հեծեալ նորին,
Մտին չերկիրն ի Օլախին,
Ի ցոցոռայ գնացեալ հասին,
Բանակեցան ի ջրեզերին։

---

143 B հեծելով
148 B Ես
149 a քանցէլար
154 B Թէ քանցէլարն
159 B ետ
161 a հեծել
164 B չիմ ի

Քանցէլարն բարէնշան,
Որ հալածեաց ղչարն Ըրզվան,
Պարոն Եդիր պերեմիան,
Որ է արժան պարոնութեան։

Ամիս մն ալ վերայ անցին,
Անթիւ հազար Թաթար եկին,
Ի Օլախաց յերկիր մտին,
Դէմ յանդիման քանցէլարին։

Քանցէլարն էր բարի իշխան,
Թուղթ ուղարկեց ի Թաթրին խան.
Չենք, ասաց, մեք ձեզ չարկամ,
Վաղուց հետէ եմք բարեկամ։

Թաթարն ասաց քանցէլարին.
Թէ լինիցի հրաման քոյին,
Ջինչ բան որ քեզ հաճոյասցին;
Ամենեին կատարեսցին։

Ջերեմիան հասատատեցին,
Իշխան եղեալ վերայ երկրին,
Նստեալ քաղաքն ի Սէչովին՝
Աթոռ է հին ժամանակին։

Այն շատ հնձեալն Թաթար խանին
Ամէն գարձան իւրեանց երկրին,
Ապա և քանցէլարն ինքնին,
Իր հնձելան ելան գնացին։

Երկու ամիս վերայ անցին,
Ջար Ըրզվանն ելաւ կրկին,
Թուղթ ուղարկեց Երեմիին,
Ասաց. Կու գամ ի վրայ քոյին։

Մեծ վոյվոտան Օլախ ազգին,
Եբեր զպարոն Կոմէնիցին,

---

169 a այլ
171 B ի յերկիրն Օլախին մտին։
182 B վրայ
183 B չի՛ ի
185—236 B չի՛

Հեծեալ բազում ժողովեցին,
ի պատերազմ պատրաստեցին։

Պեղծն Ըրզվան և զօրքն նորին
եկեալ ի դաշտ Սէչով քաղքին,
Սոքա ելեալ ի դէմ գնացին,
ի պատերազմն դիմեցին։

Դեկտեմբեր ամսոյ երկրորդին,
երեքշաբթի վաղվենէքին,
Մինչ երեք ժամ կռիւ արին,
Չորրորդ ժամուն կոտորեցին։

Զօրք և հեծեալ Ըրզվանին
փախուստ առին ամենեւին,
Սոքա պհետ հալածէին,
Որ և հասեալ՝ սպանանէին։

Եւ զԸրզվանն բռնեցին,
Բերին առջև Երեմիին,
Հրաման տուեալ՝ ցիցն զարկին,
Գնաց ի փառս սատանային։

Հրամանաւն գոռելին,
Միջնորդութեամբ Թաթար խանին,
Ըստամբօլէն սանչախ բերին,
Երեմիայ վոյվոտ արին։

Խաղաղութիւն եղև երկրին,
Բարեխօսութեամբ սուրբ Կուսին,
Անխռով կենայ ամենեւին,
Մինչև կրկին գալ Միածնին։

Այս ամենայն բանքս որ եղան,
ի մեր մեղայն գործեցան,
Աղօթեցէք դուք անխափան,
Որ ամէն չար բարի դառնան։

Տէր Յովաննէսն Կաֆացի,
Եպիսկոպոս սուրբ և արհի,
Անփորձ կենայ ինքն յաշխարհի,
Հրաման ետ, որ գրանքս ասի։

Եպիսկոպոսն սուրբ հոգի,
Ես անարժան հող և փոշի,
Ձիս ձեռնադրեաց ի յայսմ երկրի,
Զորս աստիճան կարգ դպիրի։

Ես անպիտան մեղօք իւիւ,
Որ եմ զարիպ ի յայսմ երկրի,
Յակոբ անուն պարսաւելի,
Ի քաղաքէն եմ Թօխաթի։

2. ՆՈՐԻՆ ՅԱԿՈԲԻ ԱՍԱՑԵԱԼ ԽՐԱՏ ՎԱՍՆ ԱՆՁԻՆ ԻԻՐՈՑ

Յակոբ Թոխաթցի մեղօք զառածեալ,
Մերացար ՚ւ ի դուն մահու հասար,
Դարձիր ի մեղաց ՚ւ արա դու քեզ ճար,
Որ չի մտանես ի գուբն խաւար։

Ադտեղի մեղօք լցեալ Յակոբ դուն,
Քանի կու կանչես, չես լինար ի քուն,
Զաստուած աղաչեա փրկել ի դաւուն,
Խաւարասիրաց լեգէոն անուն։

Կամօք և մտօք Տեառն ծառայեա,
Յակոբ Թոխաթցի, անուամբ քահանայ,
Բոլորով սրտիւ յուսայ դու ի Նա,
Յահեղ ատենին նա քեզ քաղցրանայ։

Ո՛վ Յակոբ էրէց, Թոխաթու յերկրէն
Լեղացար զբաղմամբ ի յաստնուրէն,
Թօթափեա զմրուրդ, փախիր ի չարէն,
Որ չի զրկիս դուն յանանց պսակէն։

Խորագիր
AC *Անխորագիր* B *Նորին Յակոբայ*
Բնագիր
2 BC *Մերացեալ*
3 BC *՚ւ ի մեղաց*
5 B *Ակոբ*
7 ABC *զասուն*
9 ABC *Տէրն*
14 C *լեղացար* B *աստնուրէն*
15 B *փախեա*

Բնաւ դու գրոյ ևրբ որ չմուտ չես,
Ա՛յ անմիտ Յակոբ, քանի՞ ձաբռտես,
Թողէր զգևրանդ, զայլք կու խրատես,
Զմտաց աչքդ բաց և չայևաց ի քեզ։

Ի Տէր յուսացիր, որ առնէ քևզ ճար
Եւ խոստովանևա, զոր նմա մեղար,
ԵՒւ՛ր փառաբանող դու Տևառն անդադար,
Որ չասանիցես ի կևանս անվճար։

3. ՆՈՐԻՆ ՅԱԿՈԲԻ ԱՍԱՅԵԱԼ ՎԱՍՆ ՍԻՐՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ՍՐԲՈՑ ՆՈՐԱ

Անևղանևլին աստուած,
անսկիզբն և անճառական,
Անքննին վևրին զօրաց
և մտաց մեր անհասական,
Երէք բաժանևալ անձամբ,
տէրութիւն է միասնական
Մի կամօք, միով բնութևամբ
էութիւն փառաւորական։

Ի սիրոյ յառաջ բևրևալ
գոյացոյց զէակս ամենայն,
Զի սէր է անուն նորա,
զոր ասաց տէր սուրբ Յոհան,
Զևրկինս կամար կապևաց,
հրևղէն զօրացն օթևարան,
Զարևգակն եդ ի նմա
և կարգևայ աստեղաց սահման։

Զևրկիրս հաստատևաց բանիւ
ի վևրայ ջրոյ բազմութևան
Զարդարևաց պէս-պէս ծաղիօք

---

19 C *Թողեր ես* BD *զայլ* (D *զայ*) *ոք վիս զայլք*
22 B *խոստովաննս*
23 ABC *Տէրն*
Բ ն ա գ ի ր
3 B *տէրութին* C *տէրութիւնն*
10 BC *տնկովք* B *բուսով*

և տնկօք, բուսովք պանապան
ի ծովէ եհան թռչունս,
որ ի յօդս առ Տէր կարդան,
կէտք և մեծամեծ ձկունք
և մանունք առանց թուական։

Եւ չորքոտանիք բազումք
և վայրի էրէք և գազան,
Եւ ազգի-ազգի վիշապք
և սողունք, որ ի սմա գևռան,
Ետես արարիչն աստուած
և ահա բարի ամենայն,
վասն որոյ օրհնեաց զնոսա
՝ւ աճելոյ ետուր Հրաման։

Եւ ընդ յԱրևելս տնկեաց
դրախտն յեդեմական,
Իբր զգահոյս արքայի
պաճուճեալ փառօք փափկութեան,
Երկնի և երկրի զարդերք
կատարեալ եղեն ի լրման,
Արդ պիտոյ է վայելուչ
թագաւոր սմա և իշխան։

Ապա Հայրն երկնաւոր
ընդ Որդւոյ և Հոգւոյ ասաց բան.
Արասցուք մարդ բանաւոր
ըստ կերպի մեր նմանութեան,
Իշխեսցէ ձկանց ծովու
և թռչնոց երկնից բազմութեան
Եւ բոլոր սիեղերաց՝
սողնոց և գեռնոց զինչ որ կան։

---

11 B *ի օթս*
16 B *չիf ՝ւ* C *և փխ ՝ւ*
17 BC *Արևելս* C *եդեմական*
19 C *ի լման*
20 aB *վայելող*
21 aB *Ահա՝ Որդոյ՝ Հոգոյ*
24 C *չիf զինչ*

Եւ առեալ հող ի յերկրէ
    կերպացոյց ըստ կերպին նման,
Եւ փչեաց շունչ ի նմա
    և շնորհեաց հոգի բանական,
Եօթնարփեան շնորհօք լցոյց
    և եդ ի դրախտին փափկութեան,
Գործել անդ զգործ աստուածոյ
    և պահել նորին պատուիրան։

Իսկ նա ի դրախտէն ելեալ
    պատրանօք բանսարկուին խաբման,
ի ներքոյ մահու անկեալ,
    գրաւեաց զբնութիւնս ամենայն,
Կնգնալ եղկելի կենօք
    ի յերկրի յոյժ թշուառական,
Մինչ հոգին էջ ի դժոխս
    և մարմինն եդաւ գերեզման։

Յաղթեալ ի սիրոյ սրտին
    արարիչ Տէրն վերնական,
Սիրով առաքեաց զորդին,
    հաճութեամբ հոգւոյն տիրական,
Զոր սիրով իջեալ յերկնից
    և էառ մարմին կուսական,
Սիրով միացոյց զմեզ
    ընդ բնութեան իւր աստուածական։

Եւ զսէրն տարածեաց յաշխարհս,
    որ մարդիկք սիրով վառեցան,
Արծարծին օր ըստ օրէ
    հրդեհէ զտիեղերս համայն,

---

25 B *երկրէ* BC *կերպի*
26 C *փրկեաց* փխ *փչեաց*
27 a *Եօթնարբեան*
28 BC *պատփրան*
29 C *դրախտին*
32 C *մարմին*
33 a չիf *սրտին*
34 aB *հոգւոյն*
35 C *Որ*։ չիf և B *զմարմին* C *զմարմինն*
37 C չիf *Եւ*

Զի վասն սիրոյ Փրկչին
զաշխարհի սէրն մոռացան,
Թողեալ զընտանիս մարմնոյ,
ի Քրիստոս սիրով միացան։

Ոմանք ի լերինս գնացին,
ի տեսից մարդկան հեռացան,
ի յայրս և ի ծերպս վիմաց
պահօք ՝ւ աղօթիւք ճգնեցան,
Եւ այլք յանապատ շրջեալ
անզգեստ և մոլորական,
Ջմայլեալ սիրով հոգւոյն
և մարմնոցն անհոգացան։

Կէսք փորձ զտանջանաց առին,
կարծրագոյնս չարչարեցան,
ի հուր և ի սուր մաշեալ
՝ւ ի սիրոյն Տեառն ո՛չ հեռացան,
Արբեալ զբաժակ սիրոյ՝
սիրով Տեառն խաչակցեցան
Եւ զբռնութիւն չարին
առ ոչինչ համարեցան։

Զի թէ ոք սիրէ զաստուած
բոլոր սրտիւ լիական,
Նմա ոչ տիրէ բնաւ
տրտմութիւն համաշխարհական,
Թէպէտ չարաչար չարիօք
փորձեսցէ զնա սատնայն,
ի սէրն աստուծոյ վառեալ,
նմա դիւր թւի ամենայն։

Սէրն կատարէ բոլոր,
զամենայն զՏեառն պատուիրան,

---

44 aB հոգոյն
46 C չիք ՝ւ
47 B Սրբեալ փխ Արբեալ
50 C տրտմութեան
52 BC թիւր
53 B զամէն։ զՏէրնն զպատուիրան C պատիրան

Աստ գործէ զգործս աստուծոյ,
անդ հանգչի ընդ նմա յաւիտեան,
Յումեքէ ոչ երկնչի,
չունի նա ահ երկիւղական,
Զի հոգիացեալ է նա,
ոչ գնայ ընդ մարմնոյ պրաւման։

Առաջի թագաւորաց
քարոզէ համարձակաձայն
Եւ ո՛չ ամաչէ ասել,
Ոչինչ է վասն Տեառն անուան։
Ի սպառնալեաց չերկնչի,
թէ հարիւր հաղար բռնանան
Եւ ի խրոխտանաց չարեաց
ո՛չ կրէ նա ահ մարմնական։

Զուարթ երեսօք նայի
ի չար դէմսն գազանական
Եւ խոնարհութեամբ խօսի
բանս քաղցր խրատական
Եւ թէ զանազան պարգեւք
և բարիք նմա խոստանան,
Նմա գարշելի թվի
զարդարանք երկրի ամենայն։

Նա զխորհուրդն յերկինս ունի
և ցանկայ լուսոյն վերնական,
Որոյ ցնծութիւնն անճառ
և բարիքն է անանցական,
Սէրն զբազմութիւն մեղաց
ծածկեսցէ զլերանց նման,
Զվերս հոգւոյն բժշկէ
և քաւէ զմեղսն զամենայն։

Զհեռացեալքն յաստուծոյ
ընտանի առնէ նորա տան,

---

58 BC որ ինչ է փխ ոչինչ է
61 B Զուարթ C հայի
64 B թէի C թէին BC յերկրի
65 B երկինս
68 aB հոգոյն

Ընդ յաստուածոյ միաւորէ,
սուրբ Հոգւոյն կազմէ օթարան,
Հոգւով զարդարէ զնա,
պսակէ փառօք հայրական,
Վայելէ ուրախութեամբ
և հանգչի ի կեանս անվախճան։

Եւ թէ որ ընդ աստուածոյ
սէր չունի կատարեալական
Ո՛չ սրտէ և ո՛չ յանձնէ
և ո՛չ ի մտայ ամենայն,
Անբան անասուն է նա
և վատթար, քան զվայրի գազան,
Զի ո՛չ ճանաչէ զաստուած
և ո՛չ գործ նորա զանազան։

Այլ մեք սիրեսցուք զաստուած
ի խորոյ սրտէ լիական,
Յամէնայն զօրութիւնէ առաւել,
գիր, քան զամենայն,
Եւ նմա զփառս տացուք
՝ւ անդադար լիցուք օրհնաբան,
Ընդ վերին զօրացն երկնից
այժմ և միշտ և մինչ յաւիտեան։

4. Ի ՅԱԿՈԲ ԻՐԻՑՈՒԷ ԱՍԱՑԵԱԼ Է ԳԵՂՋՈՒԿ ՈՏԱՆԱՒՈՐՍ Ի ԴԷՄՍ ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԻՒՐՈՑ՝ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅԻՆ, ՈՐ ԱՍԻ ԱՑՎԱԹԵՆՑ, ԵՒ ԻՒՐԵԱՆՑ ՄԱԿԱՆՈՒՆ ԱՍԵՆ ԹՈՒՍԱԹՑԻ ԲԱԹՈՒԿԻ ՏԷՐ ՅԱԿՈԲ, ՈՐ Է ԱՑԺՄ Ի ԼԵՀԱՑ ՏՈՒՆ, ՋԱՄՕՍՑԱ

Յիսուսի աստուածոյ Որդւոյն միածնի,
Գթով նորա ողջոյն առ քեզ Հասանի,
Տէառնդ իմոյ Յակոբ սուրբ քահանայի,
Դէմ քեզ երկրպագեմ խոնարհ ի յերկրի։

---

70 BC *աստուած* aB *Հոգոյն*
71 aB *Հոգով* C *շարագրէ* վխ *զարդարէ* a *ծայրական* վխ *հայրական*
74 B *անձանէ*
78 B *Ամէնայն*
79 BC *չի՛՝ւ*
80 a *զօրացս*

Ամենայն ազանց ես դու գովելի,
Թող դու պայծառ կենաս անփորձ ի յերկրի,
Ալեօքդ ծերանաս և աւուրբք իլի
Մինչի կենացդ կէտ կենաս ցնծալի։

Կաճառք լուսեղինացն քեզ հովանի,
Նոցունց, այլև մարդկան դու ես ցանկալի,
Հոգովդ դու մաքուր ես ի յաշխարհի,
Ընտրեալ ես ի տոհմից և յազանց միջի։

Ո՜հ, թէ լիներ այն պահն, որ զքեզ տեսնուի,
Զաջդ տիրաշօշափ ես համբուրէի,
Ժամ մի դէմ երեսիդ աչօք հայէի,
Ապա զհոգիս մարմնոյս իմ աւանդէի։

Բանի քո բարբառոյ սիրտս կարօտի,
Հոգիս ցանկայ զեղոյ քո հրաշալի,
Զի ձեզ է գեղեցիկ և դու ես արի,
Շնորհօք ես դու լցեալ նման Ներսէսի։

Արեգ ես դու և լոյս, նման արևի,
Եհաս քո շառաւիղդ առ անձս եղկելի,
Որ մթացեալ կայի քո լուսոյդ հեռի,
Սիրտ իմ քո նամակաւդ յոյժ մխիթարի։

Նման ես դու սրբոց Հարցն առաջի,
Որ և համեմատիս հրեղեն սեռի,
Ի յայս ձմեռնացեալ չար ժամանակի,
Դու վարդ երևեցար ի մէջ պարտիզի։

Արդար, հեզ և հանդարտ և բարեհոգի,
Գործով ես դու մաքուր և առաքինի,
Դու ես զամպար վառեալ, լոյս անշիջելի,
Ի քեզ նման չի կայ ի յայս միջակի։

Բոտևալ ես դու գործով զուարթնոց դասի,
Զի ես դու յարմատոյն սուրբ Լուսաւորչի,
Ծաղիկ պայծառ, բուսեալ հոտով ի յերկրի,
Քահանայ նազելի ըստ Մելքիսէդի։

Ժառանգ որդի ծնեալ ես դու Հայրենի
Եւ ջահ լուսոյ փայլեալ ի մէջ աշխարհի,

Ժառանգակից լինիս կենացն յաւէտ,
Վասն զի ես պարծանք Հայկազան սեռի։

Անունդ քո բարի տարածեալ յերկրի,
Ո՛վ տէր Յակոբ, ընտրեալ ի մէջ ամենի,
Բնութեամբդ ես դու բարի, գործով գովելի,
Մաքուր ես և անբիծ, անախտ ի մարմնի։

Նկրտիմ և ջանամ զքեզ գովելոյ,
Բայց որ կարիք չունիմ բան շարադրելոյ,
Մարթէ զքեզ գովել հրեղէն լեզուոյ,
Ա՛յ իմ հոգոյս հոգի, գովեալդ աստուածոյ,

Է՛ իմ աչացս լոյս, հայր իմ ցանկալի,
Կարօտ եմ տեսութեանդ քո տենչալի,
Լուսով պայծառ նման դու արիւսակի
Եւ ես ցանկամ լուսոյ և կամ ի մթի։

Սիրով քո կարօտուդ սիրտս կու վառի,
Որ եմ նգիւհ եղեալ ի տարաշխարհի,
Ջունիմ հնար տեսնուլ զդէմդ բաղձալի,
Զի ծովն ովկիանոս ի մէջ մեր ծփի։

Ընտրեալ ես յաստուածոյ դու յորովայնէ,
Շնորհքն աստուածային ի քեզ իջեալ է,
Աստուածատիպ կերպիդ հոգիս փափագէ,
Որպէս եղջիւրն այն ջուր ի աղբերէ։

Նստեալ ես դու ի մէջ Թոխաթ քաղաքի,
Ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի,
Նման ես դու հոգով ծաղկալից դաշտի
Եւ ես փետուրաթափ թռչուն ի գրի։

Կամքդ բարի սիրով ղսա ընկալցի,
Թէպէտ որ անյարմար ես շարադրեցի,
Զի ի յաւելածոյ սրտէս բղխեցի
Եւ քսա կարեաց իմոց զքեզ գովեցի։

Այսու փոքր բանիւս, որ ես զբեցի,
Զվարթդ Հարցանեմ տէրն հաճելի,
Որպէս և կամ, դիա՞րդ ես դու ի յերկրի,
Պահէ զքեզ աստուած անսասանելի։

Լոյսդ աննենգ և սուրբ և հեզահոգի,
Եթէ դու հարցանես զանձն իմ եղկելի,
Առողջ եմ ես մարմնով ի յայս կենցաղի,
Հայցմամբ ձեր և ներով տեառն Յիսուսի։

5. Ի ԲԱԹՈՒԿ ՅԱԿՈԲ ԻՐԻՑՈՒԷ ԱՍԱՑԵԱԼ Ի ԴԷՄՍ ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԻՒՐՈՅ՝ ԱՅՎԱԹԵՆՑ ՏԷՐ ՅԱԿՈԲԻՆ

Հիբար հողանձնէ,
Քո աշակերտէ,
Յակոբ ծառայէ։

Քեզ ողջոյն հասցէ,
Տէր, տէր Աֆէնտէ
Եւ Աստուածատրէ։

ՅԱդամայ զարմէ,
Ծննդոցն Եւայէ
Հրեշտակ ես յերկրէ։

Ի հոգւոյն շաւղէ,
Լոյս քեզ ծագեալ է,
Պետրոս ի կարգէ։

Զեռք քո շօշափէ
Զծնեալն ի Կուսէն,
Մարմնաւոր քրոբէ։

Բերանդ աղօթէ
Եւ զՔրիստոս զենէ,
Զանցանս քաւէ։

Ոտք քո վերճեմէ,
Բարձր յերկինս կոխէ,
Զաստուած տեսանէ։

Յորժամ լեզուդ սկսեալ խօսակցէ,
Գորովագոյթ հայր իմ, զիս յիշէ.
Աղաչեմ։

Արեգ յարևու,
Աստղ առաւօտու,
Հոգւոց լուսատու։

Ուզդ ի բուն որթու,
Ծառդ պտղատու,
Պտուղ տաս ժամու։

Բժիշկ դեղատու,
Ջիթով և գինու,
Խոցոտեալ Հոգու։

Բարի տնտես դու,
Ի տանն աստուծոյ,
Սիւնդ ևկեղեցւոյ։

Աղ համեմատու,
Բարեաց ձեռնտու,
Յորդորիչ բարու։

Պատրաստ ի ժամու,
Փեսային գալու
Եւ համար տալու։

Շահող մնաս դու,
Տնտես դու հաճու,
Արժան հաւատու։

Յորժամ իշխեմ ես տասն քաղաքու,
Արժան արա, Հայր, պիս յիշելու.
Ազաչեմ։

Ձերից երանեալ,
Քաջ հովիւ ընտրեալ,
Քահանայ օծեալ։

Հոգւով պօրացեալ,
Իմաստիւք լցեալ,
Խրատիչ գովեալ։

Յաստուծոյ օրհնեալ,
Սրբոց նմանեալ,
Գործով զարդարեալ։

Միշտ աշխատեալ,
Վարձս ընկալեալ,
Յաւէտ ցնծացեալ։

Սարգիս նմանեալ,
Որդուվդ քո ծաղկեալ,
Բարեհամբաւեալ։

Առաջնորդ եղեալ,
Մանկամբք քո ընտրեալ,
Յատենի կացեալ։

Դիմօք զուարթացեալ
Եւ զայս ասացեալ.
Ահա և ես և մանկունքն իմ նկեալ։

Ի քէն հայցեմ, հայր իմ բարերար,
Յայնմ ատենի դիս մի մոռանար։
Աղաչեմ։

Բետոր իմաստուն,
Համբաւեալ անուն,
Նմաննալ առաջնոյն։

Դու ես բանիբուն
Եւ մեծ րաբուն,
Շնորհօք սուրբ Հոգւոյն։

Բանաս ղշրթուն,
Զլեզուդ զւարթուն,
Խօսիս բաղցրագոյն։

Պատմեն ժողովոյն,
Զպատգամ օծելոյն,
Նորոյ կտակոյն։

Զաւետիս տալոյն
Եւ խոստանելոյն,
Զկեանս անապատում։

Յոյս մեղուցելոյն,
Զանաս դառնալոյն,
Լուծ տաս բաղցրագոյն։

Խրատիչ ծերոյն
Եւ մանկագունոյն
Եւ երից տասոյն։

Ո՛վ բարի անուն,
Քաջ հովիվ արթուն,
Մշակ նոր այգոյն։

Յորժամ ասեմ որդի օրհնելոյն,
Եկայք օրհնեալք հօր իմ բարձրելոյն,
Յայնժամ յիշեա, հայր իմ բարեգոյն,
Զիս քո ծառայդ զգրիչս փցուն.
Աղաչեմ։

6. ՅԱԿՈԲԱՅ ԹՈԽԱԹԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՏԱՂ ՎԱՍՆ ԿԵՆԱՑ ՄԱՐԴԿԱՆ

Աստուած ստեղծեաց զմարդն առաջին,
Օրհնելով օրհնեաց զաճումն նորին,
Աճեալ բազմացան և զերկիր լցին,
Տևէ և մնայ մինչ յօրն վերջին։

Բայց դուք լուարուք զբան մարգարէին
Դաւթի ՝ւ Եսայեայ և նախնեաց նոցին,
Զաւուրս մարդոյ որպէս խոտ անցին,
Ի հնչել հողմոյն այլ ո՛չ երևին։

Գարնան ծաղկի նման կու ծաղկին,
Որպէս շուշանի պայծառ տես ունին,
Եւթանասուն ՝ւ ութսուն ամք նոցա թուին,
Յաւօք ի հարիւրն հազիւ թէ հասնին։

Խորագիր

B Նորին Յակոբի ասացեալ վասն կենաց մարդկան C Յակոբ եպիսկոպոսի վասն կենաց մարդկան D Անխորագիր

Բնագիր

1 a Ի հողէն փխ առաջին
2 aBD նոցին
4 B օրն
6 C Դաւիթ CD չիք ՝ւ
7 aCD ասին (CD առին) փխ անցին
9 B որպէս կու ծաղկին
11 aBD թանասուն a թուին

Դուք ինձ լուարուք, եղբարք, զինչ ասեմ,
Զննդոց մերոց զսկիզբն պատմեմ,
Մասունք մեր հոգւոց երեք բաժին են
Եւ նիւթն մարմնոյ ի չորս տարերց են։

Երբ յորովայնի մանուկն ընծայի,
Ինն ամիս է չափն, որ ծնանիցի,
Հինգ օր աւելի անդրանկին լինի
Եւ մարդ կատարեալ յերկիր անկանի։

Զոր իսկի բնաւ չի գիտէ բան մի,
Այլ լալոտ աչօք ի կարգ մտանի,
Տարի մի բոլոր կաթնակեր լինի
Եւ յետ այնորիկ ի ստեանց հատանի։

Եթէ ի յերրորդ տարին հասանի,
Քանի մի բանիկ զրոյց ուսանի,
Քաղցրանայ, լինի նման շաքարի
Եւ սիրտք ծնողացն ուրախ լինի։

Ընդ ժամանելոյ ի չեօթն տարին,
Մտանէ ի լուծ ուսման և գրին,
Նաև այլ ուրիշ պէս-պէս արուեստին,
Ի պէտս մարմնոյ կան և զբաղին։

Թէ գան հասանին ի տասն տարին,
Լինին որպէս վարդ ի մէջ կոկոնին,

---

15 BD հոգոց D բաժանեն
16 BC չիմ ի B տարերաց CD տարերացն
17 CD մանուկ
19 D Հինկ B անդրանիկին
20 B երկիր
21 D չը գիտէ
24 B ի ստեաց
25 B ի երրորդ
26 D զրուց
28 C սիրտ
29 D ժամելոյ aD չեօթն C տարի
30 BCD Մտանեն
31 a ուրիշ
33 aB հասանեն
34 B Լինի

Հոտ անուշ բուրեն իւրեանց ծնօղին,
Օր ըստ օրէ պայծառանան `ւ յառաջին:

Ժամանեալ ի տասն և յերկուս հասանին,
Ցանկութիւն մարմնոյ ի սիրտն անկանին,
Ի տասն և հնգին միտքն պղտորին,
Յամուսնանալոյ չափն հասանին:

Ի քսան տարին բարքն զօրանան,
Նման գազանի ի յորս կու գնան,
Զերկիւղն աստուծոյ նոքա մոռանան
Եւ ի մարդկանէ ամօթ չունենան:

Լեալ երեսնամեայ՝ կատարեալ մարդ են,
Զհասակն Ադամայ ի յանձին բերեն,
`Ի թագաւորել և իշխել կարեն
Եւ այլ զանազան բանից հասու են:

Խորհուրդ մ՝ այլ ասեմ զթիւ քառասնից,
Սիրտք նոցա տրտմին յոչինչ տաղանդից,
Իզուր խռովին գանձեն ի նիւթից,
Ո՛չ գիտեն, թէ ում մնայ վայելից:

Ծանրանան մեղօք ի յայսմ աշխարհիս,
Թմրին զբազմամբն աստնվորիս,
Ագահեալ գրկեն զանցաւոր բարիս,
Կարծեն սեպհական մնալ ի յայս տիս:

---

35 C անուշ B իւրեան
36 a առաջին
37 D ժամանել BCD չիմ ի B երկուս
38 C Ցանկութիւնք CD ի սիրտ
40 C Համուսնանալոյ
42 B ի որս
44 D 'Ի փխ Եւ BC յամօթ
46 B յԱդամայ
47 aCD յիշխել
48 D 'Ի փխ Եւ BC հասանեն
50 B տաղանդին
51 BCD խռովեն
53 B ի այսմ
54 B աստնորիս C այս տընաւորիս

Կարգաւ հասանեն ի յամս յինից,
Նմանեալ լինին ծառոց պտղալից,
Որդւովք և թոռամբք կան ուրախալից,
Առաջի նոցա խաղան խնդալից։

Հայրական գթով են երախտաւոր
Եւ լինին նոցա որպէս թագաւոր,
Քանզի այժմ եղեն տանուտէր բոլոր,
Բազմեալ են ի տան իբր իշխանաւոր։

Զիր բարեօք Տեառն վաթսունն ելանեն,
Խառն ալեօք և ծեր զինքեանս տեսանեն,
Յամէն հասակէ պատիւ ընդունեն,
Թագաւորք և իշխանք զնոսա մեծարեն։

Ղօղեալ յերկիւղէ մահուն՝ սարսափեն,
Թէ յեւթանասուն յամն հասանեն,
Ի յաշնանային հողմոյն նմանեն,
Յաւք և հեծութիւնք և վերք յաւելեն։

Ճողոպրել ջանան, սակայն ո՛չ կարեն,
Զի դարքն զնոսա բռնութեամբ ձգեն,
Ի գաւազանի վերայ դողդոջեն,
Յանկան մանկութեան և ո՛չ հասանեն։

Մտաց անկանին և խելաց թափին,
Զինչ որ գործեցին, զայն ի միտ չունին,
Անցեալ ժամանակք երազ կու թուին,
Բիւր բանիցն յիշեն հազիւ թէ զմին։

---

56 B ի այս
59 aBD որդովք
60 C Առաջին
66 aBD զինքեանք
67 B Ամէն
68 a ու
69 B սարսափին
70 aD ի՝թանասուն BC ամն
71 B ի աշնանային BC հողմն
72 BC աւել են
74 BC արքն փխ դարքն
79 B Յանցեալ a ժամանակ BD ժամանակն
80 a բանից aBD զմին մին փխ թէ զմին

Յորժամ ի յութսուն տարին ժամանեն,
Կեանք նոցա հարամ, ինքեանք վկայեն,
Ցաւքն ծանրանան և զնոսա նեղեն,
Որ և իսկ բժիշկք օգնել ոչ կարեն։

Նեղին և տրտմին յամէն կողմանէ,
Զի ամէն յօդուածք նոցա խախտեալ է,
Որ ալևորեալ և երկու տակ է
Եւ բոլոր անձամբն յուժոյ թափեալ է։

Շիւարեալ անձամբ, հանգիստ նա չունի,
Ո՛չ ի տընջեան, ո՛չ ի պիշերի,
Ննջել ո՛չ կարէ, յաչքն քուն չունի,
Ո՛չ ելնել շրջիլ, զի կարիք չունի։

Ո՛չ ձեռքն ի գործի, ո՛չ ոտքն ի քայլի,
Բերանն անհամեալ, զի ակռայ չունի,
Նաև վայելուչ ղգեստ չագանի
Եւ թէ ագանի, նայ ծիծաղ լինի։

Զորիւք տարեւոք չորս եղանակին,
Պակասեալ, գնաց աւուրքն նոցին,
Ո՛չ մէճլիս նստին, ո՛չ ի մարդ խառնին,
Ո՛չ խաղան, խնդան և ո՛չ ծիծաղին։

Պէտք մարմնոյն անցեալ, անպիտան լինին,
Եթէ իննսուն տարին հասանին,
Ի դուռն մահու արդէն անկանին,
Իբր ղկիսայրեաց կոճղ անկեալ դնին։

---

81 aD ութսուն
82 BC Նեղեն փխ Հարամ
83 B Ցաւքր CD ծանրացան
84 B բժիշկ
85 B ամէն
86 a օդուածք D օդւածք C են փխ է
90 B և ոչ փխ ոչի
91 C աչքն a չնկնի փխ չունի
92 C ելանել
98 CD Գնաց փխ Պակասեալ B գնաց փխ նոցին
99 D 'ւ ոչ
102 B ինսուն C յիննսուն
104 B կոճղ անկեալ կիսայրեաց

Ջերմութիւնք մարմնոյն խսպառ պակասին,
Միտքն ցնորին և ընդ այլ խօսին,
Աչերն ի տեսից լուսոյն նուազին
Եւ լոյր ականջացն ի բաց բառնին։

Ընդունքն խցեալ, զհոտ չիմանան,
Զգայարանքն ամէն անզգայ դառնան,
Տանջին ակամայ՝ ո՛չ հաճոյանան,
Վասն որոյ ի մահն յօժարանան։

Սարսափիմ ասել, թէ զինչ տի լինան,
Եթէ հասանեն հարիւրն ի լման,
Զորացեալ ծառի տերևի նման,
Անկանին մահուամբ և ի հող դառնան։

Վայելուչ պատկերքն անշքացան,
Գեղեցիկ շինուածք մարմնոյն քակտեցան,
Ելեալ յաշխարհէ մտան գերեզման,
Այլ ոչ երևին, զի անյայտացան։

Տարակոյս մ՚այլ կայ, եղբարք, յետ մահուան,
Եթէ անպատրաստ ոք ի մէնջ գնան,
Պահեալ է նոցա ահեղ դատաստան,
Յորժամ որ Քրիստոս նստի ի յաւետեան։

Բարուն երկնաւոր՝ Քրիստոս թագաւոր,
Աղաչեմ, արա դու զիս զօրաւոր,
Դառնալ ի մեղաց սրտիւս բոլոր,
Թէ երբ գայցեմ յաւետեան, չինիմ գլխիկոր։

---

106 aBD *բնտալ փխ բնդ այլ*
107 CD *լուսոյ։ նուազին*
108 C *ականջոցն*
110 a *Զգայրանք* B *ամէնն*
111 BC *չիք ՝ւ*
112 B *օժարանան*
113 D *Սարսափեմ։ ինչ։ չիք տի* B *լինին*
114 C *հասանին*
119 B *աշխարհէ*
120 BC *և փխ զի* D *անյայտեցան*
121 CD *Տարակուս*
122 C *անպատրաստք* a *չիք ոք* B *ի մէջ*
124 B *ի առեան*
125—128 C *չիք*
128 aB *առեան* a *պուխ ի կոր* D *ի կոր փխ գլխիկոր*

Յրուեա պչար խորհուրդս, որ է դիւական
130 Եւ արա պճոգիս քեզ ասպնճական,
Թէպէտ անպիտան եմ ես ՝ւ անարժան,
Բայց դու գթած ես առ ամենեսեան։

Իւթական մարմինք մեր նոր նորոգին,
Յորժամ գայցէ Տէր փառօք հայրենին,
135 Ցնծան դասք սրբոցն և ուրախ լինին,
Կամարարք չարին ի հուրն մատնին։

Փառք տամք աստուծոյ մեք ամենեքեան,
Օրհնեալ է անունն անբաւ յաւիտեան,
Արար զմեր նախնին պատկերին նման,
140 Դարձեալ նորոգեաց ես պայծառ բան զայն։

Քեզ, Յակոբ երէց, ո՞վ եղ հրաման,
Որ շաղակրատես բանս ի յատեան,
Ջձեզ ապաչեմ, եղբարք ամենայն,
Մի՛ խնայէք ինձ ասել զձայր մեղայն։

7. ՅԱԿՈԲԱՅ ԵՐԻՑՈՒ ԱՍԱՑԵԱԼ ԶՂՋՄԱՆ ԽՕՍՏՈՎԱՆՕՐԷՆ

Յերգոցն Դաւթի սկիզբն արարից,
Բանիւն յեսայեայ խրախոյս բարձից,

---

129 C *խորհուրդն*
130 C *զհոգին*
131 BC *չի՛ ՝ւ*
133 BCD *Իւթականք*
135 B *սրբոց*
136 B *կամարար* C *ի հուր* D *մատնին*
138 B *անուն*
139 C *նախնի*
140 CD *և փխ. ես* B *պայծառանան* BCD-ում 139 և 140-րդ տողերը նա ու առաջ
141 BD *զայդ հրաման* C *զայս հրաման*
142 B *ի առեալ*
143 D *եղբայրք*
144 D *Մեղան*

Խորագիր

A *Նորին Յակոբի ասացեալ զղջման խօստովանօրէն*

Բնագիր

2 A *խրախուս* B *բարձից*

Զեղեկիէլին հուպ սմին եղից,
Զպատուէրն Յիսուսի օրհնաբանեցից։

Առածն Պաւթի այս էր, որ ասէ,
Բաղձանօք սրտին հառաչմամբ գոչէ,
Երանի ասէ և դարձեալ կրկնէ,
Առն, որում զմեղքն աստուած թողցէ։

Կարգէս ի խոնարհ առ բան խրատից,
Եթէ ես ինձէն զմեղս իմ պատմեցից,
Ի ժամ ընդունելի յաղօթս կացից,
Զամպարշտութիւնս իմ դու թողցես ինձ։

Որ այսմ նման զեսայեան առից,
Զանօրէնութիւնդ նախ դու ասա ինձ,
Խօստովանեա իսկ զյանցանսդ գործից
Եւ ես համայնին զայն ընչեցից։

Բերիմ օրինակ զեղեկիէլին,
Որ մեծ յոյս տայ նա մեղանչականին,
Ոչ կամիմ, ասէ, զմահ մեղաւորին,
Այլ երկայնամիտ եմ դառնալոյ նորին։

Քրիստոս ի Պետրոս յորժամ որ էհարց,
Թէ՝ Յօրն քանի՞ ես թողութիւն տաց,
Մի՞, թէ կամ երկու, կամ յեօթն հասայց,
Զդարձեալն ի մեղաց առ իս ընկալայց։

Աւրհնեալ բերանովն պատասխանեաց,
Թէ՝ Զայս ես պատուէր տամ քեզ օրինաց,
Որչափ որ դառնայ մարդն ի մեղաց,
Զդուռն ողորմութեան իմոյն նմա բա՛ց։

---

3 A զեղեկիէլի
5 B է փխ էր
17 B Բերեմ
20 B երկայնամեմ
21 A որժամ
22 A Օրն
23 B յերկու
24 B իմոյ փխ իս

Հայր եմ ստեղծուածոց ես անոխակալ,
Վասն յանցանաց ես չեմ բարկանար,
Յառակ ձեզ եւտու զհարիւրն ոչխար,
Զանառակ որդին զդրամն կորեալ։

Արդ կայք, մանկունք սուրբ ևկեղեցւոյ,
Ցնծացէք հոգւով այսու խորհրդոյ,
Խոստովան լերուք զմեղս մարմնոյ,
Մեղայ ասացէք ի դէմս աստուծոյ։

Նարեկայ վանիցն վարդապետի,
Քաջ հռետորին, սրբոյն Գրիգորի,
Ասացեալ խրատ սակս մեղայի,
Անմոռաց պատուէր յուսացեալ սրտի։

Աստուածապաշտից եղեալ է սահման
Եւ անհնարին ճարակ և դարման,
Փափագող հոգւոց բարելի սեղան,
Զօրաւոր կամուրջ է կենդանութեան։

Յիշեմ զմեղսն ՚ւ ասեմ քեզ մեղայ,
Մեծ բարերարիդ անարգս, մեղայ,
Ծագմանդ լուսոյ խաւարս, մեղայ,
Անբաւ երախտեացդ արդար, և մեղայ։

Ինձ շնորհացդ տուողիդ առաւել մեղայ,
Անհաս պարգեացդ հանապազ մեղայ,
Ստացողիդ յոչէ, ստուգապէս մեղայ,
Գերունակ գոգոյդ անբաւս, մեղայ։

---

29 A իմ փխ եմ B ստեղծուածոց
30 A անցանաց
31 A Առնակ։ հարիւրն
34 B հոգւոյ
35 A խոստով
37 A վարդապետին
39 B վասն փխ սակս
40 A ուսացեալ
42 B անհնարից
45 A զմեղանս B ու փխ ՚ւ
48 A երախտեաց
51 B յոչէից
52 A գերգունակ

Աննուազ լուսոյդ ևննգոդս, մեղայ,
ձաշակման կենացդ բակումս, մեղայ,
Մարմնոյդ աստուծոյ, մահու չափ մեղայ,
Պաշտելի արեանդ, իսկապէս մեղայ։

Սիրոյդ գթութեան, յայտնապէս մեղայ,
երախտաւորիդ, վերըստին մեղայ,
Ապերախտ եղայ, չարաչար մեղայ,
Հոգւով և մարմնով, յիմարս մեղայ։

Անպատկառս ի քէն, տադտկալիս, մեղայ,
Մահ ինձ կամելով, վատթարս, մեղայ,
Անկենդան մահուն, ձաղելիս, մեղայ,
Մեղայ, Տէր մեղայ, դու ինձ ողորմեայ։

Ցրուեա ծածկատես, պի դու կարող ես,
Ջխայթուածս մահու բժշկել կարես,
Ջի ներող, գթած և երկայնամիտ ես,
Թողուլ զյանցանս վասն քո գիտես։

Եւ թէ հայեցեալ մարդասիրեսցես,
Ըստ քում գթութեանդ, որպէս սովոր ես,
Հայեցեալ ի քեզ կողկողիմ և ես,
Հառաչեմ և լամ սարսափելով ես։

Ապա թէ դու զիս անտես առնիցես,
Հերքեալ արտաքսիմ տագնապելով ես,
Ամաչեալ դիմօք պաղատիմ առ քեզ,
Ջի ողորմութեամբ զիս առ քեզ կոչես։

Լսել աղօթիցս աղաչեմ զքեզ,
Մեռելոյս դարձեալ հոգի շնորհեսցես,

---

56 A արեամբդ
57 A այտնապէս
58 A երախտաւորի
60 A Հոգով
63 A ձաղկալիս փխ ձաղելիս
68 A դանձանս
70 A Վասն փխ Ըստ
71 B Նայեցեալ։ կողկողեմ
76 A գոչես

Զի արժան եղեց փառս տալ միշտ քեզ,
Զամենայն աւուրս որչափ որ եմ ես։

Է՛, մեղօք մեռեալ Յակոբ սուտանուն,
Է՞ր դու լրբացար, երբ չես բանիբուն,
Դարձիր ի մեղաց, շինէ հոգւոյդ տուն,
Անցեալ են աւուրքդ, կու գայ գոյժ մահուն։

8. ՆՈՐԻՆ ՅԱԿՈԲԻ ԱՍԱՑԵԱԼ ՈՂՔ ԱՂՕԹԱԿԱՆ

Յիսուս Քրիստոս, ի փրկիչդ ապերսեմ
Եւ զաղետ յանցանաց անձինս պատմեմ,
Յարաժամ հանապազ լալով արտասուեմ
Բժիշկդ իմաստնոց զվերս իմ ցուցանեմ։

Աւգնութիւն ինձ լինել, Տէ՛ր, ի բէն հայցեմ,
Զի ես գթութեամբդ թողութիւն գտցեմ
Թեև ի մի նուագ բիւրս մեղանչեմ,
Այլ ի բէն մարդասէր յուսահատ չեմ։

Կեցո զիս, ոգէսէր, քանզի ես քոյ եմ,
Ի ձեռաց թշնամւոյն քեզ գանկատ առնեմ,
Ի պատրանս նորին մեղօք անկեալ եմ,
Արդ մեղայ քեզ ասեմ և գարձեալ կրկնեմ։

Ողբալով զգազանիսն հրապարակեմ,
Զծածուկ մեքենայսն խայտառակեմ,
Զթագուցեալս ի յոգիս քեզ բացայայտեմ
Եւ պատրանս խաբողին ես ծանուցանեմ։

---

83 A հոգուդ
84 A է փխ են
խոր ագիր
C Յակոբայ երիցու ողբ աղօթական
Բնագիր
2 C չիմ Եւ՝ Զաղետս AB անցանաց B տ՝պատմեմ
3 BC արտասուեմ
6 B քո գթութեամբդ
7 A չիմ ի BC նուագ
8 A ուսահատ
9 AB քանի փխ քանզի
10 AB թշնամոյն
15 A ոգիս C հոգիս

Բնութիւնս կարի տկար է, գիտեմ,
Վասն որոյ պայն ի բեզ ապաստան առնեմ,
Զոսոխին դիմեցումն աստուածոյդ յանձնեմ
Եւ վտանգէ երկիւղին զերծեալ ելանեմ։

Քո բանիւդ, տէր Յիսուս, գործ հրաւիրեալ եմ,
Ընդ յետին մշակաց յայգին մտեալ եմ,
Թեև գործն յարքունի ես ծոյլ գտեալ եմ,
Արա, զի ժամ վարձուն պատարկ չելանեմ։

Ալլև աղ առ ի քէն ես անուանեալ եմ,
Համեմել զայնոսիկ, որ յանձս առեալ եմ,
Թեև ես խորհրդով անհամացեալ եմ,
Ապաչեմ համեմել որքան կոխան չեմ։

Հայրական ի լուսոյդ լոյս կոչեցեալ եմ,
Լոյս ծագեալ այնոցիկ, որ չիսն յանձնեալ են,
Բայց հոգւով և մտօքս խաւարեալ եմ,
Լոյս ծագել ինձ ՝ւ իմոցս ի քէն, Տէ՛ր, հայցեմ։

Արքուն կալ դռնապանս պատուէր առեալ եմ,
Զի ի գալ տանուտեառնդ զգոյշ գտանիցեմ,
Ես ի քուն մահու մեղօք ննջեալ եմ,
Զարթեցո զիս, զի կեցից որքան մեռեալ չեմ։

Նաև տանն աստուածոյ տնտես կարգեալ եմ,
Զկենաց հացն բաշխել յանձին կալեալ եմ

---

16 C քեզ փխ ես
17 A Բնութեամբս ABC կարիք փխ կարի
19 AB դիմեցմունն A յաստուածոյդ անձնեմ
20 C ՝ի B երկիւղ
22 A այգին
25 BC անտանեալ
26 A անձս
28 BC յորքան
30 BC ծագել A անձնեալ
31 B մտօք ես
32 C իմոցն
33 B պատւեր C պատուերեալ եմ փխ պատուէր առեալ եմ
35 BC քունն
36 BC յորքան
38 A անձին

Եւ փոխան կերակրոյ զծառայս հարեալ եմ,
Վասն որոյ ամբաստան քեզ լինելոց եմ։

Այլ առատ շնորհիդ ես յուսացեալ եմ,
Տալոյ ինձ գիտութիւն մինչ ի մարմնի եմ,
Զի զգուեստ տնտեսին ի քէն լսիցեմ
Եւ ի յարկն յաւիտենից տեղ գտանիցեմ։

Յիմարաց հինգ կուսիցն նմանեալ եմ,
Զհոգւոյս ջլապտերն շիջուցեալ եմ,
Տո՛ւր ինձ լոյս ի լուսոյդ, որ աստէն վառեմ
Եւ ի գալ փեսայիդ պատրաստ մտանեմ։

Ի քէն, Տէ՛ր, ակն ունիմ և ոչ երկմտեմ,
Զի դու քաղցր ես բնութեամբ, պայն ես քաջ գիտեմ,
Վասն որոյ բարեխօս առ քեզ առաքեմ,
Զաղաչանս սրբոցն, որ քեզ հաճոյ են։

Էիդ Հօր աստուածոյ փառս վեր առաքեմ
Եւ որդւոյդ Միածնի յերկիր պագանեմ,
Սուրբ Հոգւոյդ ճշմարտի ես ծունր կրկնեմ,
Այժմ և մինչ ի յիտին շունչս հատանեմ։

9. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԾԱՐԱԴՐՈՂԻ ՍԱՂՄՈՍԻՍ, ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵՑԻ, ԱՄԷՆ

Յետ Ադամայ ելանելոյն ի փափկութեան,
Որդիք նորա ընդ անասունս աստ բնակեցան,
Ծնան զաւակս ի վերայ երկրի և բազմացան
Եւ յԱրարչէն իւրեանց նոքա մոլորեցան։

---

40 C են փխ եմ
41 A ուսուցեալ
42 AB մինչդեռ
43 B գովեստ
44 BC յաւիտեանց
46 AB Զհոգոյս AC ջլապտերս
54 A որդոյդ
55 A Հոգոյդ
56 AC չիմ ի

Բայց գթութիւնն աստուածային արարչական,
Ոչ մինչ ի սպառ ետ զնոսա դիւաց կոխան,
Այլ ետ ի սիրտ նոցին խորհուրդս գիտութեան,
ի ճանաչել զաստուածն երկնից խնամող զինքեան։

Ուստի յուսմունս աստուածայինս վարժեցան,
Մաքուր մտօք իմաստութեան հետևեցան,
ի մարմնական զբաղանաց որոշեցան,
ի համութիւն տեղեկութեան գրոց փութացան։

Վասն այնորիկ աստուածային շնորհօք լցան
Եւ սուրբ Հոգւոյն եղեն նոքա ասպնճական
Եւ խօսեցան նովին հոգւով բանք զանազան,
Որպէս հոգին տայր բարբառել նոցա պրան։

Ոմանք զանցեալն պատմէին ի սկսման,
Ոմանք զգալոցն ճառէին զնորին վախճան,
Գուշակէին այլք զգալուստն աստուածական,
Թէ գայ Փրկիչ յաւուրս յետինս ոգոց մարդկան։

Ու ի լրման հին օրինաց գրաւորական,
Առաքեցաւ աստ ի խոնարհ երկնից արքայն,
Ընտրեաց առ իւր յաշակերտացն երկոտասան,
Հոգւով լցոյց և գիտութիւն ետ զանազան։

Ոմն ի հոգւոյն տեղեակ եղև իմաստութեան,
Միսն ընդունակ եղև բանից և գիտութեան,
Այլք հաւատով հզօրացեալ պսակեցան,
Եւ այլք շնորհս առին ցաւոց բժշկութեան։

Այլ ոմն ունի աջողութիւնս զօրութեան,
Միսն՝ շնորհք նախագուշակ տեսողութեան,
Այլք զհոգիս ընտրել կարեն զմաքրական,
Եւ այլք լեզուաց շնորհք ունին խօսել յատեան։

Բ ն ա գ ի ր

13—36 a չիf
14 bC *Հոգոյն*
15 bC *հոգով*
19 DE *այլ*
21 b *յաւուրց փխ ի լրման։ աւուրց փխ օրինաց*
24 DE *Հոգոյ*
25 bC *հոգոյն*
26 DE չիf *և*
32 bCE *այլ* bD *լեզուաց*

Այլ ումն ունի զգիտութիւն Բարգմանութեան,
Ի նոյն Հոգւոյ մեզ պարգեւի այս ամենայն,
Որպէս գրէ Պօղոս ի Թուղթն Կորնթացւոցն,
Թէ սուրբ Հոգին տայ զամենայն վասն օգտութեան:

Ի նոյն շնորհէ եկեղեցիք հաստատեցան,
Պէս-պէս կարգօք և պաշտամամբ զարդարեցան,
Քաղցրանուագ եղանակօք վայելչացան,
Մանկունք սորա զմայլեալ Հոգւով զուարճացան:

Ի տիեզերս համօրէն տարածեալ կան,
Մէջ բազմահոյլ քրիստոնէից նրգ պաշտամանն,
Մատուցանեն տեառն աստուծոյ զբանս օրհնութեան
Եւ ախորժակ ձայնիւ նրգեն յոյժ զանազան:

Ահա որս և մեր եկեղեցիք ի Հայաստան,
Ի պարգեւէ շնորհաց Հոգւոյն ոչ չհանեցան,
Այլ ի նախնեաց ի հարց մերոց շատ ընտրեցան,
Եւ զօրացեալք ի սուրբ Հոգւոյն արիացան:

Նախ զհաւատս ուսուցին ժողովրդեան,
Ըստ աւանդից առաքելոցն, որպէս ուսան,
Խոստովանել զանունն սուրբ Երրորդութեան,
Ըստ Նիկիոյ մեծ ժողովոյն դաւանութեան:

Ապա կարգաց եկեղեցեաց եդին սահման,
Յառաւօտէ մինչև ցերեկ միշտ անխափան,
Կարգ աղօթից ժամատեղաց մեր ևթն անգամ,
Յորում օրհնել զկենսատուն ևն պարտական:

Եւ ըստ ժամու զկարգն աղօթից պատշաճական,
Բանս հաւաքեալ ի գրոց սրբոց աղերսական,
Որով լինին տեառն աստուծոյ միշտ օրհնաբան,
Այլև հայցեն վասն աշխարհի խաղաղութեան:

Այլև ունի եկեղեցի մեր զօրական,
Որ հրաւիրեալ առին զկարգն և զաստիճան,

---

34 D չիf *Հոգւոյ*
36 D *օգնութեան*
41—44 a չիf
43 b *բանս*

Սուրբ հայրապետք և վարդապետք աստուածաբան
եւ պաշտօնեայք նոցին կցորդ և համաձայն։

Մինն հովիւ և առաջնորդ ժողովրդեան,
Միսն խրատիչ և քարոզող նոցա զբան,
Այլքն երգող գանձ, մեղեդիկ և շարական,
Սաղմոսասացք և ընթերցողք յոյժ ժրաջան։

Եւ արտաքոյ նկեղեցւոյս բազում այլ կան,
Ոտանաւորս գեղեցիկ շարադրական,
Հնչեն յականջս լսողաց յոյժ քաղցրաձայն,
Համեղ բանիւ յարմարաւոր `ւ ախորժական։

Զորս ի վերայ քրիստոսական տնօրէնութեան,
Զորս ի վարուց առաքինեացն պատմութեան,
Զայլս ընթացից լուսաւորացն շարժութեան,
Կամ աշխարհի զորպիսութիւն վարուց մարդկան։

Ոմանք հոգւով զհոգևոր բանս խօսեցան,
Յորմէ բազումք ի չար գործոցն զղջացան,
Այլք զսիրոյ մարմնաւորիս բարբառեցան,
Որ ի խրախճանս ըմպելեաց ուրախանան։

Իսկ հուսկ յետնոց յետնեալս ես, քան զամենայն,
Բորբոքեցայ վառեալ ի սէր նուագերգութեան,
Վարանէի թախծեալ ոգւով ի բազում ամ,
Թէ գինչ ծողից յետ վաղճանի իմոյ յիշման։

Ապայ տեսի ի յայլասեռս Սաղմոսարան,
Էր շարադրեալ ոտանաւոր յարմարական,
Յոգևահանճար իմաստիւք լի և խորական,
Լուծեալ ի նմա զդժուարիմաց բանս խրթնական։

Եւ ես չէի վարժ և հմուտ իմաստութեան,
Ո՛չ ունէի միտք կորովի յիս բնական,
Զի շինէի բանս ի մտաց առանց հիման,
Կամ հաւաքեալ ժողովէի խորհրդական։

Վասն այսորիկ ի ձեռս առի ես գաւազան,
Ինձ առաջնորդ և ուսուցիչ զբանս Դաւթեան,
Շարադրեցի ոտանաւոր ես զամենայն,
Զհարիւր `ւ յիսուն փոխ սաղմոսին զերգն ի լման։

Ընծայեցի բանասիրաց վասն օգտութեան,
Եթէ լիցի ընդունելի որ սմա բան,
Յայնժամ երգով եղանակեն մտառւական
Եւ զանարժանս արժան առնեն նոքա յիշման։

Արդ մի՛ լիցի բանս այս ձեզ պարսաւական,
Մի՛ եղիցի ձեր առաջի իբր զխոտան,
Քան զի գտանէք փոքր ի շատէ բան ինչ լուծման,
Որք խաւարեալ մտաց մարդկան սոքա լոյս տան։

Ոչ ի յիմոյ մտաց սոքա ի յոտք ելան,
Այլ ի շնորհաց պարգեւղէն շարադրեցան,
Ի վերայ սուրբ մարգարէին եղեալ հիման,
Որ էր լեզու Հոգւոյն սրբոյ և բնակարան։

Ես, որ տրուպս եմ յաշխարհի, քան զամենայն,
Խոնարհ Հոգւով զձեզ աղաչեմ զամենեսեան,
Զի ընկալջիք զբանս դուշնաքեայ որպէս լումայն,
Որ ի սմա տողիւ չափոյ ի կարգ անկան։

Եւ յիշելոյ արժան արէք զիս զանարժան,
ԶՅակոբ երէցս Թոխաթցի տաժանական,
Որ եմ պանդուխտ յայսմ աշխարհի տարաբնական,
Լեհաց երկիրն, որ նոր քաղաքս՝ Զամօսցան։

Այլ և զծնօղսն իմ յիշեցէք ի ժամ հայցման,
Զմեծահասատ զհայրն իմ Ալթուն, զմայրն իմ Աննան,
Ո՛չ ժամանեալ եղև նոցա ի հասակ ծերութեան,
Այլ ի միջակ տիս հասակի վախճանեցան։

Եւ զվարժապետն իմ բազմերախտ, արիական,
ԶԱյվաքենց Յակոբ անուն սուրբ քահանայն,
Իմաստիւք լի զերակատար ի դիտութեան,
Հոգւով մաքուր, մարմնով ճգնող ի ծերութեան։

Եւ զամենայն զմերձաւորս իմոյ արեան
Եւ զժողովուրդ այս քաղաքիս զամենեսեան,
Ջծեր և զտղայ, զերիտասարդ և զկուսան
Եւ որք եղեալ են հաւատով ի զերեզման։

Ի թվականի մեծ տումարիս Աբեթական,
Որ էր հազար եւթանասուն, այլ և վեց ամ,
Ես մեղաւորս շարադրեցի սակաւ զայս բան,
Ընծայեցի բանասիրաց ի վայելման։

Զի ևղիցի ինձ չիշատակ սա անվախճան
Եւ աղօթող առ տէր աստուած միշտ անխափան,
Այլ և լիցի փառաբանող երրորդութեան,
Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն մինչ յաւիտեան։

Այլ և խնդրեմ ի ձէնջ, ևղբարք, աղերսական,
Յաղօթս ձեր չանձնեմ զանձն իմ մեղանչական,
Միթէ լիցի Հոգւոյս ներումն քաւութեան
Եւ ընդ արդարսն դասակցիլ ի հանգստեան։

Անուն դիցուք գրոյս այսմիկ պատշաճական,
J = 10077, թերթ 72բ—78ա։
K = 5668, թերթ 64բ—66ա։
L = 3411, թերթ 61ա—65ա։
M = 7714, թերթ 93ա—99ա։

---

* Ճստվածատուր Հննեցու կատարած աշխատանքի մասին առաջին խոսքն ասել է Ա. Մնացականյանը. «Միջնադարում, հնից եկող «աւետիսների» հիման վրա, նրանց մշակմամբ և նրանց նմանութեամբ, ստեղծվել են հատկապես քրիստոնեական ոգով հորինված «աւետիսներ», որոնց մեջ իշխող ձևը մշակված է Ճստվածատուր Հննեցու կողմից» (նշված աշխատութիւն, էջ 590)։

N = 9425, թերթ 29ա—34բ:

O = 9597, թերթ 145ա—148բ:

P = 9597, թերթ 212բ—216ա:

q = «Կոունկ Հայաց աշխարհին», 1863, էջ 68—70: Աղբյուրը չի հիշատակված:

r = Գ. Սրվանձտյան, Մանանայ, էջ 272—274: Աղբյուրը չի հիշատակված:

s = Ա. Տեկանց, Հայերգ, էջ 74—76: Աղբյուրը չի հիշատակված:

t = «Մասիս», 1886, № 3808, էջ 615—616: Հրատարակել է Հ. Էկինյանը՝ «Խաչատուրի է ասացեալ» նշումով, որ նշանակում է, թե գրի է առել այդ երգչից:

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 252ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 792):

Բ. Վիեննա, ձեռ. № 531, թերթ 99բ (նույն տեղում, էջ 1001):

Գ. Վիեննա, ձեռ. № 663, թերթ 68ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 154):

Դ. Վիեննա, ձեռ. № 671, թերթ 35ա (նույն տեղում, էջ 163):

Ե. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 265ա (նույն տեղում, էջ 678):

Զ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 81բ (նույն տեղում, էջ 897):

Է. Վիեննա, ձեռ. № 979, թերթ 47բ (նույն տեղում, էջ 566):

Ը. Երուսաղեմ, ձեռ. № 1417, թերթ 416ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 77):

Թ. Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 289ա—296ա (տե՛ս Կյուլեսերյան, Ցուցակ Ղալաթիայի, էջ 892):

Ժ. Նույն ձեռագրում, թերթ 424ա—431ա (նույն տեղում, էջ 896):

ԺԱ. Զմմառ, ձեռ. № 604, թերթ 169ա (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 211):

ԺԲ. Բրիտանական թանգարան, հայերեն ձեռ. № 108, թերթ 260ա (տե՛ս Conybeare, A Catalocue, էջ 280):

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 23—27: Հրատարակված է E աղբյուրից:

բ) Նույն տեղում, Գ պրակ, էջ 56—63: Առաջնի վերահրատարակությունն է: Տողատակում տրված են A օրինակի տարբերությունները:

գ) Մ. Մկրյան, XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 171—175: Արտատպություն է «Նոր ժողովածուի» Գ պրակից:

դ) «Մարգարիտներ հայ քնարերգության», Ա հատոր, էջ 211—216: Արտատպություն է «Նոր ժողովածուի» Գ պրակից:

ե) «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 198—200: Հրատարակել է Ա. Տեր-Ստեփանյանը: Օգտագործել է «Նոր ժողովածուում» ապագրված օրինակները և նկատելով գրանց ու մեր O և H աղբյուրների միջև եղած տարբերությունները (տների տարբեր քանակ ու դասավորություն) և հատկապես այն, որ բնագրերն ավարտվում են տարբեր տներով, եկել է այն եզրահանգման, թե «այս երկու տարբեր վերջնատները ցույց են տալիս, որ «Ծով աչք...ն» էլ իր հերթին միաձուլումն է երկու տարբեր տաղերի, քանի որ մի տաղի համար հեղինակը տարբեր վերջնատներ չէր գրի» (տե՛ս նույն տեղում, էջ 194—195): Արդյունքը եղել է այն, որ ձեռքի տակ

ունեցած նյութը կիսելով՝ Տեր-Ստեփանյանը տաղի տարբեր հատվածները հրատարակել է որպես երկու տարբեր ոտանավորներ։ Նա մոռանում է, որ այդ «վերջնատներից» ոչ մեկը հեղինակի գրածը չէ, քանի որ ձեռքի տակ չունենք ինքնագիրը։ Հայտնի է, թե բազմաթիվ օրինակներով մեզ հասած ոտանավորներում ինչպիսի մեծ թվով փոփոխություններ են մտցնում գրիչները։ Ընկնելով թյուրիմացության մեջ նա չի նկատում, որ այսպես կոչված «երկրորդ տաղի» 13-րդ տունը կազմված է «առաջին տաղի» 12-րդ տան տարընթերցվածներից, և որ այդ «երկու տաղերի» մեջ կրկնվում է նույն «Հայ իմ աննման, խիստ աննման ես» սկսվածքով տունը։

Հեղինակի անունը «Ղազար Սեբաստացի» ձևով պահպանվել է միայն A, L աղբյուրներում և Վիեննայի ձեռագիր օրինակների խորագրերում։ Աղբյուրների մեծ մասում հիշատակվում է միայն «Ղազար» անունը։ S օրինակում հիշատակվում է ոմն Սաֆար, բայց զգացվում է, որ սա ոչ թե հեղինակի, այլ ասացողի անունն է։ Այս օրինակը թերի է, սկսվում է 15-րդ տնով և «Սաֆար» անունն էլ հիշատակվում է սկզբում, մինչդեռ հայտնի է, որ միջնադարյան բանաստեղծներն իրենց անունները երբեք չեն հիշատակում ոտանավորի առաջին տողերում։ Ի զեպ՝ իր մեջ այդ անունը պարունակող տողի տաղաչափությունը խախտված է։ Եթե մյուս օրինակներում տողն ունի «Ծերիս ողորմեա, այ իմ լոյս երես» ձևը, ապա այստեղ կարգում ենք. «Ծեր Սաֆարիս ողորմեա, ա՛յ իմ լոյս երես»։

Այս ստեղծագործությունը, որն իր բնույթով նման է սիրային խաղիկներին, ըստ երևույթին, շատ տարածված է եղել, հնարավոր է, որ սրա առանձին հատվածներ երգվել են։ Դրա համար էլ բացի մեզ հասած մի քանի հիմնական օրինակներից, մյուսները, թվում է, գրի են առնված բանավոր աղբյուրներից։ Սրանով պիտի բացատրել նաև, որ մի շարք աղբյուրներում փոփոխված է տների հաջորդականությունը, որոշ տների առանձին տողեր հայտնվել են բոլորովին այլ տներում, իսկ որոշ տներ «հարբստացել» են մեզ չհասած այլ տներից պոկված հավելյալ տողերով։

Աղբյուրները բաղդատելով նկատում ենք.

Ա. L օրինակը համընկնում է A օրինակի հետ և, հավանաբար, ծագում է նրանից։

Բ. O օրինակը ծագում է H օրինակից։ Սրանցում նույնն են հավելյալ տները, տարընթերցվածների մեծ մասն ու, նույնիսկ, սխալները։

Գ. C, F, δ, M, P օրինակներն ունեն նույն հավելյալ տները, բայց տարընթերցվածներով նման չեն միմյանց։ Այստեղից կարելի է ենթադրել, թե սրանք նույն նախ-օրինակի տարբեր գրառումներ են։

Դ. Թեև E և q օրինակները նույն պակասներն ունեն և երբեմն նաև նույն տարընթերցվածները, սակայն սրանցում կան նաև զգալի տարբերություններ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, թե q օրինակի հրատարակիչը ձեռքի տակ ունեցել է ոչ թե E օրինակը, այլ մեկ այլ օրինակ։

Ե. Տների քանակով և դասավորությամբ առանձնանում են աղբյուրների երկու խումբ։ Առաջին խումբը կազմում են A, J, L, M, P, երկրորդը՝ B, D, E, H, δ, O աղբյուրները։

Զ. F և G օրինակներն ամենահներն են, բայց դժբախտաբար շատ են թերի։

Է. N և P օրինակները ուշ շրջանի արտագրություններ են և ամենամեծ թվով տներն են պարունակում։

Սրանցից այն տպավորությունն է ստացվում, թե գրիչների ձեռքի տակ եղել են մի շարք աղբյուրներ, որոնցից նրանք կազմել են համահավաք բնագիր։

2. ՆՈՐԻՆ ՂԱԶԱՐՈՒ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ ԱՄԱՑԵԱԼ (էջ 107)

(«Ուներ ունիս զալմով քաշած»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 156բ—157ա։

Այլ օրինակներ

Ա. Ղալաթիա, ձեռ. № 154, թերթ 258ա, «Տաղ սիրոյ» խորագրով (տե՛ս Կյուլեսերյան, *Ցուցակ Ղալաթիայի, էջ 982)։*

Բ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 273ա, «Տաղ սիրոյ» խորագրով (տե՛ս Տաշյան, *Ցուցակ, էջ 793)։*

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է Ա. Տեր-Ստեփանյանը (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 200)։

Բանաստեղծությունը Ղազար Սեբաստացուն վերագրելու հիմքը № 10208 ձեռագրի օրինակի խորագիրն է՝ «Նորին Ղազարու վասն սիրոյ ասացեալ», որին նախորդում է նրա «Ծով աչք, ամ քանի նայիս խոլորով» տաղը (այս փաստն առաջինը նկատել է Ա. Մնացականյանը, տե՛ս «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971, էջ 96—126)։

Անանուն (Ա)

ՏԱՂ ՍԻՐՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ (էջ 109)

(«Քանի որ տեսնում զքեզ հեռանց»)

Օգտագործված աղբյուրներ

A = *10050, թերթ 366ա—367բ։*
B = *3081, թերթ 28ա—29ա։*
C = *3411, թերթ 56ա—57ա։*
D = *2394, թերթ 206բ—207ա։*
E = *10077, թերթ 67բ—69բ։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 253բ (տե՛ս Ոսկյան, *Ցուցակ, հա. Բ, էջ 289)։*

Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 137ա, «Տաղ սիրոյ և ուրախութեան ամենայն մարդկան» խորագրով (նույն տեղում, էջ 675)։

Գ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 84ա (նույն տեղում, էջ 897)։

Դ. Բրիտանական թանգարան, հայերեն ձեռ. № 108, թերթ 258ա (տե՛ս Congbeare, A Catalogue, *էջ 280)։*

Եղել է նաև Երուսաղեմի № 1455 ձեռագրում (Մատենադարան, մանրաժապավեն № 916), քանի որ ձեռագրի տաղերի ցանկում բերված է առաջին տողը։ Սակայն ձեռագրից թերթեր ընկած լինելու պատճառով չի պահպանվել։

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 20—21։ Հրատարակված է B *աղբյուրից։*

բ) «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 201: Հրատարակել է Ա. Տեր-Ստեփանյանը B աղբյուրից: Նկատելով, որ բնույթով ու բանաստեղծական հնարանքներով շատ է նման «Ծով աչք...» սկսվածքով ոտանավորին, հրատարակիչն առանց բանասիրական կռվանների վերագրում է Ղազար Սեբաստացուն:

Այս և սրան հաջորդող երեք անանուն ոտանավորների ծագման մասին կարող ենք ասել, թե հնարավոր է, որ Ղազար Սեբաստացու «Ծով աչք...» սկսվածքով ոտանավորը ժամանակին ավելի ընդարձակ է եղել, քան է մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում: Չի բացառվում նաև, որ դա սիրո խաղիկների նման ժողովրդական շարք է, իսկ Ղազար Սեբաստացին՝ մշակողներից մեկը, թերևս ամենատաղանդավորը: Հետագայում այլևայլ հեղինակներ նույնպես մշակել են ժողովրդական նյութը՝ օգտագործելով նաև Ղազար Սեբաստացու ոտանավորը, հարազատ մնալով նրա ոգուն և փոխ առնելով բանաստեղծական հնարանքները, իսկ երբեմն նաև առանձին տողեր ու ամբողջական տներ:

Անանուն (Բ)

ՆՈՐԻՆ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ (էջ 111)

(«Բաներս քեզ ասեմ, ինձ մտիկ արա»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10050, թերթ 368ա—369բ:
B = 3081, թերթ 29ա—29բ:
C = 3411, թերթ 57ա—58ա:
D = 10077, թերթ 69ա—70բ:
E = 7709, թերթ 85ա—86ա:

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 45ա, «Նորին վարդապետ Ջուղայեցի, վասն ուրախութեան» խորագրով (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 677):

Բ. Բրիտանական թանգարան, հայերեն ձեռ. № 108, թերթ 258բ (տե՛ս Conybeare, A Catalocue, էջ 280):

Եղել է նաև Երուսաղեմի № 1455 ձեռագրում (Մատենադարան, մանրաժապավեն № 916), քանի որ ձեռագրի տաղերի ցանկում բերված է առաջին տողը: Սակայն, ձեռագրից թերթեր ընկած լինելու պատճառով չի պահպանվել:

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 22—23: Հրատարակված է B աղբյուրից:

բ) «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 201: Հրատարակել է Ա. Տեր-Ստեփանյանը B աղբյուրից. ինչպես այս, այնպես էլ սրան հաջորդող երկու ոտանավորները ևս անվերապահորեն համարելով Ղազար Սեբաստացու ստեղծագործությունները՝ հիմնականում նկատի ունենալով այն, որ սրանք մի շարք ընդհանրություններ ունեն «Ծով աչք...» սկսվածքով ոտանավորի հետ և վերջինիս տներից մի

քանիսը մտել են սրանց մեջ։ Բացի դրանից, այս ոտանավորի խորագրում կարդալով «Նորին» բառը և նկատելով, որ նույն ձեռագրում զետեղված է նաև Ղազար Սերաստացու «Ծով աչքը...», Ա. Տեր-Ստեփանյանը գրում է. «Ուստի պարզ է, որ այս երկու տաղերը միևնույն հեղինակին են պատկանում» («Բանբեր Երևանի համալսարանի», էջ 194)։ Այս կռվանը ևս մեզ համոզիչ չի թվում ոտանավորը Ղազար Սերաստացուն վերագրելու համար, մանավանդ որ հիշյալ ձեռագրում այս ոտանավորը զետեղված է ոչ թե «Ծով աչքից...» հետո, այլ նրանից առաջ։

Հեղինակի ինքնության մասին մեր կարծիքը տե՛ս «Քանի որ տեսնում զքեզ հեռևանց» սկսվածքով ոտանավորի ծանոթագրության մեջ։

Անանուն (Գ)

ԴԱՐՁԵԱԼ ՏԱՂ ՍԻՐՈՅ (էջ 114)

(«Քո սէրդ իմ սրտիս պաղչայ կուլիստան»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10050, թերթ 366բ—368ա։
B = 3081, թերթ 29բ—30ա։
C = 3411, թերթ 58ա—59ա։
D = 10208, թերթ 165բ—166բ։
E = 2394, թերթ 184ա—186ա։
F = 5668, թերթ 66ա—67ա։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 137բ (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 675)։

Բ. Բրիտանական թանգարան, հայերեն ձեռ. № 108, թերթ 259բ (տե՛ս Conybeare, A Catalocue, էջ 280)։

Եղել է նաև Երուսաղեմի № 1455 ձեռագրում (Մատենադարան, մանրաժապավեն № 916), քանի որ ձեռագրի տաղերի ցանկում բերված է առաջին տողը։ Սակայն ձեռագրից թերթ ընկած լինելու պատճառով չի պահպանվել։

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 24—25։ Հրատարակված է B աղբյուրից։

բ) «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 202։ Հրատարակել է Ա. Տեր-Ստեփանյանը։

Հեղինակի ինքնության մասին տե՛ս «Քանի որ տեսնում զքեզ հեռևանց» սկսվածքով ոտանավորի ծանոթագրությունը։

ՏԱՂ ՍԻՐՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ (էջ 117)
(«Մեր Տէրն է բազմեր ի բարձր աթոռին»)

Օգտագործված աղբյուրներ

A = *10050, թերթ 369բ—372ա:*
B = *3081, թերթ 30ա—31բ:*
C = *7707, թերթ 33ա—36ա:*
D = *7709, թերթ 88ա:*
E = *3411, թերթ 59ա—61ա:*
F = *7193, թերթ 147ա—149բ:*
G = *9600, թերթ 58ա—59բ:*
H = *9536, թերթ 81ա—82բ:*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 255բ (տե՛ս Ոսկյան. Ցուցակ, հտ. Բ, էջ 289):
Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 97ա (նույն տեղում, էջ 673):
Գ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 701ա (տե՛ս Սուրմեյան. Մայր ցուցակ Հալեպի, հտ. Բ, էջ 88):
Դ. Բրիտանական թանգարան, Հայերեն, ձեռ. № 108, թերթ 250ա (տե՛ս Conybeare, A Catalogue, *էջ 279):*

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 25—27: Հրատարակված է B աղբյուրից:
բ) «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 203: Հրատարակել է Ա. Տեր-Ստեփանյանը B աղբյուրից:
C օրինակի խորագրում կա Գրիգորիս Ագթամարցու անունը: Սա առիթ է տվել բանասիրությանը անդրադառնալու հեղինակի ինքնության հարցին: Ն. Բյուզանդացին ոտանավորը վերագրել է Գրիգորիս Ագթամարցուն: Ն. Ակինյանը, նկատելով, որ «տաղս հրապարակ եւած է անանուն», այն կարծիքն է հայտնել, թե «անոր երգիչը ազգուած է Ագթամարցւոյ տոհմէն» (Ն. Ակինյան. Գրիգորիս Ա. կաթողիկոս Ագթամարցի, էջ ՃԻԲ): Կ. Կոստանյանցը գրում է. «Այս տաղն համեմատելու է Սերաստացի Ղազարի «Ծով աչք» տաղի մի քանի տների հետ» (Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 27): Այսինքն՝ ուշադրություն հրավիրելով «Ծով աչք...» սկսվածքով ոտանավորի և սրա նմանության վրա, միաժամանակ նա զգուշանում է որևէ անվերապահ կարծիք հայտնել հեղինակի ինքնության մասին: Մ. Ավդալբեգյանի կարծիքով ոտանավորը ո՛չ Գրիգորիս Ագթամարցունն է և ո՛չ էլ Ղազար Սերաստացունը (Համմ. Գրիգորիս Ագթամարցի, էջ 308):

Հեղինակի ինքնության մասին տե՛ս «Քանի որ տևանում դքեզ Հեռանց» սկսվածքով ոտանավորի ծանոթագրությունը:

ՏԱՂ ՍԻՐՈՅ ԽԻՍՏ ԳԵՂԵՑԻԿ (էջ 122)

(«Այրէն մինչև ի քէն գանկատ ունեմ ես»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 14ա—15բ:
B = 7707, թերթ 281ա—282ա:
B′ = Վենետիկ, ձեռ. № 730:
C = 3081, թերթ 244բ—245ա:
C′ = Վենետիկ, ձեռ. № 1371:
D = 9322, թերթ 91ա—92ա:
D′ = Վենետիկ, ձեռ. № 529:
E = 10208, թերթ 132բ—133ա:
F = 7714, թերթ 112ա—114ա:
G = 9600, թերթ 68ա—69ա:
H = 7715, թերթ 2ա—2բ:
L = 9271, թերթ 110բ—111բ:
M = 9597, թերթ 148բ—150ա:

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 20ա, «Տաղ սիրոյ» խորագրով (տե՛ս Ոսկյան. Ցուցակ, հտ. Բ, էջ 671):

Բ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 75ա—76ա, «Տաղ սիրոյ գեղեցիկ» խորագրով (նույն տեղում, էջ 897):

Գ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 701ա (տե՛ս Սուրմեյան. Ցուցակ Հալեպի, էջ 88):

Այլ հրատարակություններ

ա) Ա. Չոպանյան. Հայ էջեր, էջ 26—29: Քննական բնագիր է՝ կազմված Մատենադարանի № 10208 և Վենետիկի №№ 730, 1371 և 529 ձեռագրերի օրինակների բազդատությամբ: Քանի որ Ա. Չոպանյանի օգտագործած Վենետիկի ձեռագրերը մեր ձեռքի տակ չեն եղել, օգտագործել ենք նրա ցույց տված տարբնթերցվածները և գրանք դիտել որպես B′, C′, D′ օրինակներ:

բ) Մ. Մկրյան. XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 168: Արտատպություն է «Հայ էջերից»:

գ) Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 223—225: Քննական բնագիր է՝ կազմված A, B, C, F, H, L, M օրինակների բազդատությամբ: Առանց բանասիրական որևէ կովանի երկբայելիորեն վերագրված է Հովհաննես Թլկուրանցուն:

Մեր ձեռքի տակ եղած հնագույն օրինակը գրված է 1556 թ.: Ենթադրում ենք, որ հորինված պիտի լինի ԺԶ դարի առաջին կեսին:

Տողերի սկզբնատառերն այբբենական կարգով են:

Անանուն (Զ)

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՍԻՐՈՅ ԽԻՍՏ ԳԵՂԵՑԻԿ (էջ 126)

(«Ֆիրղանայ պաշլատում պոպպուլար կիպի»)

Օգտագործված աղբյուրներ

A = *8968, թերթ 12ա—13բ։*
B = *10208, թերթ 153բ—154ա։*
C = *7714, թերթ 99բ—102ա։*
D = *7193, թերթ 107բ—109բ։*
E = *8129, թերթ 62ա—64ա։*
F = *9597, թերթ 62ա—63բ։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 70բ (տե՛ս Ոսկյան. Յուցակ, Հտ. Բ, էջ 896)։
Բ. Նույն ձեռագիրը, թերթ 120ա (նույն տեղում, էջ 898)։
Գ. Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 123ա (տե՛ս Կյուլեսեբյան. Յուցակ Ղալաթիայի, էջ 885—886)։
Դ. Բրիտանական թանգարան, Հայկերեն ձեռ. № 108, թերթ 255բ (տե՛ս Conybeare, A Catalogue, *էջ 279)։*

Հրատարակվում է առաջին անգամ։

Մեր ձեռքի տակ եղած հնագույն օրինակը գտնվում է 1556 թ. գրչության ձեռագրում, ուստի ոտանավորը հորինված է դրանից ավելի վաղ, հավանաբար՝ ԺՉ դարի առաջին կեսին։

Դատելով լեզվաոճական որոշ նկատություններից հնարավոր է ենթադրել, որ այս և նախորդ՝ «Տաղ սիրոյ խիստ գեղեցիկ» խորագրով ոտանավորները միևնույն՝ մեզ անծանոթ, հեղինակի գրչին են պատկանում։

Անանուն (է)

ԱՅԼ ՏԱՂ ՍԻՐՈՅ ԱՍԱՑԵԱԼ (էջ 129)

(«Այբէն մինչև ի էն»)

Օգտագործված աղբյուրներ

A = *8968, թերթ 167ա—169բ։*
B = *10208, թերթ 133բ—135ա։*
C = *7715, թերթ 19ա—20ա։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 73ա—75ա (տե՛ս Ոսկյան. Յուցակ, Հտ. Բ, էջ 897)։

Բ. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 64ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 795):

Հրատարակվում է առաջին անգամ:

Տնագլուխ տառերն այբբենական կարգով են:

Մեր ձեռքի տակ եղած հնագույն օրինակը գրված է 1556 թ.: Ենթադրում ենք, որ հորինված է ԺԶ դարի առաջին կեսին:

Անանուն (Ը)

ՈՂԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՎԱՍՆ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ (էջ 137)

(«Աստուածածին կոյսն Մարիամ»)

Օգտագործված ագրյուրներ

A = *8968, թերթ 111բ—115բ:*
B = *2672, թերթ 142ա—143ա:*
C = *2394, թերթ 69ա—74բ:*
D = *2361, թերթ 311ա—313բ:*
E = *424, թերթ 122բ—123բ:*
F = *7708, թերթ 6ա—7բ:*
G = *423, թերթ 157բ—158բ:*
H = *8274, թերթ 56ա:*
J = *8655, թերթ 32բ—33ա:*
L = *3504, թերթ 59ա:*

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 671, թերթ 10ա, «Տաղ ազնիւ» խորագրով (տե՛ս Ոսկյան. Ցուցակ, հտ. Բ, էջ 163):

Մատենագարանի «Ցուցակ ձեռագրացում» գրված է տաղերգու Եսայու անվան տակ (տե՛ս հտ. Ա, էջ 1490), սակայն Եսային այս երկի ոչ թե հեղինակն է, այլ երգողներից մեկը, քանի որ օրինակի վերջում կա «Երգողի բանիս տէր Յեսայիս» տողը: «Երգող» բառը կա նաև D և L օրինակներում: A և E օրինակներում «երգող» բառի փոխարեն՝ «զգծողս», իսկ C օրինակում՝ «գրողիս»: Երկու դեպքում էլ խոսքը գրչի մասին է: Իսկ B օրինակում գրիչը, որ Ստեփանոս Թոխաթցին է, հիշատակվում է իր անունով.

Ինձ ողորմեա գծողի գրիս,
Ստեփանոսի խեղճ մեղաւորիս:

Հնագույն ընդօրինակությունը պահվում է 1556 թ. գրչության ձեռագրում: Այստեղից ենթադրում ենք, որ հորինված է ԺԶ դարի առաջին կեսին:

1. ՏԱՂ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՐԿԱՆ (էջ 145)

(«Այսօր ութեմբ. ձեզ աւետիս»)

Օգտագործված աղբյուրներ

A = *3081, թերթ 259ա—259բ:*
B = *8605, թերթ 89ա—89բ:*
C = *7193, թերթ 77ա—78բ:*
D = *7714, թերթ 134ա—136ա:*
E = *10006, թերթ 70բ—71բ:*
f = *«Ճոպաքար», 1859, էջ 45—46: Աղբյուրը չի հիշատակված:*

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 312ա (տե՛ս Ոսկյան. Յուցակ, հատ. Բ, էջ 679):

Այլ ուսումնասիրություններ

ա) Մ. Միանսարյան. *«Քնար հայկական», էջ 428—430: Արտատպություն է «Ճոպաքարից», բայց անխորագիր:*

բ) Կ. Կոստանյանց. *«Նոր ժողովածու», Բ պրակ, էջ 49—52: Արտատպություն է «Ճոպաքարից»: Խորագիրը բերված է ծանոթագրության մեջ՝ «Մարտիրոս Խարատարցւոյ տաղ ուրախութեան»:*

գ) *«Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 333—336: Ձեռագիր (բացի E աղբյուրից) և տպագիր աղբյուրների հիման վրա կազմված քննական բնագիր է, հրատարակել է տողերիս հեղինակը:*

Տողերի սկզբնատառերը մեկընդմիշտ այբբենական կարգով են:

2. ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆՈՅ ԵՒ ԳԻՆՈՅ. ՀԱՒԱՄԱՐ ԱՄԵՆԱՅՆ (էջ 148)

(«Այսօր խմենք բաղձր և յորդոր»)

Օգտագործված աղբյուրներ

A = *3081, թերթ 9բ—10ա:*
B = *6605, թերթ 87բ—88բ:*
C = *3411, թերթ 14բ—16ա:*
D = *7711, թերթ 122ա—123բ:*
e = *«Բաղմավէպ», 1875, էջ 106: Աղբյուրը չի հիշատակված:*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1942, թերթ 311ա (տե՛ս Ոսկյան. Յուցակ, հատ. Բ, էջ 679):
Բ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 107բ, «Տաղ վասն գինոյ «Օգրայի» խորագրով (նույն տեղում, էջ 391):

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 47—49։ Արտատպություն է «Բազմավէպից»։

բ) «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 330—333։ Չեռագիր և տպագիր աղբյուրների հիման վրա տողերիս հեղինակի կազմած քննական բնագիրն է, որը և վերահրատարակվում է։

Ինչպես այս, այնպես էլ «Տաղ հարսանեաց և ուրախութեան, բնտիր և գեղեցիկ», «Տաղ և օրհնութիւն տան և ուրախութեան», «Տաղ ի տես սիրելեաց և հեռաւորաց ասա» ոտանավորներում, որոնք հետևում են սրան, հեղինակի անունը պահպանված է միայն «Մարտիրոս» ձևով։ Որ այս Մարտիրոսը Խարասարցին է, առաջին անգամ նկատել է Կ. Կոստանյանցը (տե՛ս Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 49 և Դ պրակ, էջ 67—68)։ Այս, ինչպես նաև 5, 6, 7, 8, 9, 10-րդ տաղերի կապակցությամբ հեղինակի ինքնության մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածում. «Բանբեր մատենադարանի, 1971, № 10, էջ 315—322։

Տողերի սկզբնատառերը (բացի կրկնակ տողից) այբբենական կարգով են։

3. ՏԱՂ ԿՆՔՏՈՒՔԻ ԵՒ ՏՂԱՐՈՒՔԻ, ԿՆՔԱՀՕՐ ԵՒ ՍԱՆԻ (էջ 150)

(«Աստուած օգնէ այս կնքահօրն և իւր սանին»)

Օգտագործված աղբյուրներ

A = 7707, թերթ 24բ—26բ։
B = 3411, թերթ 27ա—28բ։
C = 3081, թերթ 13ա—13բ։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 315ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 679)։

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Դ պրակ, էջ 22—23։ Բնագիրը հանված է C աղբյուրից։

բ) «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 336—338։ Չեռագիր աղբյուրների հիման վրա տողերիս հեղինակի կազմած քննական բնագիրն է, որը և վերահրատարակվում է։

Տողերի սկզբնատառերը (բացի կրկնակ տողից) այբբենական կարգով են։

Տաղի վերջում հեղինակի անվան Մարտիրոս Ղարաճարսի ձևը երկբայելու առիթ չի տալիս, քանի որ Ղարաճարը Խարասար բնակավայրի անվան ձևերից մեկն է և կիրառվել է բավական հաճախ։

4. ՏԱՂ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ, ԸՆՏԻՐ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ (էջ 152)

(«Աստուած օգնէ բազաւորին»)

Օգտագործված աղբյուրներ

A = 33, թերթ 153ա—154ա։
B = 3081, թերթ 11բ—12բ։

C = 3411, թերթ 21ա—22բ։
D = 9271, թերթ 49բ—50ա։
E = 9597, թերթ 63բ—65ա։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 78ա (տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 795)։
Բ. Վիեննա, ձեռ. № 663, թերթ 50ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 154)։
Գ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 316ա (նույն տեղում, էջ 679)։
Դ. Վենետիկ, ձեռ. № 280, թերթ 45բ, (տե՛ս Սարգիսյան, Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 964)։
Ե. Վենետիկ, ձեռ. № 431, թերթ 154բ և 317ա (տե՛ս Սարգիսյան Բ, Սարգիսյան Գ. Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 591)։
Զ. Վալաթիա, ձեռ. № 141, թերթ 126—129, «Տաղ Հարսանեաց պսակին և ուրախութեան մարդկան» խորագրով (տե՛ս Կյուլեսերյան, Յուցակ Վալաթիայի, էջ 886)։

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 17—19։ Բնագիրը հանված է B աղբյուրից։
բ) «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 338—340։ Չևոագիր աղբյուրների (բացի E աղբյուրից) հիման վրա կազմված քննական բնագիր է, հրատարակել է տողերիս հեղինակը։
Տողերի սկզբնատառերը (բացի կրկնակ տողից) այբբենական կարգով են։

5. ՏԱՂ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՏԱՆ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ (էջ 155)

(«Աստուած զայս տուեա չէն պահել»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 138ա—139բ։
B = 7707, թերթ 15ա—15բ։
C = 3081, թերթ 10ա—11ա։
D = 8605, թերթ 87ա—87բ։
E = 7193, թերթ 79բ—81ա։
F = 2394, թերթ 117ա—118բ։
G = 3411, թերթ 16ա—17բ։
H = 9271, թերթ 61ա—62ա։
J = 1990, թերթ 52ա—52բ։
K = 9322, թերթ 95բ (թերի օրինակ)
L = 7712, թերթ 47ա—48ա։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 115ա (տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 791)։
Բ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 180ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 595)։
Գ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 313ա (նույն տեղում, էջ 679)։
Դ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 144բ (նույն տեղում, էջ 899)։

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Դ պրակ, էջ 19—21։ Բնագիրը հանված է C աղբյուրից։

բ) «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 340—343։ Ձեռագիր աղբյուրների (բացի L աղբյուրից) հիման վրա կազմված քննական բնագիր է, հրատարակել է տողերիս հեղինակը, «Տաղ ուրախութեան» խորագրով։

Տողերի սկզբնատառերը (բացի կրկնակ տողից) այբբենական կարգով են։

6. ՏԱՂ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ (էջ 157)

(«Այբն ասէ. Այսօր բմպեմք»)

Օգտագործված աղբյուրներ

A = *8968, թերթ 101բ—103ա։*
B = *3860, թերթ 194բ—195ա։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 129բ (տե՛ս Տաշյան. *Ցուցակ, էջ 796)։*

Բ. Վիեննա, ձեռ. № 979, թերթ 28բ (տե՛ս Ոսկյան. *Ցուցակ, հտ. Բ, էջ 565)։*

Գ. Վենետիկ, ձեռ. № 280, թերթ 35բ—36ա (տե՛ս Սարգիսյան. *Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 961 և 965)։*

Առաջին անգամ, A աղբյուրից հրատարակել է տողերիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 325—326)։

A օրինակում, 58-րդ տողից հետո կա մի հավելյալ տուն, որը տաղի ընդհանուր բնույթին չի համապատասխանում և, հավանաբար, գրչի հավելումն է.

Սէն ասէ Սէրիմանի,
Արտուտիկ ճանիմանի,
Սէրն շատ մարդ է խաբեր,
Ի յետև պատին կրկզեցուցէր։

Ձեռքի տակ ունենալով Մարտիրոս Խարբերդցու միայն «Տաղ վասն չախուի» ոտանավորը, Կ. Կոստանյանցը թյուրիմացաբար նրան է վերագրել Հ. Տաշյանի ցուցակում գրանից հետո հիշատակվող ևս 4 տաղեր, այդ թվում նաև այս ոտանավորը (տե՛ս «Նոր ժողովածու», Դ պրակ, էջ 67)։ Մ. Պոտուրյանը «Հին անծանոթ երգիծաբան մը» հոդվածում (տե՛ս «Նավասարդ», 1923, Ա հատոր, Գ պրակ, էջ 73—74) մեջ է բերում Մարտիրոսի անունով իրեն հայտնի 8 երգերի մի ցուցակ (այդ թվում հիշատակելով և այս ոտանավորի առաջին տողը) և գրում է. «Չեմ կարող բսել, թէ այս Մարտիրոսը նոյնն է Ղրիմեցու հետ»։ Հետագայում Ա. Մարտիրոսյանը մերժում է դրանք Մարտիրոս Ղրիմեցու գրչին պատկանելու վարկածը և վերագրում Մարտիրոս Խարասարցուն ու Մարտիրոս Խարբերդցուն (տե՛ս Ա. Մարտիրոսյան. *Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 179)։ Պետք է ասել, որ այս ութ ոտանավորներից ոչ մեկը Մարտիրոս Խարբերդցունը չէ։ Ինչ վերաբերում է այս ոտանավորին, ապա համեմատելով հավաստիորեն Մարտիրոս Խարասարցու գրչին պատկանող տաղերի («Տաղ վասն ուրախութեան մարդկան», «Տաղ ուրախութեան սեղանոյ և գինոյ հաւասար ամենայն»*

և այլն) հետ և նկատելով ինչպես բովանդակության ու բնույթի, այնպես էլ տարաչափական և լեզվառճական ակնհայտ նմանություններ, կարծում ենք, որ այս տաղանավորը ևս Մարտիրոս Խարաստրցու գրչին է պատկանում:

7. ՏԱՂ ՆՈՐ ՓԵՍԱՅԻ ԹՈՎԱՍԱՆՔ (էջ 160)

(«Այբ ասէ. Ապրի բագաւորն շատ ժամանակ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 9597, թերթ 242բ—244ա:
B = 4426, թերթ 11ա—12բ:

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 79բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 795):
Բ. Վենետիկ, ձեռ. № 280, թերթ 33բ—34ա (տե՛ս Սարգիսյան, Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 961):
Գ. Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 484ա—487ա (տե՛ս Կյուլեսերյան, Ցուցակ Ղալաթիայի, էջ 897):

Առաջին անգամ B աղբյուրից հրատարակել է տողերիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 326—328):

8. ՏԱՂ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԻԿ (էջ 162)

(«Այբ ասէ. Առաքեցար հազար բարի»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 125բ—127ա:
B = 10050, թերթ 360ա—361ա:
C = 9271, թերթ 120բ—121բ:
D = 9597, թերթ 229բ—230բ:
E = 10723, թերթ 89ա—90բ:
F = 5954, թերթ 19ա—19բ:
G = 8540, թերթ 17ա—18ա:
H = 7057, թերթ 30ա—31ա:
J = 8908, թերթ 54ա:
K = 4296, թերթ 31ա:
l = Թլոռիկ, «Ամէնուն տարեցոյց», 1926, էջ 154: Աղբյուրը չի հիշատակված:
m = «Մասիս», 1886, № 3809, էջ 715: Հրատարակել է Հ. Էկինյանը՝ բանավոր աղբյուրից (խորագրի տակ գրված է «Յաշըգ Սօղաթէ»):

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 242բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 792):
Բ. Վիեննա, ձեռ. № 664, թերթ 78ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 156):
Գ. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 249բ (նույն տեղում, էջ 289):

Դ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 202ա, «Տաղ ապնիւ» խորագրով և Աստվածատուրի անունով (նույն տեղում, էջ 595)։

Ե. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 21ա (նույն տեղում, էջ 671)։

Զ. Վիեննաիկ, ձեռ. № 280, թերթ 32բ—33ա (տե՛ս Սարգիսյան. Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 961)։

Է. Վիեննաիկ, ձեռ. № 1042, թերթ 21ա (նույն տեղում, էջ 671)։

Ը. Նույն ձեռագրում, թերթ 45բ (նույն տեղում, էջ 964)։

Թ. Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 458ա—460ա (տե՛ս Կյուլնաբյան. Ցուցակ Ղալաթիայի, էջ 897)։

Առաջին անգամ A, C, F, G, H, J աղբյուրների հիման վրա կազմված բնագիրը հրատարակել է տողերիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 328—330)։

Աղբյուրները բաղդատելով նկատում ենք.

Ա. F, G և H օրինակները ծագում են E օրինակից (սրանցում չատ նման են տարընթերցվածները, նույնն են պակասող և հավելյալ տողերը)։ Բևև թերի է, բայց հավանաբար նույն E օրինակից է ծագում նաև K օրինակը։

Բ. B օրինակը զգալի փոփոխություններ է կրել մյուս և հատկապես հնագույն (A) օրինակի համեմատությամբ, ինչպես նաև հեղինակի «Մարտիրոս» անվան փոխարեն այստեղ գրված է «Աստվածատուր»։ Քանի որ ձեռագրի գրիչը Հակոբ Փոխաթցին է, որը որպես գրիչ աչքի է ընկնում իր բարեխղճությամբ, ապա հավանական չէ, որ նա կատարած լիներ հիշյալ փոփոխությունները։ Մնում է ենթադրել, որ նրա ձեռքին եղել է մի այլ նախօրինակ, որի գրիչը փոփոխել է բնագիրը և հեղինակի անվան փոխարեն գրել իր «Աստվածատուր» անունը։

Գ. Մեր կարծիքով հիշյալ նախօրինակից են ծագում նաև C, D և I (համանաբար նաև Վիեննայի № 1002 ձեռագրի) օրինակները, քանի որ, չնայած B օրինակից ունեցած որոշակի տարբերություններին, սրանցում նույնպես «Մարտիրոս» անվան փոխարեն հիշատակվում է «Աստվածատուր»։

Դ. E օրինակի խորագրում երուսաղեմի Գրիգոր պատրիարքի (ժէ—ժԸ դդ.) անվան հիշատակությունը յուրիմացության հետևանք է, քանի որ տագի ընդօրինակության կա դեռ ԺՉ դարում։

9. ՏԱՂ Ի ՏԵՍ ՍԻՐԵԼԵԱՅ ԵՒ ՀԵՒԱՒՈՐԱՅ ԱՍԱՑ (էջ 166)

(«Այսօր զԻեզ տեսայ և ուրախացայ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 2676, թերթ 191բ։
B = 10050, թերթ 400ա։
C = 7707, թերթ 17բ և 205ա—205բ։
D = 3081, թերթ 11ա—11բ։
E = 8674, թերթ 81բ—82բ։
F = 1989, թերթ 195ա—197ա։
G = 3386, թերթ 105բ—106բ։
H = 10208, թերթ 126բ—127ա։
δ = 10006, թերթ 72բ—73ա։

J = 9271, թերթ 8բ—9բ։
K = 5306, թերթ 46ա—48ա։
L = 2394, թերթ 118բ—120ա։
M = 5668, թերթ 2բ—4ա։
N = 8540, թերթ 41բ—42ա և № 5954, թերթ 18բ։
O = 706, թերթ 210ա—210բ։
P = 3411, թերթ 19բ—21ա։
Q = 7273, թերթ 92ա—92բ։
R = 9195, թերթ 2ա—2բ։
S = 7193, թերթ 81ա—83ա։
T = 9863, թերթ 138ա և № 10167, թերթ 3ա—4ա։
U = 5934, թերթ 17բ և № 7206, թերթ 37ա։
V = 1046, թերթ 196ա—197ա և № 9362, թերթ 15ա—15բ։
W = 6985, թերթ 66բ—68ա։
X = 9600, թերթ 61ա—62ա։
Y = 9966, թերթ 9բ։
Z = 6517, թերթ 6բ—7ա և № 4335, թերթ 64ա։
α = 7714, թերթ 76ա—78ա։
β = 9597, թերթ 101ա։
γ = 7712, թերթ 28ա—29բ։
ω = 10723, թերթ 41բ—42ա։
a = Ա. Տեկաճց. Հայերգ, էջ 103։ Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 226ա (տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 792)։
Բ. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 67ա (նույն տեղում, էջ 795)։
Գ. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 279ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հա. Բ, էջ 290)։
Դ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 279ա (նույն տեղում, էջ 592)։
Ե. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 310ա (նույն տեղում, էջ 679)։
Զ. Երուսաղեմ, ձեռ. № 1136, թերթ 534ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հա. Գ, էջ 215)։
Է. Երուսաղեմ, ձեռ. № 1239, թերթ 33ա (նույն տեղում, էջ 392)։
Ը. Վենետիկ, ձեռ. № 280, թերթ 45ա (տե՛ս Սարգիսյան, Մայր ցուցակ, հա. Բ, էջ 964)։
Թ. Փառասուն մանկունք, ձեռ. № 121, թերթ 13ա, թերի (տե՛ս Սուրմեյան, Յուցակ, էջ 208)։
Ժ. Հալեպի ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 827ա (տե՛ս Սուրմեյան, Յուցակ Հալեպի, էջ 89)։
ԺԱ. Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 101ա—103ա (տե՛ս Կյուլսեերյան, Յուցակ Ղալաթիայի, էջ 885)։
ԺԲ. Զմմառ, ձեռ. № 604, թերթ 153բ (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Յուցակ, հա. Բ, էջ 211)։
ԺԳ. Զմմառ, ձեռ. № 593, թերթ 45ա, սկզբից թերի (նույն տեղում, էջ 203)։
ԺԴ. Մատենադարան, ձեռ. № 8463, թերթ 139բ, կան առաջին երկու տողերը, «Տաղ» խորագրով։

ԺԵ. Տաղի մեկ օրինակ եղել է նաև Մատենադարանի № 2436 ձեռագրում, սակայն չի պահպանվել (ձեռագրից թերթեր են պոկված)։

Այլ հրատարակություններ

ա) «Գիրք գպրութեան և Տաղարան վայելուչ...», 1714, էջ 227—228։ Աղբյուրը չի հիշատակված։ Համընկնում է U օրինակին։ Թերի է։

բ) «Գրքուկս որ կոչի Տաղարան», էջ 365—366։ Արտատպություն է առաջնից։

գ) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Դ պրակ, էջ 24—26։ Հրատարակված է D օրինակից։ Ծանոթագրության մեջ ցույց են տրված a օրինակի տարբերությունները։

դ) «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 344—348։ A, E, F, H, δ, J, L, M, N, P, T, U, Y, Z, γ, α, a օրինակների հիման վրա կազմված քննական բնագիր է, հրատարակել է առղերիս հեղինակը։

G օրինակի խորագրում որպես հեղինակ հիշատակված է Մարտիրոս Հիզանցին։ Սխալ է։ Իր բնույթով, տաղաչափությամբ և լեզվառճական առանձնահատկություններով տաղը ոչ մի առնչություն չունի Մարտիրոս Հիզանցու ոտանավորների հետ, ընդհակառակը՝ առնչվում է Մարտիրոս Խարասարցու տաղերին։ Դա երևում է նաև նրանից, որ C, D, δ, N, S աղբյուրներում արտագրված է հաստատապես վերջնիս պատկանող ոտանավորների շարքում։

Տողերի սկզբնատառերը (բացի կրկնակ տողից) այբբենական կարգով են։

10. ՏԱՂ ԵՒ ԳՈՎԱՍԱՆՔ ԿԱՖԱՅԻՆ (էջ 170)

(«Աստուած թող շէն պահէ զԿաֆայ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 7707, թերթ 18ա—19բ։
B = 3081, թերթ 108բ—109բ։
C = 3411, թերթ 90ա—91ա։
D = 7709, թերթ 90ա—90բ։
E = 7714, թերթ 90ա—91ա։
F = 2939, թերթ 1025ա—1026ա։
G = 1636, թերթ 189բ—192ա։
h = Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Բ, էջ 582։ Աղբյուրը չի հիշատակված։
i = «Ազգագրական հանդէս», հտ. Ե—Ը, 1901, էջ 45։ Հրատարակել է Ե. Շահազիզը։ Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 314ա, «Տաղ ի վերայ Կաֆայ քաղաքին» խորագրով (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 679)։

Այլ հրատարակություն

«Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 350—353։ Սույն քննական բնագիրն է, փոխված է միայն աղբյուրների գասավորությունը և խորագիրը։ Հրատարակել է առղերիս հեղինակը։

Տողերի սկզբնատառերը (բացի կրկնակ տողից) այբբենական կարգով են։

11. ՏԱՂ ԳԻՆՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ (էջ 173)

(«Միշտ յամենայն ժամ, տանուտէր»)

Հրատարակվում է Մատենադարանի № 2934 ձեռագրից, թերթ 204ա—206բ։

Տնագլուխ տառերը հոդում են «Մարտիրոսի սացել ե»։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ երկու տուն («ա» տառով սկսվող) պակասում է։

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է տողերիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 343—344)։

12. ՏԱՂ ՂԱՐԱՃԱՐՍՑԻ ՄԱՐՏԻՐՈՍԷ (էջ 175)

(«Յուր եկի հանդիպեցայ ես քո սիրուդ, իմ լոյս երես»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 152բ—153ա։

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է տողերիս հեղինակը (տ՛ես «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 348)։

13. ՆՈՐԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ Է ԱՍԱՑԵԱԼ ՏԱՂՍ (էջ 175)

(«Իմ սիրտ ինձի համբեր չի տար»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 153ա—153բ։

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է տողերիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 349)։

14. ՆՈՅՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 176)

(«Արեգական նման պայծառ լոյս երեսդ, որ ի մեզ ծագի»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 158բ—159ա։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 184բ (տե՛ս Ոսկյան, ցուցակ, հտ. Բ, էջ 595)։

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է տողերիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 349—350)։

15. ՏԱՂ ՉՈՐՍ ԼԵԶՈՒԷ ՂԱՐԱՃԱՐՍՑԻ ՄԱՐՏԻՐՈՍԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 177)

(«Քանի՞ նէֆա անես, հէ՛յ, եա՛ր»)

Օգտագործված աղբյուրներ

A = *10208, թերթ 158ա—158բ։*
B = *9597, թերթ 220ա։*

Այլ օրինակ

Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 339—341 (տե՛ս Կյուլիսերյան, *Ցուցակ Ղալաթիայի, էջ 896)։*

Առաջին անգամ, սույն քննական բնագիրը, հրատարակել է առաջիս հեղինակը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 353—354)։

Ինչպես հիշատակված է խորագրում, հորինված է չորս լեզվով, յուրաքանչյուր տան առաջին տողը հայերեն է, երկրորդը՝ թուրքերեն, երրորդը՝ հունարեն; չորրորդը՝ պարսկերեն։

Մարտիրոս Խարբերդցի

ԵՐԳ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԻՑՈՒ ԽԱՐԲԵՐԴԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ՉԱԽՈՒԻ, ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ (էջ 179)

(«Սիրտս ի փորս դողար վախուս»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 174բ—177ա։
B = 33, թերթ 159ա—161բ։
C = 3081, թերթ 79ա—80բ։
D = 7709, թերթ 125բ—127ա։
E = 5623, թերթ 157բ—159բ։
F = 695, թերթ 232բ—234ա։
G = 7717, թերթ 113ա—115ա։
H = 10050, թերթ 435ա—437ա։
δ = 9425, թերթ 54բ—57ա։
J = 8463, թերթ 140բ—143ա։
L = 2676, թերթ 183ա—184ա։
m = Ղ. Ալիշան, Հայոց երգկք ռամկականք, Վենետիկ, 1852, էջ 75—81։ Աղբյուրը չի հիշատակված։
n = «Արարատ», 1869, էջ 182—183։ Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 2971, թերթ 106բ։ Միայն առաջին տունն է «Նովասանք չախուի» խորագրով։

Բ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 229բ, «Տաղ չախուի» խորագրով (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 792)։

Գ. Վիեննա, ձեռ. № 436, թերթ 22բ—24բ (նույն տեղում, էջ 892)։

Դ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 318ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 679)։

Ե. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 125ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 795)։

Զ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 90ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 897)։

Է. Վենետիկ, ձեռ. № 280, թերթ 46բ (տե՛ս Սարգիսյան, Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 964)։

Ը. Քառասուն մանկունք, ձեռ. № 50, թերթ 187ա, «Տաղ և խաղալիք մրճլիսի» խորագրով (տե՛ս Սուրմեյան, Ցուցակ, էջ 104)։

Թ. Ղալաթիա, ձեռ. № 154, թերթ 267ա, «Տաղ ասացեալ ի վերայ չախուի» խորագրով (տե՛ս Կյուլիսերյան, Ցուցակ՝ Ղալաթիայի, էջ 983)։

Ժ. Երուսաղեմ, ձեռ. № 1417, թերթ 431 (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 77)։

ԺԱ. Զմմառ, ձեռ. № 532, թերթ 97բ (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 139)։

Այլ հրատարակություններ

ա) Մ. Միանսարյան, Քնար հայկական, էջ 155—158։ Արտատպություն է Ղ. Ալիշանի գրքից։

բ) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 34—37։ Հրատարակված է G աղբյուրից։ Հրատարակչի ձեռքի տակ եղել են նաև F աղբյուրն ու «Քնար հայկականի» օրինակը։

գ) Մ. Մկրյան, XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 218—220։ Արտատպություն է «Նոր ժողովածուից»։

Խաչատուր Խարբերդցի

ՅԱՐՄԱՐԵԱԼ ԲԱՆՍ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ Ի ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԽԱՐԲԵՐԴԱՑՒՈՅ (էջ 185)

(«Յորժամ եղև գարուն, եկ պուլպուլն յայգին»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 2ա—12ա։
B = 3081, թերթ 13բ—17բ։
C = 7707, թերթ 208բ—214ա։
D = 7709, թերթ 2ա—4բ։
E = 10050, թերթ 417բ—421բ։
F = 7715, թերթ 22ա—25բ։
G = 7717, թերթ 146ա—151բ։
H = 3411, թերթ 29ա—37ա։
J = 2394, թերթ 114ա—116ա։
K = 7193, թերթ 101բ—105բ։
L = 1682, թերթ 90բ—97ա։
M = 1636, թերթ 35բ—39ա։
N = 8674, թերթ 83բ—84բ։
O = 1290, թերթ 36ա—39ա։
P = 7712, թերթ 14բ—17ա։
Q = 8682, թերթ 45բ։

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 7128, թերթ 1ա—5ա։ Պահպանվել են 18—48-րդ տողերը, որոնք բնագրական որևէ նորություն չեն պարունակում։

Բ. Մատենադարան, ձեռ. № 10723, թերթ 62բ—63բ։ Պահպանվել են միայն 1—12-րդ տողերն իրենց թուրքերեն թարգմանությամբ հանդերձ։ Աղավաղված է, սխալներով լի։

Գ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 208բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 792)։

Դ. Վիեննա, ձեռ. № 671, թերթ 14ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 163)։

Ե. Վիեննա, ձեռ. № 979, թերթ 34բ (նույն տեղում, էջ 566)։

Զ. Նոր Ջուղա, ձեռ. № 121, թերթ 52ա—57բ (տե՛ս Միքայելյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 131)։

Է. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 827ա (տե՛ս Սուրմելյան, Մայր ցուցակ Հալեպի, հտ. Բ, էջ 89)։

Ը. Բրիտանական թանգարան, Հայերեն ձեռ. № 108, թերթ 243ա (տե՛ս Conybeare, A Catalocue, էջ 279)։

Տնտղուխ տառերը (մինչև վերջին երկու հիշատակարանային տունը) հոդում են «Յարմարեալ բանս ուրախութեան»։ Յուրաքանչյուր հայերեն տանը հաջորդում է նույն տան Թուրքերեն թարգմանությունը (բացի P աղբյուրից)։ Թուրքերեն տները դուրս ենք թողել, ինչպես արել է և Կ. Կոստանյանցը։

Հրատարակություն

Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 5—8։ Հրատարակված է G աղբյուրից։ Հիշատակվում է նաև F աղբյուրը, բայց չի օգտագործված։ Հրատարակիչը վերափոխել է խորագիրը՝ դարձնելով «Բան ուրախութեան»։

Վերջին երեք տները պահպանվել են միայն ուշ շրջանի M աղբյուրում և 103-րդ տողում ունեն հեղինակի անունը՝ «Խաչատուր եղկելիս» ձևով։ Համանարար այս աղբյուրի գրիչը մեզ անծանոթ մի այլ նախօրինակ է ունեցել։

Կիրակոս

ՏԱՂ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵՆԱՆ (էջ 192)

(«Էշ'մ ունեամ խիստ օրինաց»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 177ա—178ա։
B = 7709, թերթ 127բ—128ա։
C = 3081, թերթ 78բ—79ա։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 216ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 678)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 90ա (նույն տեղում, էջ 897)։ Խորագիրը՝ «Տաղ ի վերայ չախուին ի Կիրակոսէ ասացեալ», հետևանք է այն բանի, որ ձեռագրերում Կիրակոսի այս ոտանավորը շատ հաճախ արտագրվել է «Երգ Մարտիրոս երիցու խարբերդացոյ ասացեալ ի վերայ չախուի, վասն ուրախութեան մարդկան» ոտանավորից անմիջապես հետո, առանց խորագրի։

ՏԱՂ ՎԱՍՆ ՂԱՐԻՊԻ (էջ 194)

(«Գերիս բնդո՞ւ երթամ մոլար»)

Օգտագործված աղբյուրներ

A = *2004, թերթ 170բ—174ա:*
B = *7717, թերթ 219ա—219բ:*

Այլ օրինակ

Անկյուրա, ձեռ. № 92, թերթ 5ա—9ա (տե՛ս Կյուլիսերյան, Ցուցակ Անկյուրայի, հտ. Բ, էջ 461):

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, *Մկրտիչ Նաղաշ և իր տաղերը, Վաղարշապատ, 1898, էջ 51—53: Հրատարակված է* B *աղբյուրից, որտեղ պակասում են 33—116 տողերը, ուստի և բացակայում է հեղինակի անունը:*

բ) Մ. Մկրյան, *XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ երգարվեստ, էջ 214: Արտատպություն է Կ. Կոստանյանցի հրատարակությունից:*

գ) Մ. Մկրտչյան, *Հայ ժողովրդական պանդխտության երգեր, Երևան, 1961, էջ 240—241: Հրատարակված է* B *աղբյուրից, ուստի և բացակայում է հեղինակի անունը:*

դ) Մ. Մկրտչյան, *Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV—XVIII դդ.), Երևան, 1979, էջ 92—97: Քննական բնագիր է՝ կազմված* A *և* B *օրինակների հիման վրա: Մեր կազմած քննական բնագրից ունի հետևյալ տարբերությունները.*

ա. 7, 10, 13, 34, 53, 56, 62, 76, 82, 85, 94, 101, 105, 116-րդ տողերում Մ. Մկրտչյանն այլ կերպ է վերծանել ձեռագիրը, հետևապես այլ են նրա բնագիրն ու տարընթերցվածները:

բ. Որպես խորագիր դրված է ոտանավորի առաջին տողը:

գ. Մ. Մկրտչյանը ոտանավորը զետեղել է «Անհայտ հեղինակների պանդխտության տաղեր» բաժնում, թեև նկատել է, որ ոտանավորում հիշատակվում է «Տեր Ավետիք» անունը:

դ. Մ. Մկրտչյանի կազմած բնագիրն ունի 138 տող, մինչդեռ ակնհայտ է, որ Ավետիքի բանաստեղծությունն իր տրամաբանական ավարտին է հասնում 116-րդ տողում: Եվ պատահական չէ, որ «Տեր Ավետիք» անունն էլ հիշատակվում է նախավերջին՝ 115-րդ տողում: Մնացած 22 տողերը, որոնց սկզբնատառերը, ի դեպ, հոդում են «Ի նման գ...», Ավետիքինը չեն, այլ արհեստականորեն կցված նրա ոտանավորին: Դրանց հեղինակն, ըստ երևույթին, մեզ չհասած մի ընդօրինակության գրիչն է և ծայրակապից էլ երևում է, որ այդ հավելումը թերի է հասել Անկյուրայի և* A *աղբյուրի ընդօրինակողներին: Ըստ երևույթին ամբողջական ծայրակապը եղել է «Ի նման գարէ...» և այլն:*

---

* *Մեզ թվում է, թե այս փաստը որոշակի նշանակություն ունի նաև հեղինակի ծննդյան մոտավոր ժամանակը որոշելու տեսակետից, քանի որ նշանակում է, թե մեզ հայտնի ամենահին (Անկյուրայի) օրինակն, այնուամենայնիվ, ունեցել է նախօրինակ, գուցե, նույնիսկ, մի քանի նախօրինակներ:*

Ստորև բերում ենք այդ հավելումը.

Ի նեղութիւնդ մի՛ ձանձրանար,
Այլ գոհութիւն տուր անդադար,
Զմիտրդ արա ջեզ սրբարար,
Զհոգիդ մաքրեա բանին տաճար:
Եւ թէ կամիս արդարանալ,
Զքո թշնամին օրհնեա երկար,
Զայս ամէնն մեր Տէրն արար,
Որ իր խաչին գոչեաց առ Հայր:
Սուրբ Ստեփանոս նախավկայն
Քար ձգողացն աղօթք արար.
Մի՛ նմանեսցիս կուսից յիմար,
Որ ոչ ունին իւղ լուսարար:
Այլ իմաստնոց նմանեցիր,
Որոնք ունին գլապտերն ի վառ,
Թէ Քրիստոսի ես աշակերտ,
Անձամբդ տար զգործդ ի կատար:
Երբ որ փոխիս ի յաշխարհէս
Յարքայութիւն երթաս ճարտար,
Հանց դատաւոր ունիմք ճարդար,
Որ դատաստան կառնէ ճարտար:
Դու մի՛ ասէր, թէ յէ՞ր չարար,
Զի չէ ատենն առնուլ համար...

Մանր խոջա

ՏԱՂ ՎԱՍՆ ՀՈԳՈՅ. ԵՐԿՈՒ ԼԵԶՈՒ (էջ 199)
(«Մալն ինչ կանեմ. երբ որ յետինս անալ է. անալ է»)

Օգտագործված աղբյուրներ

A = *10050, թերթ 352ա—353բ:*

B = *Վիեննա, ձեռ. № 343, թերթ 112ա—113բ (Մատենադարան, մանրաժապավեն № 692):*

C = *5306, թերթ 72բ—75բ:*

D = *1661, թերթ 388ա—389ա:*

---

7 Ձեռագրում՝ *ամէն*

10 Ձեռագրում՝ *Քարաձգողացն*

11 Ձեռագրում՝ *Որով*

18 Ձեռագրում՝ *երթար*

19 Ձեռագրում՝ *ունիք*

Այլ օրինակ

Զմմառ, ձեռ. № 84, թերթ 62բ (տե՛ս Քեշիշյան, Յուցակ, էջ 164):

Հրատարակվում է առաջին անգամ:

Չնայած D օրինակը հնագույնն է, արտագրված 1594 թ., սակայն պակասներ ունի:

Ոտանավորի յուրաքանչյուր հայերեն տան հաջորդում է մեկ թուրքերեն տուն: Այդ տները հայերեն տների թարգմանությունն են, ուստի դրանք չենք գրել բնագրում:

կարապետ վարդապետ

ՈՏԱՆԱՒՈՐՈՒ ԱՍԱՑԵԱԼ Է ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԷ Ի ՎԵՐԱՅ ՈՐԴՈՅՆ ՆՈՅԻ, ՈՐ ԲԱԺԱՆԵՑԻՆ ԶԱՇԽԱՐՀՔՍ ՎԵՑ ԲԱԺԻՆ (էջ 201)

(«Եկայք Ադամայ որդիք, առաւածք ամէն միաբան»)

Օգտագործված աղբյուրներ

a = *«Բազմավէպ», 1880, էջ 97—100: Բնագիրը հանված է Վենետիկի № 243 ձեռագրից (թերթ 69բ):*

B = *4290, թերթ 104ա—108բ:*

C = *33, թերթ 134ա—143ա:*

D = *10050, թերթ 142ա—151բ:*

E = *Երուսաղեմ, ձեռ. № 1455, թերթ 321ա—327ա (Մատենադարան, մանրաժապավեն № 916):*

F = *1428, թերթ 178ա—187ա:*

G = *10210, թերթ 153բ—166ա:*

H = *2248, թերթ 120ա—121բ:*

A′ = *Վիեննա, ձեռ. № 684, թերթ 64բ—77բ*:*

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 5120, թերթ 67ա—68ա, «Տաղ պեղեցիկ վասն արարածոց» խորագրով: Ընդհատվում է 36-րդ տողում, չատ նման է A′ օրինակին:

Բ. Մատենադարան, ձեռ. № 8261, թերթ 35բ—36ա: «Աշխարհացոյցս Համառօտ» խորագրով: Նույնպես թերի և սխալաշատ: Սկսվում է 15-րդ տողից և ավարտվում 89-րդ տողով:

Գ. 15-րդ տողից մինչև 164-րդ տողը «Աշխարհացոյց Համառօտ» խորագրով կա Մատենադարանի հետևյալ 8 ձեռագրերում №№ 1677 (58բ—96բ), 8100 (248ա—

---

* *Այս ձեռագիրը մեր ձեռքի տակ չի եղել: Տարընթերցվածները վերցրել ենք սրա և երկու այլ օրինակների հիման վրա Ն. Ակինյանի կազմած համեմատական բնագրից (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 328—338): Ակինյանի մյուս աղբյուրների տարբերությունները նկատի չենք առել, քանի որ նրա B աղբյուրը (Վիեննա, ձեռ. № 745, թերթ 94բ—104բ) ծագում է մեր D աղբյուրից, իսկ X աղբյուրը մեր a աղբյուրն է:*

(249ա), 8076 (94ա—96բ), 527 (148բ—151բ), 2492 (28ա—33բ), 613 (100ա—102բ), 8279 (121ա—126ա), 8908 (42ա—43ա)։ Ուշ շրջանի (ԺԷ դարի երկրորդ կիսից մինչև ԺԹ դար) ընդօրինակումներ են, նոր բան չեն ավելացնում բնագրին և ծագում են մեկը մյուսից։ Դրա ապացույցը ոչ միայն տարբերներցվածների նմանությունն է, այլև, բացի մեկից, բոլորում 132-րդ տողի բացակայությունը, քան որում այդ մեկ օրինակում էլ նշված տողը պարզորոշ կերպով գրչի հարինածն է, չի առնչվում տաղի բովանդակությանն ու ձևին։

Դ. 153—164-րդ տողերը հետագայում դիտվել են որպես առանձին երկ և «Տաղ իշխանաց», կամ «Ողբ ի վերայ Հայոց Թագաւորաց և իշխանաց» խորագրերով ընդօրինակվել Մատենադարանի հետևյալ ձեռագրերում, №№ 7707 (154ա—155ա), 8405, (62ա), 8100 (357ա—358բ), 7507 (293ա), ինչպես նաև Վիեննայի № 1942, Վենետիկի № 1371 և Փարիզի № 283 ձեռագրերում։

Ե. Նոր Ջուղա, ձեռ. № 437, թերթ 30ա—42ա, «Ոտանաւորս կարապետ վարդապետն է ասացեալ ի վերայ արարածոցս...» խորագրով (տե՛ս Տեր-Ավետիսյան, Ցուցակ հատ. Ա, էջ 674)։

Զ. Երուսաղեմ, ձեռ. № 157, թերթ 458—459 և 461—466 (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հատ. Ա, էջ 476—477)։

Է. Երուսաղեմ, ձեռ. № 1529, թերթ 223 (նույն տեղում, հատ. Ե, էջ 280)։

Այլ հետաքրքրություններ

ա) 153—164-րդ տողերը, որպես առանձին բանաստեղծություն, Մատենադարանի № 7507, Փարիզի № 283 և Վենետիկի № 1371 ձեռագրերի օրինակների հիման վրա կազմած քննական բնագրով և «Տաղ իշխանաց Հայոց» խորագրով հրատարակել է Ա. Չոպանյանը (տե՛ս «Հայ էջեր», Պարիս, 1912, էջ 13)։

բ) 47—88-րդ տողերը, որպես առանձին երկ, հրատարակված են Հ. Տաշյանի «Ցուցակում» (էջ 32—33)։ Բնագիրը հանված է Վիեննայի № 22 ձեռագրից։

Աղբյուրները բաղդատելով նկատում ենք.

Ա. B օրինակը ծագում է a օրինակից։ Մյուս օրինակների հետ համեմատած սրանք ունեն նույն տարբերներցվածները ու տարբերությունները և չունեն վերջին երկու տողերը (առաջին խումբ)։

Բ. E օրինակը, որի դրիչն, ի դեպ, Ստեփանոս Բոխաիցին է, ծագում է D օրինակից։ Դա երևում է ինչպես տարբերներցվածների նմանությունից, այնպես էլ այն բանից, որ E աղբյուրում ոտանավորից անմիջապես հետո մեջ է բերված D աղբյուրի երկու գրիչների՝ Փանոսի և Հակոբի (սա Հակոբ Բոխաիցին է) չափածո հիշատակարաններ, իրենց անուննների հիշատակությամբ* (երկրորդ խումբ)։

Գ. A՛ օրինակը, չնայած ուղղագրական բնույթի որոշ տարբերությունների, հավանաբար, ծագում է F օրինակից։ Այս երկու օրինակներն ավելի մոտ են աղբյուրների առաջին խմբին։ Սրանց ինչ-որ չափով մոտ է նաև G օրինակը։

Դ. Առանձնանում է C օրինակը, որի մեջ հանդիպում են և՛ առաջին, և՛ երկրորդ խմբի օրինակների տարբերներցվածներ, ինչպես նաև այնպիսիք, որոնք նման չեն ոչ մեկին։

Այս երեք խմբերում տարբեր են երկի գրության թվականների հիշատակություններ։

---

* Այս հիշատակարանը կա նաև Ն. Ակինյանի օգտագործած B աղբյուրի օրինակում, քանի որ, ինչպես նշել ենք, այն ծագում է D աղբյուրից։

Առաջին խումբ. a աղբյուր—«Ի» և «ԺԴ» = 1014 + 551 = 1565, B աղբյուր—«Հազար և քսան ԺԴ» = 1034+551=1585։

Երկրորդ խումբ. D, E, F, G, A′ աղբյուրներ—«Ինն հարիւր և ութսուն ինն» = = 989+551=1540։

Երրորդ խումբ. C աղբյուր—«Ինն հարիւր և նըսունինն»=999+551=1550։

*Նախապատվությունը տվել ենք բանասիրության մեջ ընդունված 1540 թվականին, քանի որ առաջին խմբի օրինակներում խոսքն ակնհայտորեն ոչ թե երկի հորինման, այլ ձեռագրերի ընդօրինակման ժամանակին է վերաբերում**։ *a աղբյուրն ընդօրինակել է 1565 թվականին (Ր. Սարգիսյան. Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 634), իսկ B աղբյուրի գրիչը դրանից 6 տարի հետո ընդօրինակելով երկը, իր ձեռագրի գրչության ժամանակին («Հազար և քսան») սխալմամբ ավելացրել է նաև աղբյուրի գրչության ժամանակի վերջին՝ ԺԴ թիվը։ Դա երևում է հենց «Հազար և քսան, ԺԴ» թվաբանական տեսակետից անտրամաբանական ձևակերպումից («Թվին հազար քսան, տասնչորս»։*

Ինչ վերաբերում է C օրինակում հիշատակված տարեթվին, ապա այս աղբյուրն այնքան սխալաշատ է, որ հնարավոր է ենթադրել, թե դրա գրիչն իր ունեցած նախօրինակի «Ինն հարիւր ութսուն ինն» թվականը կարող էր կարդացած լինել, հետևապես և գրել «Ինն հարիւր և նըսուն ինն»։

Եղիա Բերկրցի

ՏԱՂ Ի ՅԱՐԹԵԼԱՆՆ ՈՒ ՎԱՄՆ ԱՆՁԻՆ (էջ 219)

(«Ես մեղաւոր և անարժանս»)

Արտատպվում է «Բազմավէպից», 1939, էջ 199—200։

Հրատարակել է Հ. Քյուրտյանը։ Բնագիրը հանված է Նոր Ջուղայի № 130 ձեռագրից (թերթ 25բ)։ Ըստ հրատարակչի ծանոթագրության՝ այս ձեռագրի սկզբի մասը գրված է 1547 թ. իր իսկ՝ Եղիա եպիսկոպոս Բերկրցու ձեռքով, ուստի և մենք չենք օգտագործել Մատենադարանի № 1887 ձեռագրի (թերթ 228ա—229ա) օրինակը։

Տնագլուխ տառերը, մինչև 85-րդ տողը, հոդում են «Եղիայ եպիսկոպոս մեղաւոր»։

Վրթանէս Սոսկեցի

1. ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՄՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ, ՈՐ ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿՍ ԽՈՒՈՎ ԿԱՑԵԱԼ Է ՀԵՏ ԴԱՍԱԿՑԻՆ ԻՐՈՑ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԱՒԱՋՆՈՐԴ ԻՐ ԼՈՎԱՑ ՔԱՂԱՔԻՆ ԵՒ Ի ՄԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՇՏԵՑԱԻ ԵՒ ԳՐԵԱՑ ԱՅՍՊԷՍ (էջ 223)

(«Այբէն մինչև ի էն. Քրիստոս, մեղայ ինձ»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 288ա—289բ։

---

* *Այս մասին Ն. Ակինյանը նույն կարծիքն է հայտնել, ասելով, թե սա «Առանց տարակուսի գրչութեան և ոչ տաղին յօրինման տարին է» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 324)։*

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 745, թերթ 195բ—196ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 288): Սա ուշ շրջանում (1909 թ.) արտագրված է Մատենադարանի № 10050 ձեռագրից:

Առաջին անգամ, № 745 ձեռագրից, ուղղագրությունը փոխելով քան գրաբարի պահանջների, հրատարակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1920, էջ 283—284), այնուհետև՝ «Հինգ պանդուխտ տաղասացներ» (այսուհետև՝ ՀՊՏ) գրքում, էջ 15—16:

Տողերի սկզբնատառերն այբբենական կարգով են:

Հեղինակի անունը կա նաև «Վ» տառով սկսվող տողում «Վրդանես մեզաւորն» ձևով:

2. ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԵՍԻ ԱՍԱՑԵԱԼ Է (էջ 224)

(«Այրէն միճչև ի բէն գովեցի զԲզ»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 289բ—291ա:

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 745, թերթ 196ա—197ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 288): Ուշ շրջանում արտագրված է Մատենադարանի № 10050 ձեռագրից:

Առաջին անգամ, Վիեննայի օրինակից, հրատարակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1920, էջ 284—285), այնուհետև՝ ՀՊՏ, էջ 16—18:

9—44-րդ տողերի սկզբնատառերն այբբենական կարգով են:

3. ՈՏԱՆԱՒՈՐՍ ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԵՍԻ ԱՍԱՑԵԱԼ Է (էջ 226)

(«Այրէն միճչև ի գիրեն վերջին»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 291ա—296ա:

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 745, թերթ 197բ—200ա, որն արտագրված է № 10050 ձեռագրից:

Առաջին անգամ, Վիեննայի № 745 ձեռագրից հրատարակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1920, էջ 285—288) այնուհետև՝ ՀՊՏ, էջ 16—23:

Բաժանված է երկու մասի: Այդ մասերը ներկայացրել ենք առանձին տողամասերով: Առաջին մասի տողերի սկզբնատառերը մեկընդմեջ այբուբենի կարգով են: Խախտում կա 29-րդ տողում: Երկրորդ մասի անագրուխ տառերը, մինչև 48-րդ տողը հոդում են «Վրդանէսի բանը»:

Գրված է 1557 թ.:

4. ՆՈՐԻՆ ՎՐԹԱՆԵՍԻ ԱՅՍ ՍՈՒՏ ԿԵՆՑԱՂՈՅՍ ՎԵՐԱՅ (էջ 231)

(«Այս սուտ կենցաղոյս վերայ Ե՛ս միայն շատով խաբեցայ»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 296ա—301բ:

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 745, թերթ 206բ—204ա։

Առաջին անգամ Վիեննայի № 745 ձեռագրից հրատարակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1920, էջ 288—292), այնուհետև՝ ՀՊՏ, էջ 23—29։

Տողերի սկզբնատառերը (մինչև 72-րդ տողը) մեկտղմնէ այբբենական կարգով են։

5. ԱՅԼ ԹԱՂ ՅՈՒՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ, ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԻՊԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ (էջ 236)

(«Խառնեալ ասաց մարգարէին»)

Օգտագործված աղբյուրներ

A = 9425, թերթ 52ա—54ա։
B = 3081, թերթ 58բ—59բ։
Հրատարակվում է առաջին անգամ։

6. Ի ՎԻՊԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ ՉՏԱՂՍ Ի ՎԵՐԱՅ ԿԱՖԱՅՈՒ ՍՂԱՒԻԹԵԱՆ (էջ 239)
(«Օրհնութիւն և փառք փրկչին»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 3081 ձեռագրից, թերթ 119ա—120բ։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 547ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 689)։

Տաղի վերջում հեղինակի անունը հիշատակվում է «Ցրիմանէս» ձևով, սակայն, ինչպես նկատել են Մատենադարանի «Յուցակ ձեռագրացի» կազմողները, սա վրիպակ է Առնկեցին է (հտ. Ա, էջ 936)։

7. ՈՏԱՆԱՒՈՐ Ի ՎԻՊԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ Է ՎԱՍՆ ՈՒՄԵՄՆ ՄԵՒԱՏԱՆ, ՈՐ ՈՒՆԷՐ ՔԱՐՈԶԳԻՐՔ՝ ՄԵԿՆԻԶ ՄԻ ԱՐԱՐԱԾՈՅ, ՈՍԿԻԱՊԱՏ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ, Ո՛Չ ԳԻՏԷՐ ԳԻՐ ԵՒ Յ՛Չ ԿԱՐԳԱԼ, ԵՒ Ո՛Չ ՏԱՅՐ ԱՅԼՈՅ ԿԱՐԳԱԼՈՒ (էջ 241)

(«Մէկ մարդ մի երագ վաներ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 3081, թերթ 69ա—72ա։
B = 9425, թերթ 45ա—51բ։
C = 1636, թերթ 3բ—10ա։
d = «Հանդէս ամսօրեայ», 1920, էջ 360—366։ Հրատարակել է Ն. Ակինյանը։ Արտատպություն է «Մասեաց աղաւնի» հանդեսից։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 543ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 685)։

Այլ հրատարակություններ

ա) «Մասեաց ազաւնի», 1863, էջ 264—265: Ըստ Ն. Ակինյանի բնագիրը հանված է 1784 թվականին նոր Նախիջևանում գրված «Ժողովածու պատմագիրք» ձեռագրից, որի գրիչը տեղի ս. Համբարձում եկեղեցու քահանա Մարտիրոս Ավետիքյանն է.

բ) Ն. Ակինյան, ՀՊՏ, էջ 31—37: Արտատպություն է «Հանդէս ամսօրեայից»:

Ղուկաս Կեղեցի

1. ԿԵՂԵՑԻ ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ ՈՂԲ ՏՂԱՅՈՑ (էջ 251)

(«Աստուած քարոզեաց և խրատ ետուր»)

Օգտագործված աղբյուրներ

A = *2672, թերթ 198բ—199ա:*

B = *7709, թերթ 309ա:*

C = *7714, թերթ 71ա—72ա:*

D = *9440, թերթ 93բ—94ա:*

e = Պողարյան, *Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 405: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 1609 ձեռագրից (թերթ 133ա—134ա):*

F = *8166, թերթ 221բ—222ա:*

G = *5672, թերթ 90ա—90բ:*

H = *9075, թերթ 66ա—66բ:*

J = *8982, թերթ 236ա—237ա:*

K = *833, թերթ 114ա—114բ:*

l = Պողարյան, *Մայր ցուցակ, հտ. է, էջ 459—460: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 2337 ձեռագրից (թերթ 287ա):*

M = *Սրբ Հարոլդ Ուոչտեր Բելլի ձեռագիր № 8, թերթ 272բ—273ա (Մատենադարան, մանրաժապավեն № 476):*

Այլ օրինակներ

Ա. Վենետիկ, ձեռ. № 404, թերթ 3ա (տե՛ս Սարգիսյան Բ. Սարգիսյան Գ. *Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 481):*

Բ. Վենետիկ, ձեռ. № 421, թերթ 163բ (նույն տեղում, էջ 558):

Գ. Վիեննա, ձեռ. № 360, թերթ 83բ (տե՛ս Տաշյան, *Ցուցակ, էջ 812):*

Դ. Վիեննա, ձեռ. № 402, թերթ 114ա (նույն տեղում, էջ 854):

Ե. Վիեննա, ձեռ. № 415, թերթ 118ա (նույն տեղում, էջ 861):

Զ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 32ա (տե՛ս Ոսկյան, *Ցուցակ, հտ. Բ, էջ 671):*

Է. Երուսաղեմ, ձեռ. № 2454, թերթ 396ա (տե՛ս Պողարյան, *Մայր ցուցակ, հտ. Ը, էջ 116):*

Ը. Երուսաղեմ, ձեռ. № 2109, թերթ 459ա—460ա (տե՛ս Պողարյան, *Մայր ցուցակ, հտ. է, էջ 155):*

2. «ՊԱՏՃԷՆ ԹՒՈՅ ՆՈՐ ՏՈՒՄԱՐԻ» (էջ 253)

Արտատպվում է «Հանդէս ամսօրեայ»-ից (1937, էջ 126—127)։ Հրատարակել է Ն. Ակինյանը։ Բնագիրը հանված է Լվովի համալսարանի մատենադարանի № 15 ձեռագրից (թերթ 3ա—16ա)։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 531, թերթ 113բ (տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 1001)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 305ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 679)։

Գ. Ջմմառ, ձեռ. № 543, թերթ 10ա (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 150)։

Հիշատակարան է՝ կցված Ղուկաս Կեղեցու «Պատճէն Հռոմայեցոց տումարին, ոտանաւոր ձեռվ, ի Ղուկաս վարդապետէ ասացեալ» երկին։

Գրված է 1593 թ.։

Վարդապետ Կաֆացի

1. ՏԱՂ ՏԷՐ ԱԻԵՏԻՔ ԿՐՕՆԱԻՈՐԻՆ, ՈՐ ՆԱՀԱՏԱԿԵՑԱԻ Ի ՉԵՒԱՑ ԹԱԹԱՐԱՑ ԱՂԵՂՆԱԻՈՐԱՑ, Ի ՆԱՀԱՆԳԻՆ ԴՐԻՄԻ, Ի ՎԵՐԱՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ ՎԱՆԻՑՆ ԵԻ ՋՈՐ ՇԻՆԵԱՑ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԲԱՍՏԱՑԻՆ, ՋՈՐ ԿԱՑ ՄԻՆՉՅԵԻ ՅԱՅՍՕՐ ՄԵՋ ՕԻՆԱԿԱՆ ԵԻ ՊԱՀԱՊԱՆ (էջ 256)

(«Հիւսիսական կողմն աշխարհի»)

Օգտագործված աղբյուրներ

A = *3081, թերթ 88ա—89ա։*

B = *Երուսաղեմ, ձեռ. № 1455, թերթ 237բ—240ա (Մատենադարան, մանրաժապավեն № 916)։*

C = *1636, թերթ 210բ—212բ։*

D = *2939, թերթ 454ա—454բ։*

Առաջին անգամ C և A օրինակների հիման վրա հրատարակվել է «Հայոց նոր վկաներում» (էջ 346—349)։

2. ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ (էջ 260)

(«Սուրբ Աստուածածնին տօնին»)

Օգտագործված աղբյուրներ

A = *2934, թերթ 79ա—80բ։*

B = *7707, թերթ 250ա—251ա։*

C = *5668, թերթ 21ա—22բ։*

D = *9271, թերթ 51ա—52ա։*

E = *1990, թերթ 9բ—10ա։*

F = 8064, թերթ 66ա։

q = «Բազմավէպ», 1849, էջ 247։ Աղբյուրը չի հիշատակված։

h = Գ. Սրվանձտյան, «Մանանայ», էջ 256—257։ Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 69, թերթ 152ա—152բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 312)։

Բ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 223բ (նույն տեղում, էջ 792)։

Գ. Վիեննա, ձեռ. № 389, թերթ 24ա—25ա (նույն տեղում, էջ 851)։

Դ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 142բ (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 594)։

Ե. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 132ա (նույն տեղում, էջ 898)։

Զ. Զմմառ, ձեռ. № 532, թերթ 71ա (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 138)։

Է. Բրիտանական թանգարան, հայերեն ձեռ. № 110, թերթ 26բ (տե՛ս Conybeare, A. Catalocue, էջ 283)։

Տարբնթերցվածների բազմազանությունն արդյունք է այն բանի, որ ոտանավորն, ըստ երևույթին, երգվել է (երևի Աստվածածնի տոնի ժամանակ) և ուշ ժամանակների օրինակները ոչ թե գրավոր նախօրինակներից են ծագում, այլ գրի են առնված երգիչներից։ Ոտանավորի երգված լինելն են վկայում նաև կրկնակները, որոնք պահպանվել են հնագույն՝ A, B և D օրինակներում, ինչպես նաև 85-րդ տողը՝ «Ով որ զայս սորվի՝ ասէ», որ նշանակել է՝ «Ով որ սա սովորի և երգի»։

C օրինակում 4-րդ տողից հետո կան չորս հավելյալ տողեր, որոնք մենք չենք ներառել բնագրի մեջ, որովհետև իմաստով ու բնույթով անհարիր են տաղին։

Մեծպարոն

ՏԱՂ ԽՏՐՇԱՅ ՄԱՆԿԱՆ, ՈՐ ՄԱՐԶՈՒԱՆ ՔԱՂԱՔՆ Է ՆԱՀԱՏԱԿԵԱԼ (էջ 265)

(«Խրատ մի տամ վասն մեղաց»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8605, թերթ 62ա—66ա։

B = 7709, թերթ 66բ—68բ։

C = 8968, թերթ 68բ—74ա։

D = 1989, թերթ 53ա—54բ։

E = 2394, թերթ 99ա—107ա։

F = 9597, թերթ 159բ—163բ։

G = 9425, թերթ 18բ—23բ։

H = 2939, թերթ 457ա—458ա։

δ = 6488, թերթ 42ա—44բ։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 344, թերթ 176բ—184ա, «Ողբ վասն Խրտարրշա մանկանն, որ ի Մարզբան քաղաք նահատակեցան» խորագրով (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 796)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 197բ, «Տաղ Խորշային ասացեալ» խորագրով (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 595)։

Գ. Վենետիկ, ձեռ. № 280, թերթ 48ա։ Խորագիրը՝ ինչպես Վիեննայի № 344 ձեռագրում (տե՛ս Սարգիսյան, Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 965)։

Դ. Վենետիկ, ձեռ. № 282, թերթ 294ա—296բ, «Ի Խրտրբշահ վկայն» խորագրով (նույն տեղում, էջ 977)։

Առաջին անգամ D և E օրինակների հիման վրա հրատարակվել է «Հայոց նոր վկաներում» (էջ 376—382)։

Անանուն (Թ)

1. ԱՅԼ ՏԱՂ ՍԻՐՈՅ (էջ 276)

(«Հագեր ես սէրասէր, ելէր կանգներ ես»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 166բ—167ա։ Ինչպես բանասիրական կռվաններով ապացուցել է Ա. Մնացականյանը, այդ ձեռագրի 118—183 թերթերում ամփոփված է ԺԶ դարավերջին կամ ԺԷ դարասկզբին կազմված սիրո երգերի անդրանիկ ժողովածուի ընդօրինակությունը։ Այդ ժողովածուի նյութերը պետք է հորինված լինեն ԺԶ դարի առաջին կեսից ոչ ավելի վաղ (մանրամասն տե՛ս «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» ժողովածու, Երևան, 1971, էջ 96—126)։ Նշանակում է, որ այս տաղը ևս պետք է հորինված լինի այդ ժամանակ։

2. «ԱՌԱԻՕՏՈՒՆ ԿԵԼՆԵՍ, ՆԱԶԼՈՒ, ԿՈՒ ՔԱՅԼԵՍ (էջ 277)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 167ա—167բ։

Բանաստեղծական ու լեզվառճական առանձնահատկություններով նման է նախորդ ոտանավորին և ձեռագրում էլ արտագրված է նրանից անմիջապես հետո։ Ուստի ենթադրում ենք, որ պատկանում է նույն հեղինակի գրչին։

Անանուն (Ժ)

ԱՅԼ ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՊԼՊՈՒԼԻՆ ԱՍԱՑԵԱԼ (էջ 278)

(«Պիլպիլն փոքրիկ ձագ մ'է ի հատուն»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 141բ—143ա։

Հորինման ժամանակի մասին տե՛ս «Այլ տաղ սիրոյ» ոտանավորի ծանոթագրությունը։

ԲԵՐԴԱԿԱՑԻ ՍԱՐԿԱՒԱԳԻ ԱՐԱՐԵԱԼ ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԹԱՂՈՂՈՅ (էջ 281)

(«Խաղո՛ղ, գիեզ գովել պիտի, բոլոր պտղովդ հատասար»)

Օգտագործված աղբյուրներ

A = *3081, թերթ 8բ—9բ:*
B = *7707, թերթ 12ա—15ա:*
C = *33, թերթ 154ա—155բ:*
D = *3411, թերթ 12բ—14բ:*
E = *10077, թերթ 61ա—63բ:*
F = *7193, թերթ 120բ—122ա:*
G = *8605, թերթ 109ա—110բ:*
H = *10333, թերթ 59բ—61բ:*
δ = *7789, թերթ 4ա:*
J = *9600, թերթ 76բ—79բ:*
K = *9271, թերթ 21ա—22ա:*
L = *3860, թերթ 183բ—184ա:*
M = *7712, թերթ 37բ—39բ:*

n = *«Բանասէր» (ամսական տետր), 1851, № 9, էջ 437—438: Աղբյուրը չի հիշատակված*

o = *«Բազմավէպ», 1930, էջ 520: Աղբյուրը չի հիշատակված:*

p = Բէդոյիկ, *Ամէնուն տարեցոյց, 1926, էջ 155: Հրատարակված է Վենետիկի № 2 տաղարանից:*

r = Կյուլսեբյան, *Յուցակ Անկյուրայի, էջ 1170—1172: Բնագիրը հանված է Անկյուրայի № 264 ձեռագրից, թերթ 714ա:*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 161բ, «Տաղ խաղողոյ և գինոյ» խորագրով (տե՛ս Ոսկյան, Յուցակ, Հատ. Բ, էջ 899):

Բ. Վիեննա, ձեռ. № 514, թերթ 130ա, «Գովեստ խաղողոյ» խորագրով (տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 987):

Գ. Վիեննա, ձեռ. № 160, թերթ 196ա, «Գովեստ խաղողոյ և գինւոյ» խորագրով (նույն տեղում, էջ 469):

Դ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 166ա, «Տաղ խաղող գովելոյ» խորագրով (տե՛ս Ոսկյան, Յուցակ, Հատ. Բ, էջ 594):

Ե. Վիեննա, ձեռ. № 663, թերթ 53բ, թերթ (նույն տեղում, էջ 154):

Զ. Վիեննա, ձեռ. № 671, թերթ 65բ (նույն տեղում, էջ 163—164):

Է. Վենետիկ, ձեռ. № 287, թերթ 17ա—18բ (տե՛ս Սարգիսյան, Մայր ցուցակ, Հատ. Բ, էջ 1020):

Ը. Զմմառ, ձեռ. № 84, թերթ 50ա (տե՛ս Քիշիշյան, Յուցակ, էջ 154):

ա) Կամառ-Քաթիպա, Ազգային երգարան, էջ 195—196: Արտատպություն է «Բանասէրից»: Այստեղ չի պահպանված «Գինի» խորագիրը և կատարված են ուղղագրական բնույթի մի քանի շտկումներ:

բ) Մ. Միանսարյան, Քնար հայկական, էջ 392—393: Արտատպություն է «Բանասէրից»:

գ) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 46—47: Արտատպություն է «Բանասէրից»: Ինչպես մյուս հրատարակություններում, այստեղ ևս բացակայում է վերջին տունը՝ հեղինակի անվան հիշատակությամբ: Այս կապակցությամբ Կ. Կոստանյանցը գրում է, թե իրեն անհայտ է հեղինակի անունը:

շ) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 67—69: Բացի «Բանասէրից» հրատարակիչը ձեռքի տակ է ունեցել նաև A աղբյուրը:

է) «Լումայ», 1902, № 3, էջ 217—221: Բնագիրը հանված է Նոր Նախիջևանի ս. Լուսավորիչ վանքի 1675 թ. գրչության ձեռագրից: K օրինակը համընկնում է սրան և գրված լինելով ավելի ուշ, հավանաբար, ծագում է սրանից:

Աստվածատուրի «Ծաղ և գովասանք այգոյ, խաղողոյ և գինոյ» և Մարկավագ Բերդակացու այս ոտանավորները, ժամանակին տարածված լինելով որպես գինու և ուրախության երգեր, փոխադարձաբար ազդել են միմյանց վրա և հաճախ միախառնվել: Դա երևում է նաև վերջինիս B օրինակից, որտեղ 52-րդ տողից հետո արտագրված են Աստվածատուրի տաղի 11, 12 և 13-րդ տները, իսկ ավարտից հետո 14-րդ տունը:

Ազարիա Ջուղայեցի

1. ԱՂԱՐԻԱՅԻ ԲԱՆՔՍ ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԵԱՑ (էջ 285)

(«Ազարիշ Տէրն հաղցրացաւ ի յԱղամայ»)

Օգտագործված աղբյուրներ

A = *7707, թերթ 7բ—10ա:*
B = *3081, թերթ 6բ—7բ:*
C = *33, թերթ 158ա—159բ:*
D = *7709, թերթ 103բ:*
E = *84, թերթ 89բ—90ա:*
F = *4287, թերթ 105բ—107բ:*
G = *1989, թերթ 316ա—318ա:*
H = *5623, թերթ 160ա—160բ:*
δ = *8605, թերթ 97բ—99բ:*
J = *2459, թերթ 154ա—155բ:*
K = *7717, թերթ 152բ—153ա:*
L = *7714, թերթ 131բ—133բ:*
M = *3411, թերթ 8բ—10բ:*
N = *5668, թերթ 22բ—24բ:*

O = 7193, թերթ 129ա—131բ։

P = 9600, թերթ 60ա—61բ։

r = «Արևելեան մամուլ», 1885, № 3, էջ 122։ Հրատարակել է Գ. Սրվանձտյանը. Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 2394, թերթ 114ա։ Պահպանված են միայն վերջին 5 տողերը։

Բ. Երուսաղեմ, ձեռ. № 1485, թերթ 427ա (տե՛ս Պողարյան. Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 209)։

Գ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 102բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 791)։

Դ. Նույն ձեռագրում, էջ 222բ (նույն տեղում, էջ 792)։

Ե. Վիեննա, ձեռ. № 663, թերթ 51ա (տե՛ս Ոսկյան. Ցուցակ, հտ. Բ, էջ 154)։

Զ. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 61ա (նույն տեղում, էջ 283)։

Է. Վիեննա, ձեռ. № 979, թերթ 17ա (նույն տեղում, էջ 565)։

Ը. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 80ա (նույն տեղում, էջ 592)։

Թ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 159ա (նույն տեղում, էջ 675)։

Ժ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 87բ (նույն տեղում, էջ 897)։

ԺԱ. Վիեննա, ձեռ. № 1029, թերթ 84ա (նույն տեղում, էջ 619)։

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Դ պրակ, էջ 29—31։ Բնագիրը հանված է K աղբյուրից։ Հրատարակչի ձեռքի տակ եղել են նաև B և G օրինակները, որոնց տարբերությունները նա տվել է ծանոթագրության մեջ։

բ) Տ. Պալյան. Հայ աշուղներ, հտ. Ա, էջ 39—40։ Արտատպություն է «Նոր ժողովածուից»։

Տնագլուխ տառերը հոդում են «Ագարիայ բանք»։

Ագարիայի այս և մյուս տաղերի մատենագիտությունը կազմել է Հ. Անասյանը (տե՛ս Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ 269—272)։

2. ՏԱՂ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԱՌԱՋՆԱՃԱՇԱԿ ՊՏՂՈՅՆ ՄԱՀՈՒԱՄԲ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴՈՅՆ ՉԱՅՆԻՒՆ ԱՍԱ (էջ 289)

(«Արարիչն Հայրն երկնային. շարժեաց զգուրն աստուածային»)

Օգտագործված աղբյուրներ

a = Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Դ պրակ, էջ 31—32։ Բնագիրը հանված է Մատենադարանի № 1989 ձեռագրից, սակայն թերթեր ընկած լինելու հետևանքով ոտանավորն այժմ ձեռագրում չի պահվանված։

B = 2459, թերթ 156ա—157ա։

C = 6179, թերթ 52ա—52բ։

Տնագլուխ տառերը հոդում են «Ագարիայ»։ Ինչպես նկատել է նաև Կ. Կոստանյանցը, զգացվում է, որ ոտանավորը թերի է (տե՛ս «Նոր ժողովածու», Դ պրակ, էջ 32)։ a և C օրինակներն ընդհատվում են 14-րդ տողից։ Այդ տողից հետո B օրինակն ունի հետևյալ 16 տողը, որոնք, սակայն, ինչպես նկատել է Հ. Անասյանը, «մի

ուրիշ տաղի մնացորդ են երևում» (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա հտ. էջ 270)։

Մահ լուսափայլ արեգակ, սուրբ Գրիգոր շնորհօք,
Փրկչափայլ սուրբ եկեղեցայց,
Որպէս փափագէ եղջիւր աղբերաց,
Ով ոք անսղալ փափաքի միշտ երգ սաղմոսաց։
Յիւսեալ խառնի դասս հարիւրաւորաց
Եւ զիւր ննջեցեալ ընդ նմին լուսով զարդարած։
Ղօղեալ թուլամորթք և այլք և այլք տգիտաց,
Անհոգ ծուլանան և զրկին ի անճառ բարեաց։
Եւ որք բորբոքին սէրն սաղմոսաց,
Լուսեղեն տաճար շինեալ յանվաղճան կենաց։
Յանկան և ոմանք յերգս ընարաց,
Կիսատուն աւարտած է, կրակ հոգոյն վառած։
Ով ամէնօրհնեալ փրկիչ ողորմած,
Մաղթանօք դատի զմեզ, փրկեա ի չար փորձանաց,
Յորժամ եղանակէք տաղ սաղմոսաց,
Զերգօղս յիշեցէք, հայրք՝ւ եղբայրք, ձեր սուրբ յաղօթաց։

Այլ հրատարակություն

Տ. Պալյան, Հայ աշուղներ, հտ. Ա, էջ 42—43։ Արտատպություն է «Նոր ժողովածուից»։

3. «ՔԷԷՆ ՄԻՆՉԵՒ Ի ՅԱՅԲՆ ՕՐՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ» (էջ 290)

Օգտագործված աղբյուրներ

a = Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Դ պրակ, էջ 34—36։ Բնագիրը հանված է № 1989 ձեռագրից, սակայն թերթեր ընկած լինելու պատճառով ոտանավորն այժմ ձեռագրում չի պահպանված։

B = 2459, թերթ 160բ—162ա։

C = 6179, թերթ 34ա—36բ։

Այլ հրատարակություն

Տ. Պալյան, Հայ աշուղներ, հտ. Ա, էջ 44—45։ Արտատպություն է «Նոր ժողովածուից»։

Տնագլուխ տառերը (ի բաց առյալ վերջին տունը) կազմում են հայկական այբուբենը, բայց հակառակ դասավորությամբ (Ք—Ա)։ Վերջին տունը հիշատակարանային բնույթ ունի, որտեղ տրված է հեղինակի անունը՝ «Ազարիայի եղուկ» ձևով։

4. ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ (էջ 292)

(«Այսօր լցաւ խոստումն բանին, զոր խոստացաւ նախաստեղծին»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 2459 ձեռագրից, թերթ 158բ—160բ։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 80ա—81ա (տե՛ս Ոսկյան. Ցուցակ. հտ. Բ, էջ 592):

5. ՈՂԲ ԴԱՏԱՍՏԱՆԻ (էջ 294)

(«Օրհնեալ է կամքն աստուածային, անմեղ, անմահ, միշտ կենդանին»)

Օգտագործված աղբյուրներ

A = *2459, թերթ 162ա—163ա:*
B = *6179, թերթ 31բ—33բ:*
Հրատարակվում է առաջին անգամ:

6. ՏԱՂ ՓԱՓԱԿ ՍՐՏՈՎ ԴՐԱԽՏԻՆ ԱԴԱՄԱՅ, ՅՈՎԱՍԱՓՈՒ ՉԱՅՆԻՒՆ ԱՍԱ. ՎԱ՛Յ ԻՆՉ ՄԵՂԱՒՈՐԻՍ (էջ 296)

(«Աւրհնեալ, գովեալ անուն անմահ արքային»)

Հրատարակվում է առաջին անգամ Մատենադարանի № 6179 ձեռագրից, թերթ 46ա—49ա:
Տնագլուխ տառերը հոդում են «Ազարիայ Ջուղայեցի»:

Ստեփանոս

ՏԱՂ ՍԻՐՈՅ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 299)

(«Նագլու տիլպէր, գալմ բեաֆիր, սև աչեր»)

Օգտագործված աղբյուրներ

A = *10208, թերթ 157ա:*
B = *1989, թերթ 158բ—159ա:*
C = *7193, թերթ 122ա—123բ:*
D = *9597, թերթ 61ա—62ա:*
E = *1990, թերթ 39ա—39բ:*
f = *«Անահիտ», 1903, № 9, էջ 154: Հրատարակել է Ա. Չոպանյանը: Բնագիրը հանված է Վենետիկի № 556 ձեռագրից:*

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 979, թերթ 46բ, «Տաղ սիրոյ» խորագրով (տե՛ս Ոսկյան. Ցուցակ. հտ. Բ, էջ 566 (Այստեղ, տաղի վերջում, որպես հեղինակի անուն, հիշատակված է ոչ թե «Խև Ստեփանոս», այլ «Խև Ովանէս»:

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Ա պրակ, էջ 46—47: Բնագիրը հանված է B *աղբյուրից:*

բ) «Անահիտ», 1901, № 10—11, էջ 259: Հրատարակել է Ա. Չոպանյանը: Բնագիրը հանված է Վենետիկի № 45 ձեռագիր տաղարանից: Թերի է և՛ սկզբից, և՛ վերջից:

գ) Ա. Ղոպանյան, Հայ էջեր, էջ 17—18։ Քննական բնագիր է կազմված E և F օրինակների հիման վրա։

Կրկնակը, տողավերջի բառերի կրկնությունները, «ևար» բառի օգտագործումը կրկնվող բառերից առաջ և հետո, վկայում են, որ ԺՉ—ԺԷ դարերի մի շարք այլ տաղերի նման սա ևս երգվել է։

Վարիր Մկրտիչ

ՏԱՂ ՄԿՐՏՉԻ ԱՍԱՅԵԱԼ ԱՆՈՒՇ (էջ 302)

(«Սկրճ սիրով պիտի, չպիտի ճորով»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10208, թերթ 167բ—169ա։
B = 9271, թերթ 134բ—136բ։
C = 1920, թերթ 40ա—40բ։

Հրատարակություններ

ա) «Անահիտ», 1909, № 1—2, էջ 29։ Հրատարակել է Ա. Ղոպանյանը, C աղբյուրից՝ կատարելով ուղղագրական բնույթի մի շարք փոփոխություններ՝ 46-րդ տողում «կանանչիդ» բառը փոխել է «կանակիդ» բառով, տողը կարդալով «երբ կոնակիդ վրա կարմիրդ հագար»։ Սխալ է։ Բոլոր ձեռագիր օրինակներում տողը նույնն է՝ «երբ կանանչիդ վրա կարմիրդ հագար»։

բ) Ա. Ղոպանյան, Հայ էջեր, էջ 20։ Արտատպություն է «Անահիտից»։

գ) Մ. Մկրյան, XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 179—180։ Արտատպություն է նախորդ հրատարակությունից։

Հրատարակված օրինակների մեջ պակասում են 40—44 և 70—89 տողերը։

Ղևառոս

ՏԱՂ ՊԵՏՐՈՍ ԱՆՈՒՆ ՈՄՆ ԱՍԱՅԵԱԼ (էջ 306)

(«Ես կաճգեիմ ի Ռո դիմացդ»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 10208 ձեռագրից, թերթ 164ա—165ա։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 164ա (տե՛ս Ոսկյան. Յուցակ, հտ. Բ, էջ 594)։

Մարզվանցի

ՏԱՂ ՍԻՐՈՅ ՄԱՐԳՈՒԱՆՑԻ ՈՄՆ ԱՍԱՅԵԱԼ (էջ 309)

(«Այս ինչ խաւար սիրու բաներ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10208, թերթ 149բ—150բ։
B = 1990, թերթ 46բ—47ա։

Երկու օրինակներն էլ թերի են։

Հրատարակվում է առաջին անգամ։

Աս. Մնացականյանն այս ստանավորը դիտել է որպես ԺԴ— ԺԵ դարերում ստեղծված «Հովհաննես և Աշա» ժողովրդական սիրային գրույցի ԺԸ դարի արձագանք։ Այդ գրույցը նկատի ունենալով նա գրել է. «Քննության առարկա նյութի արձագանքը գտնում ենք նաև XVIII դարի նորահայտ բանաստեղծ Մարզվանցի Նախոյի Մելիքի սիրո մի երգում, որը նվիրված է «Մանանդ Խաթունին»։ (Տե՛ս Հայկական ժողովրդական երգեր, էջ 517)։ Ապա մեջ է բերել այս ոտանավորի 1—2 և 17—20 տողերը։ Նա Մարզվանցուն ենթադրաբար ԺԸ դարի բանաստեղծ է համարել, քանի որ դեռևս ծանոթ չի եղել A աղբյուրին, որը Մատենադարանը ձեռք է բերել նրա գրքի հրատարակությունից հետո։ Ինչ վերաբերում է հեղինակի անունին («Նախոյի Մելիք»), ապա դա պարզ թյուրիմացություն է՝ առաջացած B օրինակի 22-րդ տողի սխալ ընթերցումից։ Ահա 21—22-րդ տողերն ըստ B օրինակի.

Մանանդ Խաթուն, ես քեյ գերի,
Նայ խոյ մելիք ես, ես հուրի։

Խեվ Կաֆացի

1. ԱՅԼ ՏԱՂ ՈՒՄԵՄՆ ԿԱՖԱՅԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ (էջ 313)

(«Է՛, գեղեցիկ պատկեր մաքուր»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10208, թերթ 159ա—159բ։
B = 7715, թերթ 13ա—13բ։
C = 927, թերթ 116բ—117ա։
D = 1990, թերթ 47ա—47բ։

Հիշատակել է Վ. Միքայելյանը (տե՛ս «Ղրիմի հայկական գաղութի պատմություն», Երևան, 1964, էջ 315)։

2. ՆՈՐԻՆ ԿԱՖԱՅՈՅ ԱՍԱՑԵԱԼ Է ՏԱՂՍ (էջ 315)

(«Յանկարծակի մէկ մի տեսայ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10208, թերթ 159բ—160ա։
B = 2394, թերթ 44բ—45բ։
C = 7715, թերթ 13բ—14ա։
D = 7714, թերթ 92ա—93ա։
E = 10167, թերթ 37ա—37բ։
F = 7708, թերթ 51ա—51բ։
G = 9271, թերթ 117ա—118բ։

Հիշատակել է Վ. Միքայելյանը (տե՛ս «Ղրիմի հայկական գաղութի պատմություն», էջ 315)։

Գրիգոր Եպիսկոպոս

«ԹԻՒՆ ՀԱՉԱՐ ՀԱՅՈՑ ԱՂԹԻՒՆ» (էջ 318)

Արտատպվում է Պողարյանի «Մայր ցուցակի» ե հատորից, էջ 299—300: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 1541 ձեռագրից, թերթ 18ա—20ա:

Պարսամ Տրապիզոնցի

ՏԱՂ ՎԱՄՆ ԱԿՈՒԱՅԻ, ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է ՊԱՐՍԱՄ ՏՐԱՊԻԶՈՆՑԻՆ (էջ 320)

(«Ակռայէկս ճալ մի չունի»)

Օգտագործված աղբյուրներ

a = *«Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 594—595: Հրատարակել է Ն. Ակինյանը: Բնագիրը հանված է Վիեննայի № 1002 ձեռագրից, թերթ 190բ—192ա:*

B = *695, թերթ 235բ—237ա:*

C = *7717, թերթ 116ա—117ա:*

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. *Նոր ժողովածու, Ա պրակ, էջ 57—60: Բնագիրը հանված է C աղբյուրից:*

բ) Մ. Մկրյան. *XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ պրականություն, էջ 227—229: Արտատպություն է «Նոր ժողովածուից»:*

Հովհաննես (Ա)

«ԹԻՒՆ ՀԱՉԱՐ ՔԱԱՆ ԵՒ ՈՒԹԻՒՆ» (էջ 325)

Արտատպվում է Ղ. Ալիշանի «Այրարատից», էջ 300—301: Աղբյուրը չի հիշատակված:

Բացի առաջին տնից, մյուս տների սկզբնատառերը հոգում են «Յովաննէս ա»: Ինչպես միշտ նկատում է հրատարակիչը, այս ծայրակապը, որը շարունակություն է պահանջում, հուշում է, որ երկի վերջին մասը պակասում է: Ղ. Ալիշանը ձանոթագրության մեջ նաև գրում է. «Յովհաննէս ոմն, ժամանակակից դիպացս՝ այսպէս չափական բանիւ պատմէ»:

Հովհաննես (Բ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՂԵԼ Ի ՂՂԼՊԱՇԻ ՎԵՐԱՅ ԿԱՄ ՇԻՐՎԱՆ ԿԱՄ ՏԱՄԻՐ ՂԱԲՈՒԻՆ (էջ 327)

(«Մեծ թլական էր հազարին»)

Օգտագործված աղբյուրներ

A = *2939, թերթ 504ա—505ա:*

b = Քերոբե Պատկանյան, Նշխարք մատենագրութեան Հայոց, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 65—66։ Բնագիրը հանված է Փարիզի № 286 ձեռագրից։

Ամբողջական բնագիրը հրատարակվում է առաջին անգամ։

Ք. Պատկանյանը հրատարակել է որպես Աբրահամ Անկյուրացու ստեղծագործություն, քանի որ իր ձեռքի տակ եղած ձեռագրում սրան նախորդել է Աբրահամ Անկյուրացու «Ողբ ի վերայ առման Կոստանդնուպօլսոյ ի Տաճկաց» երկը։ Ընդ որում, նա ձեռագրի գրիչ Ղաբլանի անունը դիտել է որպես Աբրահամ Անկյուրացու մականուն («Աբրահամ Անկիւրացւոյ Ղաբլան կոչեցելոյ ողբ...»։ Ընդգծված բառերը ձեռագրում չկան)։

Հ. Անասյանի կարծիքով Ղաբլանը «Ողբ ի վերայ առման Կոստանդնուպոլսոյ ի Տաճկաց» երկի ոչ թե հեղինակը, այլ գրիչն է, իսկ այս երկի հեղինակը այլ անձնավորություն է և գրել է առաջինից 130 տարի հետո, նրա նմանությամբ (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ 82—83)։

Պ. Խաչատրյանը, ձեռքի տակ ունենալով A ազբյուրը, ոտանավորի վերջին տան մեջ կարդացել է հեղինակի անունը՝ «Ես Յոհաննէս մեղօք ի լի»։ Ինչ վերաբերում է Ղաբլանին, ապա նա իրավացիորեն նկատել է, որ դա b ազբյուրի գրիչն է, ինչպես Մարտիրոսը՝ A ազբյուրինը (տե՛ս Պ. Խաչատրյան, ՀՄՊՈ, էջ 133—134)։

Տեր Հովհաննես

«ԸՆԿԱԼ ՏԷՐ ԱՐԱՐԻՉ. ԴՈՒ ՍՏԵՂԾՈՂ ԵՍ ՀԱՄԱՅՆԻՑ» (էջ 333)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 10050 ձեռագրից (թերթ 451ր—452ր)։

Մկրտիչ Տարոնեցի

ԱՒԱՂ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ Ի ՏԱՐՕՆԵՑԻ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 335)

(«Օրհնեալ անման թագաւոր»)

Օգտագործված ազբյուրներ

A = 1661, թերթ 100ա— 103ր։
B = 10050, թերթ 104ա—104ր։
C = 7707, թերթ 39ա—44ր։
D = 3081, թերթ 210ա—212ր։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 63ր—70ր (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 283)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 356ա (նույն տեղում, էջ 680)։

Հրատարակվում է առաջին անգամ։

Գրված է 1577 թ.։

«ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, ՄԱՅՐ ՔՐԻՍՏՈՍԻ» (էջ 343)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 4370 ձեռագրից, թերթ 160ա։

Հեղինակը ձեռագրի գրիչներից մեկն է։

Մելիտե

Ա.ՅԻ ՏԱՂ ԼԱՒ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ (էջ 345)

(«Մի՛ տրտմիր, ո՛վ զարիպ, ի մէջ աշխարհի»)

Հրատարակվում է Մատենադարանի № 597 ձեռագրից, թերթ 204ա—204բ։

Տնաքցուխ տառերը հողում են «Մելքոն»։

Առաջին անգամ, նույն ագբյուրից, հրատարակել է Մ. Մկրտչյանը, «Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV—XVIII դդ.)» ժողովածուում (էջ 29—30), «Մի՛ տրտմիր ո՛վ զարիպ ի մէջ աշխարհի» խորագրով։

Անանուն (ԺԱ)

ՏԱՂ ՍԻՐՈՅ (էջ 346)

(«Զարիպ կարիճ 'մ յօտար յերկրէ եկեր է»)

Օգտագործված աղբյուրներ

A = *10050, թերթ 401բ—402բ*

B = *Վիեննա, ձեռ. № 343, թերթ 179ա—179բ (Մատենադարան, մանրաժապավեն № 692)։*

C = *Վիեննա, ձեռ. № 343, թերթ 245բ և 250ա (նույն տեղում)։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 280ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, Հատ. Բ, էջ 290)։

Բ. Բրիտանական Թանգարան, Հայերեն ձեռ. № 108, թերթ 263բ (տե՛ս Conybeare, A Catalocue, *էջ 280), բերված են ոտանավորի առաջին երեք տողերը, որոնք նման են* A *օրինակին։*

Գ. Քառասուն մանկունք, ձեռ. № 28, թերթ 53ա, «Տաղ զարիպի, ասացեալ ի Ովանէս էրէցն» խորագրով (տե՛ս Սաւմելյան, Յուցակ, էջ 385)։ Բերված են ոտանավորի առաջին 6 տողերը (որոնք ավելի նման են B *օրինակին) և վերջին երկու տողերը.*

> *«Տաղեր Թուրկուրանցի, Հաղեր խաղեր Խաթայի,*
> *Ասող էր ու պատմող նման Յուդայի»։*

Այս տողերը նույնպես B *օրինակում կան, բայց այնտեղ դրանք վերջին տողերը չեն։ Հակառակ Ա. Սաւմելյանի նշած օրինակի խորագրի («ասացեալ ի Ովանէս էրէցն») ոտանավորը Հովհաննես երեց Հալեպցունը չէ (Հալեպցին այդ ձեռագրի*

գրիչն է և այստեղ ունի արտագրած նաև իր մի քանի տաղը), քանի որ ոտանավորը կա նաև 1605 թ. ձեռագրում (A աղբյուր), երբ Հովհաննես Հալեպցին դեռ ծնված չէր: Վերջինս, ըստ երևույթին, այս ոտանավորի տարածողներից մեկն է եղել:

Ոտանավորը պիտի հորինված լինի 1605 թվականից առաջ, ըստ երևույթին ԺԶ դարի կեսերին, որովհետև մեզ հասած հնագույն օրինակում անգամ այն արդեն խիստ աղավաղված է, պակասավոր (աղավաղված է նաև մյուս երկու օրինակներում) և, ըստ երևույթին, անավարտ:

Անանուն (ԺԲ)

ԱՅԼ ՏԱՂ ՍԻՐՈՅ (էջ 348)

(«Այբէն մինչև ի բէն բենէ գանկտիմ ես»)

Արտատպվում է Ա. Զոպանյանի «Հայ էջերից», էջ 29—30: Բնագիրը հանված է Վենետիկի № 160 ձեռագրից:

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 344, թերթ 62ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 794—795):

Տողերի սկզբնատառերն այբբենական կարգով են:

Բնագրից կարելի է ենթադրել, որ այս բանաստեղծությունը հորինված է վարդի և սոխակի ավանդական սիրավեպերին հատուկ տրամախոսության եղանակով: Դրա համար էլ տրամախոսական յուրաքանչյուր հատվածի սկզբում գծիկ ենք դրել:

Գրության ժամանակը (ԺԶ դար) որոշել ենք ենթադրաբար՝ նկատի ունենալով բանաստեղծության լեզվառճական առանձնահատկությունները, բառամթերքը, ինչպես նաև բանաստեղծության վրա այդ դարի համանման երկերի մեծ (երբեմն, նույնիսկ, բառացի) ազդեցությունը:

Անանուն (ԺԳ)

ՈՂԲ ՏՂԱՅՈՅ, ԱՍԷՔ ՔԱՂՑՐ (էջ 350)

(«Ո՛վ գեղեցիկ և նազելի»)

Արտատպվում է Պողարյանի «Մայր ցուցակի» Ը հատորից, էջ 42—43: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 2406 ձեռագրից, թերթ 355ա:

Լեզվառճական առանձնահատկություններն ու բառամթերքը հուշում են, որ ոտանավորը պիտի գրված լինի ԺԶ դարում:

Մուրաղ խիկար

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ (էջ 353)

(«Մարտն կու գայ ծաղկներով»)

Օգտագործված աղբյուրներ

A = 7707, թերթ 260ա—261ա:

B = 3081, թերթ 32ա—33ա:

C = 7709, թերթ 6բ—8ա:
D = 33, թերթ 169ա—170ա:
E = 697, թերթ 65ա—66ա:
F = 1989, թերթ 158ա—159բ և 170բ—172ա:
G = 5623, թերթ 211բ—212բ:
H = 8605, թերթ 89բ—91ա:
δ = 7717, թերթ 108ա—109ա:
J = 7129, թերթ 179ա—181ա:
K = 7193, թերթ 111բ—113բ:
L = 5668, թերթ 36բ—38ա:
M = 8674, թերթ 78ա—79ա:
N = 1887, թերթ 229ա—230ա:
O = 7714, թերթ 161ա—163ա:
P = 7667, թերթ 30ա—31բ:
Q = 5954, թերթ 29ա—29բ:
R = 7009, թերթ 9ա—10ա:
S = 8655, թերթ 5բ—7բ:
T = 9934, թերթ 55ա:
U = 1990, թերթ 51ա—51բ:
V = 7206, թերթ 39ա—40բ:
W = 7159, թերթ 22բ—25բ:
X = 4335, թերթ 64բ—65ա և 184ա—184բ:
Y = 9002, թերթ 2բ—3բ:
Z = 7712, թերթ 2ա—4ա:
α = 10723, թերթ 51բ—52ա:
β = 3869, թերթ 93բ—96բ:
γ = 10167, թերթ 34բ—35բ:

a = «Գիրք պարութեան և Տաղարան վայելուչ...», 1714, էջ 203—205: Աղբյուրը չի հիշատակված:

b = Գամառ-Քաթիպա. Ազգային երգարան, էջ 104—105 (թերի): Աղբյուրը չի հիշատակված:

d = «Բազմավէպ», 1862, էջ 66: Առանց աղբյուրը հիշատակելու հրատարակել է Ղ. Ալիշանը: Այստեղ պակասում է վերջին տունը, որտեղ հիշատակվում է Մուրադ Խիկար անունը: Այդ պատճառով հրատարակիչը ենթադրում է, թե հեղինակը «Տիգրանակերտի կոդմերէն կերեւի» և որ նա «ճարտարագոյն» երգիչ է, «բազմահարուստ անձ մը», «թերեւս հնագոյնը» մեր երգիչների մեջ: Ղ. Ալիշանի կարծիքով դա Մկրտիչ Նադաշն է:

e = «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1940, № 12, էջ 273: Հրատարակել է Հ. Քյուրտյանը 1740 թ. գրված մի տաղարանից:

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 230ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 792):

Բ. Վիեննա, ձեռ. № 979, թերթ 29բ, «Տաղ ուրախութեան» խորագրով (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 565): Բերված է սրա վերջին տունը, որն զգալիորեն տարբեր է մյուս օրինակներից.

Մուրաղ Խիկարն ասաց սիրով,
Խև եմ դարձեր զէտ գինով,
Կու պարծենամ Հայր աստուծով...

Գ. Վիեննա, ձեռ. № 643, թերթ 7ա (նույն տեղում, էջ 125):

Դ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 84ա (նույն տեղում, էջ 592):

Ե. Վիեննա, ձեռ. № 1029, թերթ 36ա (նույն տեղում, էջ 619):

Զ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 376բ (նույն տեղում, էջ 681):

Է. Վիեննա, ձեռ. № 1215, թերթ 85բ (նույն տեղում, էջ 863):

Ը. Վիեննա, ձեռ. № 514, թերթ 118ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 987):

Թ. Երուսաղեմ, ձեռ. № 1417, թերթ 385ա, «Տաղ գարնան ազնիւ» խորագրով (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 76):

Ժ. Երուսաղեմ, ձեռ. № 1485, թերթ 416ա, «Տաղ գեղեցիկ անուշ» խորագրով (նույն տեղում, էջ 209):

ԺԱ. Նոր Ջուղա, ձեռ. № 541, թերթ 79ա—80ա (տե՛ս Տեր-Ավետիսյան, Ցուցակ, հտ. Ա, էջ 812):

ԺԲ. Զմմառ, ձեռ. № 84, թերթ 49բ, «Տաղ ազնիւ գարնան» խորագրով (տե՛ս Քեշիշյան, Ցուցակ, էջ 164):

ԺԳ. Զմմառ, ձեռ. № 532, թերթ 70ա, թերի (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 138):

ԺԴ. Քառասուն մանկունք, ձեռ. № 50, թերթ 165ա, «Տաղ գարնան գեղեցիկ» խորագրով (տե՛ս Սուրմեյան, Ցուցակ, էջ 104):

ԺԵ. Քառասուն մանկունք, ձեռ. № 121, թերթ 33ա, «Տաղ սուրբ Զատկին» խորագրով (նույն տեղում, էջ 209):

ԺԶ. Հալեպի ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 701ա (տե՛ս Սուրմեյան, Մայր ցուցակ, Հալեպի, հտ. Բ, էջ 88):

Այլ հրատարակություններ

ա) «Գրքուկս որ կոչի Տաղարան...», էջ 342—344: Արտատպություն է «Գիրք դպրութեան և Տաղարան վայելուչից»:

բ) Մ. Միանսարյան, Քնար հայկական, էջ 378: Արտատպություն է Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարանից»:

գ) Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Ա, Վենետիկ, 1869, էջ 184: Արտատպություն է «Բազմավէպից»:

դ) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 5—7: Հրատարակության համար հիմք է ծառայել 1647 թ. գրչության ձեռագիրը (աղբյուր F): Տողատակ բերված են Գամառ-Քաթիպայի, Ղ. Ալիշանի հրատարակած օրինակների և իր ձեռքի տակ եղած մյուս՝ 1695 թ. գրչության ձեռագրի (աղբյուր δ) տարբերությունները:

Աղբյուրները բաղդատելով նկատում ենք.

Ա. P, R, S, T և e օրինակները նման են ավելի վաղ գրված J օրինակին և հավանաբար ծագել են նրանից: Սրանցում նույնն է տողերի դասավորությունը, պակաս տողերն ու բնութագրական տարբերությունները և խորագիրը՝ «Տաղ Զատկի»:

Բ. Դրանց բավականաչափ մոտիկ են նաև U, V, W, X, β, a և d օրինակները, որոնց մի մասը զգալիորեն աղավաղված է: Կարելի է ենթադրել, թե գոյություն է ունեցել նաև J օրինակին բավականաչափ նման մեկ այլ աղբյուր, որից և ծագել են այս խմբի օրինակները:

Դ. Միմյանց հետ որոշակի նմանություններ ունեն F, G և L օրինակները, սակայն ունեն նաև այնպիսի տարբերություններ, որ դժվար է ենթադրել, թե գրանք ծագել են միևնույն նախօրինակից։

Դ. G օրինակում վերջին տան փոխարեն արտագրված են Մուրադ Եփկարի տան հետ առնչություն չունեցող հետևյալ տողերը.

Բարև քեզ հարիւր հազար,
Թէ հազար դու դիս մոռացար,
Երբ դիս ուրացար, մոռացար,
Ինձ փոխան դու զո՞վ շահեցար։
Իրաւ է գերի բլբուլն, որ կուլայր,
Ջօրն և զվարդն և զենայր,
Նորա ծաղիկ չէ պակաս,
Բայց վարդին հոտըն չունին։

Նիկողայոս Ստամպոլցի

1. ՈՂՔ ՂՊՌՕՋԻ ԿՂՋՈՅՆ ԱՍԱՑԵԱԼ Է (էջ 358)

(«Հազարն էր Հայոց թին»)

Արտատպվում է «Անահիտից», 1931, № 5—6, էջ 66—72։ Հրատարակել է Ն. Ակինյանը։ Բնագիրը հանված է Վիեննայի № 1002 ձեռագրից, (թերթ 71բ—74ա)։ Հրատարակիչը նշում է, որ «Ողբի» այս մեկ օրինակն է իրեն ծանոթ։ Տողատակի ծանոթագրությունները հրատարակչինն են։

2. ՏԱՂ ԼԻՍՏ ԳԵՂԵՑԻԿ Ի ՎԵՐԱՅ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ԱՍԱՑԵԱԼ Է ԸՍՏԱՄՊՈԼՑԻ ՄՂՏԵՍԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԷ, ԶՈՐ ԵԻ ՂՊՌՕՋՈՒ ԱՅԼ ԱՍԵԱԼ Է (էջ 364)

(«Օրհնեսցում մեք միաբան»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 306ա—308ա։

Հրատարակություն

«Անահիտ», 1931, № 5—6, էջ 72—73։ Հրատարակել է Ն. Ակինյանը Վիեննայի № 745 ձեռագրից (թերթ 210ա—211բ), որն արտագրված է մեր աղբյուրից։

Պաղդասար Համբեցի

«ՓԱՌՔ ԱՆԵՂԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ» (էջ 367)

Հրատարակվում է երուսաղեմի № 1455 ձեռագրից, թերթ 199բ—201ա (Մատենադարան, մանրաժապավեն № 916)։ Հեղինակը ձեռագրի գրիչն է։

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է Ն. Պողարյանը (տե՛ս Մայր յուցակ, հա. 6, էջ 143—145)։

Գրված է 1584 թ.։

Ստեփանոս Կեղեցի

ՈՏԱՆԱԻՈՐ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ ԽԱԲԷՈՒԹԵԱՆ. ԱՄԵՆԱՅՆ ՄԱՐԴՈՅ ՕԳՈՒՏ (էջ 371)

(«Փա՛ռք քեզ բազաւոր փառաց, մի՛ բողուր զստեղծուածդ ի ձեռաց»)

Օգտագործված աղբյուրներ

A = *3081, թերթ 247բ—248բ։*
B = *4287, թերթ 79ա—81ա։*
C = *8605, թերթ 105բ—107բ։*
D = *7193, թերթ 71ա—73բ։*
E = *2394, թերթ 22ա—24բ։*
F = *9966, թերթ 29ա։*
G = *7057, թերթ 13բ։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 227ա (տե՛ս Տաշյան. *Ցուցակ, էջ 792)։*

Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 525ա (տե՛ս Ոսկյան. *Ցուցակ, հտ. Բ, էջ 685)։*

Գ. Զմմառ, ձեռ. № 583, թերթ 8բ, «Տաղ գեղեցիկ ի վերայ կանանց» խորագրով (տե՛ս Ակինյան, Ոսկյան, *Ցուցակ, հտ. Բ, էջ 192)։*

Դ. Համաձայն Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» (հտ. Բ, էջ 1461), ոտանավորի մեկ օրինակ էլ եղել է Մատենադարանի № 8714 ձեռագրում (թերթ 20ա)։ Սակայն ձեռագրից թերթ ընկած լինելու հետևանքով, չի պահպանվել։

G *օրինակում կան Գրչի ավելացրած հետևյալ տողերը.*

Յաւուր միում զայս գրեցի,
Յետոյ ելեալ դուրս գնացի,
Որքան հնարս հնարեցի,
Ոչ եղև ճարն՝ ցաւօք մնացի։
Շատ ջանացի թերևս ելն և կատարածի,
Լինի թե խաղաղութիւն առնեմ և ոչ կարացի։
Առ ի միտս զխրատն իմաստնոյն,
Թէ լաւ է յանապատի բնակիլ,
Քան ընդ կնոջ անզգամի,
Լեզուանի և բարկացողի։

Մելքեսեդեկ

«ՄԵՐ ՄԵՂՔՆ Է ԱՌԵՐ ԶԽՕՐՈԶՆ ԶՕՐԱՒՈՐ» (էջ 375)

Հրատարակվում է Մատենադարանի № 7193 ձեռագրից, թերթ 115բ—117բ։

Այլ օրինակ

Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 829ա (տե՛ս Սուրմեյան, *Մայր ցուցակ Հալեպի, հտ. Բ, էջ 89)։*

Տնագլուխ տառերը հոդում են «Մելքեսեդ և ասէր»։

Առաջին անգամ, նույն աղբյուրից, հրատարակել է Ա. Մնացականյանը (տե՛ս Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու» № 2, 1950, էջ 200—201)։

Միքայել Քահանա

1. ՈՏԱՆԱՒՈՐ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ Է (էջ 377)

(«Մեծ մեղապարտ գրչէս խնդիր»)

Արտատպվում է Պողարյանի «Մայր ցուցակի» Զ հատորից, էջ 354—356: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 1915 ձեռագրից, թերթ 314ա—321ա:

Միքայել քահանան այս ձեռագրի գրիչն է, որը երևում է ոտանավորի 1—21-րդ տների տնագլուխ տառերով կազմված «Միքայէլ գրչէս է բանքս այս» ծայրակապից:

2. ԱՅԼ ԲԱՆՔ ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ (էջ 380)

(«Քրիստոս աստուած երկնից իջաւ»)

Արտատպվում է Պողարյանի «Մայր ցուցակի» Զ հատորից, էջ 356: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 1915 ձեռագրից, թերթ 321ա—322ա:

Խաչատուր Վարդապետ

«Խ ԶԱՆՑԱՆՍ, ՈՐ ԵՍ ԳՈՐԾԵԱԼ ԵՄ» (էջ 382)

Հրատարակվում է առաջին անգամ Մատենադարանի № 7707 ձեռագրից, թերթ 256բ—258ա:

Տնագլուխ տառերը հոդում են «Խաչատուր Վարդապետէ», որից երևում է, թե «ո»-ով սկսվող տունը պակասում է: Ծայրակապը չխախտելու համար «Խ» փակագիրը չենք բացել:

Անանուն (ԺԴ)

«ԹԷ ԻՆՉ ԱՆՕՐԷՆ ԿՈՒ ԼԻՆԻ. ԵՂԵՆ ԱՆՀԱՒԱՏ» (էջ 385)

Հրատարակվում է Երուսաղեմի № 1455 ձեռագրից, թերթ 133ա (Մատենադարան, մանրաժապավեն № 916):

Ձեռագրից թերթ ընկած լինելու պատճառով թերի է՝ պակասում է սկիզբը:

Գրության ժամանակը որոշելու համար մեր ձեռքի տակ եղած միակ փաստը ձեռագրի գրչության տարեթիվն է՝ 1622: Դրանից ելնելով ենթադրում ենք, որ բանաստեղծությունը պետք է գրված լինի կամ ԺԶ դարի վերջին կամ ԺԷ դարի սկզբին:

Գրիգոր Վանեցի

1. ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՎԱՆԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ ԽՐԱՏ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՌԱԿԱՒՈՐ ՎԱՍՆ ՍԱՅԼԻ (էջ 386)

(«Յոյժ տարակուսեալ էի, դեզերեալ ի յիմում սրտի»)

Հրատարակվում է Մատենադարանի № 5623 ձեռագրից, թերթ 140բ—147բ:

Առաջին անգամ, նույն աղբյուրից հրատարակել է Ա. Մնացականյանը (տե՛ս «Էջմիածին», 1975, № 10, էջ 43—45):

2. ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ԻՄԱՍՏՈՒՆ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 393)

(«Է՛ իմ արարիչ աստուած, զմարդ պահէ, որ չի զալատի»)

Հրատարակվում է Մատենադարանի № 5623 ձեռագրից, թերթ 147բ—150ա։

Առաջին անգամ, նույն աղբյուրից հրատարակել է Ա. Մնացականյանը (տե՛ս «Էջմիածին», 1975, № 10, էջ 45)։

Հովասափ Երզնկացի

ՏԱՂ ՎԱՍՆ ԿԱՆԱՆՑ (էջ 397)

(«Ականջ դրէք և լսեցէք»)

Արտատպվում է Պողարյանի «Մայր ցուցակի» Գ հատորից, էջ 571—574։ Բնագիրը հանված է Երուսաղեմի № 976 ձեռագրից, թերթ 224բ—230բ։

Ձեռագրի գրիչը, ինչպես հիշատակվում է տաղին կցված վերջին հավելյալ տան մեջ, Հովասափ Երզնկացու որդի Հովհաննեսն է։

Երևում է ձեռագրում հաճախ «ջ» տառի փոխարեն գրված է եղել «չ»։ Ն. Պողարյանը հրատարակել է նույնությամբ, մենք հարմար գտանք ամենուրեք ուղղել։

Կարապետ Դպիր

1. ՏԱՂ ՎԱՍՆ ՎԱՐԴԻ Ի ԿԱՐԱՊԵՏ ԴՊՐԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 404)

(«Պիլպիլն է հազեր ի յոտն կօշիկ»)

Օգտագործված աղբյուրներ

A = *7717, թերթ 193բ—194բ։*

B = *7709, թերթ 11ա—12ա։*

C = *5934, թերթ 11բ—12բ։*

d = *«Հայաստանի կոչնակ»։ Նյու Յորք, 1940, № 41, էջ 1005—1006։ Հրատարակել է Ա. Երեմյանը։ Բնագիրը հանված է հրատարակչի սեփական, 1680 թ. գրչության մի ձեռագրից։*

e = *«Գրքուկս, որ կոչի Տաղարան», 1740, էջ 349—350։ Աղբյուրը չի հիշատակված։*

F = *4335, թերթ 82բ—83ա, նույնը, էջ 63բ։*

G = *9934, թերթ 52ա—52բ։*

H = *6514, թերթ 31բ։*

δ = *7716, թերթ 43ա—44ա։*

J = *10293, թերթ 2բ։*

K = *9536, թերթ 116ա։*

l = *Ա. Տեկանց, Հայերգ, էջ 72—73։ Աղբյուրը չի հիշատակված։*

m = *Գամառ-Քաթիպա, Ազգային երգարան, էջ 154—155։ Աղբյուրը չի հիշատակված։*

n = *«Գիրք զպրութեան և Տաղարան վայելուչ...», 1714, էջ 213—124։ Աղբյուրը չի հիշատակված։*

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 9301, թերթ 32բ. Միայն առաջին տունն է, որը համընկնում է A օրինակին։

Բ. Վիեննա, ձեռ. № 405, թերթ 26բ—30ա (տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 857)։

Գ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 256ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 678)։

Դ. Զմմառ, ձեռ. № 593, թերթ 57ա (տե՛ս Ակինյան, Ոսկյան. Յուցակ, հտ. Բ, էջ 203)։

Ե. Վիեննա, ձեռ. № 514, թերթ 144ա (տե՛ս Տաշյան. Յուցակ, էջ 987)։

Այլ հրատարակություններ

ա) Մ. Միաքսարյան, Քնար հայկական, էջ 246։ Արտատպություն է «Ազգային երգարանից»։

բ) Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 14—15։ Բնագիրը հանված է A աղբյուրից։ Հրատարակիչը խորագրից հանել է «Ի կարատիկ զպրէ ասացեալ» բառերը և բնագրում կատարել երկու շտկում (8 և 17-րդ տողերում)։

Ձեռագրերում (բացի երկուսից) յուրաքանչյուր հայերեն տան հետևում է մեկ հայատառ թուրքերեն տուն, որոնք հայերենների թարգմանությունները չեն, այլ փոխադրություններ։ Ստորև բերում ենք այդ տները՝ թարգմանությամբ հանդերձ.

Եաօլարի կէդէր աշար տաղլարի,
Աղլայիպ սօրայ պիւլպիւլ պաղլերի,
Գայտէ պրաք միշ չաղըրըր գուլ կիւլ
Պէն պիւլպիւլ, սէն գուլ։
Կիւլէ զօնչէ հէ պիւլպիւլ.
Վէր իր սէլամ հաթըրարըն սօրար,
Պարէքի քէլամ գայտա տար.
Պէն պիւլպիւլ, սէն գուլ։
Սէնտէ սէվմէզմիսին իւրիւզկեար,
Սէսին գայտէ պըրաքմիշ չաղըրըր,
Կիւլ, կիւլ, պէն պիւլպիւլ, սէն կիւլ,
Պէն պիւլպիւլ, սէն գուլ։

Ճամփեքն է շրջում, անցնում լեռները,
Լալիս է, փնտրում պլպուլն այգիները,
Ձայն է արձակում, կանչում է վարդ վարթ
Ես պլպուլ, դու վարդ։
Ժպտում է կոկոնը պլպուլին,
Օրհնության խոսքը (ողջույնը) կարդ է,
Բարև է տալիս, ողջույնը հարցնում,
Ես պլպուլ, դու վարդ։
Դու էլ չես սիրում բախտը,
Ձայնն ադամ թողած կանչում է,
Վարդ, վարդ, ես պլպուլ, դու վարդ,
Ես պլպուլ, դու վարդ։

2. ՏԱՂ ՂԱՐԻՊԻ Ի ԿԱՐԱՊԵՏԻ (էջ 406)

(«Ի յերկիր օտար ճեռացայ»)

Օգտագործված աղբյուրներ

A = *9600, թուի 89բ—90ա:*
B = *7717, թուի 208ա:*
C = *5941, թուի 2բ:*
D = *8540, թուի 69բ:*
E = *7057, թուի 27բ:*
F = *7057, թուի 28ա:*
G = *ՎՍՍՀ ԳԱ Կ. Ս. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտ, ձեռ. № 183, թուի 62բ—63ա:*
H = *4296, թուի 73բ—74ա:*
J = *6588, թուի 22ա:*
K = *10167, թուի 43ա—43բ:*

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 3228, թուի 6ա: Թուի է, ունի միայն մեկ հայելուն և երկու թուրքերեն տուն: Հայերեն տունը համընկնում է A օրինակին:

Բ. Վիեննա, ձեռ. № 405, թուի 30ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 857):

Դ. Վիեննա, ձեռ. № 436, թուի 38ա (նույն տեղում, էջ 892):

Գ. Ջմմառ, ձեռ. № 86, թուի 190բ (տե՛ս Քեշիշյան, Ցուցակ, էջ 180):

Ե. Ջմմառ, ձեռ. № 593, թուի 46ա (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հա. Բ, էջ 203):

Հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, Մկրտիչ Նազաշ և իւր տոդերը, էջ 53—54: Բնագիրը հանված է B աղբյուրից և քանի որ այստեղ Հեղինակի անվան փոխարեն գրված է «Մ՛վ եղկելի», Կոստանյանցը գրել է. «Հեղինակն անծանոթ է» (էջ 54):

բ) Մ. Մկրտչյան, Հայ ժողովրդական պանդխտության երգեր, էջ 243—244: Արտատպություն է Կ. Կոստանյանցի հրատարակությունից:

գ) Մ. Մկրտչյան, Հայ միջնադարյան պանդխտության տոդեր, էջ 33—34: Քննական բնագիր է, որը կազմելիս օգտագործված են բոլոր աղբյուրները, բացի K-ից: Մեր կազմած քննական բնագրից ունի հետևյալ տարբերությունները.

Ա. Որպես խորագիր գրված է ոտանավորի առաջին տողը:

Բ. Չի օգտագործված K օրինակը:

Դ. Որպես աղբյուր է դիտված Մատենադարանի № 3228 ձեռագրի օրինակը, որն ունի ընդամենը մեկ հայերեն և երկու թուրքերեն տուն:

Դ. 5, 17, 18 և 25-րդ տողերում տարբեր է մեր կազմած բնագրից, քանի որ Մ. Մկրտչյանը նախընտրել է այլ տարբերթերցվածներ:

Ե. Աղբյուրների դասավորության մեջ կան ժամանակագրական շեղումներ, օրինակ, Մատենադարանի № 7057 ձեռագրում միմյանց հաջորդող E և F օրինակները այստեղ չեն հաջորդում միմյանց, այլ ընդմիջարկվում են մի քանի այլ օրինակներով:

Զ. Ծանոթագրության մեջ Մ. Մկրտչյանը հարկ չի համարել բերել ոտանավորի

Հայատառ թուրքերեն տները, որոնք առկա են բոլոր օրինակներում, բացի G-ից: Մենք բերում ենք ստորև, թարգմանությամբ հանդերձ, ըստ J աղբյուրի, որտեղ ավելի լրիվ են պահպանվել.*

Պու տունեանը օթէսի եօթ,
Դարիբլըը տրր տէմիտէն օխ,
Մըչլանտր իւր-էկիմէ չօխ,
Օլտում փէրուշան, փէրուշան։
Դարիբլիքտէ տուրայ, տուրայ,
Աքլըմ օլտու պուրայ, պուրայ,
Պիրչ տէրման հաքտան օլայ,
Օլտում փէրուշան փէրուշան։
Քիմի օքսար, քիմի եաղար,
Ազամաքըն օլտում պէդար,
Քէրիմ ալլահ, եէլէ նազար,
Օլտում փէրուշան, փէրուշան։
Գանըը եաշար աքար կեօզտէն,
Ճիկէր քէպապ օլտու սեօզտէն,
Աճափ տէրթլի վա՞ր մի պիզտէն,
Օլտում փէրուշան, փէրուշան։
Կէճէ կիւնտուզ էտերէմ ա՞հ,
Մէվլան պանայ գէտիրմէ ա՞խ,
Նազար էլլէ գուլունայ բաղ,
Օլտում փէրուշան, փէրուշան։
Հանի օյլա գատում, զարդաշ,
Սէվգիլի տատատ եարան-եօլտաշ,
Սէնտէն այրըլալի շօլ պաշ,
Օլտում փէրուշան, փէրուշան։
Է՛ մի էլվի ալէր խասի,
Սուլտան, ջանգլի, մուշ փաշասի,
Մուրտ էլլէ կօնտում տէնասի,
Էլլէ փէրուշան, փէրուշան։

Կայան չունի այս աշխարհր,
Երկաթյա նետ է զարիբությունը,
Սիրտս մխրճվեց շատ խորը,
Եղե ցավալից, ցավալից։
Զարիբության մեջ մնացի,
Ուշք ու միտքս կորցրեցի,
Ինձ դեղ ու ճար Տերը հասցնի,
Եղե ցավալից, ցավալից։
Ո՛վ գրի, ո՛վ կարդա,
Լաց լինելուց հոգնելի,
Գուցե Տերը մեզ գթա,
Եղե ցավալից, ցավալից։
Արյուն է հոսում իմ աչքերից,
Լյարդս խորովվեց խոսքից,
Արդյոք վշտոտ կա՞ ինձանից,
Եղե ցավալից, ցավալից։
Ջոր ու զիշեր անում եմ ա՞հ,
Տե՛ր, մի թող որ անեմ ա՞խ,
Նայիր գերուդ և ողորմյա
Եղե ցավալից, ցավալից։
Ո՞ւր են եղբայր, ազգ-ազգական,
Ծանոթ, բնկեր և սիրական,
Այս գլուխը քեզանից բաժան,
Եղե ցավալից, ցավալից,
Ամեն ամոլ կառնի բնտիրը,
Սուլթան, ռազմիկ, Մուշի փաշա,
Մեռցրու երկվորիքիս հատիկը,
Արա ցավալից, ցավալից։

Միջատ

Ի ՄԻՆԱԼԻ ԱՍԱՅԵԱՆ, ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ (էջ 408)

(«Գեղեցիկ պատկեր»)

Օգտագործված աղբյուրներ

A = 9271, թերթ 133բ—134բ։
B = 9362, թերթ 16ա—16բ։
C = 1990, թերթ 41ա—41բ։

---

* Նպատակահարմար չգտանք դնել բնագրի մեջ, քանի որ վերծանություններ են և նոր բան չեն ավելացնում ոտանավորին։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 92ա—92բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 791)։

Բ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 183բ (նույն տեղում, էջ 792)։

Գ. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 271բ (նույն տեղում, էջ 793)։

Դ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 701ա (տե՛ս Սուրմեյան, Մայր ցուցակ Հալէպի հտ. Բ, էջ 88)։

Ե. Քառասուն մանկունք, ձեռ. № 121, թերթ 84ա (տե՛ս Սուրմեյան, Ցուցակ, էջ 210)։

Զ. Զմմառ, ձեռ. № 604, թերթ 155բ (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 211)։

«Մինաս» անունը կա B օրինակի խորագրում և A օրինակի 37-րդ տողում՝ «Մինաս խօսեցաւ» ձևով։ Եղել է նաև B օրինակի նույն՝ 37-րդ տողում, սակայն ձեռագիրը խաթարված է և այժմ կարդացվում են միայն «Մի» տառերը։

Դրսի 6 ձեռագիր օրինակներից 4-ում ոտանավորն անխորագիր է և բնագրերում էլ հեղինակի մասին որևէ հիշատակություն չկա։ Միայն Վիեննայի № 343 ձեռագրի մի օրինակում (թերթ 92բ) «Մինաս» անվան փոխարեն բնագրում հիշատակվում է «Գրիգոր» անունը.

Գրիգոր խօսեցաւ,
Դէմ հանդիպեցաւ,
Եարուն ասաց ու գանգտեցաւ։

(Տաշյան, Ցուցակ, էջ 791)։

Այս «Գրիգոր» անունը տեղիք է տվել զանազան ենթադրությունների։ Հ. Տաշյանը տաղը վերագրել է Գրիգորիս Աղթամարցուն (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 1073)։ Հետևելով Տաշյանին, նույնը կրկնել է Մ. Պոտուրյանը (տե՛ս «Բազմավէպ», 1905, էջ 499)։ Ն. Ակինյանը ժխտում է տաղի Գրիգորիս Աղթամարցու գրչին պատկանելը, քանի որ Աղթամարցու տաղերում ամենուրեք հեղինակի անունը հիշատակվում է «Գրիգորիս» (և ոչ «Գրիգոր») ձևով։ Միաժամանակ նա առաջ է քաշում մեկ այլ ենթադրություն, թե «Տաղս հաւանորեն Գրիգոր Կաֆայեցի տաղասիցնն է» (տե՛ս Ն. Ակինյան, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարցի, էջ ՃԻԵ)։ Մ. Ավդալբեգյանը համաձայնելով Ն. Ակինյանի հետ, թե տաղը Աղթամարցունը չէ, հեղինակի հարցը թողնում է բաց (տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, էջ 306)։ Մենք հակված ենք մտածելու, որ տաղի հեղինակն իսկապես Մինասն է, որը դատելով Ոսկյանի «Ցուցակից», մի տաղ ևս ունի, որում համանման ձևով կրկնված է Մինասի անունը, այսպես.

Տաղ սիրոյ

սկզբ. Արիք երթանք ուխտի չարաք
Չուպար հագիր՝ քեզ մուպարաք...

վերջը. Մինաս խօսեցաւ,
Դեմ հանդիպեցաւ...

Այս տաղը գտնվում է Վիեննայի № 979 ձեռագրում, թերթ 49ա (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 566)։ Իսկ № 979 ձեռագիրը, ինչպես տեղեկանում ենք «Ցուցակից» (էջ 565), ընդօրինակված է 1680 թ. գրչության մեկ այլ ձեռագիր նախօրինակից։

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ՅՈՅԺ, ԶԱՔԱՐԻԱՅԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 412)

(«Զարտասուեմ մեղօք եղկելի»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Բազմավէպ», 1950, էջ 183: Հրատարակել է Ա. Երեմյանը: Բնագիրը հանված է հրատարակչի սեփական, 1645 թ. գրչության մի ձեռագրից:

B = 9600, թերթ 107բ—108ա:

C = 7717, թերթ 214բ—215ա:

D = 10723, թերթ 49բ—50ա:

E = 41, թերթ 156բ—157ա:

F = 7708, թերթ 55ա:

q = «Գիրք դպրութեան և Տաղարան վայելուչ...», 1714, էջ 228—229: Աղբյուրը չի հիշատակված:

H = 2339, թերթ 271ա—272ա:

J = 5954, թերթ 29բ—30ա:

K = 4296, թերթ 64բ—65ա:

A′ = Վիեննա, ձեռ. № 160, թերթ 189ա:

B′ = Վիեննա, ձեռ. № 436, թերթ 42բ:

l = «Բիւրակն», 1897, էջ 738—739: Հրատարակել է Տ. Պալյանը: Աղբյուրը չի հիշատակված:

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 160, թերթ 189ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 469):

Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 201ա, «Տաղ զղջման ասացեալ» խորագրով (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 676):

Գ. Երուսաղեմ, ձեռ. № 1239, թերթ 132ա, «Տաղ Զաքարիայի սարկաւագի առ Աստուածածինն» խորագրով (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Դ, էջ 391):

Դ. Անկյուրա, ձեռ. № 105, թերթ 399բ—400ա (տե՛ս Կյուլեսերյան, Ցուցակ Անկյուրայի, էջ 538):

Այլ հրատարակություններ

ա) «Գրքուկս որ կոչի Տաղարան...», Կ. Պոլիս, 1740, էջ 330—331: Արտատպություն է «Գիրք դպրութեան և Տաղարան...» ժողովածուից:

բ) Ն. Ակինյան, Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը, էջ 50—51: Քննական բնագիր է՝ կազմված Վիեննայի № 160 և № 436 ձեռագրերի օրինակների և «Բիւրակնում» հրատարակված օրինակի բաղդատությամբ: Քանի որ Ն. Ակինյանի օգտագործած ձեռագիր օրինակները մեր ձեռքի տակ չեն եղել, օգտագործել ենք նրա ցույց տված տարընթերցվածները և դրանք դիտել որպես A′ և B′ (իր մոտ A և B) օրինակներ: «Բիւրակնի» օրինակը մեր ձեռքի տակ եղել է և մենք այն համարել ենք l աղբյուր (Ն. Ակինյանի մոտ C):

Ն. Ակինյանը տաղը հրատարակել է Զաքարիա Գնունեցու բանաստեղծություններ-

քի ժողովածուում, բայց դրել է երկրայելիների շարքում։ Իսկ Տ. Պալյանն այն վերագրել է ԺԷ դարի հեղինակ Զաքարիա Ագուլեցուն։

Մենք նախընտրում ենք առայժմ այն ներկայացնել իբրև անծանոթ Զաքարիայի ստեղծագործություն։

Տնագլուխ տառերը հոդում են «Զաքարիա»։

Ստեփանոս Վարագեցի

1. ՏԱՂ ԴԱՐՆԱՆ (էջ 415)

(«Աչուն էր ՝ւ եղաւ գարուն ու ցամքաւ ձուռն սարերուն»)

Օգտագործված աղբյուրներ

A = 5623, թերթ 129բ—131բ։
B = 1989, թերթ 159բ—161բ։
C = 5668, թերթ 52բ—54ա։
d = Գ. Սրվանձտյան, *Մանանայ*, 1876, էջ 264—266։ Աղբյուրը չի հիշատակված։
e = Ա. Տնկանց, *Հայերգ*, էջ 129—131։ Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 401, թերթ 26ա—29ա (տե՛ս Տաշյան, *Յուցակ*, էջ 853)։
Բ. Վիեննա, ձեռ. № 663, թերթ 39բ—41ա, «Այլ տաղ Ստեփաննոս Վարագեցի հռիսկոպոսի ասացեալ» խորագրով (տե՛ս Ոսկյան, *Յուցակ*, հտ. Բ, էջ 153)։

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց, *Նոր ժողովածու*, Բ պրակ, էջ 9—10։ Բնագիրը հանված է B աղբյուրից։ Հրատարակիչը տողատակ տվել է նաև d և e օրինակների տարբերվածները, բայց բնագրի մեջ դա հաշվի չի առել՝ բնագիրը քննական չէ։

բ) Մ. Մկրյան, *XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ պրականություն*, էջ 202—203։ Արտատպություն է «Հայերգից»։

Բանաստեղծության առաջին տողը, տաղաչափությունը և ոգին գալիս է հայերենից (տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, հտ. Բ, էջ 30)։

2. «ԵՂԲԱՐՔ, ՇԱՏ ԲԱՐԵԻ ԼԱԼՈՎ, ԹԻ ՅԱՇԽԱՐՀԻՍ Ո՞ՆՑ ԿԱՅՔ ԴՈՒՔ ԲԱՐՈՎ» (էջ 417)

Օգտագործված աղբյուրներ

A = 2079, թերթ 361բ—362ա։
b = Ա. Տնկանց, *Հայերգ*, էջ 167—168։ Աղբյուրը չի հիշատակված։
c = «*Արևելյան մամուլ*», 1885, № 5, էջ 235։ Հրատարակել է Գ. Սրվանձտյանը։ Աղբյուրը չի հիշատակված։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 199բ (տե՛ս Տաշյան, *Յուցակ*, էջ 792)։
Բ. Վիեննա, ձեռ. № 663, թերթ 41ա, «Դարձեալ տաղ նորին Ստեփաննոսի» խորագրով (տե՛ս Ոսկյան, *Յուցակ*, հտ. Բ, էջ 153)։

Բարսեղ Վարագեցի

1. «ԿԱՆԱՌ ԵՐԷՑ ԻՆՁ ՍԵՐ» (էջ 420)

Արտատպվում է Գ. Ադանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» ժ գրքից. Թիֆլիս, 1912, էջ ԼԱ: Բնագիրը հանված է Վանի Հայկավանքի, 1602 թ. գրչության ձեռագրից: Բարսեղ Վարագեցին այս ձեռագրի գրիչներից է, և ոտանավորն էլ ինքնագիր է՝ գրված հիշատակարանի վերջում:

2. «ՄԵՂՕՔ ԼՑԵԱԼ ԲԱՐՍԵՂՆ ՎԱՐԱԳԵՑԻ» (էջ 420)

Օգտագործված աղբյուրներ

A = 5623, թերթ 122ա:
b = «Հանդէս ամսօրեայ», 1951, էջ 520: Հրատարակել է Ն. Ակինյանը: Բնագիրը հանված է Վիեննայի № 663 ձեռագրից, թերթ 12ա—12բ:

Այլ հրատարակություններ

ա) Ոսկյան, *Յուցակ, հատ. Բ,* էջ 152: *Հրատարակված է Վիեննայի № 663 ձեռագրից:*

բ) Առաքել Բաղիշեցի, *ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Ա. Ղազինյանի, Երևան, 1971,* էջ 221: *Հրատարակված է A աղբյուրից:*

Հիշատակարան է՝ գրված Բարսեղ Վարագեցու ձեռքով: Առաքել Բաղիշեցու «Ահաւասիկ դրեք բանիս որ պատուական է» սկսվածքով տաղից հետո:

Զաքարիա Վարագեցի

ՏԱՂ ՎԱՐԱԳԱՅ ԽԱՉԻՆ Ի ՁԱՔԱՐԻԱՅ ՎԱՐԻԱՊԵՏԻ (էջ 422)

(«Ձվարագ ասեմ, գրաղնալին»)

Օգտագործված աղբյուրներ

A = 2672, թերթ 407ա:
B = 5128, թերթ 166բ—168բ:
C = 5623, թերթ 102ա—104ա:
D = 424, թերթ 270բ—271ա:
A′ = Վիեննա, ձեռ. № 663, թերթ 19ա—20բ:
B′ = Վիեննա, ձեռ. № 577, թերթ 120բ—121բ:
E = 1990, թերթ 14բ—15ա:
f = «Արծուի Վասպուրականի», 1859, էջ 128—131: Աղբյուրը չի հիշատակված:

Այլ հրատարակություններ

ա) Ն. Ակինյան, *Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իր տաղերը,* էջ 47—50: *Քննական բնագիր է՝ կազմված Վիեննայի № 663 և № 577 ձեռագրերի և «Արծուի Վասպուրականիում» տպագրված օրինակի բաղդատությամբ: Քանի որ Ն. Ակինյանի*

օգտագործած ձեռագիր օրինակները մեր ձեռքի տակ չեն եղել. օգտագործել ենք նրա ցույց տված տարբնթերցվածները և դրանք դիտել որպես A′ և B′ օրինակներ։

բ) Հ. Ոսկյան. Վասպուրականի վանքերը, Վիեննա, 1940, էջ 268—269։ Այստեղ միայն 1—4 և 17—32 տողերն են։

Ն. Ակինյանը վերագրել է Զաքարիա Գնունեցուն։ Նրա փաստարկն այն է, թե. «Գնունեաց եպիսկոպոսն ալ սակայն Վարագէն շատ հեռու չէ ապրած, և կրնար ինչպես Գնունցի, Խժբժեցի, Լրմեցի կոչուած է, նաև Վարագեցի անուանիլ» (տե՛ս «Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը», էջ 16—17)։ Սակայն տաղի բնույթը, լեզվառճական առանձնահատկություններն ու ծայրակապում իրեն «Զաքարայ» անվանելու ձևը հարազատ չեն Զաքարիա Գնունեցուն, ուստի պատճառ չունենք չհավատալու խորագրին, որտեղ հեղինակն անվանվում է Զաքարիա Վարագեցի։

Մինաս Թոխաթցի

1. ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՕԼԱԽԱՅ ԵՐԿՐԻ ՀԱՅԵՐՈՒՆ, Ի ԹՈԽԱԹՑԻ ՄԻՆԱՍ ՍԱՐԿԱՎԱԳԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 426)

(«Գոչեմ առ ձեզ ողբերգական»)

Արտատպվում է Ն. Ակինյանի քննական բնագրից, որը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա (տե՛ս ՀՊՏ, էջ 85—102)։

A = Վիեննա, ձեռ. № 797, թերթ 313ա։

B = «Մասիս», 1886, էջ 3832—3837։

H = «Հանդէս ամսօրեայ», 1888, էջ 37—40, 62—63։

K = Ալիշան, Կամենից, էջ 20—27։

M = Պ. Մամիկոնյան, Ռումինահայոց ներկան և ապագան, էջ 52—70։

P = Ք. Պատկանյան, Նշխարք, էջ 53—58։

Ն. Ակինյանը խոսում է նաև այս աղբյուրների ծագման մասին (Հմմտ. ՀՊՏ, էջ 70—71)։ Պարզվում է, որ A աղբյուրի օրինակը ծագում է Կեռլայի հայտնի տաղարանից (թերթ 304բ—316ա)։ Նույն աղբյուրից են հրատարակված նաև B և H օրինակները (վերջինս աղճատված է)։ K օրինակի բնագիրը հանված է Վենետիկի մեզ անհայտ մի ձեռագրից։ P օրինակը հանված է Փարիզի Ազգային մատենադարանի № 185 ձեռագրից (թերթ 3ա)։ Ն. Ակինյանը հիշատակում է նաև Էջմիածնի Գևորգյան ցուցակի № 144 ձեռագիրը, որն իր ձեռքի տակ չի եղել։ Այնուհետև նա հայտնում է իր աղբյուրների բաղդատության արդյունքները, ըստ որի K և P օրինակները նման են միմյանց և «հակառակ A-ի (նկատի ունի Կեռլայի տաղարանը) կ՝երևայ թէ Թոխաթեցիի սկզբնագիրն, ապա նոր խմբագրութեան ենթարկուած» (ՀՊՏ, էջ 71)։ Այս ենթադրությունը, սակայն, ոչնչով չի հիմնավորված։

A, B և H աղբյուրների հիմքը՝ Կեռլայի տաղարանը, այժմ Մաշտոցյան Մատենադարանի № 10050 ձեռագիրն է, սակայն, դժբախտաբար, այս ողբը պարունակող պրակն այժմ ձեռագրում չկա։ Ինչ վերաբերում է Էջմիածնի Գևորգյան ցուցակի № 144 ձեռագրին, ապա դա այժմ Մատենադարանի № 2856 ձեռագիրն է, որի 463բ—466բ թերթերում, հիրավի, կա մի «Ողբ», որը, սակայն, ոչ թե Մինաս Թոխաթցու, այլ Հակոբ Թոխաթցու գրչին է պատկանում («Յակոբայ Թոխաթեցւոյ ողբ ի վերայ Օլախաց երկրին»)։

Ն. Ակինյանը տալիս է նաև «Ողբի» թարգմանությունների և նրա մասին եղած իրեն հայտնի ուսումնասիրությունների ցանկը (նույն տեղում, էջ 72)։

2. ՏԱՂ ԵՒ ԴՈՎԱՍԱՆՔ ՀԵՐԻՍԻ, Ի ԹՈԽԱԹՑԻ ՄԻՆԱՍ ԴՊՐԻ ԱՍԱՑԵԱԼ, ՈՐ Ի ԼՈՎԱՑ ՏՈՒՆՆ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ (էջ 443)

(«Ի հողոյ հատասար աճձն»)

Օգտագործված աղբյուրներ

A = *33, թերթ 162բ—165բ:*

B = *7707, թերթ 99ա—104բ:*

C = *10050, թերթ 154բ—159բ:*

D = *ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Կ. Կոստանյանցի արխիվ, ֆոնդ № 281: Քննական բնագիրը է՝ կազմված H աղբյուրի, «Սիոնում» հրատարակված օրինակի և Կ. Կոստանյանցի ձեռքի տակ եղած մեզ անհայտ մի ձեռագրի օրինակի հիման վրա:*

E = *1682, թերթ 101ա—104ա:*

F′ = *Վիեննա, ձեռ. № 343, թերթ 213ա:*

G = *8699, թերթ 199ա—202բ:*

H = *7717, թերթ 167բ—171ա:*

K′ = *Վիեննա, ձեռ. № 160, թերթ 201բ:*

L′ = *Վիեննա, ձեռ. № 493, թերթ 68բ:*

M′ = *Վիեննա, ձեռ. № 499, թերթ 3ա:*

n = *«Արեւելեան մամուլ», 1886, էջ 18—19: Հրատարակել է Գ. Սրվանձտյանը: Աղբյուրը չի հիշատակված:*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. 514, թերթ 132ա (տե՛ս Տաշյան. Յուցակ, էջ 987):

Բ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 124ա, «Դովասանութիւն Հէրխայի, վասն ուրախութեան մարգկան» խորագրով (տե՛ս Ոսկյան. Յուցակ, հտ. Բ, էջ 593):

Գ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 158բ, «Տաղ և գովասանք Հերխէի ի Թոխաթցի Մինասէ» խորագրով (նույն տեղում, էջ 899):

Այլ հրատարակություններ

ա) Կ. Կոստանյանց. Նոր ժողովածու, Ա պրակ, էջ 50—53: Հրատարակված է H աղբյուրից:

բ) «Սիոն», 1894, էջ 132—135: Աղբյուրը չի հիշատակված:

գ) «Հանդէս ամսօրեայ», 1921, էջ 159—162: Հրատարակել է Ն. Ակինյանը:

դ) Ն. Ակինյան. Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 102—111: Քննական բնագիրը է՝ կազմված Մատենադարանի № 10050 և Վիեննայի №№ 343, 160, 493, 499 ձեռագրերի օրինակների բաղդատությամբ: Քանի որ Ն. Ակինյանի օգտագործած Վիեննայի ձեռագրերը մեր ձեռքի տակ չեն եղել, օգտագործել ենք նրա ցույց տված տարբերթերցվածները և դրանք դիտել որպես F′, K′, L′, M′ օրինակներ:

ե) Մ. Մկրյան, XIII—VXIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 222—226: Արտատպություն է «Նոր ժողովածուից»:

«Սիոնում» տպագրվածն ու D օրինակն ունեն հավելյալ տներ, որոնց մասին Ն. Ակինյանը գրել է. «Սիոնի օրինակը նոր խմբագրութիւն մըն է Թոխաթցւոյ տաղին,

վերջին ժամանակներէ, ընդարձակ յաւելուածներով և կամայական փոփոխություններով, աւելորդ համարեցանք զայն համեմատութեան առնուլ» (ՀՊՏ, էջ 75)։ Մենք տողատակ բերել ենք D օրինակի և՛ տարբերությունները և՛ հավելյալ տները։

3. ՏԱՂ Ի ԹՈԽԱԹՑԻ ՄԻՆԱՍ ԴՊՐԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 454)

(«Ես քու սիրուն չեմ դիմանար»)

Օգտագործված աղբյուրներ

A = 8968, թերթ 279բ—281բ։

B = 10050, թերթ 402բ—404ա։

c = Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Դ, էջ 392։ Բնագիրը հանված է Երուսաղեմի № 1239 ձեռագրից, թերթ 133ա։

D = 7717, թերթ 130ա—131ա։

E = 9600, թերթ 87ա—88ա։

F = 10167, թերթ 6ա—6բ։

G = 7193, թերթ 109բ—111բ։

H = 2394, թերթ 35ա—36բ։

δ = 7708, թերթ 47բ—48ա։

J = 4328, թերթ 73ա—74բ։

K = 8540, թերթ 45ա—45բ։

L = 5934, թերթ 8բ—9ա։

M = 7051, թերթ 22բ—24ա։

N = 7009, թերթ 14ա—15ա։

O = 7057, թերթ 32բ—33ա։

P = 3483, թերթ 242ա—242բ։

q = «Գրքուկս որ կոչի Տաղարան...», 1740, էջ 310—312։ Աղբյուրը չի հիշատակված։

r = «Գիրք գպրութեան և Տաղարան վայելուչ...», 1714, էջ 209—211։ Աղբյուրը չի հիշատակված։

S = 1990, թերթ 20բ—22ա։

T = 8655, թերթ 4ա—5բ։

U = 7702, թերթ 44ա։

V = 8219, թերթ 137ա—137բ։

W = 4256, թերթ 24բ—25ա։

X = 7716, թերթ 21ա—22ա։

Y = 9536, թերթ 115ա։

Z = 10723, թերթ 43բ—44բ։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 343, թերթ 207ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 792)։

Բ. Վիեննա, ձեռ. № 643, թերթ 9բ (տե՛ս Ոսկյան, Ցուցակ, հտ. Բ, էջ 125)։

Գ. Վիեննա, ձեռ. № 797, թերթ 280բ (նույն տեղում, էջ 290)։ Ընդօրինակություն է Կեռլայի տաղարանից։

Դ. Վիեննա, ձեռ. № 1029, թերթ 15ա (նույն տեղում, էջ 619)։

ե. Վիեննա, ձեռ. № 1251, թերթ 95բ (նույն տեղում, էջ 864)։

Զ. Երուսաղեմ, ձեռ. № 1400, թերթ 388ա, (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. ե, էջ 76)։

է. Զմմառ, ձեռ. № 532, թերթ 33բ (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Ցուցակ, հտ. բ, էջ 137)։

Ը. Զմմառ, ձեռ. № 604, թերթ 218բ (նույն տեղում, էջ 211)։

Թ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 827ա (տե՛ս Աուրմնյան, Ցուցակ Հալեպի, էջ 89)։

ժ. Բրիտանական թանգարան, Հայերեն ձեռ. № 110, թերթ 51ա (տե՛ս Conybeare, A Catalogue, *էջ 285)։*

S օրինակը բնագրի 57—68-րդ տողերի փոխարեն ունի 12 խորթ տող։ Այս փոփոխությունը համանարար կատարել է գրիչը։ Նա հանել է Մինաս Թոխաթցուն վերաբերող հիշատակարանային հատվածը և դրա փոխարեն դրել գարիբջանը նվիրված տողեր, որոնք մենք բերել ենք տողատակ։

ԺԸ—ԺԹ դարերում արտագրված ձեռագրերում այս երկն ընկալել են որպես Գրիգոր Լուսավորչին նվիրված տող և խորագրերում չեշտել են այդ։ Ն. Ակինյանն իրավացիորեն նկատում է, որ ոտանավորը նվիրված է Լմբերդի Գրիգոր արքեպիսկոպոս Վանեցուն, որի հետ Մինաս Թոխաթցին մտերիմ է եղել (տե՛ս ՀՊՏ, էջ 77)։ Հիրավի՝ միայն կենդանի մեկին կարելի էր դիմել նման մտերմիկ եղանակով, բայց ոչ Գրիգոր Լուսավորչին։

4. ԴԻՎԱՆԱՆՔ Ի ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ (էջ 458)

(«Պայծառ արեգակն ես դու ի զարեան օրերն ի ճեման»)

Արտատպվում է «Արևելեան մամուլից», 1885, էջ 123։ Հրատարակել է Գ. Սրվանձտյանը։ Աղբյուրը չի հիշատակված։

Ն. Ակինյանը «Հինգ պանդուխտ տաղասացներ» գրքում արտատպել է այդ օրինակը (էջ 111—112) և Մինաս Թոխաթցու երկերի մատենագրության մեջ խոսել երկի հեղինակի և Գրիգորի ով լինելու մասին. «Թէ ո՞վ է գովասանն Մինաս և ո՞վ Գրիգոր վարդապետ, առ որ կ'ուղղուին գովութիւնք։ Վարկեան մը կրնայ կարծուիլ թէ Գրիգոր Կեսարացին բլլա, և Մինասն՝ էրզրումցի Մինաս վարդապետն, որ սերտ բարեկամ էր Կեսարացւոյ։ Բայց աւելի հաւանական կը թուի ինձ ընծայել տաղս Մինաս Թոխաթեցւոյ, որ նուիրած է զայն Գրիգոր վարդապետ Վանեցւոյ Լմբերդի արքեպիսկոպոսին։ Հերիսայի վերայ գրուած տաղին մէջ զԳրիգոր կ'անուանէր» (էջ 76)։

Միանգամայն համոզիչ ենթադրություն, ուստի և մենք ևս տաղը դրել ենք Մինաս Թոխաթցու երկերի շարքում։

5. «Ի ՅԱՅՍ ԱՇԽԱՐՀՍ ԻՄԱՒԻ» (էջ 460)

Արտատպվում է Ն. Ակինյանի «Հինգ պանդուխտ տաղասացներ» գրքից, էջ 80—81։ Ն. Ակինյանը հրատարակել է Մինաս Թոխաթցու ձեռքով գրված «Գրօրէնք Լմբերդի Հայոց դատաստանի» փաստաթղթերի ժողովածուի մեջ զետեղված օրինակից (Վիեննա, ձեռ. № 441, թերթ 3ա), որը, փաստորեն, այդ ժողովածուի առաջարանն է։

6. ՏԱՂ ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ, ՄԻՆԱՍ ԵՐԻՑԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 462)

(«Պիտի, թէ աշխարհս էր ինձ մեալու»)

Արտատպվում է Ն. Պողարյանի «Մայր ցուցակի» Ը հատորից, էջ 96—97: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 2443 ձեռագրից, թերթ 216ա—219ա:

Թաթոս Թոխաթցի

1. ԹԱԹՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 464)

(«Ատաուած, աճեղ ես, աճմամբ, երկրպագեմք ըստուդութեանդ»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Բազմավէպ», 1910, էջ 274—275: Հրատարակել է Մ. Պոտուրյանը: Բնագիրը հանված է 1606 թ. գրչության՝ հրատարակչի սեփական ձեռագրից, որի գրիչը Ստեփանոս Թոխաթցին է:

b = «Հայրենիք», 1935, № 11, էջ 76: Հրատարակել է Հ. Քյուրտյանը: Բնագիրը հանված է հրատարակչի սեփական՝ 1678—1681 թթ. գրչության ձեռագրից:

C = 9271, թերթ 30ա—31ա:

Այլ օրինակներ

Ա. Վենետիկ, ձեռ. № 15, տաղարան, (տե՛ս «Բազմավէպ», 1910, էջ 274—275):

Բ. Վենետիկ, ձեռ. № 16, տաղարան: Ըստ Մ. Պոտուրյանի՝ տաղարանի վերջին մասը գրված է 1604 թ., Ստեփանոս Թոխաթցու ձեռքով, ուր և ընդօրինակված են Թաթոս Թոխաթցու այս ու մի շարք այլ տաղեր (տե՛ս «Բազմավէպ», 1910, էջ 274—275):

Ն. Ակինյանը Թաթոս Թոխաթցուն նույնացնելով Թադեոս Կողոնիացու հետ, տալիս է Թաթոս Թոխաթցու ոտանավորների մատենագիտությունը, որտեղ հիշատակում է նաև a և b աղբյուրները (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64):

2. ՏԱՂ ՀՈՎՀՈ ԹԱԹՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 466)

(«Ես յուսով, հաւատով առ ինձ յուսաանամ»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Բազմավէպ», 1910, էջ 275: Հրատարակել է Մ. Պոտուրյանը: Բնագիրը հանված է 1606 թ. գրչության՝ հրատարակչի սեփական ձեռագրից:

B = 1639, թերթ 153բ—154բ:

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64):

3. ՏԱՂ ԹԱԴԷՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 467)

(«Թէ կուզես, որ հոգոյդ ճարակ դու աճես»)

Արտատպվում է «Բազմավէպից», 1910, էջ 275—276: Հրատարակել է Մ. Պոտուրյանը: Բնագիրը հանված է նույն՝ 1606 թ. գրչության ձեռագրից:

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64):

4. ԱԻԵՏԻՍ ԾՆՆԴԵԱՆ (էջ 469)

(«Երուսաղէմ քաղաք մի կայ, աւետի՛ս»)

Արտատպվում է «Հայրենիքից», 1935, № 11, էջ 78։ Հրատարակել է Հ. Քյուրտյանը։ Բնագիրը հանված է 1678—1681 թթ. գրչության՝ հրատարակչի սեփական ձեռագրից։

Ըստ Մ. Պոտուրյանի կազմած մատենագիտության, այս տաղը ևս եղել է իր ունեցած՝ 1606 թ. գրչության ձեռագրում, բայց չի հրատարակել։

5. ՈՏԱՆԱՒՈՐ ԵՒ ՏԱՂ Ի ԹՈԽԱԹՑԻ ՄԱՀՏԵՍԻ ԹԱԹՈՍԷՆ ԱՍԱՑԵԱԼ, ՎԱՍՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ (էջ 471)

(«Հազար կենդանակերպ աստուած ստեղծել է»)

Օգտագործված աղբյուրներ

a = *«Բազմավէպ», 1910, էջ 276—279։ Հրատարակել է Մ. Պոտուրյանը։ Բնագիրը հանված է նույն՝ 1606 թ. գրչության ձեռագրից։*

B = *3081, թերթ 34ա—38ա։*

C = *7709, թերթ 78բ—79բ։*

D = *1639, թերթ 176ա—181ա։*

E = *8605, թերթ 91ա—96բ։*

F = *2394, թերթ 6ա—15բ։*

Q = *3411, թերթ 65բ—70բ։*

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 204ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 676)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 45ա (նույն տեղում, էջ 896)։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64)։

6. ՏԱՂ ԹԱԹՈՍԻ (էջ 481)

(«Հա՛յ, մտաք յամիս մարտին»)

Օգտագործված աղբյուրներ

a = *«Բազմավէպ», 1910, էջ 279—280։ Հրատարակել է Մ. Պոտուրյանը։ Բնագիրը հանված է նույն՝ 1606 թ. գրչության ձեռագրից։*

B = *7707, թերթ 156բ—158բ։*

C = *2394, թերթ 167ա—169բ։*

D = *9600, թերթ 92ա—93ա։*

e = *«Արարատ», 1910, № 4, էջ 381։ Աղբյուրը չի հիշատակված։*

Առաջին տունը հրատարակվել է «Բազմավէպում», (1862, էջ 66)։ Կ. Կոստանյանցը «Նոր ժողովածուի» Բ պրակում (էջ 8) մեջ է բերում «Բազմավէպում» տպագրված տողերը և գրում, թե իրեն անհայտ է հրատարակության աղբյուրն ու տեր Թադեոսի ով լինելը։ Սակայն նույն ժողովածուի Գ պրակում (էջ 2) նա հավաստում է, որ ձեռք է բերել 1682 թ. գրչության մի տաղարան, որտեղ կա ոտանավորն ամ-

բողջությամբ։ Նույն տեղում նա մեջ է բերել նաև վերջին տունը, որը տառացիորեն համընկնում է C օրինակի եզրափակող տանը, որից կարելի է ենթադրել, թե Կ. Կոստանյանցի ձեռքին եղել է հենց C աղբյուրը, թեև Մատենադարանի «Յուցակ ձեռագրացում» թվականը նշված է ոչ թե «1680», այլ «1670-ից հետո» (տե՛ս Ա հատոր, էջ 794)։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64)։

7. ԱՅԼ ՏԱՂ ԹԱԹՈՍԻ (էջ 484)

(«Քրիստոս, որդի աստուծոյ»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Բազմավէպ», 1910, էջ 281—282, Հրատարակել է Մ. Պոտուրյանը։ Բնագիրը հանված է նույն՝ 1606 թ. գրչության ձեռագրից։

B = 7707, թերթ 258բ—260ա։

C = 2394, թերթ 63ա—65ա։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64)։

8. ՏԱՂ ՎԱՍՆ ՀՈԳՈՅ ՇԱՀԻ, ԱՍԱՑԵԱԼ Ի ԹԱԴԷՈՍ ՍԱՐԿԱՒԱԳԻ (էջ 488)

(«Հոգիս մարմնոյն ասաց, թէ՝ Այլ ճար չունիմ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 10050, թերթ 378բ—380բ։

B = 7707, թերթ 244ա—249ա։

C = 7709, թերթ 122ա—123ա։

d = «Հայրենիք», 1935, № 11, էջ 79—81։ Հրատարակել է Հ. Քյուրտյանը։ Բնագիրը հանված է 1678—1681 թթ. գրչության ձեռագրից։

E = 9271, թերթ 22ա—25բ։

F = 2939, թերթ 90բ—91բ։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 7բ (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 591)։

Բ. Զմմառ, ձեռ. № 532, թերթ 25բ, «Տաղ Հոգւոյ և մարմնոյ» խորագրով (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 137)։

Ըստ Մ. Պոտուրյանի կազմած մատենագիտության, այս տաղը ևս եղել է իր ունեցած 1606 թ. գրչության ձեռագրում (տե՛ս «Բազմավէպ», 1910, էջ 275), սակայն, ինչպես Քյուրտյանն է ասում՝ «անհասկանալի պատճառով» չի հրատարակել։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64)։

9. ՏԱՂ ՀՈԳՈՅ Ի ԹՈՂԱԹՅԻ ՄԱՀՏԵՍԻ ԹԱԹՈՍԻ (էջ 495)

(«Յորժամ յարևելից ի դատաստան գաս»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Բազմավէպ», 1910, էջ 280։ Հրատարակել է Մ. Պոտուրյանը։ Բնագիրը հանված է նույն՝ 1606 թ. գրչության ձեռագրից։

B = 1639, թերթ 154բ—155բ։

C = 10208, թերթ 109բ—110բ։

d = «Հայրենիք», 1935, № 11, էջ 76—77։ Հրատարակել է Հ. Քյուրտյանը։ Բնագիրը հանված է 1678—1681 թթ. գրչության ձեռագրից։

E = 4287, թերթ 132բ—134ա։

F = 4426, թերթ 64բ—67ա։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 64)։

Ղազար Թոխաթցի

Ի ԹՈՒՆԱԹՑԻ ՂԱԶԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 499)

(«Նոր ճառագեայ ազգս Թորգոմիս»)

Հրատարակվում է Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 364ա—365ա։ Սա, մեր կարծիքով, ընդօրինակված է ինքնագրից՝ Հակոբ Թոխաթցու ձեռքով։

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. № 745, թերթ 253ա—253բ (տե՛ս Ոսկյան. Յուցակ, հտ. Բ, էջ 289)։

Տողերի սկզբնատառերը մեկընդմեջ հոդում են «Նուաստ Ղազար ծառայ ընկալ բանս»։

Ստեփաննոս Թոխաթցի

1. ՆԵՐԲՈՂԵԱՆ ԵՒ ՏԱՂ ՈՏԱՆԱՒՈՐԱԲԱՐ ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈՒՆԱԹՑԻ ԻՐԻՑԷ Ի ՎԵՐԱՅ ՎԱՂԱՄԵՒԿ ԵՂԲՕՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԻՒՐՈՅ. ՏԷՐ ՅԱԿՈԲ ՍԲԲԱՄՆՈՒՆՑ ՔԱՀՏՈՒՂԱՐ ԵՒ ԲԱՆԻԲՈՒՆ ՔԱՀԱՆԱՅԻ. ՏԱՐԱԺԱՄ ՎԱԽՃԱՆԵԼՈՅ Ի ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ (էջ 501)

(«Ի բուսականիս հազար ՝ չիսճի»)

Օգտագործված աղբյուրներ

A = 3081, թերթ 104բ—108բ։

B = 7707, թերթ 175բ—182բ։

c = «Բազմավէպ», 1922, էջ 162—164։ Բնագիրը հանված է Վենետիկի № 1330 ձեռագրից։

Ընդօրինակություններ

Ա. Մատենադարան, ձեռ. №№ 2339 (թերթ 466ա—468ա), 6488 (թերթ 49ա—51բ)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 514ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 684—685)։

Աղբյուրները բաղդատելով նկատում ենք.

Ա. Երեք օրինակներն էլ ունեն ինքնագիր արժեք, քանի որ c օրինակի գրիչն ինքը Ստեփանոս Թոխաթցին է, իսկ A և B օրինակների գրիչը՝ Ստեփանոսի աշակերտ և մտերիմ Զաքարիա աբեղա Երզնկացին, որն առանց հեղինակի գիտության, հասկանալի է, չէր կարող փոփոխություն մտցնել ոտանավորի մեջ։

Բ. c օրինակը, որն ամենահինն է (գրված է 1604 թ.), երեք տնով պակաս է մյուս օրինակներից։ Ի դեպ, այստեղ, ոտանավորին կցված հիշատակարանում Ստեփանոս Թոխաթցին նշում ունի ոտանավորի գրության ժամանակի և տների քանակի մասին՝ «...թվին ՌԾԳ (1604) գրեցի ԾԴ (54) տուն տաղս» («Բազմավէպ», 1922, էջ 161)։

Գ. B օրինակում, որը գրված է 1614 թ., կատարված են մի շարք փոփոխություններ և ուղղումներ, որոնց մեջ ամենաակնհայտը 42-րդ տողի փոփոխությունն է.

B օրինակ

Սուրբ թարգմանչացն Հայոց ազգի...

c օրինակ

Մովսէս Քերթող, Անհաղթ Դաւթի...

A օրինակում, որը ժամանակագրական կարգով վերջինն է (գրված է 1617 թ.), կրկին վերականգնված է c օրինակի 42-րդ տողը։

Այս և նման փոփոխությունները տարօրինակ չեն, քանի որ Ստեփանոս Թոխաթցին առհասարակ սովորություն է ունեցել փոփոխել նախկինում գրած իր երկերը, նույնիսկ դրանց որոշ մասերն անջատել և ներկայացնել որպես առանձին ոտանավորներ, օրինակ, «Ողբ ի վերայ Եւդոկիա մեծ քաղաքին» երկի մի հատվածը նա (ըստ որում, դարձյալ Զաքարիա գրչի ձեռքով) ներկայացրել է որպես առանձին ոտանավոր՝ «Գովասանութիւն ի վերայ Կաֆայ քաղաքին» խորագրով (Հմմտ. Պ. Խաչատրյան ՀՄՊՈ, էջ 320)։

2. «Ո՛Վ ԱԲՐԱՀԱՄ, ԵՂԲԱՅՐ ԲԱՐԻ» (էջ 510)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 702 ձեռագրից, (թերթ 201ա—201բ), որը Աբրահամ սարկավագի պատվերով 1605 թվականին վերանորոգել և լրացրել է Ստեփանոս Թոխաթցին, նույն Աբրահամին ձոնել այս ոտանավորն ու գրել հետևյալ հիշատակարանը. «Վերստին նորոգեցաւ և գրեցաւ պատուական Յիսուս Որդիս, ձեռամբ անարժան և անիմաստ Թողաթցի Ստեփանոս իրիցուէ, ի յաստուածաշէն և երկնանման մայրաքաղաքն Կաֆան, ի թվին Հայոց ՌԾԴ (1605), մարտ ամսոյ ի ԺԶ (16) ի վայելումն աստուածասէր և երկիւղած սարկաւագին Աբրահամ կոչեցելոյ, զոր տէր աստուած բարով վայել տացէ զարմօք և զաւակօք մինչև ի խորին ծերութիւն անդրաւ յաւիտենիւ ամէն» (թերթ 201ա)։

3. ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈԽԱԹՑԻԷ ԱՍԱՑԵԱԼ, ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՖԱՅՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՎԵՐԱՅ (էջ 511)

(«Տէր Խաչատուր եպիսկոպոսն»)

Օգտագործված աղբյուրներ

A = 2939, թերթ 468ա—468բ։

B = 6488, թերթ 51բ—53ա։

c = «Ազգագրական հանդէս» IX գիրք, 1902, էջ 71—72։ Հրատարակել է Ե. Լալայանը։ Աղբյուրը չի հիշատակված։

Ա օրինակում «ի» ձայնավորով ավարտվող բառերի վերջում հաճախ գրված է «յ» կիսաձայնը, օրինակ՝ «աշխարհիյ», «քաղաքիյ» և այլն։ Այս տիպի սխալներն ուղղել ենք առանց այդ մասին առդատակ հիշատակելու։

Ոտանավորի առանձին տողեր, հաճախ խիստ փոփոխված, Ստեփանոս Ռոխաբ-ցին արտագրել է իր ձեռքով 1607 թվականին գրված մի գանձարանի հիշատակարա-նին կից (տե՛ս Մատենադարան, № 2672, թերթ 401բ—402ա)։

Տէր Խաչատուր եպիսկոպոսն,
Որպէս Անտոն Քերայիթի,
Պահող, հսկող անձանձրալի,
Սուրբ ծերունի, մաքուր հոգի։

Տէր Պօղոսն քաջ և արի,
Եպիսկոպոսն գերպանծալի,
Խոնարհամիտ, հեզահոգի,
Հլու հնազանդ հետ ամէնի։

Տէր Խաչատուրն սուրբ Սարգսի,
Մտօք նման ծովի,
Ջերկնից շրջան դիտողի,
ՋՀայոց տումար և ղՀռոմի։

Տէր Յովհաննէս հեզահոգի,
Քաղցր և անոյշ հետ ամէնի,
Աստուած ի քո հոգիդ հանգչի,
Ջառաղ օրինակ եառուր ինձի։

Ո՛վ տէր Թորոս պարթեւազգի,
Նման Գրիգոր Լուսաւորչի,
Կամ Սահակայ և Մեսրովպի,
Փեսայդ `ւ որդիդ փառաւորի։

Տէր Մկրտիչ դու անուանի,
Ի մէջ ամէն քահանայի,
Մելքիսեդէկ կրկնակի,
Կամ Ահարոն Փէնհէսի,

Ո՛վ տէր Պետրոս դու գովելի,
Քաջ երաժիշտ, ձայնդ գովելի,
Գրոց որդի և անուանի,
Նկարագիր ձեռաց շնորհի։

Տէր Աբրահամ, եղբայր բարի,
Թող քո սեղանդ շէն լինի,
Դու ևս սիրուն ամէն ազգի՝
Հայու, Հռոմի և Ֆռանկի։

Տէր Օգսէնան էր փափաքելի,
Վարուք դուք սուրբ, առաքինի,
Անաստառայ էք նմանի,
Յոսեդ եկեանց քահանայի։

Տէր Աբրահամ իմ սիրելի,
Դու միամիտ զէտ աղաւնի,
Նման ես դու Զաքարէի՝
Հօրն Յովաննու Կարապետի...

Ո՛վ տէր Սարգիս և տէր Լուսիկ,
Վարձք աստուծոյ առնուք յերկնի,
Զգանձս ձեր տվիք ինձ օրինակ,
Այս գանձս ծնունդ է ձեր գանձի:

Տէր Ստեփանոս Թոխաթցի,
Եկի հանկայ ձեր քաղաքի,
Նախ սուրբ Ահարոն Եկեղեցի
'Ի առ ոտն սուրբ Լուսաւորչի:

Տունն ձեր նման Աբրահամի,
Սուրբ Սահակայ և Յակոբի,
Պանդխտասէրք հանգիստ հիւրի,
Նժդեհ, զարիպ և օտարի:

Ո՛վ կարգացողք յիշատակիս,
Չի մեղադրէք շատ գրուցիս,
Կարգացողաց և գծողիս
Հայր մեր յերկինս սուրբ Եղիցի:

Հիշատակել են Ն. Ակինյանը (տե՛ս ՀՊՏ, էջ 125) և Վ. Միքայելյանը (տե՛ս Ղրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 315):

4. ՈՏԱՆԱԻՈՐՍ ԵՒ ԳԱՆԿԱՏՍ ԼՎԱՆՆՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԵՐՈՒՆ, Ի ԹՈԽԱԹՑԻ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԻՐԻՑՈՒԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 516)

(«Երբ օգոստոս ամիս մտամ»)

Հրատարակվում է Երուսաղեմի № 1455 ձեռագրից, թերթ 281ա—284բ (Մատենադարան, մանրաժապավեն № 916), որի գրիչն ինքը՝ Ստեփանոս Թոխաթցին է: Այսինքն՝ մեր ձեռքին է ոտանավորի ինքնագիրը: Ինքնագրի արժեք ունի նաև Մատենադարանի № 7707 ձեռագրի օրինակը (թերթ 117բ—120բ), քանի որ ձեռագրի այդ մասի գրիչը Ստեփանոսի աշակերտ և մտերիմ Զաքարիա արեղա Երզնկացին է և, հասկանալի է, առանց իր ուսուցչի գիտության նա չէր կարող փոփոխություններ մրացընել ոտանավորի մեջ*: Իսկ տարբերություններ, բացի ուղղագրական տարընթերցվածներից, այնուամենայնիվ, կան: Նախ 20-րդ տողից հետո այստեղ կա մի ամբողջ հավելյալ տուն.

---

* Ի դեպ՝ այս ձեռագրի գրության թվականը Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացում» նշված է 1611 (տե՛ս հտ. Բ, էջ 591), որը Զաքարիա Երզնկացու արտագրած հատվածի համար չի կարող ճիշտ լինել: Քանի որ այս ոտանավորում հիշատակվում է նրա հորինման ժամանակը՝ 1614, ուրեմն ձեռագրում ոտանավորը կարող էր արտագրվել միայն այդ թվականից հետո:

Լուն կճելով զմարմիմս նախշեց,
Կսկծեցոյց և կարմրցեց,
Ծիրտն զշապիկս ապականեց,
Զինք ճմռելով զմատունս պղծեց:

Բացի դրանից բոլորովին տարբեր են 35-րդ և 36-րդ տողերը.

Հրատարակվող բնագրում — № 7707 ձեռագրում

Փուշ և տատասկ Տէրն որ կասէ՝ — Զատէնին օրն ցուցանէ,
Լուն և օջիլն, ճանճն որ հմամ է: — Թէ դժոխքն այսպես անհանգիստ է:

Ըստ երևույթին ավելի ուշ՝ 1622 թ. № 1455 ձեռագրում արտագրելիս, Ստեփանոս Թոխաթցին խմբագրել է իր ոտանավորը՝ դուրս թողնելով վերը բերված փոքր-ինչ կոպիտ տունը և փոխելով 35-րդ և 36-րդ տողերը:

Այլ բնդօրինակություններ

Ա. Մատենադարան, ձեռ. №№ 10077 (թերթ 80բ—85ա), 2394 (թերթ 135ա—138բ), 695 (թերթ 241ա—242ա), 7717 (թերթ 117բ—119ա):

Բ. Վիեննա, ձեռ. №№ 343 (թերթ 95ա և 248բ, տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 791 և 792), 160 (թերթ 206բ, նույն տեղում, էջ 469):

Բնագիրը ձեռքի տակ չունենալով, առաջին անգամ № 7717 ձեռագրից հրատարակել է Կ. Կոստանյանցը (տե՛ս Նոր ժողովածու, Ա պրակ, էջ 62—64): Կոստանյանցի հրատարակած օրինակը ինքնագրից պակաս է 6 տնով: Եղած տներից միայն 8-ն են նման ինքնագրին: Հաճախ այլ է նաև տների դասավորությունը: Բացի դրանից հրատարակիչը դուրս է թողել ձեռագրի օրինակի առաջին տունը և փոխել խորագիրը:

Ինքնագիրը հայտնի չի եղել նաև Ն. Ակինյանին (Հմմտ. ՀՊՏ, էջ 135):

Այս ոտանավորի մասին հիշատակություն ունի նաև Վ. Միքայելյանը (տե՛ս Ղրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 315):

5. ՏԱՂ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐ Ի ԹՈԽԱԹՑԻ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԻՐԻՑՈՒԷ ԱՍԱՑԵԱԼ, Ի ՎԵՐԱՅ ՏԷԻԷՆ ԹՈՌԻՆՆ՝ ԿԱՐԱՊԵՏԻՆ (էջ 519)

(«Թրին հազար վաթսուն ամի»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 7744 ձեռագրից (թերթ 182ա—183ա), որը Ստեփանոս Թոխաթցու ձեռքով 1604 թվականին, Կաֆայում արտագրված Սաղմոսարան է: Սակայն այս ոտանավորն այստեղ արտագրված է ավելի ուշ՝ 1615 թվականին, Ստեփանոսի աշակերտ Զաքարիա Երզնկացու ձեռքով: Այս հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Պ. Խաչատրյանը (տե՛ս ՀՄՊՈ, էջ 319):

6. «Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱԶԱՐ ՎԱԹՍՈՒՆԻ» (էջ 522)

Արտատպվում է «Բազմավէպից», 1922, էջ 164—166: Հրատարակել է Հ. Ղ. Տ-ն (Հայր Ղևոնդ Տայանը): Բնագիրը հանված է Վենետիկի № 278 ձեռագրից (տե՛ս Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ, հտ. Բ, էջ 953): Այս ձեռագրի գրիչը Ամիրաս Երզնկացին է, որն ինչպես երևում է նրա հիշատակարանից (նույն տեղում, էջ 953—954): Ախիճա-

նի կրտսեր եղբայրն է, և սրա խնդրանքով է, որ Ստեփանոս Թոխաթցին 1619 թվականին հորինել է այս ոտանավորը*։

Այս ոտանավորում Ստեփանոս Թոխաթցին անփոփոխ օգտագործել է մի շարք տներ եղբորը՝ տեր Հակոբին, նվիրված իր ոտանավորից։

7. ՏԱՂ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈՅ, Ի ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈԽԱԹՑԻ ԻՐԻՑՎԷ ՈԳԵԱԼ (էջ 528)

(«Հոգիդ սուրբ աստուած, որ շրջէիր ի ջուրն»)

Հրատարակվում է առաջին անգամ, Երուսաղեմի № 1455 ձեռագրից, թերթ 268ա (Մատենադարան, մանրաժապավեն, № 916), որի գրիչն ինքը՝ Ստեփանոս Թոխաթցին է։

Այլ ինքնագիր օրինակ կա Մատենադարանի 1607 թ. գրչության № 2672 ձեռագրում, թերթ 182ա, «Տաղ գալստեան սուրբ Հոգոյն, ի Թոխաթցի Ստեփանոս իրիցվէ ոգեալ» խորագրով։ Ինքնագրերում տարբերություններ չկան։

8. ՏԱՂ Ի ԹՈԽԱԹՑԻ ՍՏԵՓԱՆՈՍԷ (էջ 529)

(«Վա՛յ մեզ, մեղօք չարեօք լցաք»)

Արտատպվում է Պողարյանի «Մայր ցուցակի» Ը հատորից, էջ 108։ Բնագիրը հանված է Երուսաղեմի № 2448 ձեռագրից, թերթ 416ա—419ա։

Այլ օրինակներ

Ա. Երուսաղեմ, ձեռ. № 2442, թերթ 5ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Ը, էջ 90)։ Այստեղ մեջ են բերված I և VIII տները։

Բ. Վենետիկ, ձեռ. № 421, թերթ 182բ (տե՛ս Սարգիսյան Բ. Սարգիսյան Գ, Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 558)։

Հորինված է որպես մեռելաթաղի ողբ, դրա համար էլ հանգուցյալի անվան փոխարեն գրված է «Այս անունն» բանաձևը։

Հակոբ Թոխաթցի

1. ՅԱԿՈԲԱՅ ԹՈԽԱԹԵՑԻՈՅ ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻՆ (էջ 531)

(«Լալով ասեմ ողբերգական»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Հանդէս ամսօրեայ», 1932, էջ 343—348։ Հրատարակել է Ն. Ակինյանը։ Բնագիրը հանված է Լվովի համալսարանի հայերեն № 63 ձեռագրից, թերթ 299—308։

---

* Նույն ձեռագրում Ամիրաս Երզնկացին արտագրել է նաև «Բանք և մխիթարականք Ստեփանոս Թօղաթցի անպիտան և անարժան իրիցուէ, մեր սրտէ սիրեցեալ և անմիջոց բարեկամաց» խորագրով արձակ երկը (տե՛ս «Բազմավէպ», 1922, էջ 129—132), գրված դարձյալ Ախիճանի մահվան կապակցությամբ և ուղղված Ամիրասին ու նրա հորը՝ Մահտեսի խոճա Պալիին։

B = 2856, թերթ 463բ—464բ։

Իր օգտագործած ձեռագրի մասին Ն. Ակինյանը գրում է, թե դրա գրչությունից երևում է, որ Հակոբ Թոխաթցու ինքնագիրն է (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1932, էջ 340)։ Հետագայում նա ճշտում է, թե ըստ հիշատակարանի ձեռագիրը գրված է Կաֆայում, 1584 թ., բայց ավելի ուշ դրան կցվել է մի նոր պրակ այս ողբի բնագրով, որի գրիչն ինքը Հակոբ Թոխաթցին է (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 136—137)։

Ե օրինակը նույնպես ինքնագիր է, քանի որ այս դեպքում ձեռագրի գրիչը, ինչպես երևում է 262բ—263բ թերթերում գրված հիշատակարանից, ինքը՝ Հակոբ Թոխաթցին է, թեև մեզ անհայտ պատճառով այստեղ նա չի արտագրել ողբի վերջին 13 տունը։

2. ՆՈՐԻՆ ՅԱԿՈԲԻ ԱՍԱՑԵԱԼ ԽՐԱՏ ՎԱՍՆ ԱՆՁԻՆ ԻԻՐՈՅ (էջ 539)

(«Յակոբ Թոխաթցի մեղօք զառածեալ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 2939, թերթ 519բ։
B = 1636, թերթ 133ա—134ա։
C = 2093, թերթ 195ա—195բ։
D = 10006, թերթ 38բ—39ա։

Այլ օրինակներ

Ա. Երուսաղեմ, ձեռ. № 892, թերթ 169բ (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 405)։

Բ. Երուսաղեմ, ձեռ. № 1531, թերթ 387ա (նույն տեղում, հտ. Ե, էջ 283)։

Տնագլուխ տառերը հոդում են «Յակոբի»։

Տպագրվում է առաջին անգամ։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս Մատենագրական հետազոտություններ, հտ. Դ, Վիեննա, 1938, էջ 6)։

3. ՆՈՐԻՆ ՅԱԿՈԲԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՍԻՐՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՍՐԲՈՑ ՆՈՐԱՅ (էջ 540)

(«Անեղանելին աստուած, անսկիզբն և անհառական»)

Օգտագործված աղբյուրներ

a = Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 424—426։ Բնագիրը հանված է Երուսաղեմի № 1621 ձեռագրից, թերթ 487ա—497ա։

B = 1636, թերթ 134ա—137բ։

C = 10006, թերթ 39ա—42բ։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս «Մատենագրական հետազոտություններ», հտ. Դ, էջ 7)։

4. Ի ՅԱԿՈԲ ԻՐԻՑՈՒԻ ԱՍԱՑԵԱԼ Է ԴԵՂՉՈՒԿ ՈՏԱՆԱՒՈՐՍ Ի ՊԷՄՄ ՎԱՐԱԳԱՊԵՏԻՆ ԻՐՈՑ՝ ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅԻՆ, ՈՐ ԱՍԻ ԱՅՎԱՔԵՆՑ, ԵՒ ԻՐԵՒՆՑ ՄԱԿԱՆՈՒՆ ԱՍԵՆ ԹՈՒՆԱՒՈՐԻ ԲԱՔՈՒԿԻ ՏԷՐ ՅԱԿՈԲ, ՈՐ Է ԱՅԺՄ Ի ԼԵՀԱՑ ՏՈՒՆ, ՋԱՄՈՍՑԱ (էջ 545)

(«Յիսուսի աստուծոյ, որդւոյն միածնի»)

Հրատարակվում է առաջին անգամ, Մատենադարանի № 10050 ձեռագրից (թերթ 327բ—330ա): Ձեռագրի այդ մասի գրիչն ինքը՝ Հակոբ Խոխաթցին է:

Այս աղբյուրից ընդօրինակություն կա Վիեննայի № 745 ձեռագրում, թերթ 228ա—230ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 288—289):

Տնազգուխ տառերը հոդում են «Յակոբ անարժանիս բնիկ»:

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս ՀՊՏ, էջ 174—175):

5. Ի ԲԱՔՈՒԿ ՅԱԿՈԲ ԻՐԻՑՈՒԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՊԷՄՄ ՎԱՐԱԳԱՊԵՏԻՆ ԻՐՈՑ՝ ԱՅՎԱՔԵՆՑ ՏԷՐ ՅԱԿՈԲԻՆ (էջ 548)

(«Հիբար ևողանձնէ»)

Հրատարակվում է առաջին անգամ, ինքնագրից՝ Մատենադարանի № 10050 ձեռագրից, թերթ 335բ—337բ:

Այս աղբյուրից ընդօրինակություն կա Վիեննայի № 745 ձեռագրում, թերթ 230ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 289):

Հատվածների սկզբնատառերը հոդում են «Հայր»:

Ոտանավորի ավարտից հետո ձեռագրում կա Հակոբ Խոխաթցու հետևյալ հիշատակարանը. «Եւ ես առաւել տեսոյդ ցանկալի անձն իմ փափագի արժանի լինել: Գարձեալ կրկնակի խնդրեմ յաստուծոյ, զանձինս մեր հանդերձ բնտանեօքս ի սուրբ յաղօթս քո ընդունելի, մեր յանձին եղեալ եմք: Ողորմեայ մեզ տէր աստուած մեր, ասացես Տէր ողորմեա, Տէր ողորմեա, զիմ՝ աշակերտիս չատ մեզրն ջնջեա»: Այս հիշատակարանը ևս ուղղված է հեղինակի ուսուցիչ Այվաթենց տէր Հակոբին:

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս ՀՊՏ, էջ 175 և Մատենադարանի հետազոտություններ, հտ. Դ, էջ 7):

6. ՅԱԿՈԲԱՅ ԹՈՒՆԱԹԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՏԱՂ ՎԱՍՆ ԿԵՆԱՑ ՄԱՐԴԿԱՆ (էջ 551)

(«Աստուած սահմնաց գմարդն առաջին»)

Օգտագործված աղբյուրներ

a = «Բազմավէպ», 1865, էջ 208—211: Բնագիրը հանված է Վիեննայի № 304 ձեռագրից, թերթ 167ա—170բ:

B = 1636, թերթ 124ա—128բ:

C = 10006, թերթ 32բ—35բ:

D = 2093, թերթ 195բ—198բ:

Այլ օրինակներ

Ա. Երուսաղեմ, № 892, թերթ 157ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 405):

Բ. Բեռլինի Արքունի մատենադարանի ձեռ. № 63, թերթ 336բ (տե՛ս Ն. Ակինյան, ՀՊՏ, էջ 176)։

Գ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 42, թերթ 251ա (տե՛ս Սուրմեյան, Մայր ցուցակ Հալեպի, հտ. Բ, էջ 127)։

Այլ հրատարակություն

«Համբաւաբեր Ռուսիոյ», 1863, № 40—43, էջ 7—8։ Աղբյուրը չի հիշատակված։

Տնագլուխ տառերը այբբենական կարգով են։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս ՀՊՏ, էջ 176 և Մատենագրական հետազոտություններ, հտ. Դ, էջ 8)։

7. ՅԱԿՈԲԱՅ ԵՐԻՑՈՒ ԱՍԱՑԵԱԼ ԶՂՋՄԱՆ ԽՕՍՏՈՎԱՆՕՐԷՆ (էջ 557)

(«Յերգոցն Դաւթի սկիզբն արարից»)

Օգտագործված աղբյուրներ

A = 1636, թերթ 128բ—131բ։

B = 10006, թերթ 35բ—37բ։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 304, թերթ 16բ (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 732)։

Բ. Երուսաղեմ, ձեռ. № 892, թերթ 161ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 405)։

Տնագլուխ տառերը հոդում են «Յակոբ քահանայի ասացեալ է»։

Հրատարակվում է առաջին անգամ։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս ՀՊՏ, էջ 176—177)։

8. ՆՈՐԻՆ ՅԱԿՈԲԻ ԱՍԱՑԵԱԼ ՈՂԲ ԱՂՕԹԱԿԱՆ (էջ 561)

(«Յիսուս Քրիստոս, ի փրկիչդ աղերսեմ»)

Օգտագործված աղբյուրներ

A = 1636, թերթ 131բ—133ա։

B = 2093, թերթ 199ա—200ա։

C = 10006, թերթ 37բ—38ա։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 304, թերթ 18ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 732)։

Բ. Երուսաղեմ, ձեռ. № 892, թերթ 163ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 405)։

Տնագլուխ տառերը հոդում են «Յակոբ քահանայի է»։

Հրատարակվում է առաջին անգամ։

Հիշատակել է Ն. Ակինյանը (տե՛ս ՀՊՏ, էջ 177)։

9. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՇԱՐԱԳՐՈՂԻ ՍԱՂՄՈՍԻՍ, ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵՍՑԻ, ԱՄԷՆ (էջ 563)

(«Յետ Ադամայ ելանելոյն ի փափկութեան»)

Օգտագործված աղբյուրներ

a = Ն. Ակինյան. *Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 168—172: Բնագիրը հանված է Վիեննայի № 304 ձեռագրից, թերթ 163ա—167ա: Ըստ հրատարակչի վկայության, ձեռագրի վրա (թերթ 8ա) կա հեղինակի՝ Հակոբ Թոխաթցու, ստորագրությունը, ուստի այս աղբյուրն ինքնագրի արժեք ունի: Բայց քանի որ Ն. Ակինյանը ոտանավորը բերել է միայն հատվածաբար, մենք ստիպված ենք եղել պակասող մասերը լրացնել մյուս աղբյուրներից:*

b = Պողարյան. *Մայր ցուցակ, հտ. Գ, էջ 401—404: Բնագիրը հանված է Երուսաղեմի № 892 ձեռագրից, թերթ 153ա—156ա:*

C = *2939, թերթ 518ա—519բ:*

D = *1636, թերթ 137ա—138բ:*

E = *2093, թերթ 191բ—194բ:*

Այլ օրինակներ

Ա. Սեբաստիա, ձեռ. № 229, թերթ 254ա (տե՛ս Գուշակյան. *Ցուցակ, էջ 117):*

Բ. Երուսաղեմ, ձեռ. № 1531, թերթ 378—379 (տե՛ս Պողարյան. *Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 283):*

Գ. Երուսաղեմ, ձեռ. № 1621, թերթ 478—487 (նույն տեղում, էջ 423—424):

Դ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 48, թերթ 245ա, «Շարագրողի Տէր աստուած ողորմեսցի» խորագրով: Մեջ է բերված առաջին տունն ու վերջին մասը՝ սկսած 113-րդ տողից (տե՛ս Սուրմեյան, *Մայր ցուցակ Հալեպի, հտ. Բ, էջ 127):*

Գրված է 1627 թ.:

10. ՏԱՂ ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ, Ի ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅԷ ԱՍԱՑԵԱԼ (էջ 568)

(«Յաստուծոյ շինեալ քաղաք պատուական»)

Օգտագործված աղբյուրներ

A = *7050, թերթ 269ա—270բ:*

A′ = *Վիեննա, ձեռ. № 387, թերթ 24ա—25բ:*

B = *7014, թերթ 160բ—162ա:*

B′ = *Վիեննա, ձեռ. № 671, թերթ 68բ—71բ:*

C = *8699, թերթ 186բ—188բ:*

C′ = *Վիեննա, ձեռ. № 343, թերթ 191ա:*

D = *9600, թերթ 66բ—68ա:*

E = *740, թերթ 14ա—15բ:*

F = *10167, թերթ 44ա—45բ:*

G = *3425, թերթ 33բ—34ա:*

H = *2394, թերթ 169բ—173ա:*

δ = *7193, թերթ 1ա—3ա:*

J = 10208, թերթ 115բ—117ա։

K = 6097, թերթ 302բ—304բ։

D′ = Վիեննա, ձեռ. № 417, թերթ 40բ—43ա։

L = 9597, թերթ 65ա—68ա։

m = «Գիրք պարութեան և Տաղարան վայելուչ...», 1714, էջ 201—203։ Աղբյուրը չի հիշատակված։

N = 7092, թերթ 17ա—17բ։

E′ = Վիեննա, ձեռ. № 577, թերթ 597ա և 61ա։

O = 2436, թերթ 74ա—76բ։

P = 1636, թերթ 137բ—139բ։

Q = 7682, թերթ 16բ—17ա և 18ա—18բ։

F′ = Վիեննա, ձեռ. № 514, թերթ 112բ։

R = 1990, թերթ 17բ—18ա։

S = 1006, թերթ 42բ—44բ։

Այլ օրինակներ

Ա. Մատենադարան, ձեռ. № 10723, թերթ 51ա—51բ։ Առկա են միայն 1, 4, 5, 8-րդ տները։

Բ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 151ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հա. Բ, էջ 594)։

Գ. Վիեննա, ձեռ. № 1215, թերթ 80բ (նույն տեղում, էջ 863)։

Դ. Վիեննա, ձեռ. № 973, թերթ 84բ (նույն տեղում, էջ 559—560)։

Ե. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 373 (նույն տեղում, էջ 682)։

Զ. Երուսաղեմ, ձեռ. № 1400, թերթ 201ա—211ա, «Տաղս ս. յերուսաղեմայ, յաւկար բահանայի ասացեալ» խորագրով (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հա. Ե, էջ 51—52)։

Է. Զալաթիա, ձեռ. № 141, թերթ 129ա—135ա (տե՛ս Կյուլեսերյան, Յուցակ Զալաթիայի, էջ 886)։

Ը. Զալաթիա, ձեռ. № 265, թերթ 232Ր (նույն տեղում, էջ 1211)։

Թ. Զմմառ, ձեռ. № 604, թերթ 206բ (տե՛ս Ակինյան, Ոսկյան, Յուցակ, հա. Բ, էջ 211)։

Ժ. Զմմառ, ձեռ. № 522, թերթ 16բ (նույն տեղում, էջ 125)։

ԺԱ. Հալեպի Ամերիկյան վարժարան, ձեռ. № 28, թերթ 827ա (տե՛ս Սուրմեյան, Մայր ցուցակ Հալեպի, հա. Բ, էջ 89)։

Այլ հրատարակություններ

ա) «Գրքուկս որ կոչի Տաղարան», 1740, էջ 270—274։ Արտատպություն է m աղբյուրից։

բ) «Հանդէս ամսօրեայ», 1909, էջ 373—374։ Քննական բնագիր է՝ կազմված Վիեննայի №№ 387, 671, 343, 417, 577 և 514 ձեռագրերի բաղդատությամբ։ Հրատարակել է Ն. Ակինյանը։ Քանի որ Ն. Ակինյանի օգտագործած ձեռագրերը մեր ձեռքի տակ չեն եղել, օգտագործել ենք նրա ցույց տված տարբերվածները և դրանք դիտել որպես A′, B′, C′, D′, E′, F′ աղբյուրներ։

Գրված է 1635 թ.։

Կ. Կոստանյանցը «Նոր ժողովածուի» Բ պրակում, խոսելով Հակոբ Արծկեացու մասին, գրում է. «Կա և մի այլ Յակոբ երէց, նորա տաղը՝ «Վասն Երուսաղեմի»

գրված է 1636-ին: Մենք անկարող ենք որոշել, թե Արծկեացին կամ Նետրաենցը և այս Յակոբ երէցը նույնն են» (էջ 20):

Հ. Տաշյանն իր «Յուցակում» (էջ 792) վերագրում է Հակոբ Սանցուն:

Ն. Ակինյանը հրատարակել է որպես Հակոբ Կեսարացու երկ, բայց 1930-ին «Միրթիչ եպիսկոպոս Ադանունի, միաբանք և այցելուք Հայ Երուսաղեմի» գրախոսությանն ձեռ («Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 368—369) ուղղել է իր սխալը գրելով, թե բուն էջմիածնի մի ձեռագրի՝ տապի հնդինակը Հակոբ Թոխաթցին է:

Խաչատուր Թոխաթցի

I. Ի ԹՈՒՆԱՔՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԻՐԻՑՈՒԻ ԱՍԱՑԵԱԼ (էջ 574)

(«Տեսէք զամաճս դժնեի»)

Օգտագործված ապրյուրներ

A = 10050, թերթ 374բ—375ա:
B = 10077, թերթ 63բ—65ա:

Այլ օրինակ

Վիեննա, ձեռ. N 745, թերթ 250բ (տե՛ս Ոսկյան. Յուցակ. հա. Բ, էջ 289):

Առաջին անգամ, A ապրյուրից, հրատարակել է Ս. Բոյանջյանը. (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 523—524):

Խաչատուր Թոխաթցի (Երկբայելի)

ՏԵՂ Ի ԽԱՉԱՏՈՒՐ ԻՐԻՑՈՒԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՈՒԽՏԱՒՈՐԵԱՆ, ԵՐԿՈՒՒ ԱՂՔ ԼԵՂՈՒԻՆ, ԽՈՍՏ ԱՂՆԻՒ (էջ 576)

(«Խաւարանքիս, ճարկիզ, մնձևչիւ, առնգալ»)

Օգտագործված ապրյուրներ

A = 7707, թերթ 31բ—33ա:
B = 3081, թերթ 27բ—28ա:
C = 4996, թերթ 73ա—74բ:
D = 10050, թերթ 404բ—405բ:
E = 695, թերթ 243ա—243բ:
F = 7715, թերթ 25բ—26բ:
G = 3394, թերթ 37ա—38բ:
H = 8699, թերթ 188բ—189բ:
δ = 10208, թերթ 140ա—140բ:
J = 7128, թերթ 10ա—11բ:
K = 7717, թերթ 131բ—132բ:
L = 7193, թերթ 105ա—106բ:
M = 3411, թերթ 55ա—56ա:

N = 5668, թերթ 45ա—46բ։
O = 7714, թերթ 114ա—115բ։
P = 9597, թերթ 244ա—245ա։
Q = 597, թերթ 202բ—204ա։
R = 7712, թերթ 4բ—5բ։
S = 1990, թերթ 34ա—34բ։
T = 8083, թերթ 46ա—46բ։

Այլ օրինակներ

Ա. Վիեննա, ձեռ. № 745, թերթ 282ա (տե՛ս Ոսկյան, Յուցակ, հտ. Բ, էջ 290)։

Բ. Վիեննա, ձեռ. № 1002, թերթ 176ա (նույն տեղում, էջ 595)։

Գ. Վիեննա, ձեռ. № 1042, թերթ 214ա (նույն տեղում, էջ 677)։

Դ. Վիեննա, ձեռ. № 1259, թերթ 69բ (նույն տեղում, էջ 896)։

Ե. Քառատուն մանկունք, ձեռ. № 121, թերթ 30ա (տե՛ս Սուրմեյան, Յուցակ, էջ 209)։

Զ. Ղալաթիա, ձեռ. № 141, թերթ 487ա—489ա (տե՛ս Կյուլեսերյան, Յուցակ Ղալաթիայի, էջ 978)։

Է. Երուսաղեմ, ձեռ. № 1455, թերթ 132բ (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 140)։

Ը. Բրիտանական թանգարան, Հայերեն ձեռ. № 108, թերթ 256բ (տե՛ս Conybeare, A Catalogue, էջ 279)։

Առաջին անգամ, K աղբյուրից, հրատարակել է Կ. Կոստանյանցը «Նոր ժողովածուի» Գ պրակում, էջ 18—20։

Տնագլուխ տառերը հողում են «խաչատուրէ»։

Խաչատուր Թոխաթցուն ենք վերագրել երկբայելիորեն, որովհետև այդ բանը հաստատող բանասիրական որոշակի ապացույցներ չունենք։ Կարող ենք ասել միայն, որ այս և հաստատապես Խաչատուր Թոխաթցու գրչին պատկանող «Տեսէք զամենս զդմենի» սկսվածքով ոտանավորի հետագայն օրինակները պահպանվել են նույն՝ 1605 թ. գրչության № 10050 ձեռագրում, և որ այս երկու ոտանավորներն իրենց բանաստեղծական հնարանքներով և լեզվաոճական առանձնահատկություններով հարազատ են միմյանց։ Բացի դրանից, մեզ թվում է, թե ժամանակի բանաստեղծ Խաչատուրներից որպես այս ոտանավորի հեղինակ, ամենահավանականը Թոխաթցին է։ Խաչատուր Կաֆացին և «Ես գանգանս, որ ես գործեալ եմ» սկսվածքով ոտանավորի հեղինակը վարդապետներ են եղել, իսկ Խաչատուր երեց Կաֆացին (Խաչ-Թռուզը) հանդես է եկել ավելի ուշ՝ ժէ դարասկզբին։

ԿԱՐԱՊԵՏ ԲԱՂԻՇԵՑԻ

«Կարապետ վ. Բաղիշեցի (1475—1550)» հոդվածում Ն. Ակինյանը Բևականորեն («իբր») այն կարծիքն է հայտնել, Թե Կարապետ Բաղիշեցին ծնվել է 1475 թ.[1]։ Պ. Խաչատրյանը Համանական չի համարում այս ենթադրությունը[2], քանի որ 1483 թ., այսինքն այն ժամանակ, երբ ըստ այդ ենթադրության Կարապետ Բաղիշեցին ընդամենը 8 տարեկան է եղել, նա ընդօրինակել է մի գանձարան[3], որտեղ գետեղել է նաև իր «Գանձ Գրիգոր Աստուածաբանին ի գծոզէ այամ գանձարանիս, յանմիտ Կարապետ Բաղիշեցու» խորագրով երկը[4] ինչպես բանասերն է նկատում՝ «Հատուն ու բանիմաց մտքի արտադրանք», «որը Հորինելու Համար դրսից գոնե երիտասարդական տարիքում պետք է լիներ»[5]։ Ելնելով սրանից՝ Պ. Խաչատրյանը Կարապետ Բաղիշեցու ծնունդը դնում է «ամենաուշը 1460-ական ԹԹ. սկզբներին»[6]։

Ասկայն, ինչպես վերջերս պարզել է Ն. Պողարյանը[7], Կարապետ Բաղիշեցին 1477 թ. արդեն ընդօրինակել է մի չարակնոց[8], իսկ նրա «Թէ ձայն ունիս բաղցր ու բարակ» և «Ո՛վ սիրելի եղբայր որ ես» սկսվածքներով ոտանավորները կան 1476 թ. գրչության մի ձեռագրում[9]։ Այս փաստերից բանասերն իրավացիորեն այն եզրակացությանն է հանգում, Թե Կարապետ Բաղիշեցին պետք է ծնված լիներ «Համաչարաբ Ժե դարու կեսուն»[10]։

Կարապետ Բաղիշեցու մասին հայտնի են կենսագրական մի քանի փաստեր. 1496 թ. Մշո Առաքելոց վանքում նա կազմել ու վերանորոգել է «Վլիհ» կոչված ավետարաններ է դրա հիշատակարանում գրել. «...Ջաւսանուն Կարապետ արհեցս գԲաղիշեցիս՝ զվերջին կազմոցս յիշեցէք»[11]։ Նույն տարին Տարոնի ս. Կարապետ կամ

---

1 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 318։

2 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 93—94։

3 Մատենադարանի ձեռ. № 5785։ Հիշատակարանում (Թերթ 152ա) կարդում ենք. «Հանպիտան ծառայ՝ զԿարապետ Բաղիշեցիս յիշեալ ի բարին, ո՛վ պատուական երէց, ի ԹՎ. ՉԼԲ (1483), ապրիլ ԺԷ (15)»։

4 Նույն տեղում, Թերթ 113ա—115բ։

5 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 94։

6 Նույն տեղում։

7 Տե՛ս Ն. Պողարյան, Հայ գրողներ, էջ 442—444։

8 Երեւանի № 1669 ձեռագիրն է (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, Հտ. Ե, էջ 522—524)։

9 Երեւանի № 1193 ձեռագիրն է, Թերթ 879ա (տե՛ս Պողարյան, Մայր ցուցակ, Հտ. Գ, էջ 314)։

10 Տե՛ս Հայ գրողներ, էջ 442։

11 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 320։

Գլակա վանքում, ոսկերիչներ Արանդարի և Շահդուրաթի ընկերակցությամբ, պատրաստել է կիլիկյան շրջանի մի ձեռագիր ավետարանի արծաթե կազմը և առաջին երեսին, ոսկերիչ վարպետների և արծաթը նվիրող Մելիքսեթ եպիսկոպոսի անուններիս կողքին, երկու անգամ հիշատակել նաև իր անունը[12]: 1497 թ., նույն վանքում, ընդօրինակել է Գրիգոր Տարոնացու արտագրած մի ձեռագրի անձրևից փչացած պրակները և այդ մասին թողել հետևյալ հիշատակարանը. «Նաև զանարժան ծառայս ծառայիցդ աստուծոյ գկարապետ սուտանուն արեղայս զԲազիշեցիկս յիշեցէ՛ք ի բարին Քրիստոսի, որ զայս վեց տետր ու կեսս գրեցի: Զի գիրքս նոր էր գրած և յահէ ամրակաց հեծելոց կայր ի պահըստի ի ծերպս վիմաց և յիջմանէ անձրևաց ապականեալ էր զոր ծրեցի բան իմում կարի: Յիշեցէք ի Տէր և աստուած գձեզ յիշեսա, ամէն»[13]: 1502 թ. Միջագետքի Բերդաձոր գյուղում ընդօրինակել է մի Մաշտոց, որի հիշատակարանում գրել է իր այդտեղ գտնվելու հանգամանքների մասին. «Արդ գրեցաւ սուրբ գիրքս, որ կոչի Մաշտոց, յերկիրս Միջագետաց, ի յաստուածապահ և անուանի գեօղս, որ կոչի Բերդաձոր և անուանի Բևրիաջուկ, ձեռամբ անարժան և անպիտան, մեղաւոր և փծուն գրչի կարապետ սուտանուն արեղայի Բազիշեցոյ, որ պատահմամբ հանդիպեցայ աստ և սկսեալ կատարեցի կամօք և աջողութեամբ ամենակալին աստուծոյ...»: Եվ. «Արդ գրեցաւ սուրբ գիրքս ի թուականիս ՉՆԱ (1502), ի գառն և յանբարի ժամանակիս, որ յամենայն կողմանց նեղիմք յանօրինաց...»[14]: Այստեղ իսկ իր ոսկերիչ եղբոր՝ Աստվածատուրի մասին գրում է. «Անմեղ դահատակեալ եղև ի ձեռն հարամկաց, ի յանապատն Մշոյ և եթող ինձ սուգ անմխիթար»[15]: Այս տողերից երևում է, թե բազաքական ինչպիսի անապահով պայմաններում է ապրել Կարապետ Բազիշեցին Սեֆյան Պարսկաստանի և նրա դեմ ընդվզած քրդական ցեղերի միջև մղված կատաղի կռիվների այդ տարիներին: Ըստ երևույթին հենց այդ պայմաններն են ստիպել նրան հայրենիքից հեռանալ և «պատահմամբ» հայտնվել Միջագետքում: Այս հիշատակարանից իմանում ենք նաև, որ Կարապետ Բազիշեցու հոր անունը եղել է Ստեփանոս, մորը՝ Ալամշահ, իսկ վերը հիշատակված ձեռագրի (Մատենադարանի ձեռ. № 9422) արծաթե կազմը պատրաստող ոսկերիչներից մեկը՝ Շահդուրաթը, եղել է նրա եղբորորդին: 1513 թ., Մուշից ոչ հեռու գտնվող Եղրդուտի վանքում, Կարապետ Բազիշեցին ընդօրինակել է մի Սաղմոսարան[16], որի հիշատակարանը հրատարակել է Ն. Ակինյանը՝ իր գրած «Ոդր ի վերայ արշաւանաց Իսմայէլ շահի» վերնագրով: 1526 թ. նա նորից եղել է Տարոնում և ս. Առաքելոց վանքում ընդօրինակել մի Հայսմավուրք[17]:

Բանասիրության մեջ երբեմն Կարապետ Բազիշեցուն են վերագրել ստեղծագործություններ, որոնք նրանը չեն և, ընդհակառակը, նրա ստեղծագործությունները երբեմն վերագրվել են ուրիշներին: Այս շփոթության պատճառն այն է, որ ԺԶ—ԺԷ դարերում Կարապետ անունով հանդես են եկել մի քանի բանաստեղծներ, որոնց կյանքի ու գործունեության շատ հանգամանքներ ցարդ անբավարար են ուսումնասիրված:

---

12 Մատենադարանի № 9422 ձեռագիրն է: Մանրամասն նկարագրությունը տե՛ս Ա. Մնացականյան. Հայկական գարդարվեստ, Երևան, 1955, էջ 629—641:

13 Մատենադարանի ձեռ. № 3495, թերթ 338բ:

14 Մատենադարանի ձեռ. № 8166, թերթ 207—208:

15 Նույն տեղում, թերթ 208:

16 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 322:

17 Մշո Առաքելոց վանքի № 57 ձեռագիրն է (տե՛ս Մուրադյան, Մաշտոցյան, Յուցակ, էջ 50):

Կարապետ Բաղիշեցուն մյուսներից տարբերակելու համար հարկ է պարզել, թե նա ինչ հոգևոր աստիճաններ է ունեցել։ Ն. Ակինյանը գտնում է, որ 1540-ական թվականներին նա եղել է աբեղա, ապա ձեռնադրվել է վարդապետ։ Ակինյանը նույնիսկ ենթադրում է, թե 1547 թ. գրված մի Սաղմոսարանում հիշատակվող Առաքելոց վանքի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը ինքը՝ Կարապետ Բաղիշեցին է[18], թեև այդ մասին ձեռագրում հիշատակություն չկա։ Չի համոզում բանասերի այն պնդումը, թե. «Ամեն պարագայ կը մղէ զմեզ նոյնացնելու Կարապետ Բաղիշեցին Առաքելոց վանքի համանուն առաջնորդի հետ»[19]։ Այս պնդման համար բանասերը որևէ կռվան չի բերում, և, անշուշտ, իրավացի է Պ. Խաչատրյանը գրելով. «Դժվար թե Բաղիշեցին իր զառամյալ հասակում (1547 թ. եթե նա ապրելիս լիներ, առնվազն 85—87 տարեկան կլիներ) ընտրվեր առաջնորդի փոխանորդ»[20]։ Ինչ վերաբերում է այն կարծիքին, թե Կարապետ Բաղիշեցին 1540-ական թվականներին վարդապետ է ձեռնադրվել, ապա դա առաջացել է նրանից, որ Ն. Ակինյանը թյուրիմացաբար նրան է վերագրել 1540 թ. գրված «Տաղ արարածոց» երկը, որի բոլոր ձեռագիր օրինակներում, խորագրերի մեջ որպես հեղինակ հիշատակվում է ոմն Կարապետ վարդապետ։ Եթե 1540-ական թվականներին Կարապետ Բաղիշեցին վարդապետ ձեռնադրված լիներ, ապա 1526 թ. նրա ընդօրինակած գանձարանը 1552-ին վերանորոգող Մակար Հենեցին չէր կարող այդ բանը չշեշտել իր հիշատակարանում, մինչդեռ նա Բաղիշեցուն հիշում է որպես արդեն վախճանված աբեղա[21]։

Ն. Ակինյանի կարծիքով Կարապետ Բաղիշեցին «հավանորեն» մեռել է 1550 թ.[22]։ Այս սխալը նույնպես գալիս է «Տաղ արարածոցը» թյուրիմացաբար նրան վերագրելու փաստից։

Ն. Պողարյանը թեև գրում է, թե՝ «նրա մահուան պարագաները կմնան անծանոթ»[23], բայց գրքի Կարապետ Բաղիշեցուն նվիրված գլխի խորագրի տակ, որպես նրա մահվան թվական, հարցականով գնում է 1514 թ.։ Սա էլ հետևանք է այն բանի, որ բանասերին, որպես Կարապետ Բաղիշեցու ընդօրինակած վերջին երկ, հայտնի է եղել 1513 թ. գրչության Հայսմավուրքը։

Մեր կարծիքով Կարապետ Բաղիշեցին պետք է վախճանված լինի 1526 թվականից, այսինքն վերջին ձեռագիրն ընդօրինակելուց, մի փոքր հետո, այլապես նրա հետագա գործունեության մասին որևէ տեղեկություն կունենայինք։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ

«Տաղ վասն սուրբ Էջմիածնայ նուիրակներու գլխատման» ոտանավորում Հովհաննես քահանան որպես ականատես է նկարագրում 1506 թ. կատարված դեպքերը։ Այստեղից կարելի է ենթադրել, որ նա ծնված պիտի լինի ԺԵ դարի երկրորդ կեսին։ Եղել է քահանա, ինչպես ինքն է գրում ոտանավորի 140-րդ տողում։

---

18 Մեր կարծիքով, հիշատակարանի. «... յառաջնորդութեան սուրբ ուխտիս արքեպիսկոպոսացն տեառն Կարապետի» բառերը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 323) հիմք չեն տալիս պնդելու, թե այս Կարապետը Բաղիշեցին է։

19 Նույն տեղում։

20 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 96։

21 Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում։

22 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1937, էջ 323։

23 Տե՛ս Հայ գրողներ, էջ 442։

Ծնվել է Դերջան Նահանգի Փողձա գյուղում, հավանաբար ԺԶ դարի 80-ական թթ., Մկրտիչ քահանայի ընտանիքում: Մեռած է համարվում 1545 թ.՝ շուրջ 65 տարեկան հասակում[1]: Ն. Ակինյանը նրա կյանքի ծաղկուն ժամանակը համարում է 1525—1545 թթ.:

Մաղաքիա Դերջանցին 1500 թվականից ուսանել է Գլակա վանքում, Մշեցի Գրիգոր վարդապետի համալսարանում և 20 տարի ունկնդրել նրան: 1521 թ. ստացել է վարդապետական գավազան: 1522 թ. իր ուսուցչի՝ Գրիգոր վարդապետի հետ ցամաքային ճանապարհով ուղևորվել է Երուսաղեմ, բայց Գրիգոր վարդապետը վախճանվել է Հալեպում, իսկ Մաղաքիա Դերջանցին ստիպված վերադարձել է Դերջան և պարոց բացել: 1530 թ. նա իր աշակերտներից Հիշում է Կարապետին, Մեսրոպին, Սարգսին, Թագեոսին և Աստվածատուր Յաղուբյանին:

1530 թ. Մաղաքիա Դերջանցին մեկնել է Կ. Պոլիս, ընդունվել սուլթան Սուլեյմանի կողմից և թախանձանքով Կամախի եպիսկոպոսության (Կամախ և Ավազ վանքի) վրա դրված հարկը («մալը») 1200 «սպիտակից» իջեցրել 600-ի, իսկ արեղանների վրա դրված «խարճ» բոլորովին վերացրել ու հրաման առել եկեղեցիները վերանորոգելու[2]:

Երկրորդ անգամ նա Կ. Պոլիս է գնացել 1545 թ., մահից փորր-ինչ առաջ և Կ. Պոլսի պատրիարք, իր երբեմնի աշակերտ Աստվածատուր Յաղուբյանի միջոցով կրկին ընդունվել սուլթանի կողմից: Այս անգամ նա հաջողեցնում է կայսերական արտոնություն ստանալ Դերջանի, Բաբևրդի ու շրջակա գյուղերի բնակչությունից մանկաժողովները դադարեցնելու մասին[3], մի բան, որ մեծ հռչակ է բերում նրան:

Մաղաքիա Դերջանցին հայտնի է նաև որպես շինարար: 1523—1530 թթ. իր շինարարական գործունեության մասին նա հանգամանորեն գրել է իր հիշատակարան-ինքնակենսագրության մեջ: Նրա անունը գրված է եղել կոթերի եկեղեցում, որը նա վերանորոգել է 1525 թ., իսկ մի կամուրջի վրա եղել է հետևյալ արձանագրությունը. «Մեծ կամուրջն կապեցաւ ձեռամբ Մաղաքիա վարդապետի»[4]:

Հրապարակվող երկից և հիշյալ հիշատակարան-ինքնակենսագրությունից բացի Մաղաքիա Դերջանցին գրել է նաև «Կանոնագիրք էրիցական հաւն և իրաւունքն Մաղաքիա վարդապետի»[5] և «Մաղաքիա արեղայի համառօտ բանք չափաւ ի վերայ իւրաքանչիւր գրոց հնգամատեանին, Յեսուայ, Դատաւորաց» և «Հռութայ»[6] երկերը: Վերջինս, ըստ Ակինյանի, ոչ թե ինքնուրույն է, այլ աստվածաշնչի գրքերին կցված անանուն տաղաշարերի հարատացություն:

---

1 Այս և մյուս կենսագրական տվյալները քաղված են Ն. Ակինյանի «Մաղաքիա վ. Դերջանցի (+1545) տաղասաց, շինարար և բարեգործ» հոդվածից (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 574—581):

2 Այս մասին Մաղաքիա Դերջանցին գրել է իր հիշատակարան-ինքնակենսագրության մեջ, որը նախ հրատարակել է Հ. Ոսկյանը («Հանդէս ամսօրեայ», 1948, էջ 539—541), ապա Ն. Ակինյանը («Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 580—581):

3 Տե՛ս Մ. Օրմանյան. Ազգապատում, հտ. Բ, գիրք Բ, էջ 2237—2238:

4 Այս արձանագրությունը տե՛ս «Արեւելք», 1903, № 5355: Հրատարակել են նաև Ն. Ակինյանը՝ «Հանդէս ամսօրեայում» և Մ. Օրմանյանը՝ «Ազգապատումում»:

5 Հրատարակվել է «Արարատում», 1915, էջ 218:

6 Պահվում է Երուսաղեմի մատենադարանի № 998 ձեռագրում:

Մաղաքիա Դերջանցու մասին կարճառոտ տեղեկություններ հաղորդել են՝ Գրիգոր Դարանաղեցին («Ժամանակագրութիւն», էջ 338—341), Առաքել Դավրիժեցին («Պատմութիւն հայոց», էջ 448), Մ. Չամչյանը («Հայոց պատմութիւն», հտ. Գ, էջ 513), Մ. Օրմանյանը («Ազգապատում», հտ. Բ, գիրք Բ, էջ 2237—2238 և 2261), Հ. Աճառյանը («Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ, էջ 175)։

ՔՈՒՉԱԿ ՎԱՆԵՑԻ

Ղ. Փիրղալեմյանը «Յիշատակարան գրոց» անունով հայտնի իր հավաքածուի[1] 211 թերթում մեջ է բերում ավելի վաղ գրչության մի ավետարանում 1637 թ. գրված չափածո հիշատակարանի հետևյալ երեք տողերը.

Փառք ամենասուրբ Երրորդութեան...
Քուչակ անուն բարի մտական
Եւ ստացող եղեալ սորան...

Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք «Քուչակ» անվանն ու իմանում, որ նա Ավետարանի ստացողն է։

Սրան հետևում է արձակ շարադրված մի հիշատակարան՝ գրված Ստեփանոս Ջուղայեցի Նազաշի ձեռքով, որ Փիրղալեմյանը բերում է գարձյալ հատվածաբար իր միջամտություններով հանդերձ. «Դարձեալ յիշեցէք զՔուչակն և զմեծ պապն իւր Նահապետ Վարպետն, որ մականուն աշուղ (երգիչ — Ղ. Փ.) Քուչակ ասի... (բազում հոեգկցոյց և խրատական երգս յօրինեալ է սա — Ղ. Փ.)։ ...Դարձեալ յիշեցէք զՔուչակն, որ ստացաւ զսա, և ետ ի գուռն սուրբ Թէոդորոս զօրաւարին (Խառակոնիս գէղջ—Ղ. Փ.) և ի ձեռն տէր Մելքիսէթին... ի թուին ՌԿԶ (1637) և ես Ստեփաննոս Ջուղայեցի Նազաշ երէցս հանդիպեցայ (ի — Ղ. Փ.) Խառակոնիս և գրեցի յիշատակարանս»[2]։

Ըստ Մ. Աբեղյանի, Ավետարանի ստացող այս Քուչակը ոչ թե աշուղն է, այլ նրա թոռը կամ ծոռը։ Սրա մեծ պապն է, որ կոչվել է Նահապետ Վարպետ աշուղ Քուչակ մականունով։ «Ինքը թոռը, — գրում է Մ. Աբեղյանը, — հիշատակարանի մեջ իրեն աշուղ չի անվանում, այլ «Քուչակ» անունը հիշատակում է իբրև իր սովորական անունը... և այդ անունը թոռան վրա գրված է, հավանորեն, իր պապի աշուղական մականունից»[3]։ Այստեղից գիտնականը հետևցնում է, թե այդ մեծ պապը, այսինքն աշուղ Քուչակը, հիշատակարանը պատվիրող իր ծոռից չորս սերունդ ավելի վաղ է հանդես եկել, «ուրեմն պիտի ծնված լինի 1637 թվից մոտավորապես 120—140 տարի առաջ (յուրաքանչյուր սերնդին հաշվելով միջին թվով 30—35 տարի), 15-րդ դարի վերջերում կամ 16-րդի առաջին տասնամյակներում»[4]։

Նահապետ Քուչակը Վանի շրջանի Խառակոնիս գյուղից է։ Գյուղի ս. Թորոս (Թեոդորոս) եկեղեցու գերեզմանատանը, Ա. Տեկանցի և Մ. Խրիմյանի վկայությամբ,

---

[1] Մատենադարանի № 6332 ձեռագիրն է։

[2] Հիշատակարանի Ղ. Փիրղալեմյանի մեջ բերած հատվածներն առաջին անգամ հրատարակել է Ա. Ղազինյանը (տե՛ս «Գարուն», 1979, № 3, էջ 88) և նկատել, որ Ա. Տեկանցը Նահապետ Քուչակի կենսագրական ակնարկի համար օգտագործել է միայն հիշատակարանի Ղ. Փիրղալեմյանի հակիրճ ընդօրինակությունը։

[3] Տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր, հտ. Բ, Երևան, 1967, էջ 18։

[4] Նույն տեղում։

գտնվելիս է եղել նրա գերեզմանը։ Գերեզմանաքարի վրա, ըստ վերծանող Աշխարհ-բեկ Քալանթարի, եղել է հետևյալ արձանագրությունը. «Սա արեւ Քուչակ թվ ՌԽԱ ձզ Քս», որից երևում է, թե վախճանվել է 1592 թ.։ Մ. Աբեղյանը նկատելով, որ արձանագրության մեջ բացակայում է Քուչակի «Նահապետ» անունը և դրա փոխարեն կան «Սա արեւ» բառերը, կասկած է հայտնում, թե «արդյոք սխալ ընթերցում չէ՞ «Նահապետ» կամ «շատարև» բառի»[5]։

Միջնադարյան մի հայերենում, որի տարածող երգիչներից մեկն է եղել, ըստ Աս. Մնացականյանի[6], Նահապետ Քուչակը, վերջում նա իր մասին ավելացրել է մի քանի տող, որոնցից իմանում ենք, որ ապրել է հարյուր տարի, կամ, գուցե և, ավելի.

Ես Քուչաքս եմ Վանեցի,
Ի գեղէն Խառակոնիսայ.
Լցեր եմ հարիւր տարին,
Էլ չի՛ գար մտքիկս ի վերայ...[7]

Սա ևս վկայում է, որ աշուղը թոռը չէ, այլ «մեծ պապը», որը պիտի ծնված լինի ԺԵ դարի վերջերին։ Այս ենթադրությունը հաստատելու համար կա մի կական ևս՝ «Գովասանութիւն սուրբ Յովհաննիսի ասացեալ է, ընտիր և անոյշ և գեղեցիկ» խորագրով ոտանավորը, որի վերջին տան մեջ հիշատակվում է «Քուչակ» անունը։ Այս ոտանավորի հնագույն օրինակը մեզ է հասել ԺԷ դարասկզբի գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 7707) և ունի շատ սխալներ ու աղավաղումներ, որոնք, անշուշտ, արդյունք են բազմաթիվ ընդօրինակությունների և անցել են ձեռագրից ձեռագիր։ Եթե դա այդպես է, ապա կարելի է ասել, որ ոտանավորը պետք է գրված լինի մեզ հասած հնագույն օրինակից շատ ավելի վաղ, հավանաբար ԺԶ դարի կեսերին։

Աշուղ Քուչակը ոչ մի տեղ չի տալիս իր «Նահապետ» անունը, բայց մեր կարծիքով հենց Նահապետն է, քանի որ հավանական չէ, որ նույն վայրում, նույն ժամանակ հանդես եկած լինեն երկու բանաստեղծ նույն աշուղ Քուչակ անունով։

Ձեռագրերում Քուչակ Վանեցու անունով պահպանվել են երկու հայերեն և աշուղական տաղաչափությամբ հորինված մի շարք թուրքերեն ոտանավորներ, որոնք իր թարգմանությամբ հրատարակել է Օ. Եգանյանը[8]։

Քուչակն իր անունով ասել է նաև Ֆրիկի «Վասն ի վերայ եղբայրասպանին» բանաստեղծության մի տարբերակը[9]։

Վանեցի («Վանլի» ձևով) Քուչակի անվանը հանդիպում ենք նաև ԺԹ դարում գրի առնված մի հեքիաթում, «Սանամօր և քավորի գովասանք» ոտանավորի մեջ[10], որն ըստ Մ. Աբեղյանի՝ գրված է եղել Ալաշկերտում և իբրև ժողովրդական երգ, անցնելով բերներերան, լեզվական փոփոխություններ է կրել։ Սրա մեկ այլ տարբերակը, որտեղ հեղինակի անունը պահպանված է «Վանլի Քիւչար» ձևով, Լոռում գրի է առել Եղիշե Երզնկյանը, իսկ հրատարակել է Ե. Լալայանը[11]։

---

5 Նույն տեղում, էջ 19։

6 Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 567։

7 Նույն տեղում, էջ 280։

8 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 465—481։

9 Տե՛ս Ֆրիկ, «Դիւան» (աշխատասիրությամբ Տիրայր արքեպիսկոպոսի), Նյու Յորք, 1952, էջ 551—554։

10 Տե՛ս Տ. Նավասարդյանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, Զ գիրք, Թիֆլիս, 1890, էջ 77։

11 Տե՛ս «Ազգագրական հանդէս», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 78—80։

Այս ամենից հետևում է, որ Նահապետ Քուչակն իսկապես եղել է աշուղ, որն իր ստեղծագործություններից բացի երգել-տարածել է ժամանակի հայտնի բանաստեղծությունները: Իրավացի է Մ. Աբեղյանը գրելով, թե. «Քուչակը, իմ իմացածով, մեր ամենահին երգիչն է, որ «աշուղ» մականունն ունի»[12]:

Մ. Աբեղյանի այս եզրահանգմանը սատարում է նաև մի գրույց, որը պահպանվել է Երուսաղեմի 1700 թ. գրչության № 1760 ձեռագրում, (թերթ 654ա)[13] և որը, ըստ երևույթին, ծանոթ չի եղել արժանահիշատակ գիտնականին: Ըստ այդ գրույցի՝ աշուղ Քուչակն ու մի թուրք աշուղ Բաղեշում տեղի խանի առջև չունգուրով մրցման են ելել: Քուչակը հաղթել է: Պարտված թուրքը շուրջը նայելով նկատել է, որ սարն ի վեր բարձրանում է մի խոզ, իսկ ետևից տաս շուն, ու ծաղրանքով ասել է.

Թէլամ օլտի իշրմրդ,
Իշտա կէլտի քէշիշնիզ[14]:

Որին Քուչակն իսկույն պատասխանել է.

Նա քէշիշ տուր, նա մօլլա,
Օխումամիշ Մամատ Ալլա,
Վէխիր քէշիշ նեյլասուն,
Պիր քէշիշտուր, օն մօլլա[15]:

Բանասերներից ոմանք Նահապետ Քուչակին (Քուչակ Վանեցուն) են վերագրել միջնադարյան հայրենները կամ մասամբ, կամ ամբողջովին[16]: Գիտնականների մի մասը, սակայն, այն կարծիքին է, որ հայրենները առհասարակ մեկ անհատ բանաստեղծի, կամ բանաստեղծների ստեղծագործություններ չեն, այլ ժողովրդական կամ գուսանական-ժողովրդական երգեր[17]: Վերջին տեսակետը մեզ իրավացի է թվում, սակայն այս հարցին մենք չենք անդրադառնում, քանի որ նյութ է հատուկ ուսումնասիրության:

---

12 Տե՛ս Մ. Աբեղյան. Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 5:

13 Տե՛ս Պողարյան. Մայր ցուցակ, հտ. Զ, էջ 101:

14 Թարգմանությունը. Վերջացավ գործը մեր,
Ահա եկավ տերտերը ձեր:

15 Թարգմանությունը. Ո՛չ տերտեր է, ո՛չ մոլլա,
Անդրագետ Մամատ Ալլա,
Խեղճ տերտերն ի՞նչ անի,
Մի տերտեր է, տաս մոլլա:

16 Օրինակ՝ Ա. Տեկանցը (տե՛ս Հայերգ, էջ ԺԱ—ԺԲ), Ա. Չոպանյանը (տե՛ս «Անահիտ», 1907, էջ 132—135, 184—189 և «Անահիտ», 1909, էջ 32), Վ. Գույումճյանը (տե՛ս «Նաւասարդ», Բուխարեստ, 1914, էջ 232), Մ. Մկրյանը տե՛ս XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ XVIII—XXXIV), Ա. Ղուկասյանը (տե՛ս Նահապետ Քուչակ, Երևան, 1957) և այլն:

17 Օրինակ՝ Մ. Աբեղյանը (տե՛ս Գուսանական ժողովրդական տաղեր, ապա Երկեր, հտ. Բ), Հ. Թաղևոսյանը (տե՛ս Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903), Աս. Մնացականյանը (տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1958, № 2, էջ 234—257 և «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», էջ 96—126:

Ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն։ Հայտնի է միայն, որ Հովհաննես Արճիշեցին ձեռագրեր է ընդօրինակել 1490, 1531—33 և 1547 թթ.[1], այսինքն՝ կարելի է ասել, որ նա ապրել է ԺՆ դարավերջին և ԺՋ դարի առաջին կեսին, և նրան չի կարելի շփոթել ԺԴ դարի հեղինակ Ոսպնակեր Հովհաննես վարդապետ Արճիշեցու հետ։

Հովհաննես Արճիշեցու մասին կենսագրական որոշ տեղեկություններ են պարունակում հիշյալ ձեռագրերի հիշատակարանները։ Առաջինից իմանում ենք, որ 1490 թ. նա արդեն քահանա է եղել, որ հոր անունը եղել է Աստվածատուր, մորը՝ Գուլիխաս, հորեղբորը՝ Միքայել, իսկ ուսուցիչներից մեկին կոչել են Հովհաննես վարդապետ։ Երկրորդ ձեռագրի հիշատակարանում, որը, փաստորեն, ժամանակագրություն է, Արճիշեցին տալիս է իր երկու ուրիշ ուսուցիչների՝ տեր Թադեոսի և տեր Մարգարտ Արճիշեցու անունները և ճշտում, թե ով է վերը հիշատակված ուսուցիչ Հովհաննեսը։ Դա Հովհաննես արեղա Բաղիշեցին է։

Այս երեք ձեռագրերի հիշատակարանները հարուստ տեղեկություններ են տալիս նաև Հովհաննես Արճիշեցու ապրած ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադարձությունների մասին։

Հովհաննես Արճիշեցուն հիշատակել է Ղ. Ալիշանը՝ գրելով, որ նա տվել է Շահ Իսմայիլի ու նրա հաջորդների պատերազմների պատմությունը[2]։ Հովհաննես Արճիշեցուն ու նրա հիշատակարան-ժամանակագրությանն անդրադարձել է նաև Հ. Աճառյանը[3]։

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ (Ա.)

Հենվելով Կ. Կոստանյանցի հրատարակած օրինակի վրա, որը հանված է 1617 թ. գրչության մի ձեռագրից, որպես ԺՋ դարի բանաստեղծի, Աստվածատուրի մասին առաջին անգամ խոսել է Մ. Աբեղյանը։ «17-րդ դարու սկզբի տաղարաններում,— գրում է նա,— գտնում ենք մի քանի ուրախության երգեր, ուրեմն ամենից ուշը 16-րդ դարու երգեր, որոնց մեջ գինին և խրախճանքն են գովաբանվում»[4]։ Այնուհետև Սարկավագ Բերդակացու մասին խոսելիս, նա կրկին տալիս է Աստվածատուրի անունը. «նույն նյութը «Վասն խաղողի» (Կոստ. Գ. 63) մշակել է Աստվածատուր անունով մեկը (1617 թ. ձեռագիր), պարզաբար իբրև գինու գովք, զվարթ և ուրախ»[5]։ Պետք է նկատենք, սակայն, որ Մ. Աբեղյանին հայտնի չի եղել, որ «Տաղ և գովասանք» խորագրով ոտանավորը կա նաև ավելի հին՝ 1556 թ. ընդօրինակված ձեռագրում (ձեռ. № 8968), որից հետևում է, թե ԺՋ դարի կեսերին Աստվածատուրն արդեն գործող բանաստեղծ է եղել։ Իսկ երեք նկատի ունենանք, որ տարբեր ժամանակներում

---

1 Առաջինը Մատենադարանի № 6495 ձեռագիրն է (հիշատակարանը տե՛ս թերթ 436բ)։ Երկրորդի մասին տե՛ս Գ. Աղանյանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ 1912, էջ 19—30։ Այստեղ հրատարակված է հիշատակարանը։ Երրորդի մասին տե՛ս նույն տեղում, էջ 30—31։

2 Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Մ., էջ 129։

3 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 690։

4 Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Դ. Երևան, 1970, էջ 499։

5 Նույն տեղում, էջ 500։

տարածված է եղել ու նաև երգվել, կարող ենք ենթադրել, թե դրա հեղինակն սկսել է ստեղծագործել դեռևս ԺԶ դարասկզբին:

Ոտանավորի բնույթից ու այն բանից, որ տագում հեղինակի համար չի հիշատակվում որևէ հոգևոր կոչում, ենթադրում ենք, թե Աստվածատուրը եղել է աշխարհական:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ (Բ)

«Ողբ ի վերայ մանկանց, Աստվածատուր երէց մի ասէր է» ոտանավորի հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ չունենք: Մեր ձեռքի տակ չի եղել որևէ ձեռագիր օրինակ, իսկ հրատարակիչները չեն հիշատակել ապրյուրները:

Բնույթով ու լեզվաոճական առանձնահատկություններով այս երկն առնչվում է ԺԵ դարավերջին և ԺԶ դարում հորինված համանման ոտանավորներին ու հենց դրանց հետ էլ զետեղված է նույն տպագիր Մաշտոցներում: Այստեղից ենթադրում ենք, որ հեղինակն ապրել է ԺԶ դարի սկզբին: Ոտանավորից գիտենք նաև, որ եղել է քահանա: Սա, մեր կարծիքով, «Տաղ և գովասանք այգոյ, խաղողոյ և գինոյ» ոտանավորի հեղինակ Աստվածատուրը չէ, որը, ամենայն հավանականությամբ, եղել է աշխարհական:

ՆԱԶԱՐ ԲԱՍԵՆՑԻ

Նազար Բասենցուց մեզ հասած միակ՝ «Գովասանութիւն...» ոտանավորի երկու ընդօրինակությունները գետեղված են 1611 և 1614 ԹԹ. գրված ձեռագրերում: Այդ օրինակները սխալաշատ են և պակասավոր, որից կարելի է ենթադրել, թե ընդօրինակված են ո՛չ ինքնագրից և ո՛չ իսկ դրա առաջին ընդօրինակություններից: Այստեղից հետևում է, թե ոտանավորի հեղինակն ապրել է շատ ավելի վաղ: Այսինքն՝ նա կարող է հանդես եկած լինել ԺԶ դարի կեսերին կամ, նույնիսկ, սկզբներին:

Նկատի ունենալով ոտանավորի բնույթը, կրոնական թեման ժողովրդական բառերով ու ձևերով ներկայացնելու եղանակը, այլև այն, որ Նազար Բասենցին ինքն իրեն անվանում է «աշուղ», ենթադրում ենք, որ նա հոգևորական չի եղել:

ԹԱԴԵՈՍ ԿՈՂՈՆԵՑԻ

Ծննդյան ու մահվան թվականները հայտնի չեն: Ն. Ակինյանի կարծիքով նրա «ծնունդը կարելի է դնել երևի 1500-ին»[1]: Հ. Քյուրտյանն առարկում է դրելով, թե այդ տարեթիվը «ոչնչով չի հաստատվում»[2]: Բայց կան տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ Թադեոս Կողոնեցին ապրել է ԺԶ դարի առաջին կեսին: Հայտնի է, օրինակ, որ 1521 թ. նա գտնվել է Երզնկայում և այնտեղ կազմել մի Հայսմավուրք: Մաղաքիա Գերջանցին 1531 թ. իր աշակերտների ցանկում հիշատակում է մի տեր Թադեոս, առանց մականվան, որը Ակինյանի կարծիքով հենց Թադեոս Կողոնեցին է: 1534 թ. Թադեոս Կողոնեցին մեկնել է Երուսաղեմ և այնտեղ գնել մի «Գիրք արարածոց», որի հիշատակարանում գրել է. «Ես Թադէոս վարդապետ Կողոնեցի գնեցի...» և այլն: 1548 թ. նա կազմել է մի Ավետարան: Ըստ Ն. Ակինյանի՝ Թադեոս Կողոնեցին իր «Անձինք...ը» պետք է գրած լինի 1532 թ.՝ վարդապետական գավազան ստանալու նախօրյակին:

---

1 Ն. Ակինյանի հոդվածը տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 53—71:

2 Հ. Քյուրտյանի գրախոսությունը տե՛ս «Բազմավէպ», 1954, էջ 70—71:

Նկատի ունենալով 1562 թ. ընդօրինակված մի Մաշտոց[1], որի դրիչ Ղազարը հիշատակարանում խնդրում է հիշել իր ուսուցիչ «Թադեոս ռաբունի վարդապետին», Ն. Ակինյանը այն կարծիքն է հայտնել, թե այդ թվականին Թադեոս Կողոնեցին դեռևս կենդանի է եղել։ Հ. Քյուրտյանն առարկում է, գտնելով, թե աշակերտը կարող էր ուսուցչի մահից հետո ևս հիշել նրան։ Քյուրտյանը նկատում է նաև, որ Թադեոս Կողոնեցին գրչությամբ չի զբաղվել։ Այդ մասին ձեռագրերում որևէ տեղեկություն չկա։

Ն. Ակինյանը «Անձինք...-ի» հեղինակին անվանում է Կողինացի, Հ. Քյուրտյանը՝ Կողոնիացի, իսկ ոտանավորի խորագրում կարդում ենք Կողոնեցի։ Բոլորն էլ նույն տեղանվան տարբեր ձևերն են։

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՀԵՆԵՑԻ

«Ճառս ի Աստուածատուր վարդապետէ...» ոտանավորի Մատենադարանում պահվող հնագույն օրինակը գտնվում է 1556 թ. ընդօրինակված մի ձեռագրում (ձեռ. № 8968)։ Այստեղից ենթադրում ենք, թե Աստվածատուր Հենեցին պետք է ապրած լինի ԺԶ դարի առաջին կեսին։ Այս կարծիքն է հայտնել նաև Հ. Անասյանը[2]։ Միաժամանակ, հենվելով Հ. Տաշյանի ենթադրության վրա, նա ևս կարծում է, թե այս Աստվածատուրը նույն ինքը Աստվածատուր Մեծոփեցին է[3], որի խնդրանքով 1523 թ. Գրիգորիս Աղթամարցին գրել է «Ծաղկունքն ասեն հերիք արա» տողով սկսվող բանաստեղծությունը։ Սակայն այս կարծիքը հաստատող կովաններ չկան։ Հ. Անասյանը ենթադրում է նաև, թե Աստվածատուր Հենեցին եղել է «Ջորրորդ Հայոց Հայնի կամ Հենի ավանից»[4]։

Տաղի խորագրից իմանում ենք, որ հեղինակը վարդապետ է եղել։

ՂԱԶԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ

Այս Ղազար Սեբաստացուն չի կարելի շփոթել ԺԷ դարի կեսերի կրոնական գործիչ, Տևերիկի եպիսկոպոս Ղազար Սեբաստացու հետ, որի մասին տեղեկություններ է տալիս Ե. Օրմանյանը[5]։ Ուրիշ է նաև այն Ղազար տաղասացը, որի բազմատպիս կրոնական բովանդակություն ունեցող տաղերի հավաքածուն գտնվում է Վիեննայի № 38 ձեռագրում[6], և որն, ինչպես երևում է ոտանավորների լեզվաոճական առանձնահատկություններից, հավանաբար ստեղծագործել է ԺԷ դարավերջին։

Ղազար Սեբաստացու «Տաղ սիրոյ և ուրախութեան...» ոտանավորի հնագույն օրինակը պահվում է 1556 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 8968)։ Այստեղից ենթադրում ենք, որ նա պետք է հանդես եկած լինի ավելի վաղ, հավանաբար ԺԶ դարի առաջին տասնամյակներին։

---

1 Ինչպես վկայում է Ն. Ակինյանը, այս ձեռագիրը գտնվում է Կարինի Արծնյան վարժարանում (№ 36)։

2 Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Բ, էջ 685։

3 Համմ. Հ. Տաշյան. Յուցակ, էջ 1063։

4 Այս ավանի մասին Ն. Ակինյանը գրում է. «Ջորրորդ Հայքի նահանգի մէկ քաղաքի անունն է Հայնի, աշխարհացոյցներում՝ Heni (Հենի)» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 313)։

5 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ, գիրք Բ, էջ 2530։

6 Տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 194—196։

Ղ. Ալիշանը Ղազարի անվան կողքին գնում է «կույր» բառը[1]: Մեզ հայտնի չէ, թե նա որտեղից է քաղել այդ տեղեկությունը: Ղազար Սևբաստացու ոտանավորների բնույթից չի երևում, թե նա կույր է եղել:

Հ. Աճառյանը, հենվելով Կ. Կոստանյանցի հրատարակությունների վրա, որոնց աղբյուրները ժէ դարասկզբի ընդօրինակություններ են, ենթադրում է, որ Ղազար Սևբաստացին ԺՉ դարավերջի հեղինակ է: Սրբաժամանակ նա նկատում է, որ Ղ. Ալիշանի հիշատակած Ղազարը հենց Ղազար Սևբաստացին է[2]:

Ն. Բյուզանդացին որպես ԺՉ դարի ոտանավորի տող, առանց հեղինակի անունը տալու, մեջ է բերում Ղազար Սևբաստացու «Ո իջկունըդ է ուսի ու սալվի չինար» տողը[3]:

«Տաղ սիրոյ և ուրախութեան...» ոտանավորի խորագրից իմանում ենք, որ Ղազար Սևբաստացին եղել է քահանա:

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԱՍԱՐՑԻ

Հենվելով Մարտիրոս Խարասարցու տաղերի Կ. Կոստանյանցի հրատարակած օրինակների վրա[4], որոնց աղբյուրը 1617 թ. գրչության № 3081 ձեռագիրն է, Մ. Աբեղյանը այդ երգերը համարում է «ամենից ուշը 13-րդ դարում»[5]: Այժմ հայտնի է դարձել, որ Մարտիրոս Խարասարցու երկու այլ բանաստեղծություններ («Աստուած զայս տուես չէն պահէ» և «Այրն ասէ՝ առաքեցար Հազար բարի») օրինակներ կան 1556 թ. գրչության մի ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 8968): Այստեղից կարելի է հետևցնել, որ նրանց հեղինակը պետք է հանդես եկած լինի ԺՉ դարի առաջին տասնամյակներում:

Մարտիրոս Խարասարցին եղել է քահանա: Դա երևում է ոչ միայն նրա ոտանավորների բնույթից և կրոնական հեղերի այն քաջատեղյակությունից, որ նա հանդես է բերում իր բանաստեղծություններում, այլև նրանից, որ «Այսօր տօնեմք ձեզ աւետիս» սկսվածքով տաղում նա իրեն պատում է երեցների շարքը.

Ինձ մեծ ման տուր թէ ունիս,
Ի քեզ նայիմ իրիցանիս...:

Բազմաթիվ երգերում Մարտիրոսն իրեն անվանում է Խարասարցի (կամ Ղարաճարսցի, որ նույն տեղանվան տարածված ձևերից մեկն է)[6]: Սակայն բանասիրության մեջ նրան համարել են նաև Խարահիսարցի[7], մի բան, որ անունների նմանությունից ծնված թյուրիմացություն է:

---

1 Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Բ, էջ 125:

2 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 126:

3 Տե՛ս Ն. Բյուզանդացի, Հայկական բառարաններ, Կ. Պոլիս, 1880, էջ 122:

4 Տե՛ս Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ պրակ, էջ 47—52 և Գ պրակ, էջ 16—26:

5 Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, էջ 499:

6 Խարասար—«Գյուղ Ջմշկածագի առաջնորդական վիճակի մեջ» (Հ. Էփրիկյան, Քնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1907, էջ 155): Դ. Սրվանձտյանը գրում է, որ Ջմշկածագը Փոքր Հայքում է, Ակնի Արարկիրի մոտ և ասում, որ այնտեղ Խարասար անունով գյուղ է եղել (Դ. Սրվանձտյան, Թորոս Ադբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 118):

7 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 286:

Ըստ երևույթին իր մի շարք ոտանավորները հորինելիս Մարտիրոս Խարասարցին հեռու է եղել ծննդավայրից։ Օրինակ, «Այսօր ոտնեմք ձեզ ուետիս» սկսվածքով ոտանավորում նա իրեն անվանում է «զարիպ».

Զայն զալ պաշտաման ի ձեր մէնլիս,
Զեզ շատ երէց գայ յայս տարիս,
Զարիպ շահրիս, զոր ընդունիս,
Աւետիս տամ Հայոց ազգիս։

Հավանաբար երկար տարիներ նա ապրել է Կաֆայում։ Օրինակ, «Տաղ և գովասանք Կաֆային» ոտանավորից երևում է, թե նա որքան լավատեղյակ է քաղաքի բնակչության վարք ու բարքին։ Այս կարծիքը անուղղակի կերպով հաստատվում է նաև այն փաստով, որ նրա տաղերը պարունակող 5 ընտիր ձեռագրերից 2-ը (№№ 3081 և 7709) ընդօրինակված են Կաֆայում։

Թե երբ է մեռել Մարտիրոս Խարասարցին, տեղեկություններ չունենք։

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԲԵՐԴՑԻ

«Երգ Մարտիրոս Էրիցու Խարբերդացւոյ ասացեալ ի վերայ չախուի...» ոտանավորի մեզ հասած հնագույն օրինակը պահվում է 1556 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 8968), որից կարելի է ենթադրել, թե Մարտիրոս Խարբերդցին պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի առաջին տասնամյակներում։

Ոտանավորի խորագրից երևում է, որ Մարտիրոս Խարբերդցին եղել է քահանա։

ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՐԲԵՐԴՑԻ

Հենվելով «Յարմարեալ բանս ուրախութեան ի խաչատուր վարդապետէ Խարբերդացւոյ» ոտանավորի Կ. Կոստանյանցի հրատարակած օրինակի վրա, որը հանված է 1617 թ. գրչության մի ձեռագրից, Հ. Աճառյանը ենթադրել է, որ Խաչատուր Խարբերդցին կարող է հանդես եկած լինել ԺԶ դարավերջին[1]։ Հ. Աճառյանին հայտնի չի եղել ոտանավորի ավելի վաղ ընդօրինակություն՝ 1556 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի № 8968), որից երևում է, որ Խաչատուր Խարբերդցին պիտի հանդես եկած լինի ԺԶ դարի առաջին կեսին, թեև ոչ ավելի վաղ 1525—1530 ԹԹ., քանի որ նրա ոտանավորի վրա ղգացվում է Գրիգորիս Աղիամարցու այդ տարիներին հորինած «Յետ գնալոյ վարդին, եկ պլպուլն յայգին» սկսվածքով բանաստեղծության ազդեցությունը։

Ինչպես երևում է ոտանավորի խորագրից, Խաչատուր Խարբերդցին եղել է վարդապետ։

ԿԻՐԱԿՈՍ

«Տաղ վան ուրախութեան» ոտանավորի մեզ հասած հնագույն օրինակը պահվում է 1556 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 8968), որից կարելի է ենթադրել, որ դրա հեղինակ Կիրակոսը պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի առաջին տասնամյակներում։

---

1 Հմմտ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 486։

Քանի որ իր համար բանաստեղծը հոգևոր կոչում չի հիշատակում ու բացի դրանից հեգնանքով է խոսում գյուղի քահանայի մասին, ենթադրում ենք, որ եղել է աշխարհական:

ԱՎԵՏԻՔ

«Տաղ վասն դարիպի» ոտանավորի մեզ հայտնի ամենահին (Անկյուրայի) օրինակը պահվում է 1584—1595 թթ. գրչության ձեռագրում: Սակայն, ինչպես նկատել ենք ծանոթագրության մեջ, Անկյուրայի ընդօրինակությունն ունեցել է նախօրինակ, կամ գուցե նույնիսկ նախօրինակներ: Ուստի կարելի է ենթադրել, թե բնագիրը գրված է դեռևս 1550-ական թվականներին: Այդ դեպքում հեղինակը պիտի ծնված լինի ԺԶ դարի առաջին տասնամյակներին: Քանի որ ոտանավորում Ավետիքն իրեն «տեր» է անվանում, կարծում ենք, որ եղել է քահանա, կամ գուցե և ավելի բարձրաստիճան հոգևորական:

ԾԱՆԸ ԽՈՋԱ

Կենսագրական տեղեկություններ չունենք: Մեզ հասած միակ՝ «Տաղ վասն հոգոյ, երկու լեզու» բանաստեղծության հնագույն օրինակը պահվում է 1594 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 1661): Բանաստեղծության կերտվածքն ու լեզվառճական ձևերը հիշեցնում են ԺԶ դարի առաջին կեսի բանաստեղծների երկերը, ուստի ենթադրում ենք, թե հեղինակը պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի առաջին կեսին:

Հեղինակի անունը գրել են Մատենադարանի «Յուցակ ձեռագրացի» կազմողները (տե՛ս հտ. Բ, էջ 78) ըստ ոտանավորի 21-րդ տողի («Ծանր խոջա, բեռդ մախմուր ֆռանկի, ֆռանկի»):

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

«Ոտանաւորս ասացեալ է Կարապետ վարդապետէ...» երկը գրված է 1540 թ. և քանի որ հարուստ ու բազմակողմանի տեղեկություններ է տալիս ոչ միայն Հայաստանի, այլև բազմաթիվ այլ երկրների քաղաքական վիճակի, տնտեսության, պատմության և աշխարհագրության մասին, մի հանգամանք, որը վկայում է հեղինակի գիտելիքների առատ պաշարն ու երկար տարիների փորձը, ենթադրում ենք, որ հորինելիս Կարապետ Վարդապետը եղել է առնվազն 40—50 տարեկան, այսինքն՝ ծնվել է 1490—1500 թթ.:

Կարապետ Վարդապետի այս երկը Ն. Ակինյանը վերագրել է Կարապետ Բաղիշեցուն[1]: Այնուհետև բանասիրության մեջ երկար ժամանակ այս տեսակետը առարկության չի հանդիպել: Սակայն մեզ թվում է իրավացի է Պ. Խաչատրյանը, երբ պընդում է, թե երկը Կարապետ Բաղիշեցունը լինել չի կարող, քանի որ «բոլոր ձեռագիր օրինակներում սոսկ Կարապետ Վարդապետի գործ է ներկայացված առանց Բաղիշեցի մականվան»: Եվ. «Կարապետ Բաղիշեցու գործ դիտելու համար մատենագրական հաստատուն վկայություններ են պետք այն մասին, որ նախ՝ Բաղիշեցին 1526 թ. հետո է վարդապետ դարձել», ապա՝ որ «Տաղ արարածոցի» հեղինակ Կարապետ Վարդապետը Բաղիշեցի է եղել, իսկ այդպիսի կռվաններ չկան»[2]:

---

1 Տե՛ս Ն. Ակինյան, Բաղէշի գպրոցը, էջ 323:

2 ՀՄՊՈ, էջ 96:

Մեր գրչագրերում հիշատակվում է ևս մի Կարապետ Վարդապետ, սակայն սրա «Խրատ պիտանի մանկանց եկեղեցւոյ ոտանաւոր տաղիւք» երկը կա դեռևս ԺԵ դարի գրչության ձեռագրերում, հետևապես սա չի կարող հրատարակվող երկի հեղինակ Կարապետ Վարդապետը լինել։

ԵՂԻԱ ԲԵՐԿՐՑԻ

Եղիա Բերկրցու մասին կենսագրական տեղեկություններ չունենք, բացի այն մի քանի փաստերից, որ հնարավոր է քաղել «Ծաղ ի յարգելանս ու վասն անձին» ոտանավորից։ Ոտանավորը գետեղված է 1547 թ. գրված մի ձեռագրում, որի գրիչն ինքը Եղիա Բերկրցին է։ Ոտանավորի ծայրակապից իմանում ենք, որ եղել է եպիսկոպոս, իսկ երկի բնույթից՝ որ ծեր չի եղել, երբ բանտարկվել է ու տիպել են, որ հավատափոխ լինի։ Այս փաստերի համադրությունից ենթադրում ենք, որ Եղիա Բերկրցին պետք է ծնված լինի ԺՉ դարի սկզբներին։

ՎՐԹԱՆԵՍ ՍՈՒՆԿԵՑԻ

Տաղերում հիշատակված թվականներից երևում է, որ Վրթանես Սունկեցին ստեղծագործել է ԺՉ դարի երկրորդ կեսին։ Գալիճ է Արարատյան գավառի Գիլան գյուղից[1]։ Մանկության օրերին «դասակից» է եղել Գրիգոր Վարագեցուն, որը 1552 թ. ընտրվել է Էմբերգի (Էջմիա) հայոց արքեպիսկոպոս և որպես այդպիսին Ստեփանոս Ոռոքայի «Ժամանակագրութեան» մեջ հիշատակվում է նաև 1557, 1562, 1568 թթ.[2]։ Նույն ժամանակ Վրթանես Սունկեցին հայրենիքից գաղթել է Սևջով և ստանձնել տեղի հայկական եկեղեցու քահանայությունը։ Դա երևում է 1557 թ. Գրիգոր Վարագեցուն հղած նրա ոտանավոր-նամակներից, որոնցից մեկում նա ուղղակի գրում է.

Նստեալ ես դու ի Լով քաղքի,
Ես անարժանս՝ ի Սեչովի։

Եթե նկատի ունենանք Գրիգոր Վարագեցուն հղած ոտանավոր-նամակներից առաջինի խորագիրը, որտեղից հայտնի է դառնում, որ գրելիս նա արդեն ծեր է եղել («և ի ծերութեան ժամանակին հաշտեցաւ...»), ապա կարելի է ենթադրել, որ պիտի ծնված լինի ԺՉ դարասկզբին։

Ըստ Ն. Ակինյանի, Վրթանես Սունկեցին Սեչովից պիտի հեռացած լինի մոտավորապես 1560 թ., բայց թե ուր, պարզ չէ։ Վրթանես Սունկեցու Կաֆայում գտնվելու մասին Ն. Ակինյանը տեղեկություն ունի միայն այն երկու վարքագրական ոտանավորներից, որոնցում նկարագրվում է Պարոն Լույսի նահատակությունը՝ 1567 թ.։ Նրան հայտնի չի եղել «ի Վրթանէս Վարդապետէ ասացեալ զտաղս ի վերայ Կաֆայու սպութեան» երկը, որում Վրթանես Սունկեցին որպես ականատես է պատմում 1560 թ. Կաֆայում ծայր առած սովը։

---

1 «Հինգ պանդուխտ տաղասացներում» Ն. Ակինյանը հատուկ գլուխ է նվիրել Վրթանես Սունկեցուն (էջ 3—14), որտեղ, ի միջի այլոց, գրում է, թե իր համար անբացատրելի են Արարատյան գավառի Գիլան գյուղն ու հեղինակի Սունկեցի անունը, քանի որ այժմ նման տեղանուններ գոյություն չունեն։

2 Տե՛ս Գ. Ալիշան, Կամենից, էջ 5։

Ոտանավորներից իմանում ենք, որ հետագայում Վրթանես Սոնկեցին դարձել է Կաֆայի հայոց եպիսկոպոսը։

Ն. Ակինյանը ենթադրում է, թե պետք է վախճանված լինի 1570-ական թվականներին, սակայն այս ենթադրությունն ապացուցող փաստեր չկան։

ՂՈՒԿԱՍ ԿԵՂԵՑԻ

Ղուկաս Կեղեցին պիտի ծնված լինի 1520-ական թթ., քանի որ մեռնելիս՝ 1601 թ., ըստ Գրիգոր Դարանաղեցու, եղել է 80—85 տարեկան[1]։

Սովորել է Շիրակ (Չերաք) վարդապետի մոտ, որը ժամանակին մեծ համբավ է ունեցել։

Դավիթ Զեյթունցու պատվերով, 1557 թ. գրել է «Տօմարագիտութիւն» և «Պատճէն Հռոմայ մեծ տումարին» չափածո աշխատությունները[2]։ Ինչպես վկայում է Գրիգոր Դարանաղեցին, նա ցանկացել է համառոտել մի շարք շարականներ, որպեսզի գրանք ավելի մատչելի լինեն իր աշակերտներին։ Տեղի հոգևորականները չարակամությամբ թաքցրել են Շարակնոցը։ Այդ պատճառով Ղուկաս Կեղեցին ստիպված գնացել է Երզնկա, այնտեղ իրագործել իր մտադրությունը և այնտեղ էլ վախճանվել ու թաղվել ս. Սարգիս եկեղեցու պարտեզում[3]։

Գրիգոր Դարանաղեցին Ղուկաս Կեղեցուն անվանում է «շնորհալի բանաստեղծն և տաղասացն և գտումարն Հռոմոց շարագրողն»[4]։ Ղուկաս Կեղեցու մասին հայտնի է նաև, որ եղել է վարդապետ, «աշխարհաշէն» Մաղաքիա Գերջանցու «գրացին», «հաւանաբար և գործակիցը», ունեցել է աշակերտներ, որոնցից հայտնի է Սրապիոն Ուռհայեցին, որը հետագայում (1603—1605 թթ.) եղել է կաթողիկոս[5]։

Հենվելով մեզ անծանոթ մի հիշատակարանի վրա, Ա. Ալպոյաճյանը Ղուկաս Կեղեցու մահվան թվականը համարում է 1602-ը[6]։

ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՖԱՑԻ

«Տաղ տէր Ավետիք կրօնաւորին...» խորագրով երկում Վարդապետ Կաֆացին նկարագրում է Ավետիք կրոնավորի նահատակությունը, որը տեղի է ունեցել 1509 թ.։ Սակայն նկարագրությունից երևում է, որ հեղինակն ականատես չի եղել դեպքին և երկը գրել է տարիներ անց։ Դա ակնհայտ է հատկապես այն հատվածում, որտեղ խոսքը նահատակի նշխարների իբր բուժիչ հատկությունների մասին է.

Առաքելին գեղն երանեալ,
Զբո սուրբ նշխարսդ հանգուցեալ,
Դու հիւանդաց բժիշկ եղեալ,
Քրիստոս աստուած փառաւորեալ։

---

1 Տե՛ս Գրիգոր Դարանաղեցի, Ժամանակագրութիւն, էջ 351։

2 Տե՛ս Ա. Աբրահամյան, Ղուկաս Կեղեցու չափածո տոմարը («Էջմիածին», 1952, № 6, էջ 58)։

3 Գրիգոր Դարանաղեցի, Ժամանակագրութիւն, էջ 351։

4 Նույն տեղում, էջ 350։

5 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ, գիրք Բ, էջ 2261։

6 Տե՛ս Ա. Ալպոյանյան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Պեյրութ, հտ. Բ, 1937, էջ 1860։

Անկասկած նահատակությունից որոշ ժամանակ անց միայն կարող էր ժողովրդի մեջ ստեղծվել ավանդություն, թե իբր Ավետիք կրոնավորի նշխարները բուժիչ հատկություն ունեն:

Վարդապետ Կաֆացու «Տաղ վասն Յակոբ վարդապետին և ընկերաց նորին» ողբը[1] ցարդ հայտնի է որպես անհեղինակ ստեղծագործություն. թեև նախավերջին տողում ունի «Ով որ զայս բաներս ասէ զՎարդապետն բերան մի հիշէ» հիշատակությունը: Բանն այն է, որ հրատարակիչները «վարդապետ» բառը դիտել են իր անմիջական նշանակությամբ, դրա համար էլ ամենուրեք գրել են փոքրատառ, մինչդեռ այս դեպքում, մեր կարծիքով, դա հեղինակի անվան նշանակություն ունի: Նույնպիսի հիշատակություններ կան նաև «Տաղ տէր Ավետիք կրօնաւորին...» և «Տաղ սուրբ Աստուածածնին» ոտանավորներում, առաջինում «Վարդապետ երգող բանիս», և երկրորդում «Բաներս Վարդապետն ասաց» ձևով[2]:

Արդ, եթե «Տաղ վասն Յակոբ վարդապետին և ընկերաց նորին» ողբի և երկու այժմ հրատարակվող ոտանավորների հեղինակը նույն՝ Վարդապետ կոչված մարդն է, ապա մեզ համար դժվար չէ որոշել նրա ծննդյան մոտավոր թիվը, քանի որ հիշյալ ողբում նա որպես ականատես է նկարագրում Հակոբ վարդապետի և նրա ընկերների սպանությունը՝ 1552 թ. և նշում, որ հորինելիս ինքը եղել է 30 տարեկան. «Լցեալ եմ դերեսուն տարին, չեմ կացեալ ի պատուիրանին»: Այստեղից հետևում է, որ Վարդապետ Կաֆացին պիտի ծնված լինի 1522—1523 թթ., ինչպես ողբի, իբր անանուն, հեղինակի մասին գրում է նաև Պ. Խաչատրյանը[3]:

Սույն ողբից իմանում ենք նաև, որ Վարդապետ Կաֆացին ևս տուժել է թուրքական արշավանքներից և ստիպված հեռացել հայրենիքից.

Եղուկ ու վա՛յ մեր անձանս, որ աչօք մերովք զայս տեսաք,
Ողորմ՝ ւ ողբալի եղաք, հայրենեաց մերոց զրկեցաք:

Թե երբ է վախճանվել Վարդապետ Կաֆացին, հայտնի չէ:

ՄԵԾՊԱՐՈՆ

Քանի որ «Տաղ Խտրշայ մանկան, որ Մարզուան քաղաքն է նահատակեալ» ոտանավորում Մեծպարոնը Խտրշայի նահատակությունը, որը տեղի է ունեցել 1541 թ.[4], նկարագրում է որպես ժամանակակից, և քանի որ այդ ոտանավորի մի օրինակը պահվում է 1556 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 8968), ենթադրում ենք, որ Մեծպարոնը հանդես է եկել ԺԶ դարի առաջին կեսին:

Հավանաբար Մեծպարոնը եղել է աշխարհական, քանի որ նրա կրոնավոր լինելու մասին ոտանավորում հիշատակություն չկա:

---

1 Քննական բնագիրը տե՛ս ՀՄՊՈ, էջ 228—230:

2 Մատենադարանի մատենագիտական ձեռագիր մատյաններում և հրատարակված ձեռագրացուցակներում ևս վերջին երկու ոտանավորներում հիշատակվող «Վարդապետ» բառը դիտվում է որպես հեղինակի անուն (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց», հտ. Ա, էջ 1624 և հտ. Բ, էջ 1468):

3 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 116:

4 Խտրշայի նահատակության մասին Մ. Չամչյանը գրել է. «Ի թուին ՋՂ կատարեցաւ հրով ի Մարզուան այր ոմն Խտրշայ անուն» (տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 516): Այս մասին հիշատակություն ունի նաև Մ. Օրմանյանը (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ, գիրք Բ, էջ 2262):

ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐԴԱԿԱՑԻ

Հենվելով «Բերդակացի Սարկաւագի արարեալ գովասանութիւն խաղողոյ» երգի Կ. Կոստանյանցի հրատարակած օրինակի վրա[1], որպես ԺԶ դարի բանաստեղծի, Սարկավագ Բերդակացու մասին առաջին անգամ խոսել է Մ. Աբեղյանը՝ նրա ոտանավորը համարելով «ամենից ուշ 16-րդ դարու»[2]: Այժմ, սակայն, մեզ հայտնի է այդ ոտանավորի ավելի հին՝ ԺԶ դարավերջի ընդօրինակությունը (Մատենադարանի ձեռ. № 33), որը հիմք է տալիս ենթադրելու, թե դրա հեղինակը պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի կեսերին: Մ. Աբեղյանը կարծիք է հայտնում, թե սա, բերեա, այն Սարկավագն է, «որի մի սիրո երգը Կոստ. Բ. եր. 60-ում ազավաղված երգել է Խառակոնիսցի Քուչակ Նահապետը»[3]: Այս կարծիքը հաստատելու համար կովաններ չկան: Դրան հակառակ, այժմ հայտնի է դարձել, որ այն Սարկավագը, որի հետ Մ. Աբեղյանը նույնացնում է Սարկավագ Բերդակացուն, հանդես է եկել ԺԵ դարավերջին և եղել է ոչ թե Խառակոնիսցի Քուչակ Նահապետին վերագրվող տաղի հեղինակը, այլ ասացող-երգիչներից մեկը[4]:

ԱՂԱԲԻՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

ԺԶ—ԺԷ դարերի հայ մատենագիտության մեջ հիշատակվում են երեք Աղաբիա Ջուղայեցի. Աղաբիա Ջուղայեցի կաթողիկոսը՝ ծնված 1534 թ., Աղաբիա Ջուղայեցի տոմարագիրը, որն ըստ Հ. Անասյանի՝ «ապրել ու գործել է ԺԶ դարի կեսերին, Հին Ջուղայում»[5], և Աղաբիա Ջուղայեցի տաղերգուն, որին երբեմն նույնացրել են կաթողիկոսի հետ[6]: Հ. Անասյանն առաջինն է տարբերակել այս երեքին: Մենք ևս այն կարծիքին ենք, որ տաղերգու Աղաբիա Ջուղայեցին ո՛չ կաթողիկոսն է, որի մասին, ի դեպ, որևէ փաստ չկա, թե երբևէ ոտանավոր է գրել, և ո՛չ էլ տոմարագիրը: Դատելով մեզ հասած ոտանավորների բավականաչափ աշխարհիկ ոգուց, ոամկական բառապաշարից և ժողովրդական լեզվաձևերից, դրանց հեղինակը, համոզված, ցածրատիճան հոգևորական է եղել: Այդ է վկայում նաև «Քէյն մինչև ի յայրն օրհնաբանութիւն» սկսվածքով ոտանավորի «Ագարիա եղուկ, բնակեալ ի գեղջի» տողը:

Հ. Անասյանը ենթադրում է, թե Ագարիա Ջուղայեցին պետք է ապրած լինի ԺԶ դարում, կամ, համենայն դեպս, ոչ ուշ, քան ԺԷ դարի սկզբներին[7]: Մեզ թվում է թե ինչ-որ չափով կարելի է կոնկրետացնել այս ժամանակի սահմանները: Մատենադարանի № 33 ձեռագիրը, որի մեջ պահվում է «Արարիչ Տէրն բազդացաւ ի յԱգամայ» սկսվածքով ոտանավորը, գրված է ԺԶ դարավերջին: Այստեղից ենթադրում ենք, որ Ագարիա Ջուղայեցին հանդես է եկել փոքր-ինչ ավելի վաղ, այսինքն՝ համարաբար ԺԶ դարի երկրորդ կեսին:

---

1 Տե՛ս Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 67—69:

2 Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 499:

3 Նույն տեղում, էջ 500:

4 Տե՛ս Ա.ս. Մնացականյան, Հայկական ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 565—566:

5 Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ 274:

6 Տե՛ս Բ. Կյուլեսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 149 և Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Գ պրակ, էջ 73:

7 Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ 268:

ՍՏԵՓԱՆՈՍ

«Տաղ սիրոյ Ստեփանոսի ասացեալ» խորագրով ոտանավորի մեզ հասած հնագույն օրինակը պահվում է Մատենադարանի № 10208 ձեռագրի 157ա թերթում: Այս ձեռագրի 118—183 թերթերում, ինչպես նկատել է Աս. Մնացականյանը, ամփոփված է ԺԶ դարավերջին կամ Ժէ դարասկզբին կազմված սիրո երգերի անդրանիկ ժողովածուի ընդօրինակությունը[1]: Այստեղից կարելի է ենթադրել, թե Ստեփանոսը հանդես է եկել ԺԶ դարի երկրորդ կեսին, թեև ոտանավորի լեզվաոճական առանձնահատկությունները հիմք են տալիս մտածելու, թե նա կարող էր հանդես եկած լինել նաև ավելի վաղ՝ ԺԶ դարի առաջին կեսին:

Ստեփանոսը, հավանաբար, աշխարհական է եղել, քանի որ նրա կրոնավոր եղած լինելու մասին ոտանավորում հիշատակություն չկա:

ԴԱՐԻՊ ՄԿՐՏԻՉ

«Սէրն սիրով պիտի, չպիտի ճորով» սկսվածքով բանաստեղծության մեզ հասած հնագույն օրինակը պահվում է Մատենադարանի № 10208 ձեռագրի 167բ—169ա թերթերում: Ինչպես ասել ենք, այս ձեռագրի 118—183 թերթերում ամփոփված է ԺԶ դարավերջին կամ Ժէ դարասկզբին կազմված սիրո երգերի անդրանիկ ժողովածուի ընդօրինակությունը: Այստեղից ենթադրում ենք, որ Դարիպ Մկրտիչը պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի երկրորդ կեսին:

Երգից երևում է, որ հորինելիս հեղինակը հեռու է եղել ծննդավայրից և հավանաբար եղել է աշխարհական, քանի որ նրա կրոնավոր լինելու մասին ոտանավորում հիշատակություն չկա:

ՊԵՏՐՈՍ

«Տաղ Պետրոս անուն ոմն ասացեալ» խորագրով բանաստեղծության հնագույն օրինակը պահվում է Մատենադարանի № 10208 ձեռագրի 164ա—165բ թերթերում: Ինչպես ասել ենք, այս ձեռագրի 118—183 թերթերում ամփոփված է ԺԶ դարավերջին կամ Ժէ դարասկզբին կազմված սիրո երգերի անդրանիկ ժողովածուի ընդօրինակությունը: Այստեղից ենթադրում ենք, որ Պետրոսը պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի երկրորդ կեսին:

Հավանաբար Պետրոսը եղել է աշխարհական, քանի որ նրա կրոնավոր լինելու մասին ոտանավորում հիշատակություն չկա:

ՄԱՐԶՎԱՆՑԻ

«Տաղ սիրոյ Մարզուանցի ոմն ասացեալ» խորագրով բանաստեղծության մեզ հասած հնագույն օրինակը պահվում է Մատենադարանի № 10208 ձեռագրի 149բ—150բ թերթերում: Ինչպես ասել ենք, այս ձեռագրի 118—183 թերթերում ամփոփված է ԺԶ դարավերջին կամ Ժէ դարասկզբին կազմված սիրո երգերի անդրանիկ ժողովա-

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», էջ 96—126, Աս. Մնացականյանի «Միջնադարյան սիրո երգերի նորահայտ անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը» հոդվածում:

ծուի ընդօրինակությունը։ Այստեղից ենթադրում ենք, որ Մարզվանցին պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի երկրորդ կեսին։

Տաղում հիշատակվում են Թոխաթը, Ամասիան, Բազարջուխը այն ձևով, որ զգացվում է, թե հեղինակն ապրել է այդ վայրերում։

Հավանաբար Մարզվանցին եղել է աշխարհական, քանի որ նրա կրոնավոր լինելու մասին ոտանավորում հիշատակություն չկա։

ԽԵՎ ԿԱՖԱՑԻ

Խև Կաֆացու երկու ոտանավորների մեզ հասած հնագույն օրինակները պահվում են ԺԶ դարավերջին կամ ԺԷ դարասկզբին կազմված սիրո երգերի անդրանիկ ժողովածուի նյութերի շարքում (Մատենադարանի ձեռ. № 10208), որից կարելի է ենթադրել, որ Խև Կաֆացին պետք է հանդես եկած լինի ԺԶ դարի երկրորդ կեսին։

Քանի որ իր համար բանաստեղծը հոգևոր կոչում չի հիշատակում, ենթադրում ենք, որ եղել է աշխարհական։

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

«Թուին հազար Հայոց աղգին» սկսվածքով ոտանավորի հեղինակ Գրիգոր եպիսկոպոսը որպես ականատես է պատմում Արևելյան Հայաստանում 1565—1576 թթ. տեղի ունեցած պատմական իրադարձությունները։ Եթե նկատի ունենանք նաև, որ ոտանավորը հորինելիս նա արդեն եպիսկոպոս է եղել, ապա կարելի է ենթադրել, որ ծնվել է 1520-ական թվականներին և ստեղծագործել դարի երկրորդ կեսին։

Լեզվից և ոտանավորում հիշատակվող Թարվեզ, Նահչուան, Խոյ, Սալմաստ, Շարի, Շրվան և նման տեղանուններից երևում է, որ Գրիգոր Եպիսկոպոսն ապրել է Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայկական գավառներից մեկում։

ՊԱՐՍԱՄ ՏՐԱՊԻԶՈՆՑԻ

Ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն։ Հաստատապես կարելի է ասել միայն, որ ստեղծագործել է ԺԶ դարի երկրորդ կեսին։ Պարսամ Տրապիզոնցու մասին տեղեկություններ է տալիս Ն. Ակինյանը «Պարսամ տաղասաց (Պարսամ Տրապիզոնցի արքեպիսկոպոս Լէոպոլոյ) և իւր տաղն «Ի վերայ ակռայի, զոր ասացեալ է Պարսամ Տրապիզոնցի» հոդվածում[1], որտեղ ապացուցում է, որ ոտանավորի հեղինակը Լեմբերգի արքեպիսկոպոս Պարսամ Տրապիզոնցին է, որը 1579 թ. փոխարինել է Գրիգոր Վանեցուն և թեմի առաջնորդի պաշտոնում մնացել մինչև 1583 թ.։ Ն. Ակինյանը տեղեկացնում է նաև, որ Պարսամ Տրապիզոնցու անունը կա հիշատակված 1582 թ. մի տոնացույցի պարզևագրի մեջ, և որ ինչ-ինչ պատճառներով Պարսամ Տրապիզոնցին չի կարողացել «դիմանալ», հրաժարվել է աթոռից և Լեմբերգից հեռացել։

Ն. Ակինյանի կարծիքով, Պարսամ Տրապիզոնցին իր այս ոտանավորը հորինել է 40—50 տարեկան հասակում (երբ դեռ առաջնորդ չի եղել)՝ այդ ժամանակ Լեմբերգում ապրող ոմն քահանա Միքայել Լովեցու խնդրանքով։

---

1 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 590—593։

ՀՈՎՀԱՆՆԵՍ (Ա)

«Թիւն Հազար քսան և ութին» սկսվածքով ոտանավորի հեղինակ Հովհաննեսը որպես ականատես է պատմում 1579 թ. և դրանից փոքր-ինչ հետո տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Այստեղից հետևում է, որ նա ապրել և ստեղծագործել է ԺԶ դարի երկրորդ կեսին:

Դատելով ոտանավորի լեզվից ու նկատի ունենալով նկարագրված դեպքերի վայրերը, ենթագրում ենք, որ Հովհաննեսն Արարատյան գավառի ծնունդ է, գուցե և բնիկ երևանցի:

Հ. Աճառյանը խոսելով 1572—1600 թթ. տեղի ունեցած դեպքերի նկարագրություններ պարունակող մի ժամանակագրության մասին[1], այն կարծիքն է հայտնել, թե «Թիւն Հազար քսան և ութին» սկսվածքով ոտանավորն իբր հիշյալ ժամանակագրության մի մասն է, ուրեմն և գրված դրա հեղինակ Հովհաննեսիկի ձեռքով[2]: Այս կարծիքը հավանական չէ, քանի որ նախ հիշյալ ժամանակագրությունն ամբողջովին արձակ է, հետևաբար ոտանավորը չէր կարող դրա հատվածը լինել, բացի դրանից ոտանավորի առաջին հրատարակիչ Ղ. Ալիշանը մի այլ առիթով խոսելով հիշյալ ժամանակագրության, դրա հեղինակ Հովհաննեսիկի ու վերջինիս ուսուցիչ Հովհաննես Ծարեցու մասին, չի նշում, թե «Այրարատում» իր հրատարակած ոտանավորը այս ժամանակագրության մասն է: Մի բան, որ չէր կարող վանց առնել Ղ. Ալիշանի նման մանրակրկիտ ու գիտակ բանասերը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ (Բ)

«Պատմութիւն մի պատերազմ եղեալ ...» երկի հեղինակ Հովհաննեսը որպես ականատես է պատմում 1583—1584 թթ. Ղրիմում տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Այստեղից հետևում է, որ նա ապրել և ստեղծագործել է ԺԶ դարի երկրորդ կեսին:

Նկատի ունենալով, որ նա սրտին շատ մոտ է ընդունում Ղրիմի ու հատկապես Կաֆա քաղաքի վիճակը, ենթադրում ենք, որ Ղրիմի ծնունդ է, գուցե և բնիկ կաֆացի:

Հավանաբար եղել է աշխարհական, քանի որ նրա կրոնավոր լինելու մասին ոտանավորում հիշատակություն չկա, մինչդեռ, երբ խոսում է ոտանավորը պատվիրող Գրիգորի մասին, Հովհաննեսը չի մոռանում հիշատակել, որ նա սարկավագ է եղել:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ

«Ընկալ Տէր արարիչ, դու ստեղծող ես համայնից» սկսվածքով ոտանավորի մեզ հասած հնագույն օրինակը պահվում է 1605 թ. գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 10050), որից կարելի է ենթադրել, որ Տեր Հովհաննեսը հանդես է եկել ԺԶ դարի վերջերին:

Ոտանավորի լեզվից ու ոճից դատելով ենթադրում ենք, որ հեղինակը եղել է ոչ թե քահանա, այլ բարձրաստիճան հոգևորական:

---

1 Մատենադարանի ձեռ. № 2776: Ժամանակագրության քննական բնագիրը հրատարակել է Վ. Հակոբյանը (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հտ. Բ, Երևան, 1956, էջ 240—249):

2 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 693:

ՄԿՐՏԻՉ ՏԱՐՈՆԵՑԻ

«Աւաղ գեղեցիկ և հոգևոր...» խորագրով ոտանավորը հորինված է 1557 թ. («Ի հազար թուականին և քսանուվեց թիւ յաւելին»)։ Այստեղից հետևում է, որ դրա հեղինակ Մկրտիչ Տարոնեցին ստեղծագործել է ԺԶ դարի երկրորդ կեսին։

Գրիգոր Դարանաղեցին իր «Ժամանակագրութեան» մեջ, նկարագրելով 1598—1599 թթ. տեղի ունեցած պատմական իրադարձությունները և հիշատակելով այդ ժամանակի նշանավոր հոգևորականներին, գրել է. «Եւ էր ոմն վարդապետ Մկրտիչ անուն, կատարեալ բարունի և բանաստեղծ և տաղասաց։ Եկեալ յօտար յերկրէ, բնակելով ի Փաթառիճոյ վանքն և անկանելով ի գինեմոլութիւն և զվարդապետութիւն խափանելով և ոչ ուրէք գնալով, ոչ աշակերտի և ոչ ուրուք ասել քարոզ կամ դաս, մինչ յօրն ելիցն աշխարհէս։ Եւ անուշահամ տաղ մի ասացեալ է ողբերգաբար՝ խրատական և ոգէշահ բանիւք առ ինք փոխելով դիմառնական ի զղջութիւն։ Եւ այսպէս է սկիզբն կաֆայի.

Օրհնեալ աստուած անունն,
Որ բարեաց գռներն բացեր,
Զաշխարհս գեղեցիկ ստեղծեր
Եւ երէք դիմաց բաժաներ։

Եւ շատ ոտանաւոր բանքեր»[1]։

Հ. Աճառյանը կարծում է, որ Գրիգոր Դարանաղեցու հիշատակածը կարող է Մկրտիչ Տարոնեցին լինել[2]։ Այս կարծիքը մեզ ևս հավանական է թվում, քանի որ նախ համընկնում են ժամանակները, ապա Գրիգոր Դարանաղեցու մեջ բերած հատվածն իր բնույթով շատ է հիշեցնում «Աւաղ գեղեցիկ և հոգևոր...» ոտանավորը։ Եթե դա այդպես է, ապա Մկրտիչ Տարոնեցին ԺԶ դարավերջին դեռևս կենդանի է եղել։

Որպես ԺԶ դարի բանաստեղծի, Մկրտիչ Տարոնեցու անունը տալիս է նաև Ղ. Ալիշանը[3]։

ՀՈՎՀԱՆՆԵՍ (Գ)

«Աստուածածին մայր Քրիստոսի» սկսվածքով ոտանավորը գետեղված է ԺԶ դարի գրչության ձեռագրում (Մատենադարանի ձեռ. № 4370), որի գրիչն ինքը, Հովհաննեսն է։ Այստեղից հետևում է, որ նա ապրել ու ստեղծագործել է ԺԶ դարում։ Ոտանավորի բնույթից երևում է, որ հորինելիս հեղինակը եղել է կյանքի բավականաչափ երկար ճանապարհ անցած մարդ, որը մտահոգված է եղել մոտալուտ վախճանի հեռանկարով։

Ելնելով ոտանավորի լեզվառճական առանձնահատկություններից, կարծում ենք, որ Հովհաննեսը եղել է համեստ կրթության տեր ցածրաստիճան հոգևորական։

---

1 Տե՛ս Գրիգոր Դարանաղեցի, Ժամանակագրութիւն, էջ 405։

2 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 413։

3 Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Բ, էջ 125։

ՄԵԼՔՈՆ

Մելքոնի անունը, որպես ԺԶ դարի տաղասաց, առաջին անգամ հիշատակել է Ղ. Ալիշանը[1]: Ըստ երևույթին, հետևելով Ալիշանին նույնը կրկնել է Հ. Աճառյանը[2]: Մենք ևս Ալիշանից բացի ուրիշ աղբյուր չունենք: Հնարավոր ենք համարում, որ բանաստեղծի այդ պնդման համար մեզ անհայտ կռվան է ունեցել: Այն, որ «Այլ տաղ լավ և գեղեցիկը» պահպանվել է միայն 1737 թ. գրչության ձեռագրում, հեղինակի ապրած ժամանակը հաշվելու տեսակետից նշանակություն չունի: Դա պարզապես ուշ ժամանակի ընդօրինակություն է: Ոտանավորի բնույթն ու բանաստեղծական կերտվածքը համապատասխանում են ԺԶ դարի նմանատիպ երկերին:

ՄՈՒՐԱԴ ԽԻԿԱՐ

Ղ. Ալիշանը, որը հրատարակել է Մուրադ Խիկարի «Տաղ պարնան» ոտանավորի մի թերթ օրինակը[3], դրա հեղինակին համարում է ԺԶ դարի բանաստեղծ[4]: Վկայակոչելով Ղ. Ալիշանին, նույն կարծիքն է հայտնում նաև Հ. Աճառյանը[5]: Կարծում ենք, որ հիշյալ ժամանակի սահմանները կարելի է փոքր-ինչ կոնկրետացնել, որովհետև այժմ հայտնի է ոտանավորի ավելի լրիվ տարբերակը, որը պահվում է 1611 թ. գրչության ձեռագրում: Այստեղից հետևում է, որ Մուրադ Խիկարը պետք է հանդես եկած լինի տաղի ընդօրինակումից ավելի վաղ, հավանաբար ԺԶ դարավերջին:

Ոտանավորի ոգուց և հատկապես կրկնակ տողի բնույթից («Յորժամ հայոց դատին գայ») կարելի է ենթադրել նաև, թե Մուրադ Խիկարը եղել է քահանա:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍՏԱՄՊՈԼՑԻ

«Տաղ խիստ գեղեցիկ ի վերայ Երուսաղէմի...» ներբողյանից իմանում ենք, որ Նիկողայոս Ստամպոլցին Կ. Պոլսից ուխտ է գնացել Երուսաղեմ: Ըստ Ն. Ակինյանի, այդ ուխտագնացությունը տեղի է ունեցել 1570 թ.[6]: Այնուհետև՝ «Ողբ Ղազոզի կղզոյն ասացեալ է» ոտանավորում Նիկողայոս Ստամպոլցին որպես ականատես է նկարագրում 1570 թ. սեպտեմբերին օսմանյան բանակի կողմից Կիպրոսի մայրաքաղաք Նիկոզիայի գրավումն ու ավերումը: Այս փաստերից ելնելով Ն. Ակինյանն իրավացիորեն գտնում է, որ Նիկողայոս Ստամպոլցին պետք է ծնված լինի Կ. Պոլսում, հավանաբար ԺԶ դարի կեսերին[7]: Հենվելով Գրիգոր Դարանաղեցու «Ժամանակագրութեան» վրա, որտեղ վերջինս նկարագրում է 1605 թ. իր այցը Կ. Պոլիս և իրեն դիմավորող հոգևորականների մեջ հիշատակում «աւագերից մի ալեխառն, խմաստուն և բարեսէր, սեպհական բնիկ՝ (Ստամպօլցի) Նիկողայոս անուն»[8], Ն. Ակինյանը ենթադրում է, որ

---

1 *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց Հայոց*, *հտ. Բ*, *էջ 113*:

2 *Տե՛ս* Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, *հտ. Գ*, *էջ 308*:

3 *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց Հայոց*, *հտ. Ա*, *էջ 184*:

4 *Նույն տեղում*, *էջ 111*:

5 *Տե՛ս* Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, *հտ. Գ*, *էջ 469*:

6 *Տե՛ս* Ն. Ակինյան. «Նիկողայոս Ստամպօլցի տաղասացը», «Անահիտ», 1931, № 5—6, *էջ 66*:

7 *Նույն տեղում*:

8 *Տե՛ս* Գրիգոր Դարանաղեցի, *Ժամանակագրութիւն*, *էջ 70*:

այստեղ խոսքը Նիկողայոս Ստամպոլցու մասին է և բստ այդմ, եթե նա 1605 թ. արդեն «ալեխառն» է եղել, ապա դրանից հետո դժվար թե երկար ապրած լինի[1]։

Պ. Խաչատրյանը համոզիչ չի համարում Ն. Ակինյանի այս ենթադրությունը, որովհետև, ինչպես գրում է նա՝ «մենք չգիտենք ավագերեցն արդյոք գրաղվե՞լ է գրական աշխատանքով»[2]։

Պ. Խաչատրյանի առարկությունը մեզ հիմնավոր է թվում։ Մեր կողմից ուզում ենք ավելացնել, որ Գրիգոր Դարանաղեցու նման ճշգրիտ ժամանակագիրը, որը չի մոռացել շեշտել հիշյալ Նիկողայոս ավագերեցի բարեմասնությունները («իմաստուն», «բարեսէր»), հարկավ չէր կարող մոռանալ նաև նրա գրական վաստակը, եթե նա այդպիսին ունենար։ Իսկ եթե հավանական չէ հիշյալ ավագերեցի և Նիկողայոս Ստամպոլցու նույնությունը, ապա ինքնին վերանում է նաև Նիկողայոս Ստամպոլցու մահվան մասին Ն. Ակինյանի արած ենթադրությունը։

Պրպտումները պարզեցին, որ Հալեպի Ամերիկյան վարժարանի № 43 ձեռագրի հիշատակարանում (թերթ 316ա) գրիչն ինքն իրեն Նիկողոս երեց է կոչում։ Մեզ թվում է, թե սա նույն ինքը՝ Նիկողայոս Ստամպոլցին է։ Այդ հիշատակարանում կարդում ենք. «Արդ գրեցաւ կանոնգիրքս ձեռամբ սուտանուն Նիկողոս երիցուս, թվին ՌՀ (=1621) ի քաղաքն Կոստանդինուպօլիս, ի Խալադիա, ի դուռն սր. Լուսավորչին, ամէն։ Դարձալ յիշեցէք զվարդապետն մեր Սարգիսն, որ հետ մեզ շատ աշխատեցաւ։ Աստուած ողորմի նմա։ Դարձեալ յիշեցէք զհայր իմ՝ Մելքիսէթ զմայրն իմ՝ Շահնիկարն, դարձեալ հիշեցէք զեղբայրսն մեր՝ Պօղոսն, Ղուրիպշահն, Տիլանջին...»[3]։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, իսկ դա կարող է ճիշտ լինել, քանի որ ժամանակով և գործելու վայրով (Կ. Պոլիս, Ղալաթյա) այս Նիկողոսն ու Նիկողայոս Ստամպոլցին համընկնում են, ապա ժխտվում է Ն. Ակինյանի այն ենթադրությունը, թե Նիկողայոս Ստամպոլցին 1605 թ. հետո դժվար թե երկար ապրած լինի, ինչպես նաև այն, թե նա ավագերեց է եղել։ Բացի դրանից, եթե ճիշտ է մեր ենթադրությունը, ապա մենք կարող ենք ասել, թե գիտենք Նիկողայոս Ստամպոլցու հարազատների անունները։

Ն. Ակինյանը գրում է, որ Ֆինկի Ցուցակից իրեն հայտնի է դարձել, թե Տյուրինգենի համալսարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի № 102 գրչագրում պահվում են 4 տաղ, որոնց ծայրակապերում հիշատակվում է Նիկողայոս անունը[4]։ Նա տալիս է այդ տաղերի ամփոփ նկարագրությունը, խոսում դրանց գրության շարժառիթների մասին և դրանք վերագրում Նիկողայոս Ստամպոլցուն։ Պ. Խաչատրյանը հավանական չի համարում այս ենթադրությունը։ «Տաղերը, — գրում է նա, — Նիկողայոս Ստամպոլցուն կարելի է վերագրել միայն այն դեպքում, երբ համոզված լինենք, որ նրանից բացի համանուն մի այլ տաղասաց գոյություն չի ունեցել»[5]։

Բայց, քանի որ առ այսօր այդ ժամանակաշրջանի (1570—1620-ական թթ.) համար բանասիրությանը մեկ այլ Նիկողայոս տաղասաց հայտնի չէ, նույն տրամաբանությամբ մենք հավանական ենք համարում Ն. Ակինյանի ենթադրությունը։

---

1 Տե՛ս «Անահիտ», էջ 67։

2 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 131։

3 Տե՛ս Սուրմեյան, Մայր ցուցակ Հալեպի, հա. Բ, էջ 133։

4 Տե՛ս «Անահիտ», էջ 68։

5 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 131։

ՊԱՂՊԱՍԱՐ ՀԱՄԲԵՑԻ

«Փառք անեղին Աստուածութեան» սկսվածքով ոտանավորի վերջին տներից իմանում ենք, որ դա իրեն իսկ՝ Բաղդասար Համբեցու ձեռքով, 1584 թ. Ամիթ քաղաքում ընդօրինակված մի գանձարանի հիշատակարանն է։ Եթե նկատի ունենանք, որ գանձարանն ընդօրինակելիս Բաղդասար Համբեցին առնվազն 30—35 տարեկան պիտի եղած լինի, կարող ենք ասել, թե հավանաբար ծնվել է ԺԶ դարի կեսերից ոչ ավելի ուշ։

Ոտանավորից երևում է նաև, որ հեղինակը որոշ չափով կրթություն ստացած, հայ նկեղեցու և հայոց պատմությանը լավատեղյակ, գրչությամբ պրաղվող մարդ է, միաժամանակ, ինչպես երևում է գանձարանի պատվիրատու «երանելի» Ստեփանոս քահանայի հանդեպ տածած նրա խոր ակնածանքից, ո՛չ բարձրաստիճան հոգևորական։

ՍՏԵՓԱՆՈՍ ԿԵՂԵՑԻ

«Ստանաւոր վասն կանանց խարեբութեան...» բանաստեղծության մեջ հայտնի հնագույն ընդօրինակությունը պահվում է 1617 թ. գրչության ձեռագրում։ Այստեղից հետևում է, որ Ստեփանոս Կեղեցին պետք է հանդես եկած լինի տարի ընդօրինակությունից ավելի վաղ, հավանաբար ԺԶ դարավերջին[1]։

Նույն կարծիքն է հայտնել նաև Հ. Աճառյանը[2]։

ՄԵԼՔԵՍԵԹԵԿ

«Մեր մեղքն է առեր գիսօրզն զօրաւոր» սկսվածքով ոտանավորը պահվում է ԺԷ դարի գրչության ձեռագրերում։ Բայց քանի որ բանաստեղծական հնարանքներով և լեզվառճական առանձնահատկություններով շատ է հարազատ ԺԶ դարի երկրորդ կեսին ու դարավերջին հանդես եկած Մարտիրոս Խարասարցու, Մինաս Թոխաթցու, Մարտիրոս Խարբերդցու, Պարսամ Տրապիզոնցու կենցաղագրական-դավեշտական ոտանավորներին, կարծում ենք պետք է գրված լինի ավելի վաղ՝ ԺԶ դարավերջին։

Ն. Լալայանը վկայում է, թե ժամանակին Աղթամարում եղել է 1573 թ. գրված մի ձեռագիր Սարգսաարան, որի գրչի անունը եղել է Մելքիսեթ[3]։ Մեզ այնպես է թվում, թե սա կարող է «Մեր մեղքն է առեր...» ոտանավորի հեղինակ Մելքեսեդեկը լինել, քանի որ ոտանավորի լեզվի մեջ առկա են Վասպուրականի բարբառի մի շարք ձևեր։ Եթե այս ենթադրությունը հաստատվի, ապա մենք կարող ենք ասել, թե գիտենք Մելքեսեդեկի հարազատների անունները, քանի որ վերոհիշյալ ձեռագրի հիշատակարանում Մելքիսեթը գրել է, թե իր հոր անունը եղել է Վրդանես, մորը՝ Գոհար խաթուն, քույրերինը՝ Շուշան և Հանդուտ, իսկ ուսուցչին կոչել են Ներսես եպիսկոպոս։

Ո՛չ խորագրում, ո՛չ էլ այն տողում, որտեղ հեղինակը տալիս է իր անունը («Մելքեսեդէկիս զգանգատն լսեցէք») ակնարկ չկա նրա հոգևոր կոչման մասին, ինչպես,

---

1 *Մատենադարանի «Յուցակ ձեռագրացի» Ա հատորի ցանկում (էջ 1616) Ստեփանոս Կեղեցին հիշատակվում է որպես ԺԵ դարի տաղերգու։ Թե այդ բանը հաստատելու համար արդի կազմողներն ինչ կռվաններ են ունեցել, մեզ հայտնի չէ։*

2 *Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 676։*

3 *Տե՛ս Ն. Լալայան, Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 30։*

օրինակ, կարդում ենք ԺԷ դարի երկրորդ կեսի բանաստեղծ Մելքիսեդեկ եպիսկոպոսի «Տաղ վասն դարիպութեան ի տէր Մելքիսեդեկէ» բանաստեղծության մեջ, ուստի ենթադրում ենք, որ Մելքիսեդեկը եղել է աշխարհական։

ՄԻՔԱՅԵԼ ՔԱՀԱՆԱ

«Ոտանաւոր ըստ անուան երգողին է» և «Այլ բանք վասն խորնաբուխեան» բանաստեղծությունները պահվում են 1583 թ. Հղինակի ձեռքով ընդօրինակված ձեռագրում, որի հիշատակարանի մեջ Միքայելն իրեն հիշում է որպես քահանա։ Արդ, եթե 1583-ին նա արդեն քահանա է եղել, ապա հավանաբար պիտի ծնված լինի ԺՉ դարի կեսերին։ Սույն հիշատակարաններից իմանում ենք նաև, որ աշակերտել է Եոլպի պատկերահան սարկավագին[1]։

Մատենադարանի 1603 թ. գրչության № 1262 ձեռագրի գրիչը նույնպես իրեն Միքայել քահանա է անվանում[2]։ Մենք կարծում ենք, թե սա հենց նույն Միքայել քահանան է, քանի որ գրչության ժամանակով երկու ձեռագրերն այնքան էլ հեռու չեն միմյանցից, և այդ ժամանակների համար մեր մատենագիտությանը մեկ այլ գրիչ Միքայել քահանա հայտնի չէ։ Եթե դա այդպես է, ապա կարող ենք ասել, թե գիտենք նաև մեր տաղերգուի հարազատների անունները, քանի որ № 1262 ձեռագրի հիշատակարանում գրիչը հայտնում է, թե իր հոր անունը եղել է տեր Պետրոս, մորը՝ Եփրյաքսին, հորեղբորը՝ տեր Մարգիս, իսկ ուսուցիչը՝ Հովհաննես վարդապետ։

ՆԱԶԱՏՈՒԹ ՎԱՐԴԱՊԵՏ

«Ի գանցանս, որ ես գործեալ եմ» սկսվածքով ոտանավորի մեկ հատած հնագույն ընդօրինակությունը պահվում է 1611 թ. գրչության ձեռագրում։ Այստեղից էնթադրում ենք, որ գրա հեղինակ Խաչատուր Վարդապետը պետք է հանդես եկած լինի ԺՉ դարի վերջին տասնամյակներին։

Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» Բ հատորի ցանկում (էջ 1330) այս ոտանավորը գրված է Խաչատուր Երեց Խաչ—Գռուզի ստեղծագործությունների շարքում։ Մեր կարծիքով սա թյուրիմացություն է, քանի որ «Ի գանցանս...» ոտանավորն իր բանաստեղծական հնարանքներով և լեզվաոճական առանձնահատկություններով միանգամայն տարբեր է Խաչ—Գռուզի ոտանավորներից։ Հայտնի է, որ Խաչ—Գռուզը եղել է քահանա, մինչդեռ այս ոտանավորի ծայրակապից երևում է, որ հեղինակը վարդապետ է։

Այս Խաչատուր Վարդապետին չի կարելի շփոթել նաև Խաչատուր վարդապետ Կաֆացու (ոչ Խասակի) հետ, քանի որ սրանց ոտանավորներն իրենց բնույթով բոլորովին նման չեն իրար։

ԳՐԻԳՈՐ ՎԱՆԵՑԻ

Գրիգոր Վանեցու մասին առաջինը խոսել է Ա. Մնացականյանը «ԺՉ—ԺԷ դդ. մոռացված բանաստեղծ Գրիգոր Վանեցին և նրա անտիպ տաղերը» հոդվածում[3]։

---

[1] Սա ԺՉ դարի հայտնի նաղաշ Եոլպին է (մանրամասն տե՛ս Э. М. Корхмазян, Армянская миниатюра Крыма, Ереван, 1978, էջ 73։

[2] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, կազմողներ՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ա. գիրք, էջ 85։

[3] Տե՛ս «Էջմիածին», 1975, № 10, էջ 40—42։

Նկատելով, որ 1649—1653 թթ. գրչության ձեռագրում ընդօրինակված նրա երկու ոտանավորների մեջ առկա են գրչական սխալներ ու չփոթություններ, Աս. Մնացականյանը ենթադրում է, թե ինքնագրերի ու այդ ընդօրինակությունների միջև համանաբար ընկած է 50—100 տարվա մի ժամանակաշրջան։ Ըստ այդմ, Գրիգոր Վանեցին պետք է հանդես եկած լինի ԺԶ—ԺէԶ դարերում։ Բանաստի այս փաստարկը մեզ համոզիչ է թվում։ Ուզում ենք ավելացնել, որ Գրիգոր Վանեցու ոտանավորներն իրենց բնույթով ու բանաստեղծական հնարանքներով ևս առնչվում են ԺԶ դարի նույն թեմաներով գրված բանաստեղծություններին, «Նորին Գրիգորիսի, իմաստուն քահանայի ասացեալ» բանաստեղծության վրա, նույնիսկ, զգացվում է Գրիգորիս Աղթամարցու ազդեցությունը։

Նույն հոդվածում Աս. Մնացականյանը փորձում է ճշտել, թե ԺԶ—ԺէԶ դարերի ո՞ր Գրիգոր Վանեցին (կամ Վարագեցին) է ոտանավորների հեղինակը։ Նշելով, որ Գրիգոր Վանեցիներ եղել են մի քանիսը, նա դրանցից ոչ մեկի հետ չի նույնացնում ոտանավորների հեղինակին, միայն թեթևակի կասկած է հայտնում, թե գուցե դա լեհահայոց թեմի առաջնորդ Գրիգոր Վանեցին է, քանի որ նա մտերիմ է եղել Վրթանես Սոնկեցու հետ, իսկ տաղերում Գրիգոր Վանեցու և Վրթանես Սոնկեցու ոտանավորներում բանաստերը որոշ աղերսներ է տեսնում։ Այս փաստարկը մեզ համոզիչ չի թվում, մանավանդ, որ ցարդ բանասիրություններ հայտնի չէ, թե լեհահայոց հոգևոր առաջնորդը նաև ոտանավորներ է հորինել։

ԺԶ դարավերջին եղել է մեկ այլ Գրիգոր Վանեցի, որի ոտանավորներն ընդօրինակված են Երուսաղեմի № 1456 ձեռագրում[1]։ Սա հանդես է եկել շատ ավելի ուշ և ոտանավորներն էլ միանգամայն տարբեր են իրենց բնույթով։

ՀՈՎԱՍԱՓ ԵՐԶՆԿԱՑԻ

«Տաղ վասն կանանց» ոտանավորի մեզ հասած օրինակը պահվում է ԺէԶ դարի գրչության ձեռագրում։ Քանի որ ձեռագրի գրիչ Հակոբը ոտանավորի վերջում իր ավելացրած բառատողի մեջ գրում է, թե ոտանավորի հեղինակն իր հայրն է, ապա մեզ թվում է, թե Հովասափ Երզնկացին պիտի ստեղծագործած լինի ԺԶ—ԺէԶ դարերում։

Ո՛չ ոտանավորում և ո՛չ էլ որքու ավելացրած բառատողում Հովասափ Երզնկացու համար որևէ հոգևոր կոչում չի հիշատակվում, ուստի ենթադրում ենք, թե նա եղել է աշխարհական։

ԿԱՐԱՊԵՏ ԴՊԻՐ

Կարապետ Դպրի մասին Ա. Երեմյանը գրում է, թե նա պիտի ապրած լինի «16-րդ դարի վերջին շրջանում»[2]։ Ապա տալիս է մի քանի տեղեկություններ. գժրախտաբար չհիշատակելով իր աղբյուրները։ Ըստ այդ տեղեկությունների՝ Կարապետ Դպիրը «լեզվական տեսակետից հանդիսանում է իր ժամանակի փայլուն դեմքերից մեկը»։ Եղել է Բուրբերենի բազ գիտակ և այդ լեզվով ևս ոտանավորներ է գրել, պայքարել է «ժողովրդի եաադիմության դեմ, լուսավորել նրա միտքը», գիտակցել, որ «պիտի գրել ժողովրդին հասկանալի լեզվով» և այլն[3]։

---

1 Տե՛ս Պողարյան. Մայր ցուցակ, հտ. Ե, էջ 155—156։

2 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1940, № 41, էջ 1005—1006։

3 Համմտ. նույն տեղում։

Մ. Մկրտչյանը գրում է, թե Կարապետ Դպիրը «XVII դարի տաղերգու է»[1]:

Կարապետ Դպրի «Տաղ վասն վարդի...» ոտանավորի հնագույն ընդօրինակությունը պահվում է 1608 թ. գրչության ձեռագրում, որի մեջ, ի դեպ, դետեղված են հիմնականում ԺԵ—ԺԶ դարերի բանաստեղծների ստեղծագործություններ: Այստեղից մենք ենթադրում ենք, որ Կարապետ Դպիրը պետք է ծնված լինի ԺԶ դարի կեսերին, հանդես եկած վերջին տասնամյակներում և գուցե թե հասած ԺԷ դարի սկզբներին:

«Տաղ դարիպի ի Կարապետէ ասացեալ» ոտանավորից ենթադրում ենք նաև, թե բանաստեղծը եղել է պանդխտության մեջ:

Կարապետ Դպրի ինքնության հարցում բանասիրության մեջ եղել են տարբեր կարծիքներ: Ըստ Ն. Ակինյանի, «Տաղ վասն վարդի...» ոտանավորը պատկանում է Կարապետ աբեղա Բաղիշեցու գրչին[2], քանի որ մի ձեռագիր օրինակում հեղինակի համար հիշատակվում է «աբեղա» բառը: Այս բառը կարդալով, Մ. Մկրտչյանը ևս կասկածում է, թե «սա թերևս իրավունք է տալիս կարծելու, որ տաղիս հեղինակը Կարապետ աբեղան կարող է լինել», թեև փոքր-ինչ հետո քիչ հավանական է համարում այս ենթադրությունը[3]:

Մեր կարծիքով տաղի միայն մեկ օրինակում եղած «աբեղա» բառը հիմք չի տալիս ենթադրելու, թե տաղն իբր պատկանում է Կարապետ աբեղա Բաղիշեցուն, քանի որ շատ հաճախ գրիչներն իրենց կողմից փոփոխություններ են մացրել բնագրերի մեջ: Օրինակ, նույն տաղի 4 այլ ընդօրինակություններում «Կարապետ» անվան փոխարեն կարդում ենք «եղկելի» բառը, «Տաղ վասն վարդի...» ոտանավորի մի օրինակում հեղինակի անունը փոխարինված է «աւետիս» բառով, որը Կ. Կոստանյանցն իր հերթին դիտում է որպես հատուկ անուն: Նույն ոտանավորի երկու ուրիշ օրինակներում հեղինակի անվան փոխարեն գրիչները գրել են իրենց անունները (Միրզահան, Դէոթոս) և այլն:

Հ. Աճառյանը «Տաղ վասն վարդի...» ոտանավորի հեղինակ համարելով Կարապետ Դպրին, միաժամանակ կարծում է, որ «Տաղ դարիպի...» ոտանավորը գրել է մեկ այլ բանաստեղծ՝ Կարապետ տաղասացը[4]: Մ. Մկրտչյանն առարկում է սրան՝ մեջ բերելով այն փաստարկը, որ երկու ոտանավորների օրինակներում էլ Կարապետն ինքն իրեն բնութագրում է «ծառա» բառով («Ով Կարապետ գէմ ծառայ չես» և «Կարապետ» ծառայ բնակարան մեղաց»)[5]: Այս հարցում համաձայն լինելով Մ. Մկրտչյանի կարծիքին, ուզում ենք ավելացնել, որ երկու ոտանավորներն իրենց բանաստեղծական հնարանքներով և լեզվառճական առանձնահատկություններով խիստ հարազատ են միմյանց:

ՄԻՆԱՍ

«Գեղեցիկ պատկեր» սկսվածքով ոտանավորը պահպանվել է ԺԷ դարի գրչության ձեռագրում: Այստեղից, թերևս կարելի էր ենթադրել, թե դրա հեղինակ Մինասը հան-

---

1 Տե՛ս Մ. Մկրտչյան, Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV—XVIII դդ), էջ 129:

2 Տե՛ս «Բազմավէպ», 1937, էջ 323:

3 Տե՛ս Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV—XVIII դդ.), էջ 131:

4 Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 610:

5 Հմմտ. Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV—XVIII դդ), էջ 130 և 132:

դես է ևկել ԺԷ դարի կեսերին, կամ գուցե առաջին տասնամյակներում: Սակայն ոտանավորն իր բանաստեղծական հնարանքներով և լեզվառճական առանձնահատկություններով միանգամայն հարազատ է ԺԶ դարի նմանատիպ տաղերին, որից ենթադրում ենք, թե մեզ հասած օրինակն ուշ շրջանի ընդօրինակություններից մեկն է, իսկ միջնադար հանդես է ևկել ԺԶ դարում: Պատահական չէ, որ ոտանավորի մեկ այլ օրինակը, որի մեջ Միհրդատ անվան փոխարեն եղել է Գրիգոր, Հ. Տաշյանը վերագրել է ԺԶ դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցուն[1], իսկ Ն. Ակինյանը՝ ԺԸ դարավերջին հանդես եկած Գրիգոր Կաֆայեցուն[2]:

Միհրդատ մասին կենսագրական տեղեկություններ չունենք: Միայն ինքն իրեն կոչելու ձևից («Միհրդատ խօսեցաւ...») ենթադրում ենք, թե հոգևորական չի եղել:

ԶԱՔԱՐԻԱ

«Տաղ գեղեցիկ յոյժ, Զաքարիայի ասացեալ» ոտանավորը Ն. Ակինյանը հրատարակել է Զաքարիա Գնունեցու տաղերի ժողովածուի մեջ, թևև երկրայելիների շարքում[3]: Տ. Պալյանը, որը հրատարակել է ոտանավորի մեկ այլ օրինակ, դրա հեղինակին նույնացնում է Զաքարիա Ագուլեցու հետ[4]: Իսկ Ա. Երեմյանը, որը հրատարակել է իր սեփական ձեռագրի օրինակը, Զաքարիային պարզապես անվանում է «տաղարան»[5]:

Մեր կարծիքով ոտանավորը չի կարող Զաքարիա Գնունեցունը լինել, քանի որ Երուսաղեմի № 1239 ձեռագրի օրինակի խորագրում հեղինակի համար ասվում է,- թե ապրեալ է եղել, մինչդեռ հայտնի է, որ իր տաղերը հորինելիս Զաքարիա Գնունեցին եղել է վարդապետ: Այս ոտանավորի հեղինակը չի կարող լինել նաև Զաքարիա Ագուլեցին, նախ՝ քանի որ նա հոգևոր կոչում չի ունեցել, այլ եղել է վաճառական և հայտնի չէ, թե ոտանավորներ է գրել, ապա՝ նա հանդես է ևկել ԺԷ դարի երկրորդ կեսին, «Օրագրութիւնը», որը գրելիս նա ծեր չի եղել, ընդգրկում է 1647—1681 թթ. դեպքերը, մինչդեռ «Տաղ գեղեցիկ...» ոտանավորի ընդօրինակություն կա արդեն 1645 թ. դրչության ձեռագրում (Ա. Երեմյանի սեփական ձեռագիրը): Այստեղից ենթադրում ենք, որ Զաքարիան պետք է հանդես եկած լինի ոտանավորի բնօրինակումից մի քանի տասնամյակ առաջ, հավանաբար ԺԶ դարավերջին կամ ԺԷ դարասկզբին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԱԳԵՑԻ

Ստեփանոս Վարագեցու տաղերի մեզ հասած հնագույն ընդօրինակությունները պահվում են Երուսաղեմի 1622 թ. դրչության № 1455 ձեռագրում, որի մեջ գրիչ Ստեփանոս Թոխաթցին արտագրել է հիմնականում ԺԶ դարի բանաստեղծների ստեղծագործություններ: Իրենց բնույթով Ստեփանոս Վարագեցու ոտանավորները հարազատ են այդ դարի նույն թեմաներով գրված տաղերին, ուստի ենթադրում ենք, թե Ստեփանոս Վարագեցին պետք է հանդես եկած լինի ԺԶ դարավերջին:

Դատելով «Տաղ գարնան» ոտանավորի Վիեննայի № 663 ձեռագրում պահվող օրինակի խորագրից, Ստեփանոս Վարագեցին եղել է եպիսկոպոս:

---

1 *Տե՛ս* Տաշյան, *Յուցակ, էջ 1073:*

2 *Տե՛ս* Ն. Ակինյան, *Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարցի, էջ ՃԻԵ:*

3 *Տե՛ս* Ն. Ակինյան, *Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը, էջ 50—51:*

4 *Տե՛ս «Բիւրակն», 1897, էջ 738—739:*

5 *Տե՛ս «Բազմավէպ», 1950, էջ 183:*

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑԻ

Բարսեղը Վարագեցի է կոչվել, քանի որ ուսանել, ապա և պաշտոնավարել է Վարագա վանքում: Կոչվել է նաև Ավանեցի իր ծննդավայրի՝ Վանա լճի մոտ եղած Ավան գյուղի անունով:

1591 թ. ընդօրինակած «Խուլուշ» կոչվող Ավետարանի հիշատակարանում նա ինքն իրեն անվանում է արեղա: Այստեղից Ն. Ակինյանը ենթադրում է, որ ծնվել է մոտավորապես 1570 թ.[1]: Սակայն մեզ թվում է, թե Բարսեղ Վարագեցին պիտի ծնված լինի ավելի վաղ՝ 1550—1560-ական թվականներին, քանի որ նույն հիշատակարանում ժամանակագրության ձևով նա պատմում է 1581—1591 թթ. իրադարձությունները, ընդ որում՝ ո՛չ որպես մանկական տպավորություններ, ինչպես պիտի լիներ առաջին մասը, եթե նրա ծննդյան համար ընդունելի համարեինք Ն. Ակինյանի առաջարկած տարեթիվը[2]: Բացի դրանից, ըստ Ղ. Փիրղալեմյանի՝ Բարսեղ Վարագեցին եղել է Զաքարիա Վարագեցու ուսուցիչը[3], իսկ վերջինս ծնվել է մոտավորապես 1570—80-ական թվականներին:

Նույն հիշատակարանից իմանում ենք, որ Բարսեղ Վարագեցու հոր անունը եղել է Ստեփանոս, մորը՝ Բեգիջան Խաթուն, որ նա աշակերտել է տեր Հովհաննեսին և Մարտիրոս սարկավագին, իսկ նրա «հոգևոր հայրը», այսինքն, քրիստոնեական վարդապետությունն ուսուցանողը, եղել է քեռին՝ Արքայեցի Կարապետ վարդապետը («Ջամալ» մականունով), որը նշանավոր անձ է եղել Վարագում[4]:

1602 թ. գրված մի «Ոսկեփորիկում» Բարսեղ Վարագեցին արդեն հիշվում է որպես վարդապետ[5]:

Բարսեղ Վարագեցին եղել է նաև մանկավարժ, երաժիշտ և գրիչ: Մեզ են հասել նրա ընդօրինակած մի շարք ձեռագրեր, այդ թվում, ինչպես հիշում է Ն. Ակինյանը, 1595—1596 թթ. ընդօրինակված մի Շարակնոց, որի հիշատակարանում նա գրել է իր եղբոր՝ հյուսն Գրիգորի մահվան մասին, 1608 թ. ընդօրինակված մի Ավետարան, որի հիշատակարանում տեղեկություններ է հաղորդել Շահ Աբասի արշավանքների և դրանց հետևող սովի, ինչպես նաև այն մասին, որ ինքը ևս ստիպված է եղել հեռանալ Վանից և ապաստանել Աշտարակի ս. Աստվածածին վանքում, Վիեննայի № 663 ձեռագիր տաղարանը, Մատենադարանի № 4962 ձեռագիրը և այլն[6]:

Ղ. Փիրղալեմյանի, ապա և Գ. Աղանյանցի կարծիքով Բարսեղ Վարագեցին վախճանվել է 1615 թ.[7]: Սակայն Ն. Ակինյանն ապացուցում է, որ այստեղ չփոթություն կա, այդ թվականը Բարսեղ Բաղիշեցու մահվան թվականն է, իսկ Բարսեղ Վարագեցու մահվան թվականը հայտնի չէ[8]:

---

1 *Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1951, էջ 517:*

2 *Այս հիշատակարանի ժամանակագրական հատվածը տե՛ս Գ. Աղանյանց, Դիւան Հայոց պատմութեան, ժ գիրք, էջ 33—38:*

3 *Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ժէ. հտ. Ա, էջ 105:*

4 *Տե՛ս «Դիւան Հայոց պատմութեան», ժ գիրք, էջ ԻԹ—ԼԱ:*

5 *Տե՛ս նույն տեղում, էջ Լ—ԼԱ:*

6 *Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1951, էջ 520:*

7 *Տե՛ս «Դիւան Հայոց պատմութեան», ժ գիրք, էջ ԼԱ:*

8 *Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1951, էջ 520:*

Բարսեղ Վարագեցու մասին առաջինը հիշատակել է Հ. Թոփճյանը[1], այնուհետև՝ Ղ. Ալիշանը[2] և Հ. Աճառյանը[3]։

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԱԳԵՑԻ

Ինչպես երևում է Ղուռապաշի վանքում 1603 թ. նրա ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանից, այդ ժամանակ Զաքարիա Վարագեցին դեռևս աբեղա է եղել[4]։ Այստեղից ենթադրում ենք, թե պիտի ծնված լինի ԺԶ դարի 60—70-ական թվականներին։ Այս հիշատակարանից իմանում ենք նաև նրա հարազատների անունները։ Հայրը կոչվել է Մուրաղ, մայրը՝ Սալչուկփաշա, հոգևոր մայրը՝ Էթարփաշա, հոգևոր եղբայրները՝ տեր Գրիգոր Վարագեցի և տեր Վարդան Աբեղա։ Հիշատակվում է նաև ուսուցիչը՝ «Բարսեղ քաջ և արի բաբունապետը», որն, ըստ Ղ. Փիրղալեմյանի, Բարսեղ Վարագեցին է[5]։

Մեր կարծիքով «Տաղ Վարագայ խաչին...» ոտանավորի հեղինակը հենց այս Զաքարիա Վարագեցին է, որ ապրել ու ստեղծագործել է Վարագա ս. Խաչ վանքում, զբաղվել գրչությամբ, աշակերտել նույն վանքի վարդապետ Բարսեղ Վարագեցուն, և ոչ թե 1606 թ. Վանի հոգևոր առաջնորդ և 1636—1639 թթ. Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա Վարագեցին, ու ոչ էլ, դատելով ոտանավորի բնույթից, լեզվառճական առանձնահատկություններից և այն բանից, որ ծայրակապում հեղինակն ինքն իրեն կոչում է «Զաքարայ», Զաքարիա Գնունեցին, ինչպես առանց որևէ կռվանի ենթադրում է Ն. Ակինյանը[6]։

ՄԻՆԱՍ ԹՈԽԱԹՅԻ

1565 թ. Հռոմի պապի՝ Լեմբերգ ժամանած մի ոմն պատվիրակի պատվերով Մինաս Թոխաթցին ընդօրինակել է Եփրեմ Ասորու ճառերը և գրքի հիշատակարանում գրել, թե 55 տարեկան է։ Սրանով Ն. Ակինյանը ճշտում է նրա ծննդյան թվը՝ 1510[7]։

Մինչ երեսնամյա հասակը Մինաս Թոխաթցին ոտանավորներ չի գրել։ Դրանք եղել են ուսումնառության տարիներ, երբ նա հմտացել է գրչության ու մանրանկարչության արվեստներում և սովորել կազմարարություն։ 1539, կամ գուցե 1540 թ. պանդխտել է հայրենիքից, ինչպես կարծում է Ն. Ակինյանը՝ կամ քաղաքական անապահով պայմանների, կամ չքավորության պատճառով։ Այնուհետև մինչև կյանքի վերջն ապրել է օտարության մեջ, հայրենիքի կարոտը սրտում, ինչպես երևում է «Տաղ և գովասանք հերիսի...» բանաստեղծության հետևյալ տողերից.

Այս դառն տեղն որ մեք անկանք,
Դառնամք երթամք ի մեր տեղի։

---

1 Տե՛ս «Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի», Վաղարշապատ 1900, թերթ 58ա։

2 Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 129։

3 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 402։

4 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԷ, հտ. Ա, էջ 105։

5 Նույն տեղում։

6 Տե՛ս Ն. Ակինյան, Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը, էջ 16—17։

7 Մինաս Թոխաթցու մասին կենսագրական տեղեկությունները քաղել ենք Ն. Ակինյանի «Հինգ պանդուխտ տաղասացներ» գրքից, էջ 57—85։

1544 թ. Մինաս Թոխաթցուն տեսնում ենք Կամենիցի հայ գաղթականների մեջ, որտեղից հետագայում անցնում է Սկյով։ 1551 թ. նա եղել է Սկյովում և «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն...» երկում որպես ականատես է պատմում իշխան Ստեփանոս Ռաբեշ Յոթներորդի հայերի դեմ գործադրած դավանափոխական հալածանքները։

1563 թվականից Մինաս Թոխաթցին հաստատվում է Լեմբերգում (Լվով) և տեղի ս. Աստվածածին եկեղեցում որը միաժամանակ ծառայել է նաև որպես արքեպիսկոպոսարան և դատարան, պաշտոնավարել որպես նոտար-գրիչ։ Հենց այդ տարիներին է նա մտերմացել Լեմբերգի արքեպիսկոպոս Գրիգոր Վանեցու հետ, որին նվիրել է իր «Տաղ և գովասանք Հերիսի...» ոտանավորը։

Նկատելով, որ Լեմբերգի հայոց դատարանի դատաստանական (և ժողովարարության) արձանագրություններր Վիեննայի № 452 ձեռագրում, 1621 թ. օգոստոսից հետո գրված են ոչ թե Մինաս Թոխաթցու այլ մեկ ուրիշի ձեռքով, Ն. Ակինյանը ենթադրում է, որ նա վախճանվել է 1621—1622 թթ.։ Բանասերի ենթադրությունը մեզ համոզիչ է թվում։

Մինաս Թոխաթցին գրել, ժողկել ու կազմել է մի շարք ձեռագրեր, որոնց մեջ հոդել է հիշատակարաններ հետաքրքիր տեղեկություններով ինչպես ժամանակի իրադարձությունների, այնպես էլ իր անձի մասին։

Հայտնի է նաև, որ նա զբաղվել է թարգմանել Մխիթար Գոշի Դատաստանագիրքը։

ԹԱԹՈՒ ԹՈԽԱԹՑԻ

Թաթոս Թոխաթցու տոհմի և նրա ինքնության հարցին անդրադարձել են Մ. Պատուրյանը՝ «Միջնադարյան տոհմատոհ Թաթոս Թոխաթցի»[1], Հ. Քյուրքյանը՝ «Միջնադարյան հայ տոհմատոհ Թաթոս տարկաւոգ Թոխաթցի»[2], Ն. Ակինյանը՝ «Թադէոս վ. Կողոնիացի, Թոխաթցի և Թադէոս Երէց Սեբաստացի տոհմատոհներ»[3] հոդվածներում և կրկին Հ. Քյուրքյանը՝ Ն. Ակինյանի հոդվածի առիթով գրած գրախոսության մեջ[4]։

Մ. Պատուրյանը Թաթոս Թոխաթցուն համարում է ԺԶ դարի երկրորդ կեսի բանաստեղծ՝ գրելով. «Մնուած պիտի լինի 1550 թ. տաննները»։ Ն. Ակինյանն ու Հ. Քյուրքյանը այդ թվականը երկբայելի են համարում, քանի որ Մ. Պատուրյանն իր հայտարարությունը հաստատելու համար որևէ կռվան չի բերում։

Մեզ ևս թվում է, որ Թաթոս Թոխաթցին ԺԶ դարի երկրորդ կեսի բանաստեղծ է։ Դա երևում է ոչ միայն նրա տաղերի բնույթից, այլև այն բանից, որ 1604 թ. Ստեփանոս Թոխաթցին նրա տաղերից մի քանիսն ավելացրել է 1563 թ. գրչության մի տաղարանի ոտանավորներին։

Հավանարար նկատելով, որ Ստեփանոս Թոխաթցին երկու անգամ (1604 և 1606 թթ.) ընդօրինակել է Թաթոս Թոխաթցու ոտանավորները, Մ. Պատուրյանը ենթադրում է, թե վերջինս եղել է Թաթոս Թոխաթցու մտերիմը կամ, գուցե, ուսուցիչը։ Ն. Ակինյանն ու Հ. Քյուրքյանը հիմնավոր չեն համարում նաև այս կարծիքը։ Ն. Ակինյանը ցույց է տալիս, որ Թաթոս Թոխաթցու ուսուցիչը եղել է ոչ թե Ստեփանոս Թոխաթցին, այլ Պետրոս արքեպիսկոպոսը։

---

1 Տե՛ս «Բազմավէպ», 1910, էջ 207—208։

2 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1935, № 11», էջ 74—82։

3 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 53—71։

4 Տե՛ս «Բազմավէպ», 1954, էջ 70—71։

Երեք բանասերների միջև տարաձայնություններ կան նաև Թաթոս Թոխաթցու հոգևորական կոչման հարցում։ Ըստ Մ. Պոտուրյանի, նա երիտասարդ հասակում եղել է աշխարհական և միայն կյանքի վերջում ստացել հոգևոր պաշտոն՝ հանելով սարկավագության։ Հ. Քյուրտյանը համամիտ է Մ. Պոտուրյանին, մինչդեռ այն բանից, որ երկուսն էլ նույն անունն են կրում և երկուսն էլ եղել են մահտեսի, Ն. Ակինյանը ենթադրում է, թե Թաթոս Թոխաթցին նույն ինքը Թադևոս վարդապետ Կողոնեցին է։ Իր գրախոսության մեջ Հ. Քյուրտյանը ժխտում է այս տեսակետը, նախ՝ նկատելով, որ Կողոնեցին իր իսկ վկայությամբ եղել է վարդապետ, ապա անելով մի համոզիչ դիտողություն, թե եթե սարկավագի համար իր մահտեսի լինելն ամենևին չնշտելը, ինչպես դա անում է Թաթոս Թոխաթցին, միանգամայն տրամաբանական է, ապա վարդապետի համար դա դժվար թե կարևոր բան լիներ։ Հ. Քյուրտյանի ամենահզոր կռվանը, սակայն, այն է, որ Թաթոս Թոխաթցու ոտանավորներն իրենց լեզվով այնքան են տարբերվում Թադևոս Կողոնեցուց մեզ հասած միակ ոտանավորից, որ չեն կարող միևնույն հեղինակի ստեղծագործությունները լինել։

Թաթոս Թոխաթցին հորինել է նաև հայատառ թուրքերեն կրոնական տաղեր։ Դրանցից են, օրինակ, Մատենադարանի № 3425 ձեռագրի «Թոխաթցոյ Թադէոսի ասացեալ հոգոյ բանք տաճկերէն» շարքի ոտանավորները (թերթ 88ա—93ա)։ Ինչպես վկայում է Մ. Պոտուրյանը, հայատառ թուրքերեն ոտանավորներ են եղել նաև նրա օգտագործած 1606 թ. գրչության ձեռագրում։

Թե երբ է վախճանվել Թաթոս Թոխաթցին, հայտնի չէ։

ՂԱԶԱՐ ԹՈԽԱԹՑԻ

Ղազար Թոխաթցու և նրա ստեղծագործության մասին մանրամասն տեղեկություններ հաղորդել է Ն. Ակինյանը՝[1] դրանք քաղելով Ղազար Թոխաթցու բնօրինակած ձեռագրերի հիշատակարաններից ու իր ձեռքի տակ եղած «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքի» և «Ի Թոխաթցի Ղազար եպիսկոպոսէ ասացեալ» ոտանավորներից։ Ըստ Ն. Ակինյանի հաղորդած տեղեկությունների՝ Ղազար Թոխաթցին ծնվել է 1550 թ. Թոխաթում, որը, որպես փարթամ ու վաճառաշատ քաղաք, համեմատում է Կ. Պոլսի հետ և անվանում «փոքր Ստամբուլ»։

Ծնողները վախճանվել և թաղվել են Թոխաթի ս. Քառասնից նկնդեցու գերեզմանատանը դեռևս մինչ ջալալիների արշավանքը, այսինքն՝ մինչ 1602 թ.։ Ինքը՝ Ղազար Թոխաթցին ականատես է եղել Թոխաթի գրավմանն ու ավերմանը, ստիպված հեռացել է ծննդավայրից, անցել է Ուկրաինայի Յազլովցա գյուղաքաղաք, որտեղ 1605—1606 թթ. եղել է տեղի սակավաթիվ հայ գաղթականների հոգևոր հովիվը։ Այստեղ նա պարապել է նաև ուսուցչությամբ ու գրչությամբ և իր աշակերտներ Աբրահատեսի և Կարապետի խնդրանքով գրել Թոխաթին նվիրված իր երեք ոտանավորները[2]։

1606 թ. փախադրվել է Կամենից։ Այդ մասին նա գրել է իր ընդօրինակած մի Ավետարանի հիշատակարանում։ Նույն թվականի մարտի 15-ին Կամենից է այցելել

---

1 Տե՛ս ՀՊՏ, էջ 205—216։

2 «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքի», «Ողբ ի վերայ կոտորածին Թոխաթին» և «Ողբ ի վերայ սովուն Թոխաթին»։ Առաջինը հրատարակել է Շ. Սահակյանը «Իրիս» հանդեսում (1912, էջ 83—84), որը գտնել հնարավոր չեղավ։ Մյուս երկուսն առանձին չեն հրատարակված, եղել են Շ. Սահակյանի սեփական ձեռագրում։ Դրանց մասին Ն. Ակինյանը ևս գիտե միայն վերջինիս հաղորդումից՝ տպագրված նույն տեղում («Իրիս», 1912, էջ 69)։

Լեմբերգի արքեպիսկոպոս Կարապետը, որի հետ Ղազար Թոխաթցին եղել է մտերիմ ու նրա այցելության առիթով գրել իր «Ի Թոխաթցի Ղազար եպիսկոպոսէ ասացեալ» ոտանավորը[1]։ Այս ժամանակ, ինչպես երևում է իր իսկ գրած «Ձի յոյժ կարի Հիվանդ էի ի սրտէ ցաւէ» հիշատակագրությունից[2], Ղազար Թոխաթցին ծանր հիվանդ է եղել, որից Ն. Ակինյանը ենթագրում է, թե պիտի վախճանված լիներ 1610 թ.։ Փաստն այն է, որ 1606—1607 թթ. հետո նրա մասին այլևս որևէ հիշատակության չենք հանդիպում։

Ա. Ալպոյաճյանը Ղազար Թոխաթցուն չփոթելով Ղազար վարդապետ Մակազունցի հետ, նրա մահվան թվականը համարում է 1623-ը[3]։

ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈԽԱԹՑԻ

Ստեփանոս Թոխաթցին ծնվել է 1558 թ. Թոխատում։ Ամուսնացել է 1577 թ.։ 1580 թ. ձեռնադրվել է քահանա։ 1589 թ. բնտանիքով այցելել է Երուսաղեմ և դարձել մահտեսի[4]։

Ստեփանոս Թոխաթցու ընդօրինակած՝ Մատենադարանի ՀՀ 2672, 7714 և 7377 ձեռագրերի հիշատակարաններից իմանում ենք նրա հարազատների և ուսուցիչների անունները։ Հոր անունը եղել է Մարգիս, մորը՝ Ճանփաշա, կրտսեր եղբորը, որը վախճանվել է 1602 թ. երևանի՝ ինգ տարեկան հասակում, Հակոբ, քույրերինը՝ Ուստիանե և Էմին, կնոջը՝ Ուստիանե, որդուները՝ Եսայի, որին նա երբեմն անվանել է նաև Եսայի մարգարե կամ պարզապես Մարգար, դստերը՝ Հռիփսիմե։ Իր ուսուցիչներից նա հիշատակում է Հովհաննես քահանային և Պետրոս սրբեպիսկոպոսին, աշակերտներից՝ Զաքարեին, Կաֆայի իր բնկերակիցներից և կարգակիցներից՝ տեր Խաչատուրին (Կատանա մականվամբ), որը բանաստեղծ Խաչատուր Թոխաթցին է, Հակոբ Այվաթենցին, տեր Ստեփանոս Տարանտացուն և այլոց, որոնք «Թոխաթու մէջն պատուական և գովելի և անուանիր էին»[5]։

Ստեփանոս Թոխաթցին ապրել է Թոխաթ բաղաքի Մահմատեիպ թաղում և հավանաբար ուսանել նույն թաղի ս. Քառասնից հինգերցու գպրոցում, իսկ ավելի ուշ նույն եկեղեցում ձեռագրեր է ընդօրինակել կամ նորոգել, ինչպես, օրինակ, Մատենադարանի ՀՀ 181 ձեռագիրը, որի հիշատակարանից էլ բաղել ենք այս տեղեկությունները։

1602 թ. չալալիների արշավանքի ժամանակ Ստեփանոս Թոխաթցին ևս ենթարկվել է հալածանքների ու կոտանքների և բնտանիքի հետ մազապուրծ փախչելով 1603 թ. հասել Կ. Պոլիս, որտեղ Թոխաթից եկած այլ գործիչների՝ Հակոբ Զեյթունցու, Մազաքիայի, Զաքարիա վարդապետ Վանեցու, Գրիգոր Կեսարացու և ուրիշների հետ, զբաղվել է գրական ու կրթական գործունեությամբ։ Այստեղ նա շարունակել է վախճանված եղբոր՝ Հակոբի, սկսած Շարակնոցի ընդօրինակումը, որի հիշատակարանում տրտնջում է, թե ապրուստի հոգսը իրեն թույլ չի տալիս մնալ Կ. Պոլսում[6]։ Հա-

---

1 Սա Ղազար Թոխաթցու մեր ձեռքի տակ եղած միակ երկն է։

2 Տե՛ս Տաշյան. Յուցակ, էջ 307։

3 Տե՛ս Ա. Ալպոյաճյան. Պատմութիւն եվդոկիոյ Հայոց, Կոստիրև, 1952, էջ 1550։

4 Տե՛ս Ն. Ակինյան. ՀՊՏ, էջ 117—137։ Ն. Ակինյանից հետո Ստեփանոս Թոխաթցու կենսագրությունը, հարստացրած նոր տվյալներով, գրել է Պ. Խաչատրյանը (տե՛ս ՀՄՊՈ, էջ 147—152)։

5 Տե՛ս Մատենադարանի ձեռ. ՀՀ 7714, թերթ 181ա։

6 Տե՛ս Ա. Ալպոյաճյան. Պատմութիւն եվդոկիոյ Հայոց, էջ 1573։

վանաբար հենց այդ պատճառով էլ նա շուտով թողել է Կ. Պոլիսը և ընտանիքով բնակություն հաստատել Ղրիմի Կաֆա քաղաքում: Այստեղ 1604 թ. նա ավարտել է մի Սաղմոսարան, որի հիշատակարանում գրել է նաև իր Թոխաթից փախչելու և Կաֆայում հաստատվելու պատմությունը[1]:

Կաֆայում նա քահանայություն է անում նախ ճգնավոր Ահարոնի, ապա ս. Լուսավորիչ եկեղեցում և զբաղվում ուսուցչությամբ: Հիշյալ Զաքարեից բացի նրան աշակերտել են նաև իր եղբայր Հակոբ քահանան և Հովասափ սարկավագը, իսկ, ինչպես երևում է «Ոտանաւորս և զանկատս լվաննուն...» երկից, նրա աշակերտների թիվը բավական մեծ է եղել[2]:

Ստեփանոս Թոխաթցու հիմնական գործը, սակայն, եղել է եկեղեցական արարողությունների ժամանակ անհրաժեշտ ձեռագրերի (Շարակնոցների, Սաղմոսարանների, Գանձարանների) ընդօրինակումն ու վերանորոգումը: Նրա ընդօրինակած, մեզ հայտնի, հնագույն ձեռագիրը 1596 թ. Թոխաթում գրված Շարակնոցն է[3]: Այստեղ նա վերանորոգել և եղբոր հետ կազմել է Մատենադարանի № 181 ձեռագիրը, իսկ 1598 թ. հավանորեն, Թոխաթից ոչ հեռու Մուխաթ գյուղում, ընդօրինակել է Մատենադարանի № 532 ձեռագիրը, որի հիշատակարանում տվել է Հակոբ Զեյթունցու անունը և այլն: Իր ընդօրինակած ձեռագրերի մասին 1611 թ. արտագրած մի Հայսմավուրքի հիշատակարանում նա գրել է. «Ի Թոխաթու ճալէլուն փախած եկաք ի Կաֆան և բազում վշտօք և ջանիւ գրեցի զԱյսմաւուրքս և Ճաշոց գիրք մի և Գանձատետր մի և ատենի Սաղմոսարան մի ...»[4]:

Կաֆայում Ստեփանոս Թոխաթցին ապրել է ավելի քան 15 տարի: 1619 թ. նա դեռևս այնտեղ է եղել և խոճա Ախիճանի սպանության կապակցությամբ գրել «Ի թուականիս հազար վաթսունի» սկսվածքով ոտանավորը:

1622 թ. Ստեփանոս Թոխաթցուն կրկին տեսնում ենք իր հայրենի Թոխաթում: Այստեղ նա ընդօրինակում է մի ձեռագիր (Երուսաղեմի № 1455 ձեռագիրը)[5] և հիշատակարանում գրում. «Գրեցաւ ոտանաւորքս ի քաղաքս շեհրի Թոխաթ, ձեռամբ Ստեփանոս մեղսաներկ երիցու, ի վայելումն Յովսէփ աշակերտին իմոյ, ի թուականիս Հայոց ՌՀԱ (1622), մայիս ամսոյ» (թերթ 235):

Ստեփանոս Թոխաթցու մահվան թվականի մասին տեղեկություններ չունենք: Ն. Ակինյանը ենթադրում է, թե նա «հազիվ թէ շոշափեց 30-ական թվականը»[6]: Պ. Խաչատրյանը հավանական է համարում այս ենթադրությունը[7]: Սակայն մի նորահայտ փաստ հնարավորություն է տալիս մի փոքր երկարելու նրա կենդանության սահմանը: Երուսաղեմի № 1870 ձեռագրում (թերթ 234ա—240բ) պահվում է Էջմիածնի Փիլիպպոս և Սսի Սիմեոն կաթողիկոսների միջև 1638 թ. կնքված մի համաձայնություն («թուղթ»), որտեղ որպես այդ ակտի վկա հիշատակվում է նաև Ստեփանոս Թոխաթցին. «Վկայ

---

1 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 7714, թերթ 180ը:

2 Հմմտ. Պ. Խաչատրյան. ՀՄՊՈ, էջ 151:

3 Տե՛ս Ա. Ալպոյանյան, Պատմութիւն Եվդոկիոյ Հայոց, էջ 1571:

4 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7377, թերթ 463ա:

5 Սա Ստեփանոս Թոխաթցու ձեռքով գրչագրված մի ընտիր տաղարան է (տե՛ս Մատենադարան, մանրաժապավեն, № 916), որի հիշատակարանն օգտագործվում է առաջին անգամ:

6 Տե՛ս ՀՊՏ, էջ 12:

7 Տե՛ս ՀՄՊՈ, էջ 152:

այսմ բանի Գրիգոր սուրբ Հայրապետն երուսաղեմի և Կաբապետ վարդապետն Մոկաց և... Ներսես վարդապետն Սևրաստացի և մահտեսի Գասպարն և Ջուղայեցի տէր Ստեփաննոս ատաբ երէցն... և խոճայ Խաչատուրն և Յակոբ եպիսկոպոս Տիխիսեցին և տէր Մկրտիչն... և Բաղատաու տէր Ստեփաննոս երէցն և Ալեքսան երէցն և մահտեսի Ախիճանն... և բազմահոյլ բահանայք և ժողովուրդք, ժողվեալ ի ժողով մեծ ի բազում գաւառաց և քաղաքաց և ամենեցուն ձեռագիր և կնիք ի վերայ այսոքիկ եղեալ, զոր ի սուրբ էջմիածինն»[1]:

ՀԱԿՈԲ ԹՈԽԱԹԵՑԻ

Հակոբ Թոխաթցու ստեղծագործության ու կենսագրության, նախորդ բանասեր-ների դիտողությունները հաշվի առնելով, առավել մանրամասն անդրադարձել է Պ. Խաչատրյանը՝ «Հակոբ Թոխաթցի ոդրատացը» հոդվածում[2]: Այստեղ նա նախ ուշադրու-թյուն է դարձրել Ն. Ակինյանի սխալը, թե իբր Հակոբ Թոխաթցին ծնվել է 1573 թ., նշելով նրա ծննդյան ճիշտ թվականը՝ 1563:

Հայտնի է, որ Հակոբ Թոխաթցին իրեն անվանում է նաև Բաթուկենց, կամ «Բա-թուկի տէր Յակոբ»: Խաչատրյանը ենթադրում է, որ այս բանաստեղծի նշանավոր նախ-նիներից մեկի անունն է, որով հայտնի է եղել տոհմը, մանավանդ որ «Տոզ և ոդրաններ ի վերայ Եղոկիա քաղաքին» երկում հեղինակն իր մասին գրում է. «Ի Բաղուկենց քո-սանցն էի»[3]:

Մատենադարանի № 2856 ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ Հակոբ Թոխաթցու հոր անունը եղել է Ալթուն, մորը՝ Աննա: 1595 թ. Հակոբ Թոխաթցին եղել է Լեհաստանի Զամոսցա քաղաքում, որտեղ էլ հենց Հովհաննես Կաֆացի եպիսկոպոսի պատվերով նույն թվականի նոյեմբերի 22-ին սկսել է ընդօրինակել հիշյալ № 2856 ձեռագիրը, որի հիշատակարանից անմիջապես հետո արտագրել է «Ոդր ի վերայ Օլա-խաց երկրին» երկի մի քերի օրինակը, որի մեջ մանրամասն տեղեկություններ է տվել այդ ժամանակ Օլախաց երկրում (Մոլդավիայում) օր ու օր տեղի ունեցած դեպքերի մասին: Այստեղից Պ. Խաչատրյանը ենթադրում է, թե «մինչև Զամոսցա քաղաքում հաստատվելը նա, գուցե մի երկու տարով, հանգրվանել է Օլախաց երկրում, հավա-նաբար Յաշ քաղաքում»[4], որն, ի դեպ, եղել է Հովհաննես Կաֆացի եպիսկոպոսի նստավայրը:

1602 թ. Հակոբ Թոխաթցին, որպես Զամոսցայի բահանա, ընդունել և տնօրինել է Թոխաթից և ջալալիների ասպատակած այլ վայրերից գաղթած հայերին:

ԺԶ դարի վերջերին և Ժէ դարի առաջին տասնամյակներին Հակոբ Թոխաթցին ընդօրինակել է Երուսաղեմի № 850, Մատենադարանի №№ 2658 և 10050 ձեռագրերը ու Հալեպի և Անթիլիասի № 47 ձեռագրում լուսինեներից իր իսկ թարգմանած «Պատմու-թիւն հօրն իմաստասիրացն» երկը[5]: Նրա վերջին ձեռագիրը 1638 թ. Զամոսցայում ընդօրինակված մի Մաշտոց է, որի հիշատակարանում նա դանդաղում է ծերու-թյունից[6]:

---

1 Տե՛ս Պողարյան. Մայր ցուցակ, հտ. Զ, էջ 271:
2 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 7, էջ 101—118:
3 Տե՛ս Պ. Խաչատրյան. ՀՄՊՈ, էջ 106:
4 Նույն տեղում, էջ 102—103:
5 Տե՛ս Սուքիասյան. Մայր ցուցակ Հալեպի, հտ. Բ, էջ 143:
6 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1963 № 7, էջ 106:

Պ. Խաչատրյանը կարծում է, որ Հակոբ Թոխաթցին պիտի վախճանված լինի «ոչ ուշ, քան 1664 թվականը»[1], որովհետև 1660-ական թվականների աղբյուրներում որպես կենդանի գործչի նրա մասին այլևս տեղեկություններ չկան։

Ն. Ակինյանը, հենվելով Վիեննայի 1678 թ. գրչության № 304 ձեռագրի «երգնալ Թոխաթցի Յակոբ իրիցուէ յիշել ազաչեմ» հիշատակագրության վրա, այն կարծիքն է հայտնել, թե Հակոբ Թոխաթցին 1678 թ. դեռևս կենդանի է եղել[2]։ Սակայն Հ. Տաշյանը[3], ապա նրան հետևելով նաև Պ. Խաչատրյանը[4] նկատել են, որ հիշատակագրությունը գրված է ուրիշի ձեռքով, հետևապես դրանով հնարավոր չէ հաստատել, թե դրա գրության ժամանակ Հակոբ Թոխաթցին դեռևս կենդանի է եղել։

ԽԱԶԱՏՈՒՐ ԹՈԽԱԹՑԻ

Խաչատուր Թոխաթցու «Պատմութիւն Վենետիկ քաղաքին»[5] երկի ամենամրոզչական օրինակի խորագրում կարդում ենք. «Թվին ՌԿԳ (1614) յունիս ԺԷ (17) ի վերայ ծովու և ի մէջ նաւի գրեցի»[6]։ Մեզ հավանական է թվում Ա. Ալպոյաճյանի ենթադրությունը, թե Խաչատուր Թոխաթցին պիտի ծնված լինի 1565—1570 թթ. և Հայրենի Թոխաթից հնացած 1602 թ., չալալիների կողմից Թոխաթի գրավումից ու ավերումից հետո[7]։ Վկայակոչելով Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրութիւնը», Ա. Ալպոյաճյանն իրավացիորեն ենթադրում է նաև, որ Հայրենիքից հեռանալով Խաչատուր Թոխաթցին «ինդրպինդը կր նետ մինչև Իտալիա և Վենետիկ»[8] և այնտեղ ենթարկվել է Վատիկանի կաթոլիկ հավատաքննիչների (ինկվիզիցիայի) հալածանքներին։ Գրիգոր Դարանաղցին նկարագրելով իր կրած հալածանքները ավելացնում է. «որպէս զԹոխաթցի Խաչատուր անուն երեց մի, որ զնոսա չար աղանդն ոչ ընդունելոյ սակս ի գուբ էին արկեր բազում ժամանակս, որ չետոյ հազիւ էր ազատէր, որ ի ընութենէ ծննդական շնորհ ունելով, ի մէջ գրին գիրք մի ոտանաւոր էր ասել ու գրել ի վերայ մեր դատանութեանց և իւր անձին կրիցն, որ վասն հաւատոց, որպէս մեք տեսաք դիներն չըստամբօք»[9]։

Բանասիրությամբ հայտնի է Գրիգոր Դարանաղցու ապրած ժամանակը (1576—1643)։ Այստեղից կարող ենք ենթադրել, որ նրա նկարագրած դեպքերը տեղի են ունեցել ԺԶ դարի 90-ական թվականներից մինչև ԺԷ դարասկիզբը, երբ Հռոմի Գրիգոր 13-րդ պապն իրոք ուժեղացրել էր հավատաքննությունը։

Դժվարությամբ ազատվելով հավատաքննիչներից, Խաչատուր Թոխաթցին անցնում է Կ. Պոլիս, որտեղից, ըստ Ա. Ալպոյաճյանի՝ վերադառնում է Հայրենի Թոխաթ ու այնտեղ շարունակում իր քահանայությունը[10]։

---

1 Նույն տեղում։

2 Տե՛ս ՀՊՏ, էջ 148։

3 Տե՛ս Տաշյան, Յուցակ, էջ 732։

4 Տե՛ս «Տեղեկագիր», էջ 105։

5 Քննական բնագիրը հրատարակել է Կ. Մելիք-Օհանջանյանը (տե՛ս «Պատմութիւն Փարէզի և Վիեննայի և Պատմութիւն Վենետիկ քաղաքին», Երևան, 1966, էջ 245—286։

6 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 1636, թերթ 169ա։

7 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, էջ 1552։

8 Նույն տեղում։

9 Տե՛ս Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 382։

10 Տե՛ս «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց», էջ 1553։

Թև երբ է մեռել Խաչատուր Թոխաթցին, Հայտնի չէ։

«Պատմութիւն Վենետիկ քաղաքին» երկի առաջին երկու հրատարակիչները՝ Ղ. Ալիշանն ու Ա. Զոպանյանը, ձեռքի տակ ունենալով Վենետիկում պահվող մի «Ոսկեփորիկ», որտեղ երկի խորագրում «Եվդոկացի» բառի փոխարեն, գրչական սխալի հետևանքով, գրված է եղել «Եթովպացի» («Ի Խաչատուր երիցուէ Եթովպացւոյ»)[1], որան կոչել են Խաչատուր Եթովպացի[2]։ Նրանց հետևելով այդպես են կոչել նաև Լևոն[3] և Հ. Աճառյանը[4]։ Այս սխալն ուղղում է Կ. Մելիք-Օհանջանյանը՝ նկատելով, որ իր ճանապարհորդությունը նկարագրելիս Խաչատուր Թոխաթցին մի քանի անգամ շեշտում է, թե իր երկիրը «Թուրքաց երկիրն է», իսկ մի տեղ պարզապես գրում.

Եւ ես բարով հասնիմ ի տեղս,
Թոխաթ քաղաք հերիք ինձի...[5]

Մեր կողմից ավելացնենք նաև, որ Մատենադարանի ՆՆ 1636 և 5495 և Երուսաղեմի № 526 ձեռագրերի օրինակներում երկի հեղինակը կոչվում է Եվդոկացի, իսկ Մատենադարանի № 4618 ձեռագրի օրինակում՝ Թոխաթցի։

Բանասիրության մեջ կարծիք է հայտնվել, թե Խաչատուր Թոխաթցին «Պատմութիւն Փարէզի և Վէննայի» սիրավեպի Թարգմանիչ-փոխադրող, Հայտնի տպագրիչ Հովհաննես Տերվնցու որդին է[6]։ Կ. Մելիք-Օհանջանյանն ամեն կերպ աշխատում է ապացուցել այս տեսակետի Հիմունքյունը։ Նա որպես փաստարկներ բերում է Տերվնցու որդու և «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» երկի հեղինակի անունների նույնությունն ու այն, որ համընկնում են սրանց ապրած ժամանակները։ Այստեղից նա հանում է այն եզրահանգումը, թե Տերվնցու որդին է, որ հալածանքներից խուսափելով 1587 թվականից հետո փախել է Թոխաթ և այնտեղ ձեռնադրվել քահանա, և իբր Հովհաննես Տերվնցին էլ 1587 թվականից հետո որդու անունն այլևս չի հիշատակում, որպեսզի հավատաքննիչներին ցույց տա, թե հավատափոխ լինելուց հետո ինքը կապերը խզել է լուսավորչականությանը հավատարիմ մնացած որդուց[7]։

Մեզ թվում է, որ այս կռվաններն չեն ապացուցում Հովհաննես Տերվնցու որդու և Խաչատուր Թոխաթցու նույնությունը։ Նախ չի բացառվում, որ միևնույն ժամանակ կարող են ապրած լինել նույն անունն ունեցող երկու մարդ, երկրորդ՝ այդ ժամանակներում հավատաքննական հալածանքների են ենթարկվել ոչ միայն այդ երկուսը, այլև եվրոպա անցած գրեթե բոլոր հայ կրոնավորները, ճանապարհորդները, նույնիսկ վաճառականները։ Այս կարծիքը ժխտելու համար ուրիշ, ավելի զորավոր փաստարկներ էլ կան։ Օրինակ, հենց ինքը՝ Կ. Մելիք-Օհանջանյանն է հավաստում, թե «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» երկի հեղինակը բնիկ Թոխաթցի է, մինչդեռ, եթե հիշատակարանը Տերվնցու որդու և Խաչատուր Թոխաթցու նույնության վարկածը, ապա դուրս կգա, որ Թոխաթում նա եկվոր է, եկել է եվրոպացից և ձեռնադրվել քահանա։ Այնուհետև՝ «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» երկից դատվում է, որ հեղինակն առաջին անգամն է հայտնվել եվրոպայում (Վենետիկում) և զարմացած ու հիացած է նկարա-

---

1 Նույն գրչական սխալը կա նաև Մատենադարանի № 6451 ձեռագրում։
2 Տե՛ս «Բազմավէպ», 1847, էջ 172 և «Անահիտ», 1903, № 2—3, էջ 31։
3 Տե՛ս Լեո. Հայոց պատմություն, հտ. Գ, Երևան, 1946, էջ 412—414։
4 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 488
5 Տե՛ս «Պատմութիւն Փարէզի և Վէննայի...», էջ 229—230։
6 Տե՛ս Սարգիսյան. Մայր ցուցակ, հտ. Ա, էջ 943։
7 Մանրամասն տե՛ս «Պատմութիւն Փարէզի և Վէննայի...», էջ 241—242։

գրում տեսածը, մի բան, որ հավանական չէ մանկուի եվրոպայում ապրած Խաչատուր Տերոնցու համար: Երկից զգացվում է նաև, որ հեղինակը չի եղել եվրոպայի շատ ու շատ վայրերում, այդ թվում նաև Մարսելում[1], մինչդեռ Կ. Մելիք-Օհանջանյանն իսկ վկայում է, որ 1587 թ. կեսերից հետո Հովհաննես Տերոնցու որպի Խաչատուրը հոր հետ անցել է վենետիկ, իսկ այնտեղից Մարսել («Մարշիլիա»)[2]: Հենց միայն այս փաստը բավական է համոզվելու համար, որ Խաչատուր Թոխաթցին և Հովհաննես Տերոնցու որդի Խաչատուրը տարբեր անձնավորություններ են:

Խաչատուր Թոխաթցու կյանքի մասին ուրիշ տեղեկություններ չունենք: Հնարավոր է, թե որոշ բան կարող էր հայտնի դառնալ, եթե գտնվեր այն երկը, որը, Գրիգոր Դարանաղեցու վկայությամբ, Խաչատուր Թոխաթցին գրել է «ի մէջ գրին», այսինքն բանտում, որն ըստ Կ. Մելիք-Օհանջանյանի «հավանորեն բովանդակել է լուսավորչական դավանության գովքը և իր կրած տանջանքների ու կտտանքների նկարագրությունը»[3]:

---

1 Դա երևում է երկի հետևյալ հատվածից, որտեղ ընկերները հեղինակին հորդորում են.

Արի՛ գնա՛ Ըսպանիա
Տե՛ս բզճամփուն մեծ քաղաքին՝
Անապօլի, Ալիկուռնա,
Ֆլորենցա, Կրռանտուբա,
Միխինէ և Փալմերմէ,
Մարշիլիա Ֆրռանցիսին,
Ձինէվա—մարճանին տեղն է:
Գեղն է նման Վենետիկի: (Տե՛ս «Պատմութիւն Փարիզի և Վիննա-յէ...», էջ 285):

2 Նույն տեղում, էջ 22:

3 Նույն տեղում, էջ 241:

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ազար (պրս.)—վիշտ, ցավ, նեղություն, հիվանդություն
Ազոխ — խակ խաղող, պտուղ
Աթլազ (արաբ.)—ատլաս, կերպաս, բեհեզ
Ամնիկ—արժանի
Ալամ (արաբ.)—աշխարհ, երկիր
Ալէմ—տե՛ս ալամ
Ակար (պրս.)—թե, եթե
Աղապեկ (թրք.) — մեծազոր, պարոն, իշխան
Աճալ (արաբ.)—մահ
Աճամ (արաբ.)—ո՛չ արաբ, ընդհանրապես՝ պարսիկ
Աճապ (արաբ.) — զարմանք, արդյո՞ք, մի՞թե, տարօրինակ
Աճէպ—տե՛ս աճապ
Աճիգել (արաբ.)—խեղճանալ, տկարանալ, թուլանալ
Ամբ—տե՛ս ամպ
Ամպ—չափ, կարգ, կանոն
Այան (արաբ.) — հայտնի, բացահայտ, հռչակ
Այիբ—տե՛ս այիպ
Այիպ (արաբ.)—թերություն, պակասություն, ամոթ
Այլի — տե՛ս այլվի
Այլվի—այլևս, զարձյալ, կրկին, էլի, ուրիշ
Անճայ (թրք.)—հազիվ
Աշար-մաշար (թրք.) — ոտնակոխ, ասպատակ, քարուքանդ
Աշկարա—տե՛ս աշքարա
Աշքարա (պրս.)—պարզ, հայտնի, բացահայտ
Ապըռճան—ապարանջան
Ապտէստ (պրս.) — ձեռնալվա, մահմեդականների օրինական լվացումը, փոխաբերաբար՝ կարճ ժամանակամիջոց
Ապրիշում (պրս.)—արբեշում, մետաքս
Առեղ—սայլի զույգ ձողերը
Առմաշ (մոլդ.)—վարչական և դատական ֆունկցիաներ ունեցող պաշտոնյա միջնադարյան Մոլդավիայում
Առնաւուտ — ալբանացի, հագթանդամ, վիթխարի, որկրամոլ
Ավն (արաբ.)—օգնական, պաշտպան
Ատապ (արաբ.)—բարք, վարք, քաղաքավարություն
Ատէթ (արաբ.) — ագաթ, սովորույթ, ավանդույթ
Արմաղան (պրս.)—նվեր, ընծա, չրքնաղագեղ
Աւալ (արաբ)—սկիզբ, նախկին

Բ

Բաղր (արաբ.)—լիալուսին
Բաճ—տե՛ս բաշ
Բայրամ (պրս.)—տոն, զատիկ
Բաջ (պրս.)—բաժ, մաքս, տուրք
Բարեբար (պրս.)—հավասար
Բեռնակ—կապոց, փոքր բեռ
Բէգահ—տե՛ս գահ բէ գահ
Բուլք—բույլք, գնդեր, խմբեր
Բուխտան (արաբ.)—դրպարտություն, չարախոսություն

Բամպօս (հուն.)—առաջնորդ, ուղեցույց, ուղևիցող

Բօրանի—տե՛ս պօրանի

Գ

Գազրէլ—գազպին, գազի մեղր, անուշահամ և թաղցրահամ խեժ

Գահ բէ գահ (պրս.)—երբեմն, ժամանակ առ ժամանակ

Գէմ—իրոք, արդարև, չէ՞ որ

Գիւզալ—տե՛ս կիւզել

Գիւլխտան (պրս.)—վարդաստան, ծաղկանոց, պարտեզ

Գռալ—գռգռալ, որոտալ, գոռգոռալ

Գրգմել—ծերութիւնից կծկվել, կարկամել

Գրմզի—տե՛ս ղրմզի

Գուլ (պրս.)—վարդ

Գօթի—գոդի, բորոտ, անգամալույծ, չնչին, անպիտան, ծույլ

Դ

Դամար—տե՛ս տամար

Դանշման (պրս.)—գիտուն, իմաստուն

Դաստուր (պրս.)—կարգադրութիւն, թուլտվութիւն, արտոնում, ցուցմունք, հրաման

Դարդ (պրս.)—դարդ, վիշտ, ցավ

Դարպաս (պրս.)—մեծ դուռ, ապարանք, պալատ

Դաւի (արաբ.)—կռիվ, վեճ, պահանջ

Դաֆթար (արաբ.)—տետր, գիրք, մատյան

Դենկան (պրս.)—դահեկան, ոսկեդրամ

Դեղձան—բաց դեղնագույն, խարտյաշ

Դեղել—թունավորել

Դէստամալ (պրս.)—թաշկինակ

Դէրդ—տե՛ս դարդ

Դէրման (պրս.)—դարման, դեղ, սպեղանի

Դէրտ—տե՛ս դարդ

Դըստամալ—տե՛ս դէստամալ

Դիլբար (պրս.)—գեղեցկուհի, սիրուհի

Դիհ—կոզմ

Դիւանայ (պրս.)—դիվահար, խելագար, սիրահար

Դիֆտար—տե՛ս դաֆթար

Դուզնաքեայ—սակավ, քիչ

Ե

Եալան (թրք.)—սուտ, խաբեութիւն

Եախնի (պրս.)—մսով և բանջարեղենով կերակուր

Եաղի (արաբ.)—ապստամբ, օրինազանց, ճշնամի

Եաղմա (պրս.)—թալան, ավար, հափրշտակում

Եաղուի (արաբ.)—հակինթ

Եաշմ (պրս.)—հակինթ, հասպիս, հրդկված, փայլեցված

Եարախ (թրք.)—գննր, ղրահ, հանդերձանք

Երակ—երագ, արագ, հաճախ

Երիկ—էրիկ, տղամարդ, ամուսին

Ջ

Ջալում (արաբ.)—բռնավոր, դաժան

Ջահր (պրս.)—թույն, դառնութիւն

Ջամպախ (արաբ.)—շուշան

Ջանճիր (պրս.)—շղթա, կապանք

Ջար (պրս.)—վիշտ, հեծեծանք, արհամարհանք

Ջարար (արաբ.)—վնաս

Ջարբուղա (թրք.)—ոսկեգուլ

Ջարընճի (ղ+արինճ+ի)—արինճի գույն, կապույտ, կապտագույն

Ջարտա (պրս.)—ստեպղին

Ջէնահար (պրս.)—զինահար, զենահար, աղե՛, ողորմիր, խնայիր

Ջէնճիլ—տե՛ս զանճիր

Ջէրայ (պրս.)—որովհետև

Ջէրլ—տե՛ս զէրայ

Ջէրտ—տե՛ս զարտա

Ջընջիլ—տե՛ս զանճիր

Ջիհան (պրս.)—վնաս

Ջինճիֆիր (արաբ.)—խրուկ, կինաբարիս, անորոշ տեսակի բանջար

Ջիրվա (պրս. գիրա, գիրէ)—քիմիոն, չաման

Ջմառ—զմառս, անուշահոտ ծխելիք՝ խնկի ու կնդրուկի նման

Ջմբուխ (արաբ.)—զմրուխտ

Զովա—տե՛ս գիրվա
Զրվա—տե՛ս գիրվա

Է

Էլ (թրք.)—օտար, ժողովուրդ, հասարակություն
Էշրաթ (արաբ.)—հաճույք, վայելք, ուրախություն
Էվէլտէն (թրք.)—սկզբից, ի բնե, ի սկզբանե անտի

Ը

Ըռանգի (պրս.)—գույնի
Ըռզակ (արաբ.)—պարեն
Ըռինգ (արաբ.)—հարինգ, ծովային տառեխ
Ըսկէնճա—տե՛ս սկէնճա

Թ

Թաբդիր (արաբ.)—խորհուրդ, կարգադրություն, պատրաստություն
Թաթու (պրս.)—առատամաղ բաշով ձի, բեռնակիր ձի
Թաճ (արաբ.)—թագ
Թապլտել—թավալվել, շուռ ու մուռ գալ
Թարաշ (պրս.)—ավար, կողոպուտ
Թարխան (պրս.)—իշխան, պետ
Թարխանա (պրս.)—մի տեսակ չորթան, որով ապուր են պատրաստում
Թարկ (արաբ.)—թողում, լքում, հրաժարում
Թափսի (թրք.)—տեփուր, փայտե ափսե, խան, սեղան
Թափտիր—տե՛ս թաբդիր
Թաքեա (արաբ.)—բարձ, հենվել, հույս դնել
Թեզճե (թրք.)—խսկույն, անհապաղ, շուտով
Թէվրատ (արաբ.)—հրեաների սուրբ գիրքը, Հինգ գիրք Մովսիսի
Թմնել (արաբ.)—կատարել, ավարտել, վերջանալ
Թոբ (պրս.)—թնդանոթ
Թուման (պրս.)—պարսկական գրամական միավոր
Թուշ—ուղիղ, ճիշտ։ Թուշ լինել—հանդիպել, պատահել
Թուրվանտա (պրս.)—երախայրիք, նուբար
Թուփ—տերև
Թվանք—տե՛ս թֆանք
Թֆանք (պրս.)—հրացան
Թօբա (արաբ.)—հրաժարում՝ մեղք, հանցանք գործելուց, վատ սովորություններից

Ի

Իլահի (արաբ.)—աստվածային, օրհնություն
Իմամ (արաբ.)—մահմեդական ժողովրդապետ
Ինսաֆ (արաբ.)—խիղճ, գութ
Ինքար (արաբ.)—ուրացում, հերքում

Լ

Լազմ (թրք.)—լազում, ական, փորվածք
Լաճուարդ (պրս.)—լաջվարդ, գոճազմ
Լայեխ (արաբ.)—արժան, արժանի, վայել
Լաշկար (պրս.)—զորք, բանակ
Լեվանտ (պրս.)—թափառաշրջիկ, սրիկա, աներկյուղ, քաջ, գինվոր
Լովաս (հուն.)—լովիաս, լոբի, ալրափոշի
Լութվ (արաբ.)—շնորհ, մարդասիրություն
Լուկ—լոկ, միայն, հագիվ
Լօզմա (արաբ.)—պատառ

Խ

Խաբար (արաբ.)—լուր
Խալեաթ (արաբ.)—խալաթ, պարգև, նվեր
Խալսել (արաբ.)—վերջանալ, ավարտել, ազատվել

Խայալ—տե՛ս խիալ
Խապար—տե՛ս խաբար
Խառճայ (արաբ.)—հերետիկոս
Խաս (արաբ.)—հատուկ, մաքուր, զուտ
Խատուած (վրաց.)—նախշած, նկարեն, խատուտիկ
Խարաճ (արաբ.)—գլխահարկ
Խարանֆիլ—տե՛ս զարանֆիլ
Խզմաթ (արաբ.)—ծառայություն
Խզմաթքար (պրս.)—ծառայող, ծառա
Խէալ—տե՛ս խիալ
Խէլ (արաբ.)—շատ, բավական
Խիալ (արաբ.)—մտածմունք, երազանք, պատրանք
Խիալի (պրս.)—երևակայական
Խիզան (վրաց.)—ընտանիք, գերդաստան, մանր երեխաներ
Խինճ—դեմքի կնճիռ, խոժոռ հայացք, խեթ նայվածք
Խշրվներ—խշուր, խշրանք, բեկորներ
Խոնդքար (պրս.)—թագավոր, իշխան
Խոստել—ծակոցներով ցավել, տրոփալ և ցավել
Խորեատ (հուն.)—տմարդի
Խումար (պրս.)—գինարբ, անուշ հայացք
Խուպ (պրս.)—լավ, սիրուն
Խօճա (պրս.)—վաճառական, ուսուցիչ, տեր, տանուտեր
Խօնթքար—տե՛ս խոնդքար
Խօշ (պրս.)—քաղցր, հաճելի, ախորժելի, ուրախ

Կ

Կաղմար—կաղամար, թանաքաման
Կապան—մազերը կապելու երիզ, ժապավեն
Կասիա (հուն., լատ.)—կակժիրակենի, գափնիների մի տեսակ՝ անուշահոտ տերևներով
Կարկ—տե՛ս զարզ
Կրկզել—կսկծալ, ցավել (ատամների)
Կթխա (ասր.)—կթղա, բաժակ, գավաթ
Կիլպչա (թրք.)—մամլակ, ձեռնակապ
Կիւզել (թրք.)—գեղեցիկ, գեղեցկուհի
Կիւլ—տե՛ս գուլ
Կիւլիստան—տե՛ս գիւլիստան
Կովծուծ—հերձալեզու, կանաչ մողես
Կովս (պրս.)—աղեղ (տվյալ դեպքում՝ պայտ)
Կրմգի—տե՛ս գրմգի
Կուլ—տե՛ս գուլ
Կուլակ (պրս.)—գիսակ, մազ, գլխի զագաթի վրա բոլորաձև ածելված տեղ
Կուման (պրս.)—գուման, կարծիք, կասկած, տարակույս, հույս
Կումպէթ (պրս.)—գմբեթ, աշտարակ
Կուռկան (թրք.)—նշդաբենի, կնձնի
Կուփ—կոպ, թարթիչ
Կօվծուծ—տե՛ս կովծուծ

Հ

Հալալ (արաբ.)—արդար, օրինավոր, շնորհում
Հալաւ—շապիկ, հագուստ
Հալուէ (արաբ.)—հալվեի ծառի խեժ, խունկ
Համան (պրս.)—նույն
Համաւոր—համեստ, հեզ, հնազանդ
Համշիրակ (պրս.)—նույն մոր կաթով սնված
Հայիֆ (արբ.)—ափսոս
Հայտարի (արաբ.)—առյուծանման
Հաշարի (թրք.)—ստահակ, կայտառ, կրքոտ
Հասրաթ (արաբ.)—կարոտ
Հատրած (արաբ.)—պատրաստած
Հարամ (արաբ.)—պիղծ, անսուրբ, նզովյալ, ապօրինի
Հարամի (արաբ.)—ավազակ
Հարկ—պատիվ, հյուրասիրություն
Հաւա (արաբ.)—օդ, եղանակ, կլիմա
Հաւալայ (արաբ.)—փոխանցում, հանձնարարություն, երաշխավորագիր
Հաքիմ (արաբ.)—բժիշկ
Հէյրան (արաբ.)—զարմանք, հիացում, սիրահար
Հէքիմ—տե՛ս հաքիմ
Հիլլաթ (արաբ.)—պատճառ
Հիրիկ—թրաձև տերևներով բույս (իրիս)

Հնձգոն—տե՛ս հնցկուն
Հնցկուն—այնպիսի
Հոքմարար (արաբ.)—հրամայող
Հուքմ (արաբ.)—հրաման
Հօն—հոն, այնտեղ

Ղ

Ղաբու—տե՛ս ղաբուլ
Ղացալ—խոռիվ, խաշամ
Ղալա (արաբ.)—բերդ, ամրոց
Ղալամ (արաբ.)—գրիչ, վրձին
Ղալամ բաշ (պրս.)—գրչահատ
Ղալաս (արաբ.)—սխալ, վրիպակ
Ղալատել (արաբ.)—սխալվել, վրիպել
Ղալի (արաբ.)—խոհարար, մսով և բանջարեղենով պատրաստված կերակուր
Ղալիան (թրք.)—վահան
Ղալատ—տե՛ս ղալատել
Ղա[illegible] (արաբ.)—վիշտ, թախիծ
Ղամար (արաբ.)—լուսին
Ղա[illegible]ին (արաբ.)—բանսարկություն, [illegible]ուն
Ղայի (արաբ.)—համաձայնում, ընդունում
Ղայգ (թրք.)—հոգս, վիշտ, տառապանք, անձգություն
Ղապ (արաբ.)—ընդունում, համաձայնում
Ղապուրղա (թրք.)—կող, կողմ, կողոսկր
Ղապուրղա—տե՛ս Ղապուրղա
Ղավլ (արաբ.)—խոսք, բանտ, ուխտ, խոստում
Ղատ (արաբ.)—չափ, քանակություն
Ղատիա (արաբ.)—փալաս, լաթ, ապուխտ
Ղատրղա (թրք.)—ռազմանավ, կետ ձուկ
Ղարանֆիլ (արաբ.)—մեխակ
Ղարիբ (արաբ.)—պանդուխտ, օտարական
Ղարդ (արաբ.)—ընկղմվել, սուզվել, խեղդվել
Ղափուճի (թրք.)—դռնապան
Ղաֆէս (արաբ.)—վանդակ
Ղիամաթ (արաբ.)—վերջին դատաստանի օր, ազմուկ
Ղիմայ (պրս.)—մանրացրած միս
Ղորդ—ճիշտ, ճշմարիտ, ուղիղ
Ղրմզի (թրք.)—կարմիր
Ղումաշ (արաբ.)—կերպաս, կերպասեղեն
Ղումրի (արաբ.)—տատրակ
Ղույումճի (թրք.)—ոսկերիչ
Ղուպէտ (պրս.)—գմբեթ, աշտարակ
Ղուրպան (արաբ.)—մատաղ, զոհ
Ղօշա (թրք.)—զույգ, երկճյուղ

Ճ

Ճագա (արաբ.)—պատիժ, պատուհաս
Ճամփուհեր—ճանապարհորդ
Ճարահ (արաբ.)—վիրահատ, վիրաբուժ
Ճարտիկ—տե՛ս ճարտի քար
Ճարտի քար—կայծքար, ազվեսաքար
Ճարտու—տե՛ս ճարտի քար
Ճէվր (արաբ.)—անիրավություն, հարբստահարություն
Ճէֆայ (արաբ.)—չարչարանք, տանջանք, նեղություն
Ճուապ—տե՛ս ճուհապ
Ճիկեար (պրս.)—լյարդ, թոք
Ճիկերխուն (պրս.)—սրտաբեկ, վիրավոր
Ճինկանա (պրս.)—գնչու, կովարար, վայրահաչ
Ճկրով (կիբզիզ.)—գայրույթով
Ճոթ—կտոր, բաժին, մաս, կես
Ճոմիաթ (արաբ.)—ժողովուրդ, հասարակություն
Ճոր—ուժ, ստիպում
Ճուալ—ջվալ, մազե պարկ
Ճուապ (արաբ.)—պատասխան
Ճուղապ—տե՛ս ճուապ
Ճուրայ—տե՛ս ճուրէ
Ճուրէ (պրս.)—ձև, կերպ, տեսակ
Ճօհար (պրս.)—գոհար, մարգարիտ, ակն, էություն

Մ

Մագայ (պրս.)—ակռատ, աղանդեր, համ
Մաթեմատիկ (արաբ.)—ընդդիմախոս, պատվար
Մալ (արաբ.)—ապրանք, ինչք, հարստություն
Մալազ (արաբ.)—անչափահաս, անմրուս
Մախմուր (թրք.)—թավիշ
Մակար (պրս.)—բայց, եթե, թևրևս, գուցե, միթե
Մահալա (արաբ.)—թաղ, թաղամաս
Մահրում (արաբ.)—զուրկ, զրկված
Մաղդամա—արծաթե սկավառակ, որի վրա դրվում է հաղորդության նշխարը
Մաղրամայ (արաբ.)—պարտք, փոխառություն
Մաճալ (արաբ.)—ժամանակ
Մաճլուն (արաբ.)—խեղճ, վայրի
Մամլաքաթ (արաբ.)—երկիր, աշխարհ
Մանուշա (պրս.)—մանուշակ
Մասխարա (արաբ.)—ծաղր, ծաղրածու
Մաստան (պրս.)—խումար, հարբած
Մատաթ (արաբ.)—օգնություն
Մարուֆ (արաբ.)—հայտնի
Մեհմար (արաբ.)—ձարտարապետ
Մէհլ (արաբ.)—գլուխ եկող, կատարվող, կարելի
Մէճլիս (արաբ.)—ժողով, հավաք, խրնջույք
Մէճլուն—տե՛ս մաճլուն
Մէյտան (արաբ.)—հրապարակ
Մէնէվշէ—տե՛ս մանուշա
Մէստան—տե՛ս մաստան
Մէտէթ—տե՛ս մատաթ
Մէֆա—տե՛ս վաֆա
Միստան—տե՛ս մաստան
Միրվէթ (արաբ.)—գութ, բարեգործություն
Մշկամ (արաբ.)—սպեղանի
Մրճա—ծառի դալար ճյուղ, դալար, նոր
Մուխթասիպ (արաբ.)—քաղաքի չափ ու կշիռն ստուգող, ոգելից խմիչքներն ու խաղամոլությունն արգելող ոստիկանական պաշտոնյա
Մուհադիր (արաբ.)—շտապ, ազմկալից ապանություն
Մուշալի (արաբ.)—մոնդոլական, նշաձև
Մուղր (արաբ.)—հաստատուն, մաքուր, գուտ
Մունճ—մունջ, համր
Մուննաթ (արաբ.)—անտևդի հիշատակություն արած լավության մասին
Մուննէթ—տե՛ս մուննաթ
Մուշթուխա (թրք.)—աչքալուսանք, ավետիս
Մուշրապա (արաբ.)—խմիչքի աման, գավ
Մուշքի (պրս.)—մշքային, մշքահամ
Մուրատ (արաբ.)—երազանք, ցանկություն, բախտ
Մուրմաթ—տե՛ս միրվէթ
Մօհլաթ (արաբ.)—ժամանակ, ժամկետ, հնար, հնարավորություն
Մօրհել (պրս.)—կնքել
Մօտան—տե՛ս մէյտան

Յ

Յարէյար—միշտ, չարունակ
Յէրակ—տե՛ս երակ
Յիշողք—հայհոյանք
Յումնէլ—որևէ մեկից

Ն

Նալաթ (արաբ.)—անեծք
Նալլաթ—տե՛ս նալաթ
Նախշ (պրս.)—նախշ, զարդ, պատկեր
Նաղաշ (պրս.)—նկարիչ, նկարեն, գեղեցիկ
Նաչխ (թրք.)—նաչախ, տապար, կացին
Նասիպ (արաբ.)—բաժին, մաս, արժանի
Նաֆաղա (արաբ.)—բարիք, շարժում, ծնունդ
Նեկէհ (պրս.)—հանկարծակի, անսպասելի, անպատեհ
Նիկար (պրս.)—նկար, պատկեր, գեղեցկություն
Նիկեար—տե՛ս նիկար
Նիքահ (արաբ.)—ամուսնություն, ամուսնական պայմանագիր

Նոմոս (հուն.)—գիր, թուղթ, նամակ
Նսաֆ—տե՛ս ինսաֆ
Նօպաթ (պրս.)—նաբաթ, սառնաշաքար
Նօֆա—տե՛ս վաֆա

Շ

Շահվար (պրս.)—մեծ և ազնիվ մարգարիտ
Շահրաստան (պրս.)—մեծ և շեն քաղաք
Շաղաւաթ—օգուտ, վաստակ (չպետք է շփոթել արաբ. շաղաւաթի հետ, որ նշանակում է գաժանություն)
Շատլխ (թրք.)—ուրախություն, ցնծություն, քեֆ
Շար—շղարշ, մետաքսյա նուրբ գործվածք
Շարբաթ (արաբ.)—օշարակ
Շելլեց—տե՛ս շլինք
Շէմս (արաբ.)—արև, արեգակ
Շէրպաթ—տե՛ս Շարբաթ
Շիրին (պրս.)—քաղցր, համեղ, անուշ
Շլեց—տե՛ս շլինք
Շլինք—վիզ, պարանոց
Շլլից—տե՛ս շլինք
Շուքր (արաբ.)—փառք, գոհություն, շնորհակալ լինել

Ո

Ողորդ—տե՛ս ուղորդ
Ուլախ (պրս.)—էշ, գրաստ
Ուղորդ—ուղիղ, ճիշտ, կարգին
Ումէտ (արաբ.)—հույս
Ուշիկ—հուշիկ, հանդարտ, մեղմ

Չ

Չաթա (թրք.)—եղեգ
Չաթմա (թրք.)—կերպասե բարձ
Չախու (թրք.)—դանակ, գրչահատ
Չանկալստան (պրս.)—անտառ, մացառուտ, ծմակ
Չաշուտ (թրք.)—լրտես
Չաշտա, չեշտա—վեցլարանի երաժշտական գործիք
Չատր (պրս.)—վրան
Չարխ (պրս.)—անիվ, ճախարակ, բախտի անիվ, ճակատագիր
Չվան—պարան, թոկ

Պ

Պաղաստան (պրս.)—կտորեղենի վաճառանոց
Պաղրկան (պրս.)—վաճառական
Պահար (արաբ.)—համեմ
Պահր (արաբ.)—ծով
Պայրամ—տե՛ս բայրամ
Պատրնճ—պատրնճան, պատնջան, սրմբուկ
Պատր—տե՛ս բագր
Պարապար—տե՛ս բարեբար
Պարաքյաթ (արաբ.)—օրհնություն, լիություն
Պէթար (պրս.)—վատթար
Պէկուման (պրս.)—անգուման, անհույս, անտեղյակ
Պէնկի (պրս.)—թմրեցնող բույս, հաշիշ, արբշիռ
Պէնկլի (թրք.)—պիսակավոր, խալ ունեցող
Պէրէքաթ—տե՛ս պարաքյաթ
Պէքմէզ (թրք.)—մաթ, քաղցու, գոշար
Պէֆա—տե՛ս վաֆա
Պռկար (ռում.)—քաղաքային վարչության անդամ
Պռկունք—պռունկներ, շրթունքներ
Պուխտան—տե՛ս բուխտան
Պօլուկ (թրք.)—երամակ
Պօրանի (թրք.)—բազկաթերով, դդումով և այլ բանջարեղենով պատրաստված ճաշ
Պօրէկ (թրք.)—պանրով կամ մսով կարկանդակ

Ջ

Ջամբ (արաբ.)—կող, լանջ

Ռ

Ռակա (հուն.)—հիմար, տխմար
Ռահ (պրս.)—ճանապարհ
Ռամալ (արաբ.)—բախտագուշակ
Ռատ—տե՛ս ռատի
Ռատի (արաբ.) — ուրախություն, հաճույք, գոհունակություն
Ռէզէ (Մշո բարբառ)—կարգով շարիր
Ռովախել (արաբ.)— քամել, զտել, պարպել

Ս

Սազկար (պրս.)—միաբան, պատշաճ
Սալվար (պրս.)—գլխավոր, պետ, առաջնորդ, իշխան
Սալվի բովան (պրս.) — նոճու նման բարձրահասակ, գեղուղեշ
Սանայսիմա—տե՛ս սարիսիմա
Սանկախ (թրք.)—դրոշ, գավառ
Սանքի (թրք.)—որպես թե, իբրև թե, կարծիք, համարում
Սապղար (թաթ.)—կաղ, հաշմանդամ
Սառաֆ (արաբ.)—դրամափոխ, դրամագետ, հոգեբան
Սավտայի (արաբ.)—սիրահար, մելամաղձոտ
Սատաֆ (արաբ.)— գաղտակուր, մարգարտաբեր խեցեմորթու խեցին
Սարիսիմայ (պրս.)—ապուշ, ցնորված
Սարիսինայ—տե՛ս սարիսիմայ
Սարքար (պրս.)—պետ, վերակացու, հրամանատար
Սէլվի (պրս.)—նոճի
Սէհել (արաբ.)—տե՛ս սէյրան
Սէյրան (արաբ.)—ճեմել, զբոսնել
Սէնիաթքար (պրս.)—արհեստավոր
Սէտէֆ—տե՛ս սատաֆ
Սէրասէր (պրս.)—լրիվ, ոտից գլուխ, ծայրեծայր
Սէրթաճ (պրս.)—գլխի թագ, պարծանք
Սէրուն (պրս.)—նոճի, հովասուն վայր, ամառանոց
Սըլալ—սլալ, սևեռուն դիտել՝ հարձակվելու, որսալու համար
Սբռ (արաբ.)—գաղտնիք
Սբռանկի (պրս.)—եռագույն
Սիահ (պրս.)—սև
Սինօռ (հուն.)—սահման
Սկէնճա (պրս.)— տանջանք, խոշտանգում
Սմսար (արաբ.) — քարոզ, առետրի միջնորդ
Սնդուխջա (պրս.)—արկղիկ, փոքրիկ սնդուկ
Սողպաթ—տե՛ս սօհպաթ
Սոփ (թրք.)—ցեղ, տոհմ, ազգատոհմ
Սպրկիկ—կոկիկ, հարթ, մաքուր
Սունպուլ (պրս.)—հասկ, հակինթ
Սուչ (թրք.)—հանցանք, զանցանք, մեղք
Սուրաթ (արաբ.)—դեմք, կերպարանք
Սուրահի (պրս.)—գինու երկայնավիզ շիշ
Սօհպաթ (արաբ.)—դրույց, ասուլիս
Սօյ (թրք.)—տոհմ, ցեղ
Սօյով-սոփով (թրք.)—ցեղական լավ հատկանիշներով
Սօֆի (արաբ.)—բարեպաշտոն

Վ

Վազիր (արաբ.)—նախարար, մինիստր
Վատա (արաբ.)—պայման, պայմանաժամ
Վատէ—տե՛ս վատա
Վարամ (արաբ.)—հյուծախտ
Վարքար (պրս.) — պտղատու, առատ, առատաձեռն
Վաֆա (արաբ.)—հավատարմություն
Վէլք — դատարկություն, պարապություն, թափառում
Վիստեռ (լատ., ռում.)—գանձատուն
Վոյթ (գերմ.)—ավագ, համայնքի ընտրովի ղեկավար
Վօֆա—տե՛ս վաֆա

Տ

Տալղա (թրք.)—ալիք, կոհակ
Տամար (թրք.)—երակ, ջիղ
Տամպուռա (արաբ.)—փանդիռն, վին

Տաշխ—ստաշխ, կնդրուկի նման անուշահոտ նյութ
Տապարգա (պրս.)—սառնաշաքար
Տապչա (թրք.)—բազմոց
Տաստուր—տե՛ս դաստուր
Տավտէր—տե՛ս դաֆթար
Տատաշ—երկաթե սուր փշերով տանջանքի գործիք
Տաւի—տե՛ս դաւի
Տեֆիլ (արաբ.)—մանուկ
Տէրման—տե՛ս դէրման
Տէրտ—տե՛ս դարդ
Տիլբար—տե՛ս դիլբար
Տիլպէր—տե՛ս դիլբար
Տիւանայ—տե՛ս դիւանայ
Տիւլպէնտ—տե՛ս Տօլպանտ
Տկճիկ—փոքրիկ տիկ, տկճոր
Տոլվաթվոր (արաբ.)—հարուստ, մեծահարուստ
Տուլպանդ—տե՛ս Տօլպանտ
Տուղա (արաբ.)—ազոթք
Տուտի (պրս.)—թութակ
Տօլպանտ (պրս.)—մարմաշ, շղարշ, նուրբ գործվածք
Տօստում (պրս., թրք.)—բարեկամ, բարեկամս

Բ

Բահացեալ—ճանապարհ ընկած, ուղևորված
Բամեալ—գումարած, խմբված
Բաքովել—գորավոր, գորանալ
Բէհան (արաբ.)—սեհան, շահասպրամ

Փ

Փալկզտալ—փայլփլել
Փախիտ (արաբ.)—բախտավոր, մեծահարուստ
Փախլաւա (թրք.)—փախլավա, խմորեղեն
Փահլիվան (պրս.)—ըմբիշ, դյուցազն, գոտեմարտիկ
Փանաքի—նվաստ, չնչին, անարգ, թույլ, ազքատ

Փատշահ (պրս.)—արքա, թագավոր
Փարկալ (պրս.)—կարկին
Փեղամբար (պրս.)—մարգարե
Փէշաքար (պրս.)—արհեստավոր
Փիալա (պրս.)—գավաթ
Փշրուկ—կերակուրի տեսակ
Փուշտայ (պրս.)—թիկնամիս, սուկի
Փոչամ (պրս.)—գրոշ, գրոշակ, ցցունք

Ք

Քաղրէն—տե՛ս քարղէն
Քամ (պրս.)—քիչ, պակաս, սակավ
Քամախել—դատապարտել, այպանել
Քամհայն—քամհան, քամհար, հովասուն
Քանար (պրս.)—կողք, եզր, ծայր, սահման
Քանգար (պրս.)—կանկար, կանգառ, արտիճակ
Քանցելար (գերմ. աղավաղված)—կանցլեր, վարչապետ
Քապար (պրս.)—կապար, մի տեսակ բույս
Քարամ (արաբ.)—բարերարություն, առատաձեռնություն, շնորհ, հրաշք
Քարղէն—կավե խոր պնակ
Քավել—բացի, միայն թե, ոչ այլապես
Քաֆուր—տե՛ս քեաֆիր
Քեաֆիր (արաբ.)—անհավատ, աստծուն ուրացող
Քեուլիչանի—տե՛ս քուլիճանի
Քէշկէկ (պրս.)—հարիսա
Քուլիճանի (թրք.)—տաք մոխրի վրա թխած խմորեղեն
Քուֆթա (պրս.)—քուֆթա, կոլոլակ
Քուֆտա—տե՛ս քուֆթա

Օ

Օլքայ (թրք.)—երկիր, աշխարհ
Օկտար—օգտակար
Օմր (արաբ.)—կյանք
Օմրիկ (արաբ.)—կարճատև կյանք
Օտա (թրք.)—սենյակ, հյուրասենյակ, խուց
Օրթմա (թրք.)—ծածկ, ծածկված

Ֆ

Ֆաղիր (արաբ.)—խնդճ, աղքատ
Ֆանի (արաբ.)—սին, ունայն, դատարկ
Ֆէլ (արաբ.)—հնար, հնարանք, գավ, խորամանկություն, խարդավանք
Ֆինի—տե՛ս ֆանի
Ֆիդան (արաբ.)—անձնազոհ
Ֆիղան (պրս.)—ողր, կոժ, կակաո
Ֆռանկի—եվրոպական

Բառարանը կազմեց | Ո. ԵԳԱՆՅԱՆԸ

ՅԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ

1 № 33, ժողովածու, ժամանակ ԺԶ դ., գրիչ Հովհաննես, տեղ անհայտ։
2 № 41, ժողովածու, ժամանակ Ժէ, ԺԸ դդ. (1743-ից առաջ), գրիչ անհայտ, տեղ անհայտ։
3 № 84, ժողովածու, ժամանակ 1614 թ. գրիչ Զաքարիա Երզնկացի, տեղ անհայտ։
4 № 423, գանձարան, ժամանակ 1742 թ., գրիչ Աստվածատուր, տեղ Կեսարիա։
5 № 424, գանձարան, ժամանակ Ժէ դ. (1693-ից առաջ), գրիչ, ծագիրդ Նիկողայոս, տեղ Կաֆա։
6 № 597, ժողովածու, ժամանակ 1737 թ., գրիչ Մկրտիչ Նախշվանցի, տեղ Մուշ։
7 № 610, ժողովածու, ժամանակ ԺԴ դ., 1560, Ժէ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։
8 № 695, ժողովածու, ժամանակ 1664 թ., գրիչ, ստացող Եփրեմ Տաթևացի, տեղ Զեյթուն։
9 № 697, ժողովածու, ժամանակ 1631 թ., գրիչ Ակոբյա Սոչովցի, Վարդան արեղա, տեղ Սեչով (Սուչավա)։
10 № 706, ժողովածու, ժամանակ Ժէ դ. (1609-ից առաջ), 1680 թ. գրիչ Կապար պաիր (Բ), տեղ անհայտ։
11 № 740, ժողովածու, ժամանակ 1696 թ., գրիչ Կիրակոս պաիր. տեղ Հռոմ։
12 № 833, ժողովածու, ժամանակ 1688 թ., գրիչ Իգնատիոս քահանա, տեղ Կևոր։
13 № 1046, մաշտոց, ժամանակ ԺԵ, Ժէ դդ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։
14 № 1290, Դրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, ժամանակ 1752—1753 թթ., գրիչ Հարություն, տեղ Խարատու (Ղրիմ)։
15 № 1428, ժողովածու, ժամանակ 1642 թ., գրիչ Հակոբ, տեղ անհայտ։
16 № 1636, տաղարան, ժամանակ ԺՐ դ. (1758-ից առաջ), գրիչ անհայտ, տեղ անհայտ։
17 № 1637, տաղարան, ժամանակ Ժէ դ. (1695-ից առաջ), գրիչ Ավետիս, տեղ անհայտ։
18 № 1639, տաղարան, ժամանակ Ժէ դ. (1650-ից առաջ), գրիչ Ալեքսիանոս, Ավետիս, տեղ անհայտ։
19 № 1661, ժողովածու, ժամանակ 1594 թ., գրիչ Պետրոս արեղա, տեղ Թոխաթ։
20 № 1682, ժողովածու, ժամանակ Ժէ դ., գրիչ Փանոս, տեղ անհայտ։
21 № 1887, ժողովածու, ժամանակ Ժէ դ., գրիչ, ստացող Նազարէթ Ամիրասաթենց, տեղ անհայտ։
22 № 1989, տաղարան, ժամանակ 1647 թ., գրիչ Մարգար պաիր, տեղ Նոր Ջուղա։
23 № 1990, տաղարան, ժամանակ 1808 թ., գրիչ Մկրտիչ, տեղ Բայազիդ։
24 № 2004, ժողովածու, ժամանակ 1623 թ., գրիչ Մկրտիչ, տեղ անհայտ։
25 № 2079, ժողովածու, ժամանակ Ժէ դ., (շուրջ 1622 թ.), գրիչ Հովհաննես Մոկացի, տեղ Լիմ։
26 № 2093, Հակոբ Թոխաթցի, Սաղմոսարան տաղաչափեալ, տաղր, ժամանակ 1808 թ., գրիչ Նահապետ Կեսարացի, տեղ Կ. Պոլիս։

27 № 2127, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ Աբրահամ, Հովասափ, տեղ անհայտ։
28 № 2236, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ, ստացող տեր Աբրահամ, տեղ անհայտ։
29 № 2248, ժողովածու, ժամանակ 1695, 1739 թթ., գրիչ Աստվածատուր Երեց (Ա), Մելքոն (Բ), տեղ անհայտ։
30 № 2339, ժողովածու, ժամանակ ԺԸ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։
31 № 2361, ժողովածու, ժամանակ ԺԷ դ. (1679-ից հետո), գրիչ ստացող Հակոբ արեղա, տեղ անհայտ։
32 № 2379, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ Սարգիս, տեղ անհայտ։
33 № 2394, տաղարան, ժամանակ ԺԷ դ., (1670-ից հետո), գրիչ անհայտ, տեղ անհայտ։
34 № 2436, տաղարան, ժամանակ 1755 թ., գրիչ Մակար, տեղ Արզրում։
35 № 2459, ժողովածու, ժամանակ ԺԷ դ. (1659-ից առաջ), գրիչ Գրիգոր Հոռմկլայեցի, Աստվածատուր սարկավագ, տեղ անհայտ։
36 № 2566, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ Կիրակոս, Պետրոս, տեղ անհայտ։
37 № 2672, գանձարան, ժամանակ 1607 թ., գրիչ Ստեփանոս Թոխաթցի, տեղ Կաֆա։
38 № 2676, Կանոնգիրք հայոց, ժամանակ ԺԶ դ., գրիչ Աստվածատուր Երեց, տեղ անհայտ։
39 № 2736, գանձարան, ժամանակ 1621 թ., գրիչ Զաքարիա—Ճանգեմիր, տեղ Կաֆա։
40 № 2856, ժողովածու, ժամանակ 1595 թ., գրիչ, ծագկող, կազմող Հակոբ գպիր, տեղ Ջամոսցա։
41 № 2934, Պողոս Անվոր. Հրահանգ քրիստոնէի, ժամանակ 1848 թ., գրիչ Գրիգոր Տեր-Գեորգյան, տեղ Վաղարշապատ։
42 № 2939, ժողովածու, ժամանակ 1779—1799 թթ., գրիչ, ստացող Մարտիրոս Ավետիքով Կաֆացի, տեղ Բռուսատց գյուղ Նովիտա, Նոր Նախիջևան, Նորաշեն։
43 № 3081, ժողովածու, ժամանակ 1617 թ., գրիչ Զաքարիա Երզնկացի, տեղ Կաֆա։
44 № 3189, ժողովածու, ժամանակ 1627—1631 թթ., գրիչ Ղուկաս արեղա, Մարտիրոս, տեղ Եղրդուտի ս. Հովհաննու Մկրտչի վանք։
45 № 3228, տաղարան, ժամանակ ԺԹ դ. (1804-ից հետո), գրիչ անհայտ, տեղ անհայտ։
46 № 3386, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ Աստվածատուր Ջուղայեցի, տեղ անհայտ։
47 № 3411, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։
48 № 3417, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։
49 № 3422, ժողովածու, ժամանակ 1668 թ., գրիչ Ղուկաս քահանա, Մելքոն Երեց, տեղ անհայտ։
50 № 3425, ժողովածու, ժամանակ 1596 թ., ԺԷ դ., գրիչ Հովասափ Սեբաստացի, տեղ Սեբաստիա՞։
51 № 3483, ժողովածու, ժամանակ ԺԹ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։
52 № 3504, ժողովածու, ժամանակ 1676, 1692 թթ., գրիչ Վարդան Եպիսկոպոս, Ստեփանոս (Ա), Հովհաննես (Բ), տեղ Կաֆա։
53 № 3595, տաղարան, ժամանակ ԺԵ դ., գրիչ Հովսեփ, տեղ անհայտ։
54 № 3669, ժողովածու, ժամանակ ԺԷ դ. (1668-ից առաջ), գրիչ Ապարիա, Հովհաննես Ջուղայեցի, տեղ անհայտ։
55 № 3751, Հայ աշուղներ և երգիչներ, ժամանակ ԺԹ դ., գրիչ և բանահավաք Գեորգ Հախվերդյան, տեղ Տփխիս։
56 № 3860, ժողովածու, ժամանակ ԺԸ դ., գրիչ Գրիգոր Կարապետյան, տեղ Կ. Պոլիս։

57 № 3869, ժողովածու, ժամանակ ԺԲ դ. (1863-ից առաջ), գրիչ անհայտ, տեղ անհայտ։

58 № 4256, տաղարան, ժամանակ 1845 թ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։

59 № 4287, ժողովածու, ժամանակ 1640 թ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։

60 № 4290, ժողովածու, ժամանակ 1571 թ., գրիչ Մկրտիչ Ագուլեցի, տեղ անհայտ։

61 № 4296, ժողովածու, ժամանակ ԺԲ դ. (1842 թ.), գրիչ անհայտ, տեղ անհայտ։

62 № 4328, ժողովածու, ժամանակ 1737 թ. գրիչ Ալեքսան (Վանեցի), անանուն, տեղ անհայտ։

63 № 4335, ժողովածու, ժամանակ ԺԲ դ. (1816-ից հետո), գրիչ Աստիանոս Ջուղայեցի, տեղ էջմիածին։

64 № 4370, ժողովածու, ժամանակ ԺՉ դ., գրիչ Սիմեոն, Հովհաննես, անանուն, տեղ անհայտ։

65 № 4426, Նաղաշ Հովնաթան, Տաղարան, ժամանակ 1765 թ., գրիչ, սաացող Հայրապետ տիրացու, տեղ անհայտ։

66 № 4636, մաշտոց, ժամանակ 1585 թ., գրիչ Աբրահամ երեց, տեղ Սարուխանի գավառի ս. Փրկիչ եկեղեցի։

67 № 4996, ավետարան, ժամանակ ԺՉ դ., գրիչ Թումաս, տեղ անհայտ։

68 № 5128, ժողովածու, ժամանակ ԺԷ դ. (1627-ից առաջ), 1635 թ., գրիչ Ներսես Մակաղի (Ա), Մովսես, տեղ Լիմ։

69 № 5306, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։

70 № 5434, գանձարան, ժամանակ 1576 թ., գրիչ Հակոբ սարկավագ, Հովհաննես արեզա, տեղ Գաւաման։

71 № 5623, տաղարան, ժամանակ 1649, 1652, 1653 թթ., գրիչ Հովհաննես Ամանցի, տեղ անհայտ։

72 № 5668, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ Միրզա սարկավագ, տեղ անհայտ։

73 № 5672, մաշտոց ձեռաց. ժամանակ 1683 թ., գրիչ Աստվածատուր երեց, տեղ անհայտ։

74 № 5785, գանձարան. ժամանակ 1483 թ., գրիչ Կարապետ Բաղիշեցի, տեղ Գոմաց վանք (Բաղեշ)։

75 № 5934, տաղարան, ժամանակ ԺԸ դ. 1793 թ.), գրիչ Միրզահան տիրացու, տեղ անհայտ։

76 № 5941, ժողովածու, ժամանակ 1705 թ., գրիչ Աստվածատուր մահտեսի, տեղ անհայտ։

77 № 5954, ժողովածու, ժամանակ ԺԸ դ. (1780—1799 թթ. միջև), գրիչ անհայտ, տեղ Աստրխա՞ն։

78 № 6097, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։

79 № 6179, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ ս. Քառասունից վանք (Գավառ)։

80 № 6440, տաղարան, ժամանակ ԺԲ դ., (1809—1830-ի միջև), գրիչ, ծագկող Հովհաննես սարկավագ, տեղ անհայտ։

81 № 6488, ժողովածու, ժամանակ ԺԲ դ. (1823-ից առաջ), գրիչ Սիմեոն Բդնունեաց (մասամբ), տեղ Նոր Նախիջևան, Կախեթ։

82 № 6514, ժողովածու, ժամանակ 1830, 1836—1867 թթ., գրիչ Խաչերես (Ա), Պետրոս Շահինով Գրիգորյանց (Բ), տեղ Ջալալօղլի։

83 № 6517, ժողովածու, ժամանակ ԺԸ դ., 1842, գրիչ անհայտ, տեղ Հաւրճ։

84 № 6985, ժողովածու, ժամանակ 1684 թ., գրիչ անհայտ, տեղ անհայտ։

85 № 7014, ժողովածու, ժամանակ ԺԷ դ. (1652-ից առաջ), 1652 թ., գրիչ, ստացող Ավագ աբեղա (Բ), տեղ Երուսաղեմ:

86 № 7020, ժողովածու, ժամանակ 1796—1808 թթ., գրիչ տեր Մինաս, տեղ անհայտ:

87 № 7021, Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, ժամանակ ԺԶ դ., 1605 թ., գրիչ Ստեփանոս Թոխաթցի, տեղ Կաֆա:

88 № 7050, ժողովածու, ժամանակ 1646 թ., գրիչ Խաչատուր Կամինցի, տեղ Կամենից:

89 № 7051, տաղարան, ժամանակ ԺԸ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

90 № 7057, ժողովածու, ժամանակ ԺԸ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

91 № 7092, ժողովածու, ժամանակ ԺԶ, ԺԷ դդ., 1752 թ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

92 № 7128, ժողովածու, ժամանակ 1693 թ., գրիչ անհայտ, տեղ Իզմիր:

93 № 7129, ժողովածու, ժամանակ ԺԷ, ԺԸ դդ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

94 № 7159, տաղարան, ժամանակ ԺԹ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

95 № 7193, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

96 № 7206, տաղարան, ժամանակ ԺԷ—ԺԹ դդ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

97 № 7273, ժողովածու, ժամանակ ԺԷ դ. (շուրջ 1625 թ.), գրիչ Մինաս, տեր Առաքել, տեղ անհայտ:

98 № 7508, գանձարան, ժամանակ 1670 թ., գրիչ Ավետիք դպիր, տեղ Պահչասարա:

99 № 7667, ժողովածու, ժամանակ 1759 թ., գրիչ անհայտ, տեղ Երուսաղեմ:

100 № 7682, տաղարան, ժամանակ 1784 թ., գրիչ Հարություն վարդապետ, տեղ Երուսաղեմ:

101 № 7702, տաղարան, ժամանակ 1831 թ., գրիչ Ղազարոս Խոջայան, տեղ Կողբ գյուղ:

102 № 7707, տաղարան, ժամանակ 1611, 1614 թթ., գրիչ Ամիրզատա սարկավագ, նաև Զաքարիա աբեղա, տեղ անհայտ:

103 № 7708, տաղարան, ժամանակ 1713 թ., գրիչ, ստացող Սահակ տիրացու, տեղ անհայտ:

104 № 7709, ժողովածու, ժամանակ 1608—1658 թթ., գրիչ Խաչ-Գռուզ (Խաչատուր քահանա), տեղ Կաֆա:

105 № 7712, տաղարան, ժամանակ ԺԸ դ., գրիչ, ծազկող Մկրտիչ (Միգիթ) Մոռոզյան, տեղ անհայտ:

106 № 7714, տաղարան, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

107 № 7715, ժողովածու, ժամանակ ԺԸ դ., (1717-ից հետո), գրիչ Պապիկ մահտեսի, Անտո՞ն, Գրիգոր, տեղ անհայտ:

108 № 7716, տաղարան, ժամանակ ԺԹ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

109 № 7717, տաղարան, ժամանակ 1695 թ., գրիչ Մինաս Էտրենցի, տեղ Ադրիանուպոլիս:

110 № 7732, գանձարան, ժամանակ 1623 թ., գրիչ Զաքարիա աբեղա, տեղ Կաֆա:

111 № 7744, սազմոսարան, ժամանակ 1604, 1615 թթ., գրիչ Ստեփանոս Թոխաթցի, Զաքարիա աբեղա, տեղ Կաֆա:

112 № 7789, խորհրդատետր, ժամանակ 1675 թ., գրիչ Հովհաննես աբեղա, տեղ Ղարասու:

113 № 8064, ժողովածու, ժամանակ 1835 թ., գրիչ Աղեքսանդր Գաբրիելյան, տեղ Շաքեառալի, Վաքիլխասի (Մամիրվան նահանգ):

114 № 8083, ժողովածու, ժամանակ 1812—1825 թթ., գրիչ Սարգիս Առուստամյան, տեղ Եղիսաբեթուպոլիս:

115 № 8166, մաշտոց, ժամանակ 1502, 1614 թթ., գրիչ Կարապետ Բաղիշեցի, տեղ

Բերդաձոր գյուղ (կամ Բերիաջուկ, Միջագետք, Ա):

116 № 8219, ժողովածու, ժամանակ 1829 թ., գրիչ Միգիթ Մոռոզյան, տեղ անհայտ:

117 № 8274, տաղարան, ժամանակ 1806 թ., գրիչ Գրիգոր քահանա Կարնեցի, տեղ ս. Կարապետ (Մուշ):

118 № 8463, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., 1707, 1855 թթ., գրիչ Ակոր տիրացու (Բ), Սիմեոն (Գ), տեղ անհայտ:

119 № 8540, ժողովածու, ժամանակ 1799—1809 թթ., գրիչ Հարությունն, տեղ Կոզլո՞վ:

120 № 8605, տաղարան, ժամանակ 1652, 1655 թթ., գրիչ Նորահատ, տեղ անհայտ:

121 № 8655, տաղարան, ժամանակ 1810 թ., գրիչ, ստացող Բերգի Մկրտիչ, տեղ Ախլցխա՞:

122 № 8674, ժողովածու, ժամանակ 1617, 1622 թթ., ԺԷ դ., գրիչ Ոհանե դպիր (Ա), Պողոս երեց (Բ), Սարգիս (Գ), տեղ անհայտ:

123 № 8682, ժողովածու, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

124 № 8699, ժողովածու, ժամանակ 1671 թ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

125 № 8873, ժողովածու, ժամանակ 1625, 1628 թթ., ԺԷ դ., գրիչ Հոհան Կամենեցցի (Ա), Գալուստ (Բ), տեղ Կոստանդնուպոլիս:

126 № 8908, տաղարան, ժամանակ ԺԹ դ., գրիչ Ղևոնդ Փիրզալեմյան, տեղ անհայտ:

127 № 8967, ժողովածու, ժամանակ 1576 թ., 1682 թ., գրիչ Հովհաննես (Բ), տեղ Քանջա (Բ):

128 № 8968, ժողովածու, ժամանակ 1556 թ., գրիչ անհայտ, տեղ Կոստանդնուպոլիս:

129 № 8982, մաշտոց ձեռաց, ժամանակ 1717 թ., գրիչ Քրիստոսատուր Կաֆայեցի, տեղ Կաֆա:

130 № 9002, ժողովածու, ժամանակ 1804 թ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

131 № 9075, մաշտոց ձեռաց, ժամանակ ԺԷ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

132 № 9195, ժողովածու, ժամանակ 1684—1706 թթ., գրիչ, ստացող Ագարիա, տեղ Ռե՞շտ:

133 № 9271, տաղարան, ժամանակ ԺԸ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

134 № 9322, ժողովածու, ժամանակ 1659 թ., գրիչ, ստացող Մարտիրոս, տեղ Քորբեզ քաղաք:

135 № 9362, տաղարան, ժամանակ ԺԸ դ., գրիչ անհայտ, տեղ անհայտ:

